



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Բ. Վ. ՎՈՅՎՈՅԱՏԱԿԻՑ, Վ. Ն. ՎՈՒԶԵՏԻԶ, Ս. Ի. ԻՍԱՅԵ
ՄԻԿԵԼՈՂՆ, Պ. Պ. ՍՄՈԼԻՆ, Ե. Ա. ՖԼԵՐՈՎԱ, Ա. Ա. ՅՈՒ

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՐՔ ՈՒՄՄԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐՎԱ

Խմբագր. Բ. Վ. ՎՈՅՎՈՅԱՏԱԿՈՒ յել Բ. Վ. ԻԳՆԱՏ

Թագմ. Կրթառումներով՝ ՆԵԿ. ՍՍ.ԲԳ.ԱՅՁ.Ն.

A 38373



Հ. Ա. 1316.

Դրառնեալմար Ա. 5221 (բ).

Տիրած 6000.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առաջին ուսումնական տարրում մենք պիտի ծանոթանանք Միսւ-
դյան ծողովրդական ճնշեսուրյան յեզ ինգուստրիալիզացիայի հետ:

Ձեզանից ամեն մեզը պիտի աշխատի ինչքան կարելի յել լավ ծա-
նոթանալ այդ հարցի հետ յեզ ինչքան կարելի յել պարզ գաղափար
կազմել թե մեր յերկրի յեզ թե ամբողջ Միության ժողովրդական
տնտեսության հիմնական խնդիրների յեզ զարգացման ուղիների մա-
սին, վորպեսզի հնարավորություն ունենա հնտագայում գիտակից ու
գործուն մասնակցուրյուն ունենալ սոցիալիստական օֆիցիալիզացիան
մեջ:

Բնագիտության բնագավառում մենք պետք են աշխատենք պար-
զել, թե ինչպիսի բնական յեզ զյուղատնտեսական բեսուրամեր (հա-
րցանական բնական բնական բնական բնական բնական բնական բնա-
կան բնական բնական բնական բնական բնական բնական բնական բնա-
կան բնական բնական բնական բնական բնական բնական բնական բնա-
կան բնական բնական բնական բնական բնական բնական բնական բնա-
կան բնական բնական բնական բնական բնական բնական բնական բնա-
կան բնական բնական բնական բնական բնական բնական բնական բնա-

Միությունն ունի հսկայական բնական հարստություններ, վոր
կարելի յել լայն կերպով ոգտագործել մեր արդյունաբերության կա-
րիքների համար:

Չե՞ վոր վառելանյութի հիմնական աղբյուրներ են հանդիսանում
անտառները, տորֆային ճահիճները, քարածխի հանքերը յեզ նավթը:

Միության մեջ անում են մի շարք զյուղատնտեսական բույսեր,
վոր հումուցիթ են մատակարարում մեր արդյունաբերության (թելա-
վոր բույսեր), կան յեզ բույսեր, վոր տալիս են մեզ սննդամթերթ-
ներ (հաց, շաքար, բանջարեղեններ, ծեթ յեզ այլն), կան բույսեր ել,
վոր կեր են մատակարարում մեր անասուններին:

Այնուհետեւ զանազան տեսակի գյուղատնտեսական յեզ վայրի
կենդանիները տալիս են մեզ բուրդ, կաշի, մուշտակամորթի, վորոնք
հետագայում մշակման են յենթարկվում մեր գործարաններում յեզ
արհետանոցներում. կան կենդանիներ ել, վոր տալիս են մեզ սննդա-
մթերթներ (միս, խաթանամթերթներ, ձու, էմլ, այլն).

ծու, վետուրներ, աղվամազ յեվ այլն) յեվ փոխանակում այնտեղ
արտադրական գործիքների հետ յեվ այդպիսով նպաստում Միության
ինդուստրիալիզացիայի արագացման:

Այս բոլորը ցույց են տալիս, վոր քնական հարստությունները
կարևոր տեղ են գրավում ժողովրդական տնտեսությունը քարձրաց-
նելու գործում, դրա համար ել քնակը թյունը, առանձնապես դուք,
վորպես ապագա կառուցողներ, պետք ե շատ լավ ծանոթ լինեք այդ
հարստությունների հետ:

Առանձին ուշադրություն պիտի դարձնեք ենդական քնական-
արտադրողական ուժերի վրա յեվ ավելի շատ ժամանակ պիտի նվի-
րեք նրանց հետ անմիջականորեն ծանոթանալու գործին:

Ուշադրություն դարձրեք այդ տեսակետից այս գրքի հոդված-
ների վերնագրերի վրա յեվ սկզբից յեվեթ պլան կազմեցնեք ձեզ հա-
մար, թե ձեր տեղական պայմանների տեսակետից, վո՞ր գուշների
վրա առանձին ուշադրություն պիտի դարձնեք:

Սակայն չպետք ե մոռանաք, վոր ուսպան 6-րդ տարում չի կա-
րելի սահմանափակվել միայն տեղական նյութերով:

Անհրաժեշտ է կազմել ընդհանուր լայն գաղափար ամբողջ Մի-
ուրյան քնական հարստությունների մասին:

Մեր ծանոթությունը այդ հարստությունների հետ կավանք
բուսական նյութերից յեվ ապա կանցնենք կենդանական հումուլյթին:

Զուգընթաց կերպով մենք կհետազոտենք հումուլյթի քնական
արտադրողների՝ բույսերի յեվ կենդանիների կյանքը յեվ կենսաբա-
նական առանձնահատկությունները:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԻՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՁԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

կով պատել և ալին: 4. Պարզել ամենաթանգ և ամենահժան վայտուառ առարկաների արժեքը:

Բ. Փայտիչ դերը բնակելի ժինուրյաններում յեվ հատուկ նպատակի ծառայող կառուցումների մեջ.—Այս թիմայի համար հարցեր կարող են լինել:—1. Փայտա շինությունների քանակությունը գլուղում կամ վորումն փողոցի վրա և նրա տոկոսային հարաբերությունը շինությունների ընդհանուրը քանակության վերաբերմաքը: 2. Ի՞նչպիսի փայտանկութեր են դործադրվում զանազան տեսակի շինությունների վրա: 3. Այլ նյութերից կառուցված շինությունների մեջ թիմ մասեր փայտից են շինվում: 4. Շինությունների վիճակը, նրանց ամրությունը, խախուտության աստիճանը:

Գ. Փայտը վորպիս վառելիք:—Հարցեր:—1. Պարզել, թե ամեն մի ընտանիք կամ տնտեսություն թիմքան փայտ և գործածում մի ամսվա ընթացքում՝ հաշված խորանարդ մեարերով: 2. Ի՞նչ փոփոխություն է կրում այդ քանակությունը տարվա զանազան բեղանակներին: 3. Ի՞նչքան փայտ և գործ ածում ամեն մի մարդ ամրող ատարվա ընթացքում:

Ստացված թվական տվյալները (արտահայտված խորանարդ սաժեններով) կամ մեարերով՝ հետաքրքիր և համեմատել խուսաստանի թողհրդային հանրավետության մի քանի ռայտնների գլուղական բնակչության գործածած փայտի քանակությունների հետ: Այդպիսի արվայներ կան հետեւալ ռայտնների վերաբերմաքը:

Գործածուրյան ռայտնները	Մի հոգու գործածում փայտի քանակությունը խորանարդ մեարերով.
Անտառաշատ ռայտններում (հյուսիս-արեւելյան)	10 խոր. մետր
ՌԽՍՖՀ միջին շրջանում	3 3 3
Սակավանտառ ռայտններում (որինակ, Վորոնեժի նահ.):	0,3 3 3

4. Ի՞նչքան են նստում վառելափայտան ամբողջ տարվա ընթացքում (ռուբլիներով հաշված): 5. Ի՞նչպիսի փայտատեսակներ են գործածում իրեն վառելանյութ, վմբ տեսակներին և գերազասություն տրվում և ինչնեւ: 6. Ի՞նչ արժեք ունեն տարբեր փայտատեսակները: 7. Վմբանդից են ստացվում վառելափայտի զանազան տեսակները:

Դ. Փայտը բնակչուրյան համար վորպիս յեկամի առանձին աղ-

1 Խորանարդ սաժեննը հագասար և մոտավորապես 10 խորանարդ մետրի (ավելի միշտ՝ 9,71 խոր. մետրի):

բլուր.—Այս թեմայով կարող են զբաղվել այնտեղ, վորտեղ փալտից պատրաստում են զանազան նյութեր, որինակ, ձյութ են հանում փալտից կամ ածուխ են պատրաստում: Հիշատակության արժանի լեռ այն փաստը, վոր նախապատերազմիան շրջանում փայտի տնայնագործական մշակումը տվել ե տարեկան մոտ 100 միլիոն ռուբլու (վոսկով) յեկամուտ: Թե տնայնագործության մեջ փայտն ինչպիսի խոշոր տեղ ե գրավում, պարզ կերպով յերեսում ե նրանից, վոր նրա մշակումով զրազվում են հարյուր հազարավոր մարդիկ, որինակ, 1923—24 թ. այդ մշակումով զրազված ե ինդել 540,000 մարդ:

Այս թեմայի վերաբերյալ հարցեր կարող են լինել—1. Ի՞նչպիսի նյութեր կամ առարկաներ են պատրաստվում փալտից, ի՞նչիք համար են պատրաստվում, ի՞նչ հատկություններ ունեն նրանք և ի՞նչպես են սպասում գտնում: 2. Ի՞նչպիսի նյութեր են պահանջվում նրանց պատրաստելու համար և ի՞նչ հատկության: 3. Ի՞նչ յեղանակով են պատրաստվում նյութերը, հետեւ նրանց մշակման բոլոր աստիճաններին: 4. Պարզել արտադրության ընդհանուր և մաքուր յեկամուտը՝ և արտադրողների (ընտանիքի, արտելի կամ խմբակի) յեկամուտը:

Ե. Անտառի նետ կապված ոճանդակ յեկամուտներ.—Այսեղ չպետք ե մոռանալ գլուղացիքական տնտեսության այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են:—1. Փայտային նյութերի տեղափոխությունը սազելով, 2. կենդանիների արածեցնելը անտառում, 3. վորսորդությունը, մանավանդ յեթե դա կրում ե արհեստի բնույթ, 4. վերջապես յեկամուտի փոքրիկ աղբյուրները՝ չորացած փալտեր հավաքելը, պտուղներ և բուժիչ բույսեր հավաքելը: Ինչքան ել փոքր ու չնշին լինեն յեկամուր այդ աղբյուրներն, այնուամենայնիվ տվել են և տալիս են այժմ գյուղական բնակչությանը տասնյակ միլիոն ռուբլիների ոգուտ:

Միուրյան անտառային հարստուրյանը:—Եթե յերկրագնդի վրա ցամաքի ամբողջ տարածությունը հաշվենք 13,5 միլիոն հեկտար, ապա այդ տարածությունից անտառներին բաժին կընկնի 2,900,000,000 հեկտար: Հաշվեցնեք, թե դա ցամաքի քանի՞ տոկոսն է կազմում:

Վերջին տվյալների համաձայն (*Մ. Ի. Իվանովսկու* կատարած հաշիվներով) Միության անտառները բռնուն են 567 միլիոն հեկտար տարածություն, ասել ե, կազմում են ամբողջ աշխարհի անտառային տարածության $\frac{1}{4}$ մասը (մինչև այժմ հաշվում ենին $\frac{1}{3} - \frac{1}{4}$ մասը): Այդ անտառներից Միության յեկրտական մասին (*Կովկասի հետ միասին*) ընկնում է 142 միլիոն, իսկ ասիսկան մասին՝ 425 միլիոն հեկտար (բոլոր թվերը կլորացված են):

Համեմատենք մեր անտառների գրաված տարածությունը Արև-

Ճայան Յեվրոպայի, Հյուսիսային Ամերեկայի և հյուսիսային կիսագնդի բարեխառն գոտում գտնվող մի քանի լերկըների անտառների տարածությունների հետ:

Վայրերի անունները	Անտառների տարածությունը՝ միլիոն հեկտարներով
Յեվրոպա (առանց Միության, բայց նախկին Ռուսաստանից պոկված մասերի հետ)	118,5
Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները	222
Կանադա	243
Ալֆասկա	44
Ընդամենը Հյուսիսային Ամերիկայում	509
Հյուսիսային կիսագնդի բարեխառն գոտում գտնվող մնացած լերկըներում (Հյուս. Աֆրիկա, Մանչչուրիա, Կորեա, Հյուս. Յապոնիա, Պարսկաստան)	103,5
Ընդամենը Հույսիսային կիսագնդի բարեխառն գոտում (առանց Միության)	731

Այս աղյուսակը ցուց է տալիս, վոր հյուսիսային կիսագնդի ամբողջ բարեխառն գոտում միայն Հյուսիսային Ամերիկան ե, վոր կարող է ներկայում մրցել Միության հետ իր անտառալին հարստությամբ: Հաշվեցեք, թե մեր անտառները հյուսիսային կիսագնդի բարեխառն գոտում գտնվող անտառների վեր տոկոսն են կազմում: Արտահայտեցեք այստեղ բերված թվական փոխարարերությունները դժբաններով:

Արդարս ե մեր անտառալին հարստությունը, վորից ստանում ենք և պիտի ստանանք պետական շինարարության և ժողովրդական կարիքների համար անհրաժեշտ հումուզը: Սակայն բացի դրանից, փալտը լեզել ե միշտ արտահանման նյութ զեպի արտասահման և այդ տեսակետից նա գրավել ե պետական լեկամուտի աղբյուրների մեջ լերկորդ տեղը: առաջին տեղը գրավել են հացահատիկները:

Արագես, որինակ, 1913 թվին արտահանվել ե արտասահման 165 միլիոն ոռուբրու փալտ, վոր կազմում եր այդ տարվա ամբողջ եքսպորտի $11^{\circ}/\sigma$ -ը:

Համաշխարհային պատերազմը և այնուհետև հեղափոխության-

հետ կապված դեպքերը պատճառ լինան, վոր մենք կորցնենք ժամանակավոր կերպով մեր արտասահմանյան շուկան, բայց 1924 թ. փակտի արտահանումը արտասահման հասնում եր արդեն նախկինի 30—40% ին, տալով տասնյակ միլիոնների լինակամուտ։

Միության աշխատավորության ժողովրդական տնտեսության համար անտառի նշանակությունն աճում ե տարեցտարի, մինչդեռ մլուս լերկրներում մասնավոր խոշոր անտառատերերն իրենց շահի հետեւց ընկած բարբարոսաբար վոչնչացնում են իրենց անտառները։ Ցեղածովյալների համաձայն Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործ ե ածգում լերկը անգամ ավելի շատ փայտ, քան կարող ե առաջանալ անտառների մեջ։

Ցեղ ահա մինչդեռ մլուս լերկրներում արդեն փալտանլութերի պակաս ե զգացվում, մեր անտառներում, չնայած նրան, վոր նրանք խիստ կերպով տուժել են տնտեսական քայլայման տարիներում, կաբավական մեծ քանակությամբ ավելցուկ, վոր կարող ենք մենք մոտակա տարիներում արտասահման արտահանելով՝ փոխանակել մեքենաների ու գործիքների հետ, վորոնք ալնքան անհրաժեշտ են մեր շինարարության համար։

Այս բոլորից հետո միանգամայն տեղին ե հետաքրքրվել այն հարցով, թե ինչպես ե աճում ու զարգանում փալտը բնական պայմաններում։

2. ԱՆՏԱՌԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ՑԵՂ ՆՐԱ ԿՅԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔՆԵՐԸ ԴԻՑԵԼԸ

Այս նպատակի համար անհրաժեշտ ե կազմակերպել մի ընդհանուր խմբական եքսկուրսիա դեպի անտառը։

Ա. Ընդհանուր զաղափար՝ անտառի մասին.—Մանելով անտառը՝ տեսնեք, թե մթնոլորտային լերնությների տեսակետից ինչպիսի տարբերություն եք նկատում անտառի և ծառազուրկ տեղերի մեջ (առանց գործիքների ոգնության դիմելու)։

Վզրտեղ ե լուսն ավելի առատ։ Զգացվելով ե արդյոք անտառում զովություն։ Զեք նկատում, վոր անտառն ավելի խոնագ ե (ինչը և արտահայտվում ալդ խոնավությունը)։ Ցեղե որը քամոտ ե, տեսնեք, թե քամիներն ինչ ազդեցություն են ունենում անտառի վրա և ալդ ազդեցությունը նրա վեր մասում ե ավելի զգալի։ Անտառի հողի մակերևութը մթրկ ե, թե ծածկված ե բուսականությամբ։ Ալսինքն անտառի հողը պատճառ ծածկված ե կենդանի ծածկությով, թե պատճառ ե միայն

թափված տերեներով և ճյուղերով. վերջին դեպքում տեսեք, թե ի՞նչ-պիսի հաստություն ունի մեռած տերեներից և ճյուղերից կազմվող շերտը. Եթե անտառի հողի մակերեսությը պատաժ և կենդանի բուսականությամբ, ապա տեսեք, թե այդ բուսականությունն իր արտաքինով ինչնի և տարրերվում ճանապարհների մոտերքը և այլ չոր տեղերում լինող բուսերից. Գտեք մի քանի տեսակի բուսեր, զորոնք բնուում են միաժամանակ թե անտառում և թե բաց տեղերում. տարրերված են արդյոք նրանք միմյանցից:

Կարդի եք արդյոք ձեր կատարած այդ դիտողություններից գալ այն լեզրակացուրյան, վոր անտառում արտաքին պայմանները նույնը չեն, ինչ վոր բաց տեղերում. Զեսակերպեցեք ձեր լեզրակացությունը:

Բ. Անտառային տիպեր.—Տվեք իրենց արտաքինով միմյանցից տարրերված մի քանի տեսակի անտառների համառոտ բնույթագրությունը:

Ահա այն գլխավոր նշանները, վորոնցով կարելի էն մի տեսակի անտառ տարրերել մյուսից:

1. Անտառը համարվում և մաքուր, յեթե բաղկացած և միաւն մի տեսակի ծառատեսակից և խառը, յեթե բաղկացած և միքանի տեսակի ծառերից:

Հայտնի յեն ձեզ այդ ծառատեսակները: Դրեցեք նրանց անունները: Ձեզ անհայտ ծառատեսակներից վերցրեք ճյուղեր, վորպեսի հետո վորոշեք նրանց տեսակները:

2. Ուշադրությամբ դիտելով խառն անտառը՝ տեսեք, թե վար ծառատեսակներն են այնտեղ տիրապետող դեր կատարում և վո՞ր ծառատեսակները տերկրորդական նշանակություն ունեն:

Այդ կարելի էն իմանալ պարզապես դիտելով, բայց լավ կլինեք, յեթե վորոշ ճշգույժամբ արտահայտվեր նաև Դրա համար պետք ե վերցնեք անտառում մի փոքր տեղ, 25—50 քառ. մետր տարածությամբ և հաշվեք, թե այնտեղ ծառերի ամեն մի տասնակի մեջ այս կամ այն ծառատեսակից քանի ծառ և ընկնում: Դրեցեք ձեր հաշիվ-ների արգյունքը հասարակ կոտորակներով այսպես:—շամի $\frac{5}{10}$ (նշանակում ե, տասը ծառից 5-ը շամի լի), լեղնի $\frac{3}{10}$, կեչի $\frac{1}{10}$, կաղնի $\frac{1}{10}$, կամ բոխի $\frac{5}{10}$, հաճարի $\frac{3}{10}$, լորի $\frac{2}{10}$: Իսկ այն ծառերը, վորոնք թվով շատ քիչ են, այդպիսիները պետք ե առանձին հիշատակել:

3. Հաճախ անտառում, մաքուր կամ խառը, բացի իսկական ծառերից, լինում են նաև թփեր: Սրանք միասին կազմում են լինքանատա, վորի հետ կծանոթանանք առանձին:

Տեսեք, թե ի՞նչպիսի թփերից ե բաղկացած լենթանտառը: Կազ-

մեցեք նրանց ցուցակը։ Ձեզ անհայտ թփերից վերցրեք ճլուղեր, վորպեսպի հետո կարողանաք վորոշել նրանց տեսակը։

4. Այն անտառը, վոր ունի լենթանտառ, կարող ե կոչվել բարդ անտառ։ Ալդպիսի անտառներում ծառերն ու թփերը կազմում են լեռներկու հարկ։ վերևի հարկը կազմում են ծառերը, ներքեմինը՝ թփերը։ Ալդ տեսակի անտառները կոչվում են յերկնարկանի կամ յերկերտանի անտառներ։

Մասերի պսակները միասին կազմում են մի ամբողջական վարագույր։

Պակ ասելով հասկանում ենք ծառի բոլոր ճյուղերը և վոստերը միասին վերցրած։ Յերբ անտառում չկա լենթանտառ, անտառը լինում ե մի հարկանի կան և լեռնարկանի անտառներ, ալդ դեպքում վերևի հարկը կազմում են բարձր ծառերը, լերկրորդ հարկը՝ միջին մեծության ծառերը, իսկ ներքեմինը՝ լենթանտառը։ Շատ հազվագյուտ դեպքերում լինում են նաև չորս հարկանի անտառներ։

5. Յեթե լենթանտառը բաղկացած ե վոչ թե թփերից, ալդ նույնապիսի ծառատեսակներից, բայց մատաղ վիճակում, ալդ դեպքում լենթանտառը համարվում ե այն սերունդը, վորը պետք ե ժամանակին փոխարինի հին անտառին։

6. Յեթե անտառի ծառերի պսակները շփվում, կոչչում են իրար, ալդ դեպքում անտառը կոչչում ե փակ անտառ, իսկ լեթե ծառերի պսակների արանքներում մնում են ճյուղերից ու վոստերից ազատ տարածություններ՝ միջին խտության անտառ։ Դրան հակառակ, լիթե ծառերի պսակները ճնշում, սեղմում են իրար և փոխադարձարար խանգարում միմյանց զարգացում, կոչչում ե խիտ անտառ, իսկ այն դեպքերում, լերբ ծառերի պսակների արանքներում լինում են այնպիսի խոշոր բացվածքներ, վորոնց միջով լույսն առատորեն ներս ե թափանցում, կոչչում ե նոր անտառ։

7. Կարելի լի անտառները տարբերել իրարից և տարիքի տեսակետից։ Վորոշեցեք առալիքն անտառի տարիքը մոտավորապես այսպես—հին անտառ, միջին հասակի անտառ և մատաղ անտառ։

8. Մեծ նշանակություն ունի և անտառի հողը. տեսեք, թե ինչպիսի հող ե անտառի հողը. ավագալին, կրալին, թե վործարանական լույսերով հարուստ հող ե։

Սկզբում ալդքանը բավարար կարելի լի համարել անտառի տիպը վորոշելու համար։ Իսկ ալդ անելով՝ մենք վորոշում ենք արդեն նրա բուսաբանական տիպը։

Դիտենք ալժմ անտառի ներսում տեղի ունեցող կյանքը։

Գ. Ի՞նչպիսի տեսք ունեն անտառով խիտ մասում բասծ ծառերը.—Գտեք անտառում մի տեղ, զորտեղ ծառերը շատ խիտ են բասծ: Ի՞նչպիսի ծառատեսակներից և բաղկացած անտառի այդ մասը: Ուշագրությամբ դիտեցեք ալդ մասի ծառերի ունեցած ձևը:

Ի՞նչպիսի մեծություն ունեն ծառերի պսակները նույն ծառերի բարձրության հետ համեմատած: Վորոշեցեք, թե բարձրության վմբ մասն են կազմում պսակները: Կմն արդյոք ծառերի վրա չորացած ճյուղեր, թե ծառերի բները մերկ են բոլորովին մինչև պսակը: Նկարեցեք մատիտով այդպիսի ծառերի սխեմատիկ պատկերը:

Յերբ ծառերի բներն իրենց մեծ մասի վրա զրկված են ճյուղերից կամ ալդ ճյուղերը չորացել են և թափվելու վրա լին, այդ գեղքում ասում են, թե ծառերը մաերգում են նյուղերից:

Ի՞նչոք և բացատրվում ալդ լերեսություն: Դուցե անտառի այդ մասն ուղղակի չորանում, վերջանում եւ:

Զկան արդյոք այդ նույն անտառում այնպիսի մասեր, զոր բաց տեղեր ունենան իրենց մեջ: Դիտեցեք այդպիսի մասերում գտնվող ծառերը: Դիտեցեք և անտառի լեզվերին գտնվող ծառերը: Ի՞նչպիսի տեսք ունեն նրանք: Տարբերվում են արդյոք նրանք իրենց ձևով անտառի խիտ մասում բասծ ծառերից: Ի՞նչ տարբերություն եք նկատում անտառի լեզվերին բասծ ծառերի գեղի անտառ նայող լերեսի և մլուս լերեսի միջև: Նկարեցեք այդպիսի ծառերը:

Դ. Բաց տեղում բասծ ծառերի տեսքը.—Գտեք ծառեր, զորոնք բասծ են բացատռում կամ անտառի լեզվերին, միայն մյուս ծառերից հեռու, ազատ վիճակում: Այդպիսի ծառերն իրենց արտաքին տեսքով աչքի լեն ընկնում նույնիսկ հեռվից: Իմացեք, թե ինչ ծառեր են դրանք:

Վորոշեցեք այդ ծառերի մասերի հետեւալ հարաբերությունները.

1. Ի՞նչ հարաբերության մեջ են գտնվում այդ ծառերի պսակների ամենալայն մասերը ծառերի բարձրությունների նկատմամբ: 2. Ի՞նչ բարձրությունից են սկսում նրանց առաջին ճյուղերը: 3. Պսակների ուղղաձիգ տարածություններն ինչպիսի հարաբերության մեջ են գտնվում ծառերի ընդհանուր բարձրությունների նկատմամբ: 4. Ի՞նչ ուղղություն ունեն զլիսավոր ճյուղերը և նրանցից դուրս լեկող լերկրորդական ճյուղերը: Նկարեցեք այդպիսի ծառերի կոնտուրը (ուրվանկարը) (նկ. 1):

Վորպես կանոն պիտի ասենք, զոր ազատ պայմաններում աճող ծառը մատաղ հասակում ունենում ե խիտ, և հաճախ գնդաձև պսակ,

վորի ներքեսի ճյուղերը նստած են լինում բնի ցածր մասում, յերբեմն նույնիսկ պառկած գետնի վրա (վար ժառի ճյուղերն են ալդպես լինում):



Նկ. 1. Ազատ պայմաններում աճած շամի ծառ:

Նկար Կ. Ա. Տիմիրյագելի անվան պատանի բնասերների կենսա-
կայանին կից փորձնական դպրոցի 6-րդ խմբի աշակերտի:

Ե. Անտառում աճած, բայց նետագյայում ազատ պայմանների մեջ ընկած ծառի տեսքը.—Բաց տեղում յերբեմն կարելի յև տեսնել և այնպիսի ծառեր, վորոնք իրենց արտաքին տեսքով նման են անտառի խիտ մասում ըսած ծառերին. նրանց բունը բարձր է, ուղղաձիգ, մերկ կամ ծածկված չորացած ճյուղերով և կանաչ պսակ ունեն միայն գագաթալին մասերում (Նկ. 2):

Կարմղ ելին արդյոք այդ ծառերն աճած լինել այդ վիճակում ըաց և ազատ տեղում:

Վորոնեցեք ալդպիսի ծառերի շուրջը ծառերի հետքեր կոճղերի և կամ արմատների մնացորդների ձևով: Ի՞նչ են ցուց տալիս այդ հետքերը. կտրտել են արդյոք այդ ծառերը, թե հողմերն են նրանց վայր գլորել:

Միշտ կարելի լի հաստատ կերպով ասել, թե աղաւ պայմաններում ապրող ծառերից վոր ծառերն են իրկար ժամանակ ապրել այլ ծառերի հարեանության մեջ և հետո այս կամ այն պատճառով աղաւվել նրանցից:

Հետեւլուրյուն.—Մեր բերած որինակները ցուց են տալիս, վոր ծառին վորոշ ձև տվողը հանդիսանում է լուսը, Յեթե ծառն իր մանկությունից սկսած վողողվում և ամեն կողմից լուսով, ապա նա վրանի ձևով ճյուղեր և տալիս ամեն կողմի վրա, իսկ իերը աճում և խիտ ծառերի արանքում, նրա միայն դագաթն և դարձած լինում դեպի լուսը, դրա համար ել նա սլունի պես բարձրանում և դեպի վեր: Պատահում են և դեպքեր, իերը ծառն իր հարեանների կողմից շվաքի մեջ և ընկնում միայն իերեք կողմից, այս դեպքում ճյուղերն աճում են միայն աղաւ կողմից և ծառն ստանում և միակող պատակ (նկ. 3):

Զ. Բների արձենքը օբնանյութի տեսակետից.—Ուրեմն խիտ ծառերի արանքում և աղաւ պայմաններում աճող ծառերը տարբերվում են իրարից իրենց արտաքին տեսքով: Այդ տարբերությունն ել ամելի խոր բնույթ և ստանում և արտահայտություն գտնում ծառի կազմության մեջ շատ ու շատ նշաններով: Կանգ առնենք մի մանրամասնության վրա, վոր ունի գործնական խոշոր նշանակություն:

Համեմատեցեք մի անգամ ևս խիտ անտառում և աղաւ պայմաններում աճող ծառերի բներն իրար հետ:

Առաջին տեսակի ծառերի բներն ունեն ուղիղ սլուների ձև, շատ բարձր են և ունեն հարթ մակերեսությութ, իսկ մլուսները հաստ են ներքեմ մասում, բայց վեր բարձրանալով՝ արագ կերպով բարակում են, խլալու են շատ ճյուղեր տալու պատճառով և հաճախ ծովոված:

Առաջին տեսակի ծառերն իրենց ձևով նմանվում են իերկարուկ-



Նկ. 2. Իրենց կյանքի վերջին շըջանում աղաւ պայմանների մեջ ընկած ծառերը միակող պատակ (նկ. 3):

գլանի (նկ. 4), իսկ լեռկրորդները՝ կոնի (նկ. 5), Միայն առաջիններն են, վոր կարող են գործածվել իբրև շինանլութ, որը համար ել առանձին արժեք են ներկայացնում, կարճ և կոնաձև բներով ծառերը պետք կարող են գալ իբրև վառելանլութ:



17-265
II
38323

A


Նկ. 5. Միակողմանի լուսավորության աղղեցությունը
ծառի պատկի դարգացման վրա:

Հետեվորյուն.—Խիտ ծառերի տրանքում աճող ծառերի պատմանները նպաստում են նրանց տեխնիկական արժեքի բարձրացման:

Ը. Ծառերի բնական նուրացումը.—Սակայն լավորակ բնափայտի առաջացումը կապված է ահազին քանակությամբ բուսական կյանքերի զոհողության հետ: Ցեղ ալդ ահա թե ինչու:

Դնացեք մատաղ ծառերի մի խիտ անտառ: Լավ կլինի, լեթե ծառերը մի տեսակի լինեն, որինակ, բոլորը շամի լինեն և մի տարիքի: Հաշվեցեք, թե ինչքան մատադրած ծառեր կան բուսած ամեն մի

հարկուր, լեռկու հարկուր, չորս հարյուր քառակուսի մետրի վրա Հաշ-
վեցեք, թէ ինչքան ծառ կլինի մի հեկտարի, աւտինքն 10,000 քառ.
մետրի վրա Խ՞նչ հեռավորության վրա լին
գտնվում ծառերի բները մեկը մուսից:



Նկ. 4. Թղանաձև բուն ունեցող
շամի ծառ (սխեմա):

Խսկ լեթե ծառերը բավականաշափ բարձր են, ապա պետք
դիմել պարզ բարձրացափի, ձողի ոզնության, Վորոշեցեք ծառերի
տարիքը:

Մանորուրյուն.—Ծառերի միջն
լեղած տարածությունը հեղառությամբ
և արագությամբ կարող եք չափել մի
թոկով, վոր բաժանված ե այս կամ
այն ձեռով մետրերի:

Չափեցեք ծառերի բարձրությունը
(ընտրեցեք դրա համար միջին բարձրու-
թյուն ունեցող ծառերը):

Մանորուրյուն.—Յեթե ծառերը
փոքր են, ալդ զեպքում կարելի լին
ոգտվել նույնպիսի թոկով, միաւն
պետք ե զործածել այն իբրև կապա-
րալար, վորի համար և նրա ծալրից
պետք ե կախել վորեև ծանրություն:



Նկ. 5. Կոնաձև բուն ունեցող
շամի ծառ (սխեմա):

կան կերպով զցված անտառում։ Անտառագետներն ասում են, վոր վայրի անտառում 5—10 տարեկան հասակ ունեցող 100,000 ծառերից մինչև 150 տարեկան դառնալը մնում են ընդամենը 500—1000 ծառ։

Հաշվեցեք, թե ծառերի մնչեան տոկոսն ե փշանում։

Այս ձեռվ տարեցարի կենդանի ծառերի թվի նվազումը անտառապահության մեջ կոչվում ե անտառի բնական նորացումը։

Թ. Լույսի յեվ տեղի համար կրիվը ծառերի մեջ։—Այն բոլոր տեղերում, ուր իրար մոտ ծառեր կան բուսած, կարելի լի տեսնել, թե ինչպես են նրանք կովում իրար հետ լուսիկ և տեղի համար։ Այդ կրիվը առանձնապես ուժեղ արտահայտություն ե ստանում անտառում, մասնավանդ այն դեպքում, իեր անտառը խիտ ե և բաղկացած է միանման տարիքի ծառերից։

Դիտեցեք անտառի ծառերի պսակներից կազմված շերտը։ Արդյո՞ք բոլոր ծառերը միանման բարձրություն, միանման հաստություն ունեն, կամ արդյո՞ք բոլոր ծառերի պսակները միանման կերպով են գարգացած։

Կատարեցեք հետեւալ աշխատանքը։

1. Զափեցեք անտառի մեջ մի փոքրիկ կտոր տեղ 200 կամ 400 քառ. մետր տարածությամբ։

2. Բաժանեցեք ձեր վերցրած մասի վրա լեզած ծառերը չորս խմբի կամ կատեզորիալի՝ համաձայն ծառերի բարձրության և պսակի գարգացման—հետեւալ ձեռվ։

3. Շատ բարձր ծառեր (վորոնց թիվը շատ քիչ ե) և բարձրությամբ նրանց փոքր ինչ մոտեցողներ (գերակշռում են)։ Սրանք ամենաուժեղ ծառերն են։

4. Մառեր, վորոնց պսակները սեղմված են առաջին տեսակի ծառերի պսակների արանքներում։ Սրանք առաջիններից ավելի նվազ են։

III. Մառեր, վորոնց գագաթները գրեթե դուրս չեն գալիս ընդհանուր շերտի ստորին մասից, ստվերի մեջ են ընկած և տեղ-տեղ մեռնելու վրա լեն։ Սրանք թուլլ ծառերն են։


IV. Մառեր, վորոնք չեն համարում անտառի ծառերի պսակների ընդհանուր շերտին, ամբողջովին գտնվում են ստվերի մեջ։ Սրանք արդեն բոլորովին թուլլ են և մեռնելու ճանապարհի վրա լեն գտնվում։

5. Կավճակնաշանակեցեք ծառերի վրա I, II, III և IV—համապատասխան նրանց գրության։

6. Զափեցեք բոլոր ծառերի բների արամագները։

Մանօրություն. — Մառերի տրամագիծը չափելու ժամանակ

կարելի լե գործածել չափական յեղան (նկ. 6), թե ինչպես են պատրաստում և գործածում ալս գործիքը, կտեսնենք փոքր ինչ հետո:



Նկ. 6. Չափական յեղան.

5. Հանեցեք բոլոր չորս խմբերի Ֆառերի միջին տրամագծերը:

6. Չափեցեք բոլոր չորս խմբերի Ժառերի բարձրությունները (չափումը կտտարեցեք միջին տեսակի ժառերի մըրա)։

7. Ըստ հնարավորության պարզեցեք I—IV խմբերի ժառերի տարիքը:

Ձեր աշխատանքի հետևանքները ցույց կտան, վոր բոլոր չորս խմբերի ժառերը կարելի լե բաժանել յերկու գլխավոր խմբի։ Առաջին խմբի ժառերն ուժեղ են և գրավել են տիրապետող դիրք, իսկ յերկրորդ խմբի ժառերը յետ են մնացել զարգացման տեսակետից, Բայց յետ մնալ, նշանակում ե կորչել։ Ցեվ անտառի մեջ գտնվող վտիտ և կամ բոլորովին չորացած ժառերը թույլ են տալիս մեղ մտածելու, վոր անտառում տեղի լե ունենում մի համառ գոլության կորիվ։



Նկ. 7. Մասերի տիրապետող և ճնշված գասերի սինեման ըստ Կրաֆախի Առաջին դասի ժառերը նկարված են ու սովերանկարներով, իսկ յերկրորդ դասի ժառերը՝ պարզ դժերով։ 1—Ամենամեծ և ամենազարգացած ժառերը (թվով շատ թիւ)։ 2—Տիրապետող ժառեր, վորոնցից կազմվում ե առաջարակ պահեների շերտն անտառում։ 3—Զարգացման տեսակետից յետ մնացած ժառեր։ 4 և 5—ճնշման տարրեր աստիճանի վրա գտնվող ժառեր։ 6—Միանգամայն սովերի մեջ ընկած և մնող ժառեր։

Առաջին խումբը ներկայացնում և ծառերի տրավեսող դասը, ինչ յերկրորդ խումբը՝ ննոված դասը:

Այս յերկու դասերի մեջ կան իհարկե միջանկյալ խմբեր, Դիտեցք ծառերի դասակարգության սխեմատիկ նկարը ըստ Կրտֆու (նկ. 7). Ազդ նկարի մեջ առաջին կատեգորիայի ծառերին համապատասխանում են 1, 2, 3 թվերը, յերկրորդ կատեգորիայի ծառերին՝ 4 ա, III կատեգորիայի ծառերին՝ 4 ս, IV կատեգորիայի ծառերին՝ 5 թվը:

Զեր աշխատանքի ժամանակ ստացած բոլոր թվերը մտցրեք ստորև բերված ձեռվ պատրաստված հաշվառքալին թերթիկի մեջ:

Ծառատեսակները	ՏԻՐԱՊԵՏՈՂ				ՃՆՇՎԱԾ				Բոլոր ծառերի թվերը
	I	II	III	IV					
Տրամագիծ	Տառերի թվերը	Տրամագիծ	Տառերի թվերը	Տրամագիծ	Տառերի թվերը	Տրամագիծ	Տառերի թվերը	Տրամագիծ	Տառերի թվերը

Ժ. Մատաղ ծառերը յեկ անտառի վերաբարձրացնեմք. — Մատաղ ծառերը միասին վերցրած կազմում են այն սերունդը, զոր պետք և վորխարինի ծերացած անտառին. Դիտողության նյութ դարձրեք այդ մատաղ ծառերը:

1. Վերտեղ են յերեան գալիս ալք, մատաղ ծառերը, ի՞նչպիսի անտառներում են նրանք զարգանում. Կարելի՞ յե արդյոք տեսնել մատաղ ծառեր խիտ յեղենու անտառում. Զե՞ք տեսնել արդյոք շամու անտառում մատաղ յեղենիներ, ի՞նչպիսի տեսք ունեն այդ յեղենիները:

Մատաղ ծառերը լավ զարգանում են այնտեղ, վորտեղ անտառը զդալի կերպով նորացել են:

2. Ստուգեցեք այդ ձեր տեսած անտառների որինակներով:

3. Ի՞նչո՞ք և արտահայտվում բարձր ծառերի կողմից մատաղ ծառերի նկատմամբ ցուցյ արկած ճնշումը:

Ճնշման աստիճանը վորոշելու համար ինկատի պետք և ունենալ՝
1) պատկի զարգացման բնույթը (խիտ, թե նոսր), 2) բնի աճումը բարձ-
րության ուղղությամբ, 3) տարիքը (տարեկան ողակներով, վորի
համար, յեթե հասրավոր ե, պետք և կտրել յերկու-լերեք ծառատեսակ-
ների բներ):

Այդ դեպքում հավանորեն կնկատեք, վոր բարակ բուն ունեցող
ծառերը բավական մեծ տարիք ունեն:

Յեթե հաջողվի ձեզ տեսնել մի հին անտառատեղում նոր կտրված
մի մատաղ ծառի բուն, վոր մի ժամանակ յեղել և արդեն անհետացած
անտառում մատաղ ծառերի շարքում, ապա այդ դեպքում համեմատե-
ցեք նրա ներքին և արտաքին տարեկան ողակների հաստությունները
միմյանց հետ: Ինչով կարող եք բացատրել նրանց մեջ յեղած տարրե-
քությունը:

Պետք ե ասել, վոր բնի հաստացման արագությունը, հետեւապես
և տարեկան ողակների լայնությունը կամ հաստությունը կախված ե
ծառի կյանքի պայմաններից: ինչքան նպաստավոր են այդ պայման-
ները, այնքան ողակներն ավելի ուժեղ կերպով են հաստանում:

Ազատուրյան մեջ ապրող մատաղ ծառերը. —Նկարագրեցեք, թե
ի՞նչպիսի տեսք են ընդունում մատաղ ծառերը՝ հին ծառերը կտրտելուց
մի կամ յերկու տարի հետո:

Ի՞նչպես և նրանց ընդհանուր կացությունը: Ճնշումից աղատվե-
լուց հետո նրանք արդյոք ուղղվել են, թե վոչ:

Ի՞նչպիսի ծառատեսակներից են բաղկացած նրանք: Հաշվեցեք
թե 200—400 քառ. մետրի վրա ինչքան մատաղ ծառեր կան: Ձեր
ստացած տվյալների հիման վրա հաշվեցեք, թե ի՞նչքան մատաղ ծառ
կլինի մի հետարի վրա:

Ի՞նչնացանք. —Թե անտառն ի՞նչպիսի ընդունակություններ ունի?
ի՞նքն իրեն վերանորոգվելու, այդ պարզ կերպով կարելի յե տեսնել
այն անթիվ անհամար մատաղ ծիլերից, վոր դուրս են գալիս անտա-
ռի ծառերի տակ:

Այդ ծիլերը, վորոնք առաջանում են սերմերից մայր ծառերի տակ,
կոչվում ե ի՞նքնացանք:

Հաշվեցեք, թե նույնպիսի տարածության վրա ի՞նչքան ծիլեր կան
անտառի ներսում, յեզերքին և այն մասերում, վորտեղ ծառերը կտըրտ-
ված են: Աշխատեցեք վորոշել, թե նրանք ի՞նչպիսի ծառատեսակների
սերմերից են առաջացել: Ի՞նչպիսի ծիլերն են թվով ավելի և տեսքով
ավելի առողջ:

Հաճախ անտառը մատաղ ծառերի վերաբերմամբ վոչ միայն «ճն-

շողի» դեր չի կտտարում, ալլև պաշտպանում են նրանց. շատ ծառա-
տեսակներ իրենց կւանքի սկզբնական շրջանում քամիներից և ցրտից
պաշտպանվելու կարիք են զգում (որինակ, լեզնին), իսկ այդպիսի
պաշտպանություն ցույց է տալիս նրանց անտառը:

Բայց մատաղ ծառերը վորոշ չափով ամրանալուց հետո սպասում
են կլանքի ավելի նպաստավոր պայմանների—1) լուսի ավելացման,
2) տեղի համար մղվող պայմանագրի թուլացման, 3) առատ խոնավության,—
պայմաններ, վորոնք կարող են լինել միայն մայր անտառի նոսրանա-
լու դեպքում:

Մատաղ ծառերի յեվ յենքանտառի ազգեցությունն անտառի վրա.—
Թե մատաղ ծառերը և թե յենթանտառն իրենց հերթին ազգեցությունն
են ունենում անտառի վրա. 1) չեն թողնում, վոր անտառի հողը ծածկ-
վի բուսականությամբ, 2) պահպանում են հողի մեջ խոնավությունը,
3) հարստացնում են հողը բուսահողային նույութերով:

Ընդհանուր հետեւկություն. —Դեպի անտառը կազմակերպած մեր
եքսկուրսիան թույլ ե տալիս մեղ անել մի քանի ընդհանուր հետևու-
թյուններ: Ահա զբանցից կարեռագույնները.

1. Անտառի ծառերը սերտ կերպով կախված են մեկը մյուսից:
2. Անտառալին բույսերի միասին ապրելու հանգամանքը ստեղ-
ծում և վորոշ բույսերի համար նպաստավոր և վորոշ բույսերի համար
անպատճ, կորստաբեր պայմաններ: Պայմանների այդ տարրերու-
թյունն առաջ ե բերում գոյության կրիվ, վորի մեջ թույլերը և պար-
մաններին չհարմարվողները մեռնում, վոչչանում են:


3. Յեթե անտառի բույսերը ժամանակավոր կերպով կարողանում
են միասին ապրել, այդ նշան ե, վոր նրանք դեռ ունեն ապրելու հնա-
րավորություններ:

4. Անտառի բոլոր բույսերը, վորոնք փոխադարձ կապերով կապ-
ված են միմյանց հետ և հաջող կերպով ոգտագործում են իրենց կեն-
սական հնարավորությունները, կազմում են մի համակեցություն, վոր
կոչվում ե անտառային համակեցություն:

3. ՄԻՔԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Մասք նկարելու ժամանակ նրա առանձին մասերի մեծարյան-
ների մեջ յեղած հարաբերությունը վորուելու յեղանակը.—Յեթե կամե-
նում եք ծառը նկարելու ժամանակ նրա առանձին-առանձին մասերի
ստույգ համեմատական հարաբերությունը պահպանել, ապա պիտի

վարվեք ալսպես. պետք և բռնեք մատիտն աջ ձեռքով ուղղաձիգ կերպով և մեկնելով ալդ ձեռքը՝ պահեք մատիտը ձեր աջ աչքի դիմաց. Այնուհետև պիտի փակեք ձեր ձախ աչքը և պահեք մատիտն ալսպես, վոր նրա վերեկի ծալըն ընկնի ձեր աչքը ծափի գագաթի հետ միացնող գծի վրա. Այդ անելուց հետո ձեր բութ մատի լեղունգի դրեք մատիտի վրա այն կետին, վոր գտնվում և ձեր աչքը ծափի բնի սկզբի, ալսինքն հողից անմիջապես դուրս լեկող մասի հետ միացնող գծի վրա (նկ. 8).



նկ. 8.

Մասի բարձրության և պսակի լայնության միջն լեղած հարաբերությունն իմանալու համար պետք և առանց ձեր մեկնած ձեռքը կորացնելու և բութ մատի լեղունգի տեղը փոխելու, մատիտի դիրքը փոխեք և տաք նրան հորիզոնական դիրք, վորից հետո մատիտի ծալը պիտի բռնեք պսակի ամենալայն մասի ուղղությամբ և ալսպես, վոր նրա ծալըն ընկնի ձեր աչքը պսակի ամենալայն մասի ծալը հետ միացնող գծի վրա. Այդ ժամանակ իսկույն կերեա, թե վորն և ավելի մեծ ծափի բարձրությունը,


թե պսակի լայնությունը: Այդ լեղանակով կարելի ին ստուգ կերպով վորոշել, թե ծառի բարձրությունը քանի անգամ և մեծ կամ փոքր պսակի լայնությունից: Ճիշտ ալդ ձեռվ կարելի լե վորոշել և պսակի բարձրության ու լայնության փոխարարերությունը և այլն: Սակայն չպիտի մոռանաք, վոր չափումների ճշտության տեսակետից անհրաժեշտ ե, վոր աջ ձեռքը մեկնված լինի միանգամայն ուղիղ կերպով և ձախ աչքը փակված:

Բ. Մասի բարձրության չափումը.—Բարձրաչափ. Պատրաստեցեք ինքներդ պարզ բարձրաչափ և սովորեցեք նրանով չափել ծառերի բարձրությունը:


Վերցրեք մի ուղիղ փայտիա ձող 120 սանտիմետր լերկարությամբ: Նրա մի ծալը 15 սանտիմետր հեռավորության վրա մի կարմիր գիծ քաշեցեք. ալդ գծից 10 սանտիմետր հեռավորության վրա քաշեցեք մի նոր գիծ: Այնուհետև առաջին գծից 100 սանտիմետր (մեկ մետր) հեռավորության վրա քաշեցեք լերկըրդ գիծը: Դրանով բարձրաչափն արդեն պատրաստ է համարվում (նկ. 9.): Մի մոռացեք, վոր առաջին և լերկըրդ գծերի միջն լեղած տարածությունը տասն անգամ ավելի փոքր ե, քան առաջին և լերըրդ գծերի միջն լեղած տարածությունը:

Չափումն.—Բոնեցեց բարձրաչափն ուղղաձիգ կերպով, փակեցեք

ձեր ձախ աչքը և միայն աջ աչքով նայելով՝ մոտեցեք այն ծառին, վարձ բարձրությունն ուզում եք չափել. մոտեցեք այնքան, մինչև վործառի ամբողջ բարձրությունը կտեղավորվի բարձրաչափի առաջինին և ինքը գծերի արանքում (նկ. 10). Ուշադրություն դարձեք, վործ ձեռքի փայտն ունենա ճիշտ ուղղաձիգ ուղղություն. նշան արեք, թե ծառի վործ կետի դիմաց.



Նկ. 9.




Նկ. 10. Մասի բարձրության չափումը:

և ընկնում ձողի տերկրությ գիծը: Լավ կլինի, յեթե մեկը ծառի մոտ գնալով՝ նշան անի նրա վրա այդ կետը: Այնուհետև չափեցեք ծառի բնի սկզբից մինչև այդ կետը և ստացված թիվը (սանտիմետրերով): բազմապատկեցեք 10-ով: (Խնչնեւ), Դրանով դուք միանգամայն ճիշտ գաղափար կկազմեք ծառի բարձրության մասին:

Գ. Ենչպես պատրաստել ամենապարզ տեսակի չափական յեղան յեվ չափել երանով ծառերի տրամագիծը.—Մտորե բերված նկարից (նկ. 11) և համառոտ բացատրություններից դուք հեշտ կերպով կարող եք ըմբռնել, թե ինչպես պետք և պատրաստել չափական յեղանը:

Փայտա բարակ տախտակի (ա) ծալրին հաստատված և ուղղահայաց ուղղությամբ մի փայտյա ձող (բ): Վորպեսզի այս ձողն ամուր լինի իր տեղում, ամրացնում են փայտյա մեխերով: Աւղղահայաց ձողի նման մի այլ ձող շարժվում է փայտյա տախտակի տերկարությամբ:

վորովհետև վերջինս անցնում է նրա ծալրին բաց արած անցքի միջով: Այս անցքն այնպես են շինուած, վոր փայտա տախտակն անցնի նրա միջով ազատ կերպով, առանց գդվարությունների: Վորպեսզի անցքը ունեցող ձողը շեղումներ չունենա ուղղահայացի նկատմամբ, շինում են նրա դեպի գուրս նայող լերեսի վրա մի ուղղանկյուն լեռանկյունի (թ) և այնպես, վոր նրա հիմքը սերտ կերպով նստի փայտա տախտակի վերեկի կողի վրա: Ուղղահայաց ձողը շարժելու ժամանակ լիթե լինանկյունու հիմքը միշտ նույն ձևով նստած է մնում, այդ դեպքում փայտա տախտակի ծալրին ամրացրած առաջին ձողը և այդ լիթը լինում են իրար զուգահեռական: Դրանից հետո փայտա տախտակի կողքի մակերեսութիւնի վրա լուղաներկով գծում են սանտիմետրային բաժանումներ և զրանով չափական լեզանը պատրաստ է համարվում:



Նկ. 11. Չափական յեղան:

Չափական յեղանի նկարից և այս բացատրությունից միանգամայն պարզվում է, թե ինչպես պետք է նրա միջոցով չափել ծառերի բների հաստությունը: Դրա համար հարկավոր է միայն բռնել ծառի բունը յեղանի ձողերով և իմանալ սանտիմետրերի թիվը, վոր նշանակված և փայտա տախտակի վրա:

4. ՀԵՏԱԳԱ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ:

Եքսկուրսիայի ժամանակ ձեր ուշադրության նյութ յեղող հարցերից բղխում են նոր հարցեր, վորոնք նույնպես արժանի լին ուշադրության: Այդ հարցերը կարող են շատ շատ լինել, բայց մենք այստեղ կսահմանափակվենք միայն մի քանիսով, ամենաելականներով: Կանգ կառնենք, որինակ, այսպիսի թեմաների վրա:

1. Ճանաչել դպրոցին մոտ գտնվող ծառերից ամենագլխավորներն, իրենց արտաքին նշաններով:

2. Դպրոցի ուայոնում գտնվող անտառի մեծությունը: Այդ ան-

տառի գերն ու նշանակությունը և գրությունը, ի՞նչպես և բավարար-
վում գյուղացիների փայտի կարիքը:

3. Ի՞նչ պիտի հասկանալ կանոնավոր անտառային անտեսություն
ասելով և ի՞նչ նպատակների լե նա ձգտում:

4. Բնափայտի աճումը, նրա զանգվածի մեծանալը: Բնափայտի
կազմությունը:

5. Բնափայտի տեխնիկական հատկությունները:

6. Անտառների պաշտպանությունը:

5. ԴՊՐՈՑԻ ՄՈՏ ԳՏՆՎՈՂ ՇԱՌԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ, ՆՐԱՆՑ
ԱՐՏԱՔԻՆ ԲՆՈՒԹՅՈՒՆԻԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՃԱՆԱՋԵԼՆ
ԱՐՏԱՔԻՆ ՆՇԱՆՆԵՐՈՎ.

Ա. Մառեր նանաչելը.—Ցերեք տան ձեզ ծանոթ ծառերից վորեն
մեկի անունը, դուք կարող եք ցուց տալ այդ ծառը լեզած ծառերի
մեջ, բայց առանց հաշիվ տալու ձեզ, թե ինչու: Ալդպես եք վարդում
դուք և այն ժամանակ, լերը պատահում եք ձեր ծանոթներից վորեն
մեկին: Սակայն այդ ձեռվ ծառեր ճանաչելը հաճախ կարող և պատճառ
դառնալ ամենակոպիտ սիխաների: Հարկավոր և սովորել պարզ կերպով
շնունջ այն նշանները, վորոնց հիման վրա կարելի լե ստուգ կերպով
վորոշել ծառի տեսակը:

Դրա համար հարկավոր և ինկատի ունենալ հիտեւալը.

1. Մառերի նյուղավորման բնույթը.—Ռւղղված են արդյոք ճյուղե-
րը ուղիղ գեպի վեր և մոսավորապես ի՞նչպիսի անկյունով (որինակ,
հացենին, բարդենին ուղղվում են սուր անկյունով), թե ճյուղերը կախ-
ված են ցած (որինակ, ուռենին, կեչին):

3. Կեղեղի առանձնահատկությունները.—Նրա գույնը, հարթ և արդյ-
ոք նրա մակերեսությը (լաստենի), թե ծածկված և ճեղքերով (լորենի)
և կամ պատած և թեփուկներով (շամի, յեղենի):

3. Տերեկների կամ բաղրազների դասավորությունը յեն ձեռվը.—Նստած
են արդյոք նրանք ճյուղի վրա հատ-հատ (լորենի), թե զուկուզուզ
(հացենի, թղկի) կամ խումբ-խումբ (կաղնի):

4. Պտուղների արտաքին տեսքը և կազմությունը:

5. Աչքի ընկնող ալլ հատկություններ. Գիշեր (վալրի տանձենի)
կամ ճանրափեր (վարդենի) ճյուղերի վրա:

Ցերը բոււն անծանոթ ե, այդ գեպքում այդ նշանների համա-
ձայն կարելի լե տալ նրա համառոտ և ճիշտ նկարագիրը և հետո կամ
վորոշիչ գրքերի միջոցով և կամ լավատեղլակ մարդկանցից իմանալ
նրա իսկական անունը:

Դպրոցի մոտ գտնվող ծառերի հետազոտումը.—Դպրոցին մոտիկ կամ նրա շրջանում կարող են լինել կանաչ ծառեր, վորոնք ունեն կտմ կուլտուրական և կամ առողջապահական նշանակություն, որինակ, աշխատավորների համար հանդիսանում են հանգստյան վայրեր, կամ պուրակներ են, վորածեղ տեղավորված են սանատորիաներ, մանկատներ և այլն։ Տեսեք, արդուք չեն տուժել այդ ծառերը «վառելափառի» սովոր հետևանքով։ Հետազոտեցեք այդ ծառերը այն մտքով, վոր պարզեք, թե ինչ դրության մեջ են նրանք և ինչ միջոցներ պետք են ծեռք առնել նրանց դրությունը բարելավելու համար։

Որինակ, մի քանի հարցեր, վոր պետք են պարզվեն հետազոտման ժամանակ։ 1) Ի՞նչ են կազմում ծառերը (պարկ, զբոսարան, այգի, պուրակ, փողոցները զարդարող ծառաշարքեր)։ 2) Նրանց բոնած տարածությունը և մոտավոր հատակագիծը։ 3) Ի՞նչ տեսակի ծառեր են և ի՞նչ տոկոսալիքն հարաբերության մեջ են գտնվում այդ տեսակները հետազոտման լինթակա ռայլում։ 4) Ի՞նչ զրության մեջ են գտնվում ծառերը (կանոնավոր կերպով զարդացած, վնասված՝ մարդու, անասունների կամ մասատունների կողմից)։ 5) Ի՞նչ նշանակություն ունեն այդ ծառերը տեղական կլանքում։

6. ԴՊՐՈՑԻ ՌԱՅՈՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՏԱՌԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱՆՏԱՌԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ԱՆՏԱՌԱՄԹԵՐՔՆԵՐՈՎ. ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

1. Ստուգ տեղեկություններ հավաքել շրջանի անտառների տարածության վերաբերյալ։

Մանօրուրյուն.—Անհրաժեշտ տեղեկություններ կարելի լինեն անտառապահության, հողագույնի և այլն որդաններում։ Դրույական անտառաշինարարության վերաբերյալ նկատմամբ պահպան են սովորաբար գլուղական խորհուրդներում։

2. Եեթե ցուց տան ձեզ ձեր շրջանի անտառների հատակագիծը, աշխատեցեք կիսաթափանցիկ թղթի վրա արտանկարել մատիտով այդ հատակագիծը կամ լեթե ունեք լուսանկացական գործիք, հանեցեք նրա լուսանկարը։ Հատակագիծի վրա հավանորեն կլինեն և տվյալներ անտառի ծառերի գերակող տեսակների մասին։ Հատակագիծին կը ցված նկարագրության մեջ կարող են լինել ցուցմունքներ անտառի զանազան մասերի տնտեսական նշանակության և անտառի ընդհանուր դրության մասին։ Այդ բոլորից պետք են ոգտվեք էներ աշխատանքի համար։

3. Տեղական վարչական որգաններում կարող եք իմանալ ձեր շըջանի ամբողջ տարածության մակարդակը։ Հիմնվելով ձեր տրամադրության տակ գտնված թվերի վրա՝ հաշվեցեք, թե ի՞նչ տոկոս եկազմում անտառի բռնած տարածությունը շըջանի ամբողջ տարածության նկատմամբ կամ, ինչպես տում են, իմացեք ձեր շըջանի անտառուրյան տոկոսը։

Ստացված թվերը համեմատեցեք Ռուսաստանի Խորհրդային Հանրապետության խոշոր վարչական ռայոնների անտառության տոկոսների հետ։

Այդ առթիվ կան հետեւալ տվյալները։

Ռայոններ	Ռայոնի տարածությունը հազարական հեկտարներով		Անտառության տոկոսը	Տակածության տոկոսը	Տակածության բիլիների թվը հազարներով հաշված
	Ընդամենը	Անտառային տարածությունը			
1. Հյուսիս-արևելյան	56,540	26,600	47		850
2. Հյուսիս-արևմտյան	97,240	74,640	77		240
3. Արևմտյան	10,700	3,170	30		800
4. Կենտրոնական արգյունաբերական	33,100	12,180	37		1,850
5. Մեջին Վորայի	33,650	9,010	27		2,100
6. Ուրարի շրջան	181,320	49,050	27		1,550
7. Կենտրոնական սեահողային	14,960	1,420	10		1,850
8. Ստորին Վոլգայի	29,720	1,500	5		850
9. Հյուսիսային Կովկասի շրջան	25,460	3,280	10		750
10. Կերպիգական յերկիր	34,300	360	1		1,050

Այս աղյուսակը ցուց է տալիս, վոր Ռուսաստանի Խորհրդային Հանրապետությունը թեպետ շատ հարուստ է անտառներով, բայց այդ անտառները շատ անհամաշատ են տարածված նրա զանազան մասերում։ Այսպես, որինակ, նրա հյուսիս-արևելյան ռայոններմ անտառությունը հասնում է 77% -ի, մինչդեռ Ղրղզական յերկրում՝ ընդամենը 1% -ի։

Բացի զբանից, ուշադրություն դարձրեք աղյուսակի 4-րդ սյունակի վրա, վորտեղ նշանակված են անտեսությունների թվերը (հազարներով)։ Այս թվերը համեմատելով համապատասխան ռայոնների անտառության տոկոսների հետ, տեսնում ենք, վոր ռայոնի անտառությունը հակադարձ համեմատական է ռայոննի գյուղական աղյուսակին այնտեղ, վորտեղ աղյուսակի շուրջը նոսր է, և ընդհակառակը, փոքր է այնտեղ, վորտեղ աղյուսակի շուրջը խիտ է։

Ազս հանգամանքը շատ և դժվարացնում դրուղական ազգաբնակչությանն ամեն տեղ փայտանյութերով համաշափ կերպով բավարարելու գործը: Խուսական Խորհրդային Հանրապետության տարածության մոտ մի քառորդ մասը գրեթե զուրկ և սեփական անտառներից, և գլուղացիներն իրենց անհրաժեշտ փայտանյութերն ստանում են հեռավոր վայրերից:

4. Պարզեցեք, թե թու զրության մեջ և գտնվում ձեր շրջանի գլուղական ազգաբնակչությունը փայտանյութերով բավարարելու տեսակետից:

Խանորդուրիուն: — Անհրաժեշտ և մի եքսկուրսիա կազմակերպել գեղագիտական մոտիկ վորեւ գլուղ:

Եքսկուրսիայի ժամանակ ամենից առաջ անհրաժեշտ և իմաստալ, թե ձեր հետազոտման ռայոնի անտառներն թու տեսչության են լինելակա. պատկանում են նրանք ընդհանուր պետական Փոնդին, թե գտնվում են տեղական հողրաժնի և կամ գլուղացիության տրամադրության տակ:

Ա. Պետական ֆոնդի անտառներ: — Ի՞նչպիսի նյութերով, թու քանակությամբ և թու պարմաններով և անտառապետությունը փայտանյութ մատակարարում գլուղացիներին:

1. Կան արդյոք այսպես կոչվող մասակարգման նորմաներ, այսինքն պետական որդանների կողմից ընդունված քանակություններ, վոր տեղական պարմանների տեսակետից բաց են թողնվում ամեն մի հոգու կամ ամեն մի դրուղական տնտեսության: Ի՞նչպիսի նորմաներ կան: Ի՞նչ արժե նորմարով վարողված անտառանյութը ստացման տեղում: Ի՞նչպես են բաց թողնում անտառանյութը, ձրի, թե արտօնված պարմաններով. ում են ձրի բաց թողնում և ով ի՞նչպիսի արտօնություններ ե վայելում: Թու են տալիս արդյոք գուրս տանել անտառից ընկած չոր փայտաը: Հաճախ են արդյոք գլուղացիներն ինքնակամ կերպով կարտում գլուղերին մոտիկ պետական անտառները:

Բ. Տեղական նօանակուրյուն ունեցող անտառներ: — Հեղափոխությունից հետո բոլոր անտառները հայտարարվում են ազգայնացված և մտնում են ընդհանուր պետական անտառային Փոնդի մեջ: Սակայն 1923 թվից սկսած ձեռք են տանվում վորոշ միջոցներ, վորոնցով գլուղացիներն ավելի հեշտ կերպով կարող են ոգտվել անտառից: Կառավարությունը վորոշում և վերադառնել գլուղացիներին այն բոլոր անտառամասերը, վոր առաջ պատկանում ելին գլուղացիության: 1926 թվին այդ վորոշումը կլանքի մեջ և մտնում և գլուղացիության վերադարձում և $30\frac{1}{2}$ միլիոն հեկտար տարածությամբ անտառներ:

Այս տարածութիւնը 1½ անգամ ավելի է Շվեդիակի և յերկու անգամ՝ Գերմանիայի անտառների բռնած տարածությունից:

Սակայն չնայած դրան՝ անտառների անհամաշափ տարածված լինելու հետևանքով ամեն տեղի գուղացիություն նույն չափով չեղախում անտառից:

Ի՞նչպիսի տարածություն են բռնում ձեր շրջանի անտառները. Ի՞նչպիսի ծառատեսակներ են այնտեղ գերազանցում. Ի՞նչպես են պահպանված այդ անտառները: Ի՞նչպես և կազմակերպված անտառի ոգտագործման գործը: Բավարարժամ և արդյոք անտառը բնակչության կարիքները: Ի՞նչպես և վերաբերյալ գուղացիությունն այդ անտառներին: Կմն արդյոք վարձովի պահպաններ, վորոնք պաշտպանում են անտառը ինքնակամ կարողներից:

Այս բոլորն անհրաժեշտ են ստուգերու համար այն տեղեկությունները, վորոնք պնդում են, թե գուղացիներն առհասարակ խելացի և տնտեսական կերպով չեն ոգտագործում տեղական նշանակություն ունեցող անտառները և հարկավոր հոգացողություն չեն ցույց տալիս անտառների պահպանման գործին:

Եթե հաստատվեն այս տեղեկությունները, այդ գեպքում դպրոցը պետք և հանդիս գա անտառի պաշտպանի գերում և խոսքով ու գործով¹ պետք և աշխատի պալքարել գուղացիության մեջ արմատացած անտառը վոչնչացնելու բնագդի դեմ, վոր մասցել և մարդու մեջ ամենահին ժամանակներից: յերբ խուլ կոխվ կար մարդու և անտառի միջև:

7. Ի՞նչՊիՍ և ՏԱՐՎՈՒՄ ԿԱՆՈՆԱԿՈՐ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՏԱԿՆԵՐԻ ՑԵՍ ՆԱ ԶԳՏՈՒՄ

Կանոնավոր անեառային տնտեսությունը ծողովդրական տնտեսության այն բնագավառն ե, վորի նպատակն և կազմակերպել փայտանյութի արտադրությունը և ոգտագործել փայտանյութի պահեստներն այրպես, վոր կորցրած նյութը շարունակ վերականգնվի կենդանի անտառանյութերի² ձեռվէ:

Այդ նշանակում ե, անտառի ոգտագործումը պետք և դրված լինի այնպես, վոր ամեն տարի գործածվող փայտանյութի քանակությունը չգերազանի այն քանակությունից, վոր կարող և առաջանան անտառի մեջ բնական աճման ճանապարհով:

¹ Որինակ, ամեն տարի Հանտառի որ կազմակերպելով:

² Կարդալ անտառի ոգտագործման վերաբերող հրահանդիները:

Անտառալին տնտեսությունը ձգտում է. 1) բավարարել ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառների և տեղական բնակչության փալտանչութի կարիքը, 2) ոգտվել անտառի բոլոր ոգտակար կողմերից, 3) բարելավել գոլություն ունեցող անտառի կազմը և անումը (խնամքը), 4) անտառապատճել սակավանտառ վայրերում նորանոր տարածություններ:

Եավ և կանոնավոր կազմակերպված անտառալին տնտեսության հետ կարելի լի ծանոթանալ այնտեղ, վորտեղ կա անտառապետություն (մանավանդ լիթե տեղում գտնվում և անտառապետության վարչություն), բայց համախ փորձված անտառապահը ևս կարող եշտ բան ցուց տալ բարեկարգ վիճակում գտնվող անտառում:

Եքսկուրսիալի ժամանակ պետք ե ծանոթանալ հետեւալ կարեվոր հարցերի հետ:

Ա. Ծանորանալ անտառի պլանի հետ.—Անտառի ամբողջ տարածությունն ինչպիսի մասերի լի բաժանված։ Այդ մասերի սահմաններն ինչպիս են վորոշվում։ Մանոթանալ անտառի զանազան տարիքունեցող մասերի հետ (մատաղ, միջին տարիքի, հասունացող և հասած մասեր)։ Այդ բոլորի հետ ծանոթանալ թե պլանի վրա և թե իրականի մեջ։

Բ. Ծանորանալ անտառահատման ծրագրի յևլ աշխատանքների հետ։—Ինանալ, թե ամեն մի շրջան անտառահատվելուց հետո մեկ ել ինչքան ժամանակից հետո յի հասնում կրկին հատվելու տարիքին։

Գ. Անեսառահատման յեղանակները. տեղական կարիքները հոգալու և փայտամթերման նպատակներով։

Դ. Անտառի մաքրումը յևլ նորացումը (ալսպես կոչվող մեջընդմեջ հատումն), վոր կատարվում և ծառերի աճման պայմանները լավացնելու և փալտի վորակը բարձրացնելու նպատակով։

Ե. Անտառը նորոգելու յեղանակները.—Բնական (արմատներից դուրս լեկող ընձյուղներով, ինքնացանքով) և արհեստական (սերմեր ցանելով, տնկիներ դնելով, մատաներ դնելով)։


Զ. Տնկարան։—Մանոթանալ նրա աշխատանքների և նպատակների հետ։ Մանոթանալ զանազան տեսակ ծառերի տնկիների հետ։

Լ. Ինչպիս են տեղափոխում տնկիները և ինչպիս են խնամում նոր տեղափոխված տնկիները։

Թ. Ոժանդակի հիմնարկուրյանեներ անտառապետուրյան մեջ.—Ծուցադրական թանգարան անտառաբուծության վերաբերմամբ, լաբորատորիա (թնչ աշխատանքներ են կատարում ալդտեղ), սերմերի պահեստարան, գործիքների պահեստ, ծանոթանալ անտառալին աշխատանքների համար գործածվող ամենաբնորոշ ինվենտարի հետ։

Տ. ԲՆԱՓԱՑՏԻ ԱՅՈՒՄԸ, ՆՐԱ ԶԱՆԿՎԱԾԻ ՄԵԾԱՆԱԼԾԻ.
ԲՆԱՓԱՑՏԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

(Լաբորատորական պարապմունք)



Նկ. 12. Մեծառերեւ լորենու ընձյուղի ծալը:

Նրա դեպի ձեր ձեռքը դարձած բերանը ծածկեց լերկտակ ծալած:

Ա. Անումը բարձրաւրյան
ուղղությամբ.—1. Դիտեցեք միան-
գամայն մատաղ թղկու, լորենու,
հացենու և այլն գագաթալին
ընձյուղների ծալը։ Դուք կը-
նկատեք նրանց ծալըներին գա-
գաթալին բողբոջը, հաճախ ըը-
շապատված կողմանակի բողբոջ-
ներով (նկ. 12)։

2. Կտրեցեք ընձյուղից մի
փոքրիկ կտոր նրա գագաթալին
բողբոջի մոտից և ապա սուր
ածելու միջոցով կտրեցեք նրա-
նից ինչքան կարելի լե մի բա-
րակ շերտիկ, բայց աշխատեցեք,
վոր ալդ շերտիկը չտրովի (շեր-
տիկը կտրելու ժամանակ նա-
խապես պետք ե բողբոջի մակե-
րությը թացացնել մի կտթիլ
ջրով)։

Մանօքը առաջանակ առաջա-
ռական կոթավոր ածելու
տեղ կարող եք վերցնել նաև
ալսպես կոչվող անվտանգ
ածելու դանակը (նկ. 13)։

Ալդ դանակը կտրելու
ժամանակ պիտի բռնեք աջ
ձեռքի բռնթ մատի և ցու-
ցամատի արանքում։ Վո-
րովհետեւ ալդ դանակի լեր-
կու լեզրերն ել սուր են,
դրա համար ել նախապետ-


չության համար պետք ե

3. Ստացված բարակ կտորը դրեք առարկայական ապահով վրա և դիտեցնք խոշորացուցով՝ մեծացնելով 18—30 անգամ։ Այդ դեպքում կտեսնեք մոտավորապես այս, ինչ վոր սխեմատիկ կերպով ցուց ե տրված նկ. 14-ի մեջ։

Բողբոջի բոլորովին զերեւի ծալրը նման է մի թմբիկի (ա), վորի թե հիմքի մոտ և թե կողքերին գտնվում են թեթև կերպով փոս ընկած մասեր (բ): Թմբիկի տակ գտնվում են յերկողորդական փոքրիկ թմբիկներ (գ) և յերկարությամբ ձգված ծծակներ (դ): Այդ բոլորը ծածկված են լավ զարգացած կանաչավուն թեփուկներով (ե), վորոնք նստած են իրենց հիմքերով ավելի ցածր մասերում։ Մրանց հիմքերի մոտ հաճախ յերեսում են ավելի փոքրիկ կողմանակի բողբոջներ (զ):



Նկ. 13. Անվտանգ ածելու դանակը




Նկ. 14. Գաղաթային թմբիկի յերկարությամբ կարգածվում։

Եթե հաջողվի ձեզ կտրել բողբոջի ծալրի յերկարությամբ մի շատ բարակ և թափանցիկ կտոր, ապա այդպիսի կտորը խիստ կերպով մեծացնելով միկրոսկոպով, կտեսնելիք, վորա թմբիկը բաղկացած երազմաթիվ կենդան բջիջներից։ Դարձնան ալդ բջիջներն սկսում են կիսվելու յեղանակով արագ կերպով բազմանալ, վորի շնորհիվ և թմբիկն աճում, մեծանում ե։ Այդ թմբիկը կոչվում է անման կետ կամ անման կոն։ Նրա կողմանակի փոս ընկած մասերը և ծծակներն աստիճանաբար ձեւավորվելով՝ փոխարկվում են տերևների, վորոնք ծավալով մեծանալով և ձգվելով՝ հրում են ծածկութային թեփուկները մի կողմի վրա և ապա դուրս գալիս լուս աշխարհ։

Այդ առաջին տերեններն սկզբում նմանվում են մի փնջի, վորով հետև տերենների արագներում յեղած տարրածությունները շատ փոքր են, բայց յերբ այդ արանքներն աճում, յերկարում են, այդ դեպքում

Նկատելի լեռ գառնում արդեն մի նոր ընձյուղ (նկ. 15.). Այս ընձյուղի գագաթային բողբոշի մեջ գտնվում է նոր աճման կոնը՝ թագնված վիճակում։

Այսպիսով տարեցտարի լերկարում և ծառի զիխավոր առանցքը կամ բռնը։



Նկ. 15. Թղկու մատաղ գագաթային ընձյուղը Ք. Բ.—գագաթային բողբոշը
Կ. Բ.—կողմակի բողբոշը

Ճիշտ արդպես աճում են և կողմակի ճյուղերը, վորի շնորհից հետզհետեւ մեծանում և ծառի գագաթը։

Բ. Բնի անումը նաստությամբ, Բնափայտի կազմությունը։

4. Դիտեցեք խոշորացուցով լորենու և թանթրվենու միամյա ընձյուղների լայնությամբ կտրվածքները՝ մեծացնելով 18—20 անգամ։

Այդ կտրվածքների վրա հեշտությամբ կնկատեք գույնի և խտության տեսակետից տարբեր հյուսվածքների համակենտրոն դասավորությամբ շերտեր։

Համարեցեք այդ շերտերը։ Նկարեցեք կտրվածքների պատկերը՝ պահպանելով բարբեր շերտերի համեմատական հաստությունները։ Խնչպիսի զանազանություն եք նկատում լորենու և թանթրվենու կտրվածքների մեջ։ Համարակալեցեք պատկերի վրա յեղած շերտերը պես կենարոնը։ Կարեցեք կաղնու ճյուղը լայնությամբ։ Աբուժը սրա մեջ ևս ներքին հյուսվածքների շերտերը կանոնավոր ողակներն կազմում։

5. Վերցրեք մատի հաստությամբ մի լորենու ճյուղ, պոկեցեք զգուշությամբ նրա վրայից կեղկի մուգ-շիկագույն, կանաչավուն և զեղնավուն շերտերը։ Խնչպիս և պոկվում կեղկը, հեղշա, թէ դժվար։

Կեղևը հեռացնելուց հետո ստացվում ե մի սպիտակ ձողիկ: Ահա հենց այդ սպիտակ ձողիկն ե ճլուղի խսկական բնափայտը: Ձեր համարակալած պատկերի վրա վժը շերտին ե համապատասխանում բնափայտը: Ուրեմն, կեղևը պոկելու ժամանակ վժը համարների շերտերը հեռացվեցին ճլուղից:

Դիտեցնք լորենու ճլուղի վրայից պոկած կեղելը: Հասարակ աշքով անգամ կնկատեք, վոր նա բաղկացած է լերեք շերտից, արտաքին մուգ շիկազուկն շերտը վերնամաւեկն ե, նրան հաջորդող կանաչավուն շերտը՝ նախնական կեղելը, իսկ ներքին՝ բնափայտին կպած սպիտակավուն կամ գեղնավուն շերտը՝ լուրք, վոր բաղկացած ե թելերից, մանավանդ լորենու մեջ:

Համեմատեցեք խուզած և չխուզած մազերի աճումներն իրար հետո։

Համեմատեցեք տաք գոմերում և ցուրտ տեղերում պահվող կուվերի մազերի լերկարություններն իրար հետ։

Ունի՞ արգլու խոզն աղվամազ։ Խնչած ե տարբերվում խոզի մարմինը ծածկուլ մազալին ծածկուլթը մլուս կենդանիների ձմեռալին մազալին ծածկուլթներից։ Խնչած եք բացատրում նկատվող տարբերությունը։

Եեթե հարմարություն ունեք, ծանոթացեք խրտվիլակների կամ մորթիների վրա սկլուռի և կամ նապաստակի ամառալին և ձմեռալին մազալին ծածկուլթների հետ։ Խմացեք, թե ի՞նչ արժեք ունեն կենդանիների ամառալին և ձմեռալին մորթիները։ Տարվա վեր ժամանակը պետք ե կատարել լավ մորթիներ տվող կենդանիների վորսը։

7. ԲՈՒՐԴԻ ՑԵՎ ՄՈՐԹԻՆԵՐ ՏՎՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Բրդի և մորթու հետ ծանոթանալուց հետո, բնական ե, վոր

պետք և ծանոթանանք մոտիկից և այն կենդան ելակների հետ, վորոնք առաջ են բերում ալդ նուութերը:

Լավ մորթիներ տվող կենդանիները շատ բազմազան են: Կարելի յե ասել, վոր Միության մեջ համարլա ամեն մի ուլոն ունի իրեն հասուկ լավ մորթի տվող կենդանիները: Այդ կենդանիների հետ ծանոթանալու ժամանակ մենք կսկսենք այն կենդանական տեսակներից, վորոնք հանդիսանում են մարդու մերձավոր ուղեկիցները: Մանոթանալով նրանց կազմության և կենցաղի հետ, մենք կարող ենք ընդհանուր գաղափար կազմել և լավ մորթի տվող վայրի կենդանիների կազմության և կենցաղի մասին:

Ա. Կատու.—(Առաջադրություն ինքնուրոււն կերպով մաշկելու համար): Դիտեցեք կենդան կատվի վրա նրա կազմության առանձնահատկությունները:

1. Դիտեցեք կատվի բերանը և ատամները: (Ատամներն ավելի հեշտ և դիտել կատվի գանգի վրա: Դրա համար ձեռք բերեք կատվի գանգ և ուշադրությամբ ծանոթացեք ատամների հետ): Քանի՞ տեսակի ատամներ եք տեսնում կատվի բերանում: Ի՞նչն էն նրանք տարբերվում մեկը մյուսից: Վեր ատամներն են ամենից շատ զարգացած: Համարեցեք կատվի ատամները, նկարեցեք ալդ ատամները և տվեք ծնուռի վրա նրանց դասավորության սխման: Ի՞նչ դեր են կատարում զանազան տիպի ատամները (կտրիչները, ժանիքները, հիմնականները (աղորիքները):

2. Բաց թողեք կատուն և այնպես արեք, վոր նա ման գա սեն-լակի մեջ. ուշադրությամբ ականջ գրեք նրա քալվածքին: (Ի՞նչն է զանազանվում կատվի քալվածքը շան քալվածքից: Զե՞ք կարող բացատրել, թե ինչից ե առաջանում ալդ տարբերությունը): Առաջ բերեք վորոնե ձայն, վոր հիշեցնի մկան առաջ բերած ձայնը: Ի՞նչ ազդեցություն ե ունենում ալդ ձայնը կատվի վրա: Ի՞նչ են լինում նրա թաթերը:

Վերցրեք կատվի թաթը ձեր ձեռքը և զգուշությամբ սեղմեցեք նրա մատների քարձիկները. ուշադրություն դարձրեք ալդ ժամանակ ձիրանների գուրս և ներս քաշելու վրա:

Ի՞նչ նշանակություն ունի ալդ մեխանիզմը կատվի կանքում:

3. Վերցրեք կատուն ձեր ձեռքը և դարձրեք նրա գլուխը ուղիղ դեպի լուսը: Ի՞նչ փոփոխության են լենթարկվում աչքի բբերը: Մածկեցեք լուսը և թուլ լուսի մեջ դիտեցեք բբերի կրած նոր փոփոխությունը: Նկարեցեք կատվի աչքերը լուսի և մթության դեպքում: Ի՞նչ հետ և կապված կատվի աչքի ալդ առանձնահատկությունը և ի՞նչ նշանակություն ունի նա կատվի կանքում:

4. Կատարեցեք ձեռքով սպառնողական շարժում դեպի կատվի դունչը: Ի՞նչ փոփոխություն եք նկատում արդ ժամանակ կատվի ականջների և աչքերի մեջ: Ի՞նչ նշանակություն ունի այդ հանգամանքը կատվի կլանքում:

5. Զանկոելով (որինակ, յեղունգով) սեղանը՝ հարկադրեցեք կատվին խլել ականջները: Նման փորձերով (չանկոելով կամ փիս-փիս ասելով)՝ ստուգեցեք կատվի լսողության նրբությունը:

6. Չե՞ք կարող արդյոք վորեե ինքնուրույն փորձով պարզել, թե ի՞նչ չափով ե զարգացած կատվի հոտառությունը: Բացի դրանից, պատասխանեցեք նաև այս հարցին. հոտառելու ժամանակ կատուն արդյոք ոդը նմը բ քաշում, ինչպես անում ե արդ շունչը, թե վոչ (ի՞նչ եք յեղակացնում դրանից շան մասին):

7. Նախկին փորձերի և դիտողությունների հիման վրա վորոշեցեք, թե կատվի զգայարաններից վժըն ե ավելի զարգացած (տեսողությունը, լսողությունը, հոտառությունը),

8. Տվեք կատվին վորեե ուտելիք (մսի կտոր, ափսելով կաթ) և տեսեք, թե ի՞նչ ե անում նա:

Իր վժը զգայարանով ե գաղափար կազմում կատուն ուտելիքի մասին:

9. Խաղացեք կատվի հետ և դիտեցեք նրա շարժումները: Ի՞նչ շարժումներ են դրանք: Ի՞նչ եք յեղակացնում արդ շարժումներից կատվի մարմնի մասին:

Դիտեցեք կատվի պոչի շարժումները և համեմատեցեք մյուս կենդանիների (շուն, կով) պոչի շարժումների հետ: Վժը կենդանու պոչն և ավելի ճկուն:

10. Դրեցեք կատուն ծառի բնի վրա և դիտեցեք, թե ի՞նչպես ե նա մագլցում: Հաճմիխ են արդյոք մագլցում կատունները: Հիմնվելով կատվի մագլցելու սովորության վրա՝ ի՞նչ եք յեղակացնում նրա նախորդի բնակած վայրի մասին, մինչև նրա ընտանեցումը:

11. Ի՞նչ եք կարծում, հաճմիխ են արդյոք կատունները վաղելով հեռավոր տարածություններ կտրում, ինչպես անում են արդ շները:

Ի՞նչո՞ւ ճիշտ ենք համարում, յերբ ասում են. «կատուն սովորում ե տեղին, իսկ շունը՝ տիրոջը»:

12. Ձեր մինչև այժմ կատարած փորձերի և դիտողությունների հիման վրա պատասխանեցեք հետեւալ հարցերին.

ա) Գիշերայի՞ն, թե ցերեկալիին կենդանի յե կատուն:

բ) Վժը տեղ են տալիք կատվի վայրի նախորդները, անտառում, թե բաց տարածության վրա:

դ) Ի՞նչպիսի կեր են ունեցել կատվի վայրի նախորդները:

դ) Կապված ե արդյոք վայրի կատուն վորեև տեղի հետ, թե կեր և վորոնում ընդարձակ տարածության վրա:

13. Դիտեցեք ուշադրությամբ կատվի մորթին, վորոշեցեք նրա առանձնահատկությունները—փափկության աստիճանը, մազերի փալլը (աչքով դիտելով և շշափելով), լենթաբուրդը և ցից-ցից կանգնած մազերի դասավորությունը, լենթաբրդի խտությունը և լերկաբությունը:

Դտեք վորեև իր, վոր պատրաստված ե կատվի մորթուց, ի՞նչ-պիսի իրերի համար են գործադրվում կատվի մորթիները:

Բ. Նուն.—1. Խաղացեք շան լակոտի կամ ջահել շան հետ և դիտեցեք, թե ինչպես ե հարձակում գործում: Իր վմր գործարաններն են նա այդ ժամանակ գործի մեջ մտցնում:

2. Դիտեցեք շան ատամները: Ի՞նչ նմանություն և տարբերություն եք նկատում նրա և կատվի ատամների մեջ:

Համարեցեք, թե քանի՞ ատամ ունի նա վերեկի և ներքեկի ծնունդների վրա. ամեն մի տեսակից քանի՞ ատամ ունի (կտրիչ, ժանիք, հիմնական (աղորիք):

Նկարեցեք ատամների դասավորության սխեման: Համեմատեցեք վերջինս կատվի ատամների սխեմայի հետ:

3. Համեմատեցեք շան գլուխն ու պարանոցը կատվի զլիսի ու պարանոցի հետ: Ի՞նչ տարբերություններ եք նկատում: Ի՞նչ կենսաբանական առանձնահատկությունների հետ են կապված այդ տարբերությունները:

4. Թողեք շանը ման գտ փայտե կամ քարե հասակի վրա՝ ականջ դրեք նրա քալլվածքին: Ի՞նչնվ և տարբերվում շան քալլվածքը կատվի քալլվածքից: Ի՞նչնվ եք բացատրում այդ տարբերությունը:

5. Դիտեցեք շան թաթը. տեսեք, թե ի՞նչպիսի սրություն ունեն ճիրանները: Համեմատեցեք այդ տեսակետից շան ճիրանները կատվի ճիրանների հետ:

6. Դարձրեք շան աչքերը դեպի լուսը և ապա ծածկեցեք լուսը: Ի՞նչ փոփոխության են լենթաբրկվում բբերը: Ի՞նչ տարբերություն եք նկատում բբերի կրած փոփոխությունների տեսակետից կատվի և շան մեջ: Ի՞նչնվ եք բացատրում այդ տարբերությունը: Վմր կենդանին ե ավելի շարժուն ցերեկը, շմանը, թե կատուն:

7. Կանչելով շան անունը, ստուգեցեք նրա լսողության նրբությունը:

8. Ստուգեցեք շան հոտառության սրությունը թղթի մեջ փաթաթած տապակած մսի կտրով:

9. Դիտեցեք, թե ի՞նչպես ենա ճանաչում իր ուտելիքը: Վեր կենդանին ե իսկապես հոտոտում իր ուտելիքը, կատո՞ւն, թե շունը: Ի՞նչ առանձնահատկություններով ե տարբերվում կատվի դրւնչը շան դնչից:

10. Դիտեցեք, թե ի՞նչպես են խաղում շան լակոտները և կամ մեծ շները միմյանց հետ: Ի՞նչ տարբերություն եք նկատում շան և կատվի շարժումների մեջ:

Հետեւցեք շան պոչի շարժումներին: Համեմատեցեք ալդ շարժումները կատվի պոչի շարժումների հետ: Ի՞նչ տարբերություն եք նկատում նրանց մեջ:

11. Վեր կենդանին ե ավելի վազվզում խաղի ժամանակ, շմենը, թե կատուն: Վերն ե նրանցից ավելի արագ շարժումներ կատարում: Նրանցից վորի՞ վոտներն են ուժեղ ու բարձր և կուրծքը լայն: Ի՞նչով եք բացատրում ալդ տարբերությունը:

12. Վերն ե ավելի հաճախ ձայն հանում, շմենը, թե կատուն: Վորի՞ ձայնն ե ավելի բարձր: Ի՞նչպես են վերաբերվում մյուս շները շան հաջոցին: Կարող ենք արդյոք նույնը ասել և կատուների մասին:

13. Կազմեցեք մի ազյուսակ, վորի մեջ նշաննակված լինի շան և կատվի բոլոր նմանությունները և տարբերությունները (նշեցիք նաև նրանց կյանքի այն առանձնահատկությունները, վորոնց արդյունք պիտի համարել նրանց այդ նմանությունները և տարբերությունները):

14. Դիտեցեք շան մորթին: Ի՞նչով ե տարբերվում նա կատվի մորթուց: Զե՞ք կարող արդյոք վորեն կապ գտնել այդ տարբերության և նրանց կյանքի պայմանների միջև: Վորի՞ մորթին ե ավելի թանգ գնահատվում:

15. Ի՞նչի՞ համար ե գործածվում շան մորթին: Վորի՞ մորթին ե ավելի լավ և փափուկ, շմենը, թե կատվինը:

Գ. Ճագար.—1. Տվյալ ճագարին գազար կամ կաղամբի կոթ: Նկարագրեցեք, թե ի՞նչպես ենա ուտում: Ի՞նչպիսի հետք ե թողնում նա ի՞ր ատամներով բանջարեղենի վրա:

Բաց արեք ճագարի բերանը և դիտեցեք ատամները: Ի՞նչով են նրանք ատարերվում շան և կատվի ատամներից:

Թանի՞ հատ ատամ ունի նա իր ծնոտների վրա: Թանի՞ տեսակի ատամներ ունի նա: Նկարեցեք նրա ատամների դասավորության սխեման:

Համապատասխանում չեն արդյոք ճագարի ատամների առանձնահատկությունները նրա ընդունած կերակրի բնույթին:

Տվեք ճագարին վարսակ ուտելու: Ի՞նչպես և նա վերցնում ալդ ուտելիքը:

2. Դիտեցեք ուշադրությամբ ճագարի վերեկի շրթունքի կազմությունը: Ինչժամ յե նա ալդպես: Ինչին և փոխարինում ճագարի վերեկի շրթունքը:

Դիտեցեք, թե նա ի՞նչպես և սկսում ուտելի ի՞նչպիսի շարժումներ և կատարում նա, յերբ ուտելիք և վորոնում: Իր ալդ շարժումներով ձեր հետազոտած կենդանիներից վորին և նման, շանը, թե կատավին:

3. Ուտելիք վորոնելու ժամանակ ոգտվեմ և արդյոք նա իր տեսողությունից: Աչքերի դասավորության տեսակետից ի՞նչ տարբերություն եք նկատում նրա, շան և առանձնապես կատվի մեջ:



Նկ. 32. Ռուսական սպիտակ կղաքիսային ճագար:

Ի՞նչ առավելություն կամ ի՞նչ թերություն ունի աչքերի ալդ-որինակ դասավորությունը:

Վ.ո՞ր կողմից և ավելի լավ տեսնում ճագարը, առջևից, թե կողքից:

4. Թիսկոցներ հանելով ստուգեցեք ճագարի լսողությունը: Ի՞նչպիսի լսողություն ունի ճագարը:


5. Ի՞նչպիսի կազմություն ունի ճագարի ականջը: Ինչժամ ականջակոնքների անցքերը դարձած են գեպի յետ և վոչ թե կատվի ականջների պես՝ դեպի առաջ: (Համեմատեցեք ալդ տեսակետից և մյուս խոսակեր կենդանիները գիշատիչների հետ):

Ի՞նչպես և խլցում եր ականջները ճագարը (նկարագրեցեք):

6. Դիտեցեք ճագարի շարժումները: Ի՞նչ դեր են կատարում շարժումների ժամանակ նրա առջևի և լետերի թաթերը:

Համեմատեցեք ճագարի առջևի վուները լետերի վուների հետ: Ինչպէս եք բացատրում նրանց մեջ լեղած արբերությունը:

Դիտեցեք ճագարի թաթը: Ի՞նչպիսի սրություն ունեն ճիրանները: Վորի՞ ճիրաններն են ավելի սուր, շմար, թե ճագարինը: Ի՞նչպես եք բանեցնում ճագարն իր ճիրանները: Վարտեղ են թագնվում աղամպալմաններում ապրող ճագարները:



Նկ. 33. Շամպայն կոչվող ճագար:

7. Համեմատեցեք ճագարի զանազան ցեղեր միմյանց հետ: Ի՞նչպէս են նրանք տարրերվում իրարից կազմության և կենցաղի տեսակետից: Կարո՞ղ ենք արդյոք ասել, վոր ճագարի բոլոր ցեղերը պատկանում են միևնույն կենդանական տեսակին:

8. Դիտեցեք ճագարի մորթին. վորի՞ մորթուն ե նա ավելի նմանվում, շման, թե կատվի:

9. Նապաստակներ. - 1. Դիտեցեք կենդան և կամ սպանված նապաստակը (չեղած գեպքում կարող եք դիտել և խրավիլակը): Գտեք նրա և ճագարի կազմության մեջ լեղած նմանությունները: Համեմատեցեք նրանց գլուխները, պարանոցները, զունչերը, տտամները, պոչերը միմյանց հետ: Ուշադրություն դարձրեք նրա առջևի և լետերի թաթերի տարրերությունների վրա:

Վորի՞ առջևի թաթերն են ավելի զարգացած, նապաստակի՞նը, թե ճագարինը:

2. Համեմատեցեք նապաստակի մարմի ընդհանուր ձեր ճագարի մարմի ընդհանուր ձևի հետ. ինչմի են նրանք տարրերվում միմյանցից. Համեմատեցեք նապաստակի և ճագարի ճիրաններն իրար հետ սրության տեսակետից: (Չի կարելի արդյոք բացատրել այդ տարրերությունը նրանով, վոր ճագարն անցքեր ե փորում հողի մեջ, իսկ նապաստակը՝ վոչ):



Նկ. 34. Գորշ նապաստակներ:

Աշխատեցեք վորոշել, թե ձեր դիտողության նյութ լեղող նապաստակը նապաստակների վո՞ր տեսակին և պատկանում:

Խնչմա ճագարը, սպիտակ նապաստակը և գորշ նապաստակը միասին պատկանում են նապաստակների ցեղին:

3. Դիտեցեք նապաստակի մորթին: Ի՞նչ իրեր են պատրաստում նապաստակի մորթուց:

Ե. Առնես յել մուկ. (լրացուցիչ առաջադրություն).—1. Դիտեցեք սովորական զորշ առնետը և անալին մուկը (կարող եք դիտողության նյութ դարձնել և սպիտակ առնետն ու մուկը):

2. Դիտեցեք այդ կենդանիներին այն ժամանակ, յերբ նրանք զբաղված են ուտելով: Ի՞նչպես են նրանք ուտում սուխարին: Ի՞նչ-

պես են ուտում հատիկները։ Ի՞նչ նմանություն և տարբերություն եք գտնում նրանց մեջ։ (Համեմատեցեք նրանց ճագարի հետ)։

3. Ի՞նչպես են առնետն ու մուկը գտնում իրենց ուտելիքը։ Համեմատեցեք ճագարի դունչը մկան դնչի հետ։ Ինչպէս են նրանք նման իրար և ինչպէս են տարբերվում միմյանցից։



Նկ. 35. Սպիտակ նապաստակներ։

4. Ի՞նչպես են վազում առնետն ու մուկը։ (Համեմատեցեք ճագարի հետ)։ Ի՞նչ կապ եք գտնում շարժությունների առանձնահատկությունների և վուների կազմության առանձնահատկությունների միջև։

5. Ստուգեցեք մկան և առնետի զանազան զգայացանների ինչ չափով զարդացած լինելը և ալդ տեսակետից համեմատեցեք նրանց ճագարի հետ։

6. Դիտեցեք մկան և առնետի պոչի շարժումները մարմինը ալս կամ այն ուղղությամբ ծովելու ժամանակի Վար կենդանին և ավելի հեշտությամբ ծոռւմ իր ճանապարհը, նապաստմկը, թե մուկը:

7. Վար կենդանիներն են ձեր կարծիքով ավելի նման իրար, առնետն ու մուկը, թե նապաստակն ու ճագարը:

Նախորություն.—Այս վերջին հարցին պատասխանելու համար առներաժեշտ ե իմանալ, վոր բացի գորշ առնետից, կա և սև առնետ և բացի տնային մկնից, կան և դաշտային ու անտառային մկներ:

Վար կենդանիների մեջ ավելի շատ նմանություն կա, առնետի ու մկնն, թե կատվի ու շան մեջ:

Առնետն ու մուկը մկների ընտանիքի մեջ համարվում են ինք-նուրույն ցեղեր:

Վար կենդանիներն են ավելի նման իրար, ճագարն ու առնետը, թե ճագարն ու կատուն:

Կազմության թնչափիսի առանձնատկությունների հիման վրա ին դասում ճագարը, նապաստակը, մուկն ու առնետը մի կարգի մեջ, վոր կոչվում ե կրծողների կարգ: Կրծողների կարգին են պատկանում նաև սկլուռը, համստերը, ճագարամուկը և այլն:

Զ. Այծ և վաշար. (Լրացուցիչ առաջարգություն).—1. Դիտեցեք, թե թնչափես ե ուսում ալծը: Ի՞նչպես ե գտնում իր ուտելիքը և թնչափես ու ինչմի և բռնում այն:

Համեմատեցեք ալծի տեսակետից ալծը մյուս կենդանիների հետ:

Մանութացեք ալծի ատամների հետ: Համարեցեք նրա ատամները, նկարեցեք ատամների ձեր և դասավորության սխեման:

Համեմատեցեք ալծի դունչը նապաստակի, մկան, ճագարի և շան դնչերի հետ:

2. Դիտեցեք ալծի բերը և մթնացնելով ուլուսավորելով աչքերը՝ դիտեցեք բբերը: Ի՞նչպիսի փոփոխության են լենթարկվում նրանք: Վար կենդանիների վրա կարելի է դիտել բբերի նման փոփոխություն:

3. Ստուգեցեք ալծի լսողությունը՝ անունը կանչելով և կամ կերտալու հետ կապված ձայները հանելով:

4. Դիտեցեք ականջների դիրքը հանգստան և ականջները սրելու ժամանակ:

5. Դիտեցեք ալծի շարժումները: Ձեր դիտողության նլութ լեռած կենդանիներից վերն ե նման նրան իր շարժումներով:

Ի՞նչպիսի կազմություն ունեն ալծի վոտները: Ի՞նչմի են ապ-

բերվում ալծի վոտները ձեզ ծանոթ կենդանիների վոտներից: (Ի՞նչո՞վ
եք բացատրում այդ տարբերությունը:

6. Ի՞նչ նշանակություն ունեն ալծի համար յեղջուրները:
Ի՞նչպես և բանեցնում նա իր յեղջուրները:

7. Դիտեցեք ալծի բուրդը: Համեմատեցեք ալծի մորթին ձեր դե-
տողության նյութ գարձած կենդանիների մորթիների հետ:

Համեմատեցեք կատվի, ճագարի, շան և ալծի մորթիներն իրար
հետ: Իրենց առանձնահատկությունների (կողտության կամ փափկու-
թյան) տեսակետից վեր մորթիներն են իրար ավելի նման:

Դիտեցեք ալծի մորթու յենթարբուրդը, «ալծի աղվամազը», վոր
համարվում ե գործվածքների համար շատ արժեքավոր նյութ:

Համեմատեցեք վոչխարի և ալծի բրդերն իրար հետ: Ի՞նչպիսի
տարբերություններ եք գտնում նրանց մեջ:

Վեր կենդանիներն են ավելի շատ տարբերվում իրարից, ալծն
ու վոչխարը, թե կատուն ու շունը:

Ը. Գաղափար սիստեմատիկան միավորների մասին.—Մեր դիտո-
ղության նյութ գարձած բոլոր կենդանիներն ունեն վորոշ չափով
ընդհանուր հատկություններ, այսինքն նմանություններ, բայց և ունեն
տարբերություններ: Այդ նմանություններն ու տարբերությունները
զանազան կենդանիների մեջ միանման չափով չեն արտահայտվում:
Նմանությունների չափն ինկատի առնելով, կենդանիները բաժա-
նում են զանազան սիստեմատիկան միավորների:

Արսպես, որինակ, բոլոր ճագարները համախմբում են մի տեսակի
մեջ, վոր կոչվում ե նազարի տեսակ, վորովինետև ճագարների մեջ յեղած
զանազանություններն առաջացել են նրանց ընտանեցման շրջանում:
Բոլոր վայրի ճագարները նման են իրար:

Ճագարը և նրա մերձավոր ցեղակիցները՝ նապաստակները միա-
սին կազմում են մի ցեղ, վոր կոչվում ե նապաստակների ցեղ:

Ճիշտ արդպես մի քանի գիտականներ համախմբում են դաշտա-
յին, անտառային և տնտեսյին մկները մի ցեղի մեջ, վոր կոչվում է մըկ-
ների ցեղ:

Գորշ առնետը պատկանում է այլ ցեղի, այն եւ առնեների ցեղին:

Առնետը, մուկը և նրանց մերձավոր ցեղակիցները (որինակ,
դաշտամկները) համախմբում են մի ընտանիքի մեջ, վոր կոչվում է մըկ-
ների բնտանիք:

Ճիշտ արդպես նապաստակները մի քանի այլ կենդանիների հետ
համախմբում են այլ ընտանիքի մեջ, վոր կոչվում ե նապաստակների
ընտանիք:

Նապաստակները, մկները և ատամների կազմությամբ նրանց նման կենդանիները միասին կազմում են մի կարգ, վոր կոչվում և կը ծողների կարգ:

Բոլոր այն կենդանիները, վորոնք կենդանի ձագ են ծնում և կերակրում են իրենց ձագերին կաթով, կազմում են մի դաս, վոր կոչվում և կարենասունեների դաս:

Բերեք ընտանի կենդանիներից և կուլտուրական բույսերից տեսակների որինակներ:

Դալրի կենդանիներից վոր կենդանին և ամենից շատ նման շանը:

3. ՄԻՒՇՏԱԿԱՄՈՐԹԻ ՑԵՎ ԲՈՒՐԴ ՏՎՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բուրդ և մուշտակամորթի տվող կենդանիների հետ ծանոթանացոց հետո աշխատենք պարզել այն հարցը, թե ինչ նշանակություն ունեն այդ կենդանիները խորհրդադին անտեսության համար:

Այդ հարցի պատասխանը կարող են տալ հետեւյալ տվյալները:

I. Մուշտակամորթիների նշանակությունը՝ խորհրդադին արտահանման (եքսպորտի) նյութերի մեջ:

1. Մուշտակամորթիների մթերման և արտահանման մեջ Խորհրդադին Միությունը գրավում է լերկորդ տեղն ամբողջ աշխարհում (առաջին տեղը պատկանում է Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներին): Ամենաարժեքավոր մուշտակամորթիներ տվող կենդանիները՝ ծովալին կուզը և թխագույն սամույրն ապրում են գլխավորապես Միության մեջ:

2. Միութենական մուշտակամորթիների պահանջը շատ մեծ և և նրանց արտահանումը տարեցարի աճում եւ Ալսպես, որինակ, 1922—23 թ. արտահանվել է 35 միլիոն ոռուբլու մուշտակամորթիներ, 1923—24 թ.՝ 51 միլիոն ոռուբլու, 1924—25 թ.՝ 64,2 միլիոն ոռուբլու, 1925—26 թ.՝ 67,5 միլիոն ոռուբլու, 1926—27 թ.՝ մոտ 85 միլիոն ոռուբլու մուշտակամորթիներ:

3. Մուշտակամորթիների գները նախապատերազմյան գների համեմատությամբ խիստ կերպով բարձրացել են: Արդյունաբերական ապրանքների գները նախապատերազմյան գների համեմատությամբ Միության մեջ աճել են միջին առումով 1,85 անգամ, իսկ մուշտակամորթիների գները՝ 2,52 անգամ:

4. Արտահանման ապրանքների մեջ մուշտակամորթիները գրա-

վում են յերբորդ տեղը. 1925—26 թ. արտահանված ապրանքների արժեքները հազարական ռուբլիներով արտահայտվել են հետևյալ ձևով.

Ցորեն	74,930	Գարի	30,179
Նավթամթերքներ	69,487	Զու	23,629
Մորթիներ	63,318	Մանգանալին հանքաքար	21,285
Անտառանլութեր	51,716	Սերմեր	14,181
Կտավատ	38,273	Կաշի	10,833
Ցուղ	30,850	Խողի մազ	10,279

II. Մուշտակամորթիների մթերման ռայոնները:

1925—26 թ. մուշտակամորթիները մթերվել են գանազան ռայոններում հետևյալ ձևով՝ հաշված տոկոսներով.

Միքիր	25,6% ⁰	Հլուսիսալին շրջան	4,4% ⁰
Կաղակստան	11,9% ⁰	Ուկրալինա	4,3% ⁰
Հեռավոր արևել. շրջ.	11,8% ⁰	Թուրքմենստան	3,2% ⁰
Ուրալ	8,7% ⁰	Հլուսիսալին կովկաս	2,2% ⁰
Ուզբեկստան	8,3% ⁰	Ղրիմ	0,4% ⁰
Միջին Վոլգայի շրջ.	5,3% ⁰	Անդրկովկաս	0,3% ⁰
Հլուսիս-արևմտ.	4,8% ⁰	Մնացած շրջանները	8,8% ⁰



Նկ. 36. Սպիտակ աղվեսը ձմեռվա սորթով:

Առանձին կենդանիների նշանակությունը կարելի յէ պարզել հետևյալ տվյալները քննության առնելով.

Մի հատ մուշտակամորթու արժեքը 1923—24 թ. մթերման գներով:
Ծովալին կուզր 2500—3000 ռուբլի.

Թիւագուլն աղվես	200 ռուբլի
լավերը	.	.	.	մինչև	1000 >
Սամուլը	.	.	.	40—120	>
լավերը	.	.	.	մինչև	750 > և Կավելի
Գետալին կուղը	.	.	.	70	>
Սկլուռ	.	.	.	50 կոպ.—1 ռ.	80 կոպ.
Սպիտակ աղվես	.	.	.	42—80	ռ.
Կղաքիս	.	.	.	12—18	>
Աղվես	.	.	.	4—9	>
Նապաստակ	.	.	.	15—20	կոպեկ.



Նկ. 37. Սամուլը

1925—26 թ. Միուրյան մեջ մրերվել են մուշտակամորթիներ միլիոններով հաւաքած.

Սկլուռ	.	.	11,366	Սպիտակ աղվես	.	.	0,066
Պոնտական մուկ	.	.	8,163	Կնդում կամ սպիտ. կղաքիս	.	.	0,645
Նապաստակ	.	.	2,447	Կղաքիս	.	.	0,057
Աղվես	.	.	0,406	Սամուլը	.	.	0,012

1925—26 թ. մրերված մուշտակամորթիների արժեքի բնդիանուր գումարի մեջ զանազան կենդանիների մորթիների արժեքը 5% -ներով.

Սկլուռի մորթիների արժ.	28,5%	Կղաքիսի մորթ. արժեքը	2,5%			
Աղվեսի	»	16,2%	Սամուլի	»	»	1,7%
Սպիտակ աղվ. »	»	15,9%	Կարակուլի	»	»	10,5%
Նապաստակի »	»	5,6%	Մնացածների »	»	»	25,6%
Կնդում կամ սպիտ. կղաքիսի 3%						

Մուշտակամորթիների հետ կապված տնտեսության ներկա վիճակը պարզվում է՝ հետեւալ տվյալներից՝

1. Արժեքավոր մուշտակամորթիների մթերումն ըստ տարեթվերի.

Մովային կուղբ.

1900 թ.	1910 թ.	1921 թ.	1922 թ.	1926 թվից
200 հատ.	90 հատ.	10 հատ.	2 հատ.	վորսն արգելված և 5 տարի ժամանակով:

Մովարջ (ԿՈՏԻԿ).

1890 թ.	ներկայում վորսն արգելված և ծովարջերի ընդհանուր թիվը կուժանդոր կղզիներում հասնում և մոտավորապես 20,000-ի:
56,978 հատ.	

1900 թ.	1911 թ.	1912 թ.	1913 թ.	1913—1916
100,000 հատ.	3,500 հատ.	11,222 հատ.	1,091 հատ.	վորսն արգելված և լեզել:

1923—24 թ.	1924—25 թ.	1925—26 թ.
18,796 հատ.	20,280 հատ.	12,447 հատ.

2. Մի քանի կենդանիների մորթիների քանակությունը պակասել է.

1923—1926 թ. թ. տվյալները միլիոն հատով նաևլած

Կենդանիներ.	1923—24 թ.	1924—25 թ.	1925—26 թ.
Սկլուռ	15.370 միլ. հատ	14.360 միլ. հատ	11.366 միլ. հատ
Կղաքիս	0.066 » »	0.055 » »	0.057 » »
Սպիտ. կղաքիս	0.531 » »	0.685 » »	0.645 » »
1926—27 թ. այդ նույն կենդանիների մորթիների մթերումը			
1925—26 թ. մթերման նկատմամբ արտահայտվել է հետեւալ 9% ներով.			
Սկլուռ — 80% . կղաքիս — 68% . Սպիտակ կղաքիս — 95% .			
3. Ավելացել է հետեւալ կենդանիների մորթիների քանակությունը.			

1923—1926 թ. թ. տվյալները միլիոն հատով նաևլած

Կենդանիներ	1923—24 թ.	1924—25 թ.	1925—26 թ.
Նապաստակ	2.368 միլ. հատ	2.312 միլ. հատ	4.570 միլ. հատ
Աղվես	0.398 » »	0.405 » »	0.406 » »
Ժանտաքիս	0.865 » »	0.864 » »	1.014 » »

1926—27 թ. ալդ նույն կենդանիների մորթիների մթերումը
1925—26 թ. մթերման նկատմամբ արտահայտվել է հետեւալ տոկոսուներով.

Նապաստակ 181 %, Աղվես 163 %, Ժանտաքիս 111 %.

Մուշտակամորթիների հետ կապված անտեսության ներկա ալգորինակ վիճակի համապատասխան սկսում են պակսել և նրանց մթերումների թվերը: Յեթի 1923—24 թ. մթերումն ընդունենք 100 %, ապա 1924—25 թ. մթերումը կկազմի 95,4 %, իսկ 1925—26 թ. մթերումը՝ 90,8 %:

Գետտկան մթերումները և արտահանումը պակսում են և այն պատճառով, վոր յերկրի ներսում աճում և մուշտակամորթիների պահանջը: Այսպես որինակ, 1925—26 թ. արտահանված աղվեսի մորթիների թիվը պակաս է յեղել 1924—25 թ. արտահանած մորթիների թիվը 114,901 հատով, մինչդեռ ալդ թվին վորսած աղվեսների թիվը 1000-ով ավելի յէ յեղել 1924—25 թ. վորսած աղվեսների թիվը:

9. ՄՈՒՇՏԱԿԱՄՈՐԹԻՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեր յերկրի մուշտակամորթային հարատությունը պահպանելու համար անհրաժեշտ են հետեւալ միջոցառումները:

Ա. Տեսնության կանոնավոր կազմակերպումը.—1. Ժամանակավոր կերպով արգելել ալդ կամ այն կենդանու վորսը (տես սամուլրի, ծովարջերի և ծովային կուղրի վերաբերյալ տվյալները): Բացի ալդ կենդանիներից, Միության լեվորպական մասում արգելված և վորսալ և դետալին կուղը ու մուշտակարեր սրնչակ:

2. Արգելավայրերի կազմակերպումը.—Մուշտակարեր կենդանիների պահպանման տեսակետից կարենը արգելավայրեր են համարվում Բարգուզինի սամուլրի արգելավայրը, Կամչատկայի ու Հյուսիսային Ալքալի սամուլրի արգելավայրերը և Բելոռուսիայի կուղրերի արգելավայրերը:

3. Կրծատել վորսի ժամանակամիջոցը, վորովնետե ամռանը, աշնան սկզբին և գարնանը տեղի ունեցող վորսը վոչ միայն խանդարում և մուշտակարեր կենդանիների բազմացումը, այլ և իջեցնում և մուշտակամորթու արժեքը: Որինակ, ամառը վորսած աղվեսի և ջրատմուլրի մորթիներն ուժ անդամ ավելի պակաս արժեք ունեն, քան նույն կենդանիների ձևեռալին մորթիները:

Բ. Մուշտակարեր կենդանիների բուծումը.—Այսպիսի անասնաբու-

ծությունը տեղի լե ունենում բնական պայմաններում, վորտեղ կենա-
դանիներին վորոշ չափով և կեր և տրվում: Որինակ, սպիտակ աղվես-
ների մի արդարիսի անտեսություն շատ վաղուց գոյություն ունի Կա-
մանդորյան կղզիներում, իսկ մի ուրիշն ել կազմակերպվում և Պետա-
ռի կողմից Կոլդուկեվ կղզու վրա:

Բացի դրանից, կան և մուշտակարեր կենդանիների համար հա-
տուկ բուծարաններ: Այսպիսի անասնապահությամբ զբաղվել են սկզբ-
քում Կանադայում և Հյուս. Ամ. Միացյալ Նահանգներում: Այս ժերկըր-
ներում 1927 թվին լեզել են 4800 բուծարաններ. 2300-ը Կանադայում,
2500-ը Միացյալ Նահանգներում:

Ամերիկայից այս
տեսակի անասնապահու-
թյունն անցել է Յեվրո-
պա: Այժմ արդեն նման
բուծարաններ կան Գեր-
մանիայում, Շվեյցարիա-
յում, Անգլիայում, Շվե-
յցիայում, Նորվեգիայում,
Ֆինլանդիայում, Եստո-
նիայում: Այդ բուծարան-
ներում բազմացնում են
գլխավորապես սև աղ-
վեսներ: Բացի դրանից,
կան և սկունսի և սպի-
տակ աղվեսների բուծա-
րաններ: Վերջին ժամա-
նակներս փորձում են
բազմացնել բուծարան-
ներում և կզաքիսներ:

Միության հսկա-
յական տարածության
վրա կան լերկու հատ
խոշոր բուծարաններ, մեկը՝ Սախալինում, մյոււլը՝ Արխանգելսկում: Բա-
ցի այդ խոշոր բուծարաններից, կան և փոքրիկ բուծարաններ Յա-
կուտսկում, Ուրալում, Մուկվայի շրջանում: Սակայն այդ բոլոր բու-
ծարանները դեռևս չեն դրված կանոնավոր հիմքերի վրա:



Նկ. 38. Պատանի բնասեր աղվեսի ձագերով:
Կ. Ա. Շիմբարյազեվի անվան պատանի բնա-
սերների կենսակայանի բուծարանում:

ԱՅ. ՄՈՒՇՏԱԿԱՄՈՐԹԻ ՑԵՎ. ԲՈՒՐԴ ՏՎՈՂԻ ԳԼԽԱՎՈՐ ԸՆՏԱՆԻ ԿԵՆ-
ԴԱՆԻՆԵՐԸ

ճագար (տալիս և գլխավորապես մորթի):

Մազգուսր.—Ճագարների տնտեսական արժեք ներկալացնող ցե-
ղերն են՝ աղվամաղ տվողները, միս և մորթի տվողները և մորթի տվող-
ները:

Առաջին տեսակի ճագարացեղերի դասին ե պատկանում «անդո-
րականը», վոր տալիս և փափուկ, լերկար և խիտ աղվամաղ: Այդ ճա-
գարի մորթու վրա չկան դուրս ցցված մազեր:

Ցերկորդի խմբին պատկանում ե «Փլանդր» կոչվող ճագարացեղը,
վորի ծանրությունը հասնում է մինչև 8 կիլոգրամի:

Իսկ յերրորդ խմբին պատկանում են. «լեհականը»—կարճ ականջ-
ներով սպիտակ ճագարացեղը, «հավանանան»—կարճ, փափուկ և շագա-
նակագույն բրդով և ալլին:

Խենամբր.—Պահում են կամ աղատ կերպով գյուղական տնտեսու-
թյուններում և կամ վանդակներում:

Վանդակներում պահում են կամ առանձին-առանձին, վոր հնա-
րավորություն և տալիս արագ կերպով չաղացներու, և կամ խմբով: Վեր-
ջին գեղգում վանդակները շատ մեծ են շինում. այսպիսի վանդակնե-
րում նրանք թե լավ պաշտպանված են լինում զանազան վտանգներից
և թե հնարավորություն են ունենաւմ արագ կերպով բազմանալու:

Ճագարներին կերակրում են չոր խոտով, կանաչ խոտով, արմա-
տապուղներով, վարսակով, թեփով. պետք և խիստ զգուշանալ խո-
տավ խոտ և սառած արմատապուղներ տալուց:

Ճագարների սաղմը զարգանում է 30—31 որվա ընթացքում: Նո-
րածին ճագարներն սկսում են կեր ընդունել 16—18 որից հետո, իսկ
5—9 ամսից հետո կարող են ձագ բերել:

Ճագարներ պահելու ժամանակ պետք և առանձին ուշագրություն
դարձնել նրանց ապրելու վայրի մաքրության վրա, ապա պետք և հի-
վանդներին հեռացնել և անմիջապես ախտահանության լինթարկել ճա-
գարանոցը:

Ճագարների տարածումը յեվ տեսեսական նօանակուրյունը.—Մուշ-
տակամորթիների համաշխարհական շրջանառության մեջ քանակության
տեսակետից ճագարի մորթիները բռնում են առաջին տեղը. 1906/07
թ. շուկա հանված 130 միլիոն մորթիներից 71 միլիոնը լեղել և ճա-
գարի մորթի, իսկ 1925 թվին Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նա-
հանգները ներմուծվել ե 100 միլիոնից ավելի ճագարի մորթի:

Միության մեջ ճագարաբուծությունը զեռևս գտնվում է շատ վառ՝ դորմելի վիճակում։ Սակայն ներքին շուկայում լեղած եժան մորթիների խոշոր պահանջը հարկադրում է լուրջ ուշադրություն դարձնել ճագարաբուծության զարգացման վրա։

Վայսար (տալիս և գլխավորապես բուրդ)։

Յենթաղրում են, վոր ընտանի վոչխարներն առաջացել են մի քանի վայրի տեսակներից։ Ալղափսի տեսակներ են համարվում մուֆլոնը (Հարավային Յեղրովա), արկարը (Հյուսիսարևելյան). Հնդկաստան և Թուրքեատան) և արգալին (Միջին Ասիա)։

Վոչխարացեղերի մեջ տնտեսական արժեքը են ներկայացնում։

1. Բուրդ տվող ցեղերը, վորոնց մեջ նշանավոր են «մերինոս» կոչվածը և ոռւսական նրբարուրդ վոչխարացեղը։

Նկ. 39. Դմակավոր վոչխար։

2. Միս տվող ցեղերը, վորոնց մեջ հայտնի լեն անգլիական ցեղերը։

3. Միս և ճարպ տվող ները, վորոնց մեջ նշանավոր և դմակավոր ցեղը։

4. Մորթի տվողները, վորոնց մեջ հայտնի լեն «կարակուլը» և «մալիւլը»։

Վերոհիշյալ վոչխարացեղերի մեջ Միության մեջ առանձին արժեք են ներկայացնում «մերինոսը» և «կարակուլը», առաջինն իրքի լավ բուրդ տվող, իսկ իերկորդն իրքի լավ մորթի տվող։

Վոչխար ար առեծության համար պահանջվում է ունենալ ընդարձակ արոտատեղեր։

Լավ հիմունքների վրա գրված վոչխարաբուծական տնտեսաթյուններում ձմեռը վոչխարները պահում են առանձին շինություններ։



Նկ. 40. Կարակուլ վոչխար։

րի մեջ և կերակրում են չոր խոտով, դարմանով, վարսակով, գարիով, թեփով, կողտոնով:



Նկ. 41. Մերինոս վոչխար:

բում (դմակավոր ցեղը), Ռուզբեկստանում (կարակուլ) Անդրկովկասում (դմակավոր),

Միության մեջ զարգացած ե զլխավորապես կոշտաբուրդ ցեղերի վոչխարաբուծությունը, վոր պարզ կերպով լերեռում և 1925 թվին վերաբերող հետեւյալ տվյալներից.

	Կոշտ բուրդ	Նուրդ բուրդ
Յենթագրվում և ստանալ հաղարական տոններով հաշված	12,21	0,49
Յենթագրվում և գործածել գործառններում՝ հաղարական տոններով հաշված	11,86	6,22

Կոշտաբուրդ վոչխարացեղերի մեջ քանակության տեսակետից առաջին տեղը գրավում են դմակավորները, իսկ արժեքի տեսակետից՝ կարակուլները:

ԱՐՓՈՓՈՒՄՆԵՐ

Ինչպես ցույց են տալիս թվական տվյալները, բուրդ և մուշտակամութիւն տվյալ կենդանիներն ահազին նշանակություն ունեն մեր

տնտեսության մեջ։ Ստկալն այդ թվերը միաժամանակ ցույց են տալիս, վոր մեր տնտեսության այդ բնագավառները դեռևս չեն դրված լավ հիմունքների վրա։ Մեզ մոտ շատ անբավարար վիճակի մեջ են գտնվում նրբարուրդ վոչխարների տնտեսությունները, ապա մուշտակամորթիների քանակությունը չի բավարարում մեր ներքին շուկայի պահանջներին (առանձնապես հժան տեսակները)։ Այս իսկ պատճառով պետության համար հերթական են դարձել արդեն մուշտակարեր կենդանիների պահպանության և բազմացման խնդիրները։

Տարածելով բնության պահպանության և աված բարիքների խելացի ոգտագործման գաղափարները՝ զպրոցը կարող է վորոշ չափով նպաստել մուշտակարեր կենդանիների պահպանության գործին։

Դպրոցում մուշտակարեր կենդանիներ պահելու և բազմացնելու տեսակետից շատ հարմար են ճագարները։ Կարելի լի գործով հետաքրքրվող լերեխաններից կազմակերպել և ճագարաբուլծների արտել։ Սակայն այդ գեպքում պետք է գործին մոտենալ զգուշ և լուրջ կերպով, վորովհետև ալլապես անհաջողությունը կարսղ է գործին վոչ թե ոգուտ տալ, այլ վեաս։

ԶՈՒԿԸ ՅԵՎ ԶԿՆԱՑԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ձկնամթերքների խոշոր խանութները, կոռպերատիվների ձկնային բաժանմունքները կամ շուկայի փոքրիկ առևտրականների կրպակները, վորոնք առաջարկում են գնորդներին զանազան տեսակի ձըկնամթերքներ, մեծ մասամբ եժան ձկներ, որինակի, հարինգ և վորլա, ցուլց են տալիս, թե ինչ մեծ տնտեսական նշանակություն ունի Միության ձկնային հարստությունը և թե ինչքան կարեոր և մտածել այդ հարստության կանոնավոր ու պլանաշափ ոգտագործման մասին և պարարել նրա նկատմամբ անտնտես և կործանիչ վարվողների դեմ:

Այս թեմայի աշխատանքն ընդհանուր նախագծման լինթարկելու համար անհրաժեշտ և նախապես մտածել հետեւյալ հարցերի մասին.

1. Ի՞նչպիսի ձկնային մթերքներ կան տեղական շուկայում և նրանցից վորի՞ պահանջն և ավելի մեծ:

2. Այդ մթերքները տեղում են ստացվում, թե բերվում են ուրիշ վայրերից և լեթե բերվում են այլ վայրերից, ապա վո՞րտեղից են բերվում:

3. ՅԵՐ և ամենից շատ թարմ ձուկ հանվում շուկա:

4. Պարապման և արդյոք տեղում ժողովուրդը ձկնորսությամբ (վաճառքի համար), թե կոչ, լեթե այս, ապա ի՞նչ տեղ և գրավում այդ զբաղմունքը մնացած զբաղմունքների մեջ և ի՞նչպիսի ձկներ են վորսվում:

5. Զկան արդյոք ձեր շրջանում ձկնամթերքների մշակմամբ կամ մթերումով զբաղվող ձեռնարկություններ (պահածոյի գործարաններ, ծուխ տալու կամ չորացնելու հատուկ վայրեր և այլն):

6. Զկան արդյոք ձեր շրջանում լճակային տնտեսություններ, վորտեղ արհեստական կերպով բազմացնում են զանազան տեսակի ձկներ:

7. Զկան արդյոք ձեր շրջանում ձկնաբուժարաններ, վորտեղ ձկների ձվիկներից փոքրիկ ձկնիկներ են ստանում և ապա գցում զետերը կամ լճերը՝ նրանց մեջ առաջացող ձկնային պակասը լրացնելու համար:

8. ԶԵՔ լսում արդյոք տրտունջներ, վոր պակասում և տեղական ձկնալին հարստությունը և ի՞նչ պատճառներ են բերլում այդ լերեւութը բացատրելու համար:

Ժողովրդական սննդի գործում և լերկրի ընդհանուր տնտեսական կրանքում ձկնամթերքների ունեցած կարեսոր նշանակությունը հարկադրում և այս թեմայի մշակման հատկացնել զգալի տեղ նույնիսկ այնպիսի վայրերում, վորտեղ տեղական ձկնորսությունը մի ոժանդակ զրադմունք և կամ լոկ սպորտ եւ:

Իսկ լեթե դպրոցը գտնվում է ձկնորսության ռայոնում, վոր ձըկնամթերքներ և մատակարարում այլ շրջանների կամ մթերում և կատարում արտասահման արտահանելու համար, այդ դեպքում այս թեման պետք ե շատ ավելի խորը կերպով մշակման լենթարկվի:

Վերջին դեպքում նպատակահարմար և թեմայի մշակումը կատարել տարվա այնպիսի ժամանակ, իերը հեշտ կերպով կարելի լե ձեռքը բերել աշխատանքի համար անհրաժեշտ նյութեր և կազմակերպել եքսկուրսիա դեպի ձկնորսարաններ:

Զեան մարմին կազմությունը հետազոտելու համար անհրաժեշտ և նախ դիտել և ապա դիահերձման լենթարկել հեշտ կերպով ձեռքը բերվող վորեն ձուկ:

Զեան ներքին կազմությունը հետազոտելու համար անհրաժեշտ և վերցնել բոլորովին թարմ ձուկ, իսկ ինչ վերաբերում և ձկան արտաքին ձևին, մարմինի ծածկութին և շարժման գործարանների կառուցվածքին, այս բոլորի համար, լեթե չգտնվի թարմ ձուկ, կարելի լե ոգտվել և չորացրած ձկնից, որինակ, վորլայից կամ հարինգից: Սակայն այդ բոլորի հետ միասին մենք պետք ե դիտողություններ կատարենք և ակվարիումում ապրող կենդանի ձկների վրա, վորովհետև ալսպիսի դիտողությունների ժամանակ միայն կարող ե պարզվել զանազան գործարանների խելական նշանակությունն ու դերը, այսինքն՝ լերը գործարանները գտնվում են աշխատանքի մեջ:

1. ԶԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ


Աշխատանքի համար անհրաժեշտ են զանազան տեսակի ձկներ, պինցետ, խողաններ, փալտե բարակ ձողիկներ:

1. Դասեք թարմ և կամ չօրացրած ձկան վրա մարմինի գլխավոր մասերը՝ գլուխը, իրանը, պոչը: Համեմատեցնեք ձկան մարմինը վորմեցամաքային կենդանու (կատու, շուն) մարմինի հետ: Կամ արդյուք նրանց մեջ մարմնամասերի ընդհանուր դասավորության և փոփոխության ուն-

սակետից նմանությունը ինչի՞ մեջ եք գտնում ամենաելական տարբերությունը ինչին կարելի լի նմանեցնել ձկան մարմնի սովորական ձևը:

2. Գտեք ձկան զուգավոր լողաբեկերը, այն և՝ կրծի լեկ փորի լողաբեկերը Նրանցից վհր զուգի լողաթեներն իրար մոտ են գտնվում և վհր զուգի լողաթեները դասավորված են գրեթե մարմնի կողերին: Դիտեցեք զանազան տեսակի ձկների զուգավոր լողաթեները դասավորության տեսակետից և գտեք նրանց մեջ լեզած տարրերությունը:

3. Դիտեցեք անզուրկ լողաթեների, այն և՝ մեօքի, պաշի լեկ լենքապոչի լողաթեների կազմությունն ու դասավորությունը: (Յենթապոչի լողաթեներ կոչվում են նաև նիտանցքային լողաբեկ, վորովնետե գտնվում ենուշի ներքեռում, հետանցքի անմիջապես հետեւի մասում): Աւշադրությունը դարձեք զանազան տեսակ ձկների մեջքի լողաթենի առանձնահատկությունների վրա:



Նկ. 42. Ձուկ:

Կարող են ունենալ
պինդ լողաթեկալին ճառագալթները և լողաթենի վհր մասում են նրանք դասավորված:

4. Դիտեցեք ձկան աչքը, բերանը, իմուխտային փականները: Գտեք ձկան քթանցքները: Հետազոտելով խոզանի միջոցով՝ իմացեք, թե ձուկը քանի՞ քթանցք ունի և թե ուր են տանում. այդ քթանցքները բերանի խոռոչը, թե կլանը: Բաց արեք ձկան բերանը. ուշադրությունը դարձեք նրա լերախի լայնության և ծնոտային ապարատը կազմող վուկրների շարժունության վրա: Դիտեցեք և շոշափեցեք ատամները, գտեք լեզուն, կարծղ և արդյոք ձուկն այդ ատամներով ծամել և արորել իր կերակուրը, լիթե վոչ, հապա ինչ նշանակություն կարող են ունենալ նրանք: Ցեթե ձեռքի տակ ունեք ծածան և կամ նրա նման վորեն այլ ձուկ, այդ դեպքում բաց արեք նրա բերանը և մտցնելով ձեր մատը նրա բերանի խորքը՝ շոշափեք կլանի խորքում կլանային ատամները, վորոնցով ձուկը ծամում և տրորում ե իր կերակուրը: Բանեցեք պինցետով քիմուխտային փականը և բարձրացնելով՝ գտեք նրա տակ գտնը: Վող իմուխտայինը, վորոնք փոքրիկ թիթեղիկների ձևով նստած են քիմուխտային տղեղների վրա: Ի՞նչ զուն ունեն թարմ ձկան քիմուխտային այդ թիթեղիկները և ինչի՞ց կարող ե առաջանալ նրանց այդ

գուլնը։ Փալտե բարակ ձողիկով հետազոտելով՝ իմացեք, կապված են արդյոք միմյանց հետ բերանի խոռոշը և քիմուխտալին ճեղքերը, այսինքն այն ճեղքերը, վորոնք բաժանում են քիմուխտալին աղեղները միմյանցից։ Ունի՞ արդյոք ձուկն արտաքին ականջ։

5. Դիտեցեք ձկան մարմնի արտաքին ծածկույթը, Քսեցեք ձեր մատը ձկան մարմնին։ Յեթե ձուկը թարմ ե և չի լվացված, այն ժամանակ ձեր մատը կպատի լորձանման նլութով, Վոչ թարմ ձկան այդ լորձանման նլութից անախորժ հոս ե գալիս։ Այդ միջոցով կարելի յե խմանալ ձկան թարմ կամ հին լինելը։ Ուշադրություն դարձրեք ձկան մարմինը պատող թեփուկների դասավորության վրա։ Դնելով պինցետի կամ դանակի ծալը ձկան մարմնի վրա՝ տարեք գլխի մոտից դեպի պոչը և ընդհակառակը, այսինքն՝ պոչի ծայրից դեպի գլուխը։ Վեր ուղղությամբ ե դանակը կամ պինցետը հեշտությամբ տարվում։ Ի՞նչպես են մաքրում դանակով ձկան մարմինը խոհանոցում։ Քսեցեք ձեր ձեռքի ափը ձկան մարմնի վրայով և տարեք նրա քիմուխտալին փականների վրայով, տարեք և լողաթերի վրայով, առջեից դեպի մարմնի յետերի մասը և ընդհակառակը։ Ի՞նչ տարբերություն եք զգում։

Ի՞նչ հետեւություններ կարող եք անել ձկան մարմնի լորձալին վերնամաշկի դերի ու նշանակության և առհասարակ ձկան մամնի արտաքին կազմության մասին։

6. Դիտեցեք ձկան կողքերով, մարմնի ամբողջ լերկարությամբ գնացող շերտերը կամ ինչպես ասում են, կողքերի գծերը։ Սրանց ուղղությամբ թեփուկների մեջ գտնվում են փոքրիկ անցքեր, վորոնք մտնում են մինչև մաշկի խորքը։ Այդ անցքերի տակով ձկան մարմնի լերկարությամբ ճգվում ե մի խողովակ, վոր գնալով դեպի գլուխը՝ ճուղեր և արձակում աչքերի և բերանի շուրջը։ Գուլլաձկան վրա կատարված փորձերը ցույց են տվել, վոր այն ձուկը, վորի կողքերով անցնող խողովակները վնասված են, այլևս չի զգում ջրի հոսանքը, վոր զարնը վում ե նրա մարմնին, իսկ մթության մեջ լեղած ժամանակ կպչում ե դիմացը գտնվող առարկաներին։ Նշանակում ե, կողքերի գծերը շատ կարեղոր գործարան են հանդիսանում ձկան համար, յերբ նա շարժվում է գիշերը կամ պղտոր ջրի մեջ, այսինքն այն դեպքերում, յերբ ձուկը չի կարող առաջնորդվել իր տեսողության զգայարանով։ Իսկ յեթե ձուկը չկարողանա զգալ հոսանքի ուժը և չկարողանա նրան զիմադրել, ապա չի կարող պահպանվել և հոսող ջրի մեջ և պետք ե գետերից ու գետակներից քշի դեպի ծովը։

2. ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԿՎԱՐԻՈՒՄԻ ԿԵՆԴԱՆ
ԶԳԱՆ ՎՐԱ

Աշխատանքի համար պետք եւ պատրաստել փոքրիկ ցանց ակվարիումի միջից ձկնիկները բռնելու և դուրս հանելու համար, բրդեթական հացի կտորները կամ ալլ ձկնացին կեր, բանկա՝ լցված լեկ տված և ապա սառեցրած ջրով:

1. Դիտեցեք ձկան շարժումը ջրի մեջ և փորոշեցեք, թե նրա մարմնի վնաս մասն և ալդ ժամանակ դլխավոր գեր կատարում:

2. Հետեւեցեք զուգավոր լողաթերի աշխատանքին: Տեսեք, թե ի՞նչպես և շարժում ձուկն իր զուգավոր լողաթերը դանդաղ շարժումների և արագ շարժումների ժամանակ, յերբ ցանկանում եւ վրա հասնող վտանգից փախչել, ազատվել, ի՞նչպես՝ պտույտներ գործելու ժամանակ և ի՞նչպես՝ տեղը կանգնած ժամանակ:

3. Զուգավոր լողաթերի նշանակությունը ճիշտ կերպով պարզելու համար փորձեցեք զրկել ձկան ալդ լողաթերը շարժելու հնարավորությունից: Դրա համար կապեցեք պինդ կերպով կրծքի լողաթերը: Ի՞նչպես և շարժվում ձուկն առանց ալդ լողաթերի, կապեցեք նույն ձեռվ կրծքի և կամ փորի լողաթերից միայն մի կողմինը, ալսինքն՝ կամ աջը և կամ ձախը: Ի՞նչ եք նկատում ալդ գեպքում, կապեցեք այժմ նույն ձեռվ ձկան կրծքի և փորի բոլոր չորս լողաթերը: Ի՞նչպես և պահպանվում ձուկն ալդ դրության մեջ ջրում, ձիւցեցեք կամ փորձով իմացեք, թե ի՞նչ գրության մեջ ե լող տալիս ջրի մեջ թուլացած և կամ մեռած ձուկը:

Ի՞նչ հետեւություններ կարող եք անել ձեր կատարած դիտողություններից ձկան առանձին լողաթերի նշանակության մասին: Ամենից ուժեղ մկաններ վեր լողաթերի հետ են միացած: Ի՞նչ ազգեցություն ունի այս վերջին հանգամանքը ձկան արտաքին տեսքի վրա:

4. Դիտեցեք ձկան շնչառական շարժումները, յերբ ձուկը ջուրը ընդունելով բերանի անցքով՝ բաց և թողնում կրկին քիմոլիստների անցքերով կամ ճեղքերով: Փորձեցեք գցել ձկնիկներից մեկին մի բան կայի մեջ, վոր լցված եւ լեռացրած և ապա սառեցրած ջրով: տեսեք, թե ի՞նչ և տեղի ունենում: Աշխատեցեք բացատրել տեղի ունեցող յերևությը:

5. Ուշագրության նյութ դարձրեք ձկան կեր ընդունելու գործողությունը: Ալդ գործողության մեջ նրա վնաս գործարաններն են մասնակցում: տեսեք, թե մասնավորապես ի՞նչ գեր են կատարում ալդ ժամանակ նրա զուգավոր լողաթերը, վորոնք իրենց դիրքով համապա-


տասխանում են ցամաքային կենդանիների առջևի և լեռեի վերջավորություններին:

6. Դիտեցեք ջրից հանված ձկան շարժումները. Նրա մարմի վճը մասն և այդ ժամանակ գործում. Ի՞նչ դեր են կատարում զուղավոր կողաթերի վերջավորությունները: Ի՞նչքան և հարմարված ձուկը ցամաքի վրա շարժումներ կատարելու տեսակետից:

7. Դիտեցեք ձկան մարմի վրա լեղած զույների զասավորությունը: Մարմի վճը մասերն են ներկված մուգ զույնով և վճը մասերը՝ ավելի բաց զույնով: Նրա մարմի վճը մասում են զասավորված արծաթափալլ թեփուկները:

3. ԶԿԱՆ ԿՄԱԽՔԸ ՑԵՎ ՄԿԱՆՆԵՐԸ

Պետք է ունենալ ջրի մեջ լավ լեփած ձուկ (կարելի լեփել և չորացրած ձուկ): Ամբողջական ձուկ չունեցած զեպքում կարելի լեփտափործել նաև մեծ ձկների, որինակ, շիղաձկան (судак), ծածանի (карп) և բրամի (լեռ) կմախքի առանձին-առանձին մասերը (ճաշի մասցորդներ):




Նկ. 43. Գերկեսի կմախքը. ա—լայնությամբ ձգվող հավելվածներ, բ—վերեի քսատվոր հավելվածներ, մ—ներքեի քսատվոր հավելվածներ, օ—մեջքի լողաթերի նեցուկները, հ—մեջքի առաջին լողաթերի ճառագայթները, ց—մեջքի յերկորդ լողաթերը, տ—յերթագոչային լողաթերը, կ—կրծքի լողաթերը, օ—ասջեի վերջավորությունների զոտին, բ—փորի լողաթերի հիմնական վոսկրիկը, զ, ր, ս, վ—բիմուխտային կափարիչ և վոսկրիկը և տ—նրա թաղանթի ճառագայթները:

1. Վերցրեք լավ լեփած ձկան մաշկը և դիտեցեք, թե ինչպիսի կազմություն ունի միսը. Հետո տեսնում արդյոք մսի մեջ առանձին-առանձին մասեր: Ի՞նչպես են զասավորված այդ մասերը: Դրանից հետո զգուշությամբ հեռացրեք միսը վոսկրներից: Ուշադրություն դարձ-

բեր այն հանգամանքի վրա, վոր լավ լեփած ձկան միսը, ալսինքն մկանները հեշտությամբ բաժանվում են լայնության ուղղությամբ առանձին-առանձին մասերի։ Դա բացատրվում է նրանով, վոր կենդանի ձկան մեջ մկանալին առանձին-առանձին կտորները կամ սեղմենաները միմյանց հետ միացնող լայնությամբ գնացող շերտերը բարեպարզում են լեփերու ժամանակ։ Դիտելով վորոշեցեք, թե ձկան մարմինը մասերն են ավելի մսոտ, ալսինքն՝ վոր մասերի մկաններն են ավելի զարգացած։

2. Հեռացնելով միսը և այլ փափուկ մասերը՝ դուք կստանաք ձկան կմախքը (նկ. 43) և կտեսնեք, վոր նրա մարմին հիմնական առանցքը, ալսինքն մարմինը գլխավոր հենարանը բաղկացած է առանձին-առանձին վոսկրիկների մի լերկար շարքից։ Այդ վոսկրիկները կոչվում են վողներ, իսկ նրանցից կազմվող լերկար շարքը՝ վողնաշար։




Նկ. 44. Ձկան իրանի յերեք վողները։

Այն բոլոր կենդանիները, վորոնց մարմին մեջ գտնվում է ալդաֆիսի վոսկրային առանցք, կոչվում են վողնավոր կենդանիներ։ Ձկան մարմինը առջեր կողմում լուսք կտեսնեք գլխի բարդ կմախքը, վոր բաղկացած է բազմաթիվ վոսկրներից։ Այտեղ դուք կնկատեք՝ 1) բուն զանգը՝ ալսինքն այն վոսկրային առափը, վորի մեջ տեղավորվում է գլխի ուղեղը, 2) ճնուները (վերեկի և ներքեկի), 3) բիմուխտների կմախքը՝ քի-մուխտների աղեղները։ Աւշազը ությամբ դիտեցեք և լողաթերի կմախ-

Քոչ զուգավոր լողաթեների վրա, բացի լողաքեվերի նառազայրներից, վորոնք բացում են լողաթենը և ցցված են դեպի դուրս, դուք կտեսնեք նաև լողաքեվային նեցուկներ, վորոնք ամրացնում են լողաթենը մարմնի վրա: Զուգավոր լողաթեները հենված են ալսպիս կողվող վերջավորությունների գոտիների վրա: Կրծքի լողաթեները՝ բազուկի գոտու, իսկ փորի լողաթեները՝ կոնի գոտու վրա:

3. Կմախքն առանձնացնելուց հետո փորձեցեք վողնաշարի ճկունությունը: Ի՞նչ ուղղությամբ և նաև ավելի հեշտությամբ ծովում, դեպի վերև և ներքև, թե դեպի կողքերը: Ի՞նչ նշանակություն ունի նրա այդ ձեր ծովելը ձկան շարժումների տեսակետից:

ԱԵՐԱՎԻՇ ՔԱՐԱՑՄ ՀԱՎԵԼՎԱԾ



Նկ. 45. Ձկան պոչի վող:

Խավաքարտի վրա և գրեցեք նրանց առանձին-առանձին մասերի անունները (Նկ. 44 և 45): Այն կլոր մասը, վոր կազմում և վողի հիմքը, կոչվում է վողի մարմին: Վողի մարմնից գուրս և զալիս վերսել աղեղը, վոր շարունակվելով դեպի վեր՝ կազմում է քստավոր հավելվածը: Վողների վերնի աղեղներից կազմվում են ձկան մեջքի անցքը, այն լերկար խողովակը, վորի մեջ աեղավորվում են վողնուղեղը, վողնուղեղը վոչ այլ ինչ ե, բայց լեթի գանդի մեջ գունվող գլխի ուղեղը շարունակությունը: Վողներից դեպի կողքերը գնում են լայնուրյանք ձգվող հավելվածները Պոչի վողների այդ հավելվածները ծովում են դեպի ցածր գածը աղեղի աղեղի աղեղի ներքելի բարակ հավելվածների

4. Առանձնացրեք վողնաշարից մի քանի հատ վողներ (դիտեցեք և ձեռքի տակ լիղած խոշոր ձկներից հանած վողներ) և համեմատեցեք նրանց միմյանց հետ: Դրա համար լավ կլինի, լեթե վերցնեք մի վողի իրանի առջին մասից, մեկը՝ պոչի մոտից և մեկն ել՝ պոչի բաժնից: Լավ մաքրեցեք և լվացեք այդ վողները և ապա կացրեք վողի հետ միացող մի զույգ կողերի հետ միասին:

նիս, Պոչի վողների ներքեւ աղեղները միասին կազմում են մի անցք, վորի միջով անցնում են դեպի պոչը գնացող խոշոր արյունատար անոթները:

4. ԶԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՄԱՆՆԵՐԸ

Զկան ներքին գործարանները հետազոտելու համար հարկավոր ե դիահերձել մի թարմ ձուկ (որինակ, պերկես կամ մի ալ ձուկ): Դրա համար անհրաժեշտ ե ունենալ մի տաշտ, դիահերձվելիք ձկան մեծության համապատասխան, սուր ծալբերով մկրտ (լավ ե ունենալ հատուկ կազմարանական մկրտ), սուր դանոտկ (լավ է ունենալ կազմարանական սկալպել), 1—2 պինցետ, գուլպաչի ճաղ և բարակ փալալա ձողիկ, Գանցը դիահերձելու ժամանակ պետք ե լվալ ուղեղը ջրի շիթով, դրա համար պետք ե ունենալ սրսկիչ և կամ քիմիական ջրասրվակ (թեկուզ մի հատ): Աշխատանքից հետո բոլոր գործիքները պետք ե լավ մաքրել, սրբել և պահել մաքուր վիճակում:

Յերբ խմբակի մի մասը զբաղված ե ձուկը դիահերձելով, մյուս մասը կարող ե ալդ ժամանակ դիահերձել գորտի մարմինը: Դա հնարավորություն կտա ձեզ համեմատել ալդ յերկու կենզանիները միմյանց հետ և ալդպիսով պարզել ձկան մարմինի առանձնահատկությունները: Բացի դրանից, գորտի դիահերձումը կոդնի մեզ և հետադարձում ավելի հեշտությամբ գաղափար կազմել բարձր վողնազորների թոշունների և կաթնասունների բարդ կազմության մասին:


1. Վերցրեք ձուկը ձեր ձախ ձեռքը և ապա մկրտափ սուր ծալբով ծակեցնեք նրա փորի պատը յետեի անցքի մոտից: Ալդտեղից սկսեցնեք կտրել նրա փորի պատն ուղիղ փորի միջին գծով մինչև սառրին ծնուալը: Մկրտառվ կտրելու ժամանակ ձեռքնեք փորի պատը, գորպիսպի մկրտաը չվնասի ներքին գործարանները:

Դրանից հետո դրեցնեք ձուկը տաշտի մեջ աջ կողքի վրա և կտրեցնեք մկրտառվ նրա յետեի անցքի մոտից դեպի մեջքը և ապա ալդտեղից ել դեպի ստորին ծնուալը: Յերկու կտրվածքների ծալբերը վերջը պետք ե միանան իրար, վորից յետո կարող եք վերցնել մարմինի մի կողմի ամրող պատը և դիտել ներքին գործարանները:

2. Հեռացնելով ձկան մարմինի կտրված մասը՝ ջուր ածեցնեք տաշտի մեջ և ապա շարունակեցնեք դիահերձումը: Առանց ջրի գործարանները կարող են կաչել իրար և ալդպիսով գժվարացնել հետազոտումը: Այժմ ձեր առաջ գտնվում ե ձկան մարմինի ներսի ամբողջ խոռոչը, վլրաեղտեղավորված են նրա ներքին գործարանները (նկ. 46.): Ամենից ա-

ուաշ դիտողության նլութ դարձրեք մարսողական խողովակը՝ սկսելով
բերանի անցքից և վերջացնելով լեռնի անցքով:

Բերանով ընդունած կերակուրը զնում և սկզբում գեղի կլանքը:
Այստեղ կերակրի հետ ներս մտած ջուրը մղում և քմուխտային ճեղքե-
րով գեղի դուրս, իսկ կերակուրը կարճ կերակրափողով մտնում և
ստանօսը, այն գորշավուն գույն ունեցող պարկը, վոր տեսնում եք
դուք մարմինի խոռոչի առջևի մասում: Հետազոտեցեք այն ճանապարհ,
վորով կերակուրը գալիս ընկնում և ստամոքսը. դրա համար զգու-
շությամբ մտցրեք գուլպաւի ճաղը կամ բարակ փայտիս ձողիկը ձկան
բերանով գեղի կլանը և կերակրափողը, մինչև վոր ճաղի կամ ձողիկի
ծալը գեմ կընկնի ստամոքսի պատին:



Նկ. 46. Ձկան ներքին գործարանները. 1—յերիկամ, 2—լո-
զափամփուշտ, 3—յետիկ անցք, 4—աղիք, 5—ձվարան,-
6—լեղափամփուշտ, 7—ստամոքս, 8—լյարդ, 9—սիբոս,
10—քիմուխտային աղեղ:

Առջևից ստամոքսը ծածկված և գեղնավուն կտմ կարմրավուն
գույն ունեցող լյարդով, վոր սերտ կերպով կապված և մարսողական
խողովակի հետ: Նրա մեջ և պատրաստվում լիդին, վոր սկզբում հա-
վաքվում և լեղափամփուշտի մեջ և ապա մի բարակ խողովակով թափ-
վում աղիքի առջևի մասը, վորտեղ նպաստում ե կերակրի մարսման:

3. Հեռացրեք լյարդը և զգուշությամբ բաժանեցեք մարմից ա-
ղիքը: Այս գործողությունը կատարելու ժամանակ պետք է պինցետով
և սկալպելով հեռացնեք ճարպի շերտերը, վորոնք գնում են աղիքի
յերկարությամբ և լցնում են նրա գալարների արանքները: Ստամոք-
սին անմիջապես հաջորդում է առջևի աղիքը: Շատ ձկների մեջ այս

աղեմասից դուրս են գալիս մի քանի հավելվածներ: Կերակուրը մըտնում և ալդ հավելվածները և փոփոխության լենթարկվում աղիքացին հլութի աղղեցության տակ: Առջեկի աղիքին հաջորդում ե միջին աղիքը: Սա մի գալարում անելով՝ առաջ ե գնում և փոխարկվում յետևի աղիքի, վոր վերջանում է յետելի անցքով կամ սրբանով:

Միջին աղիքի գալարի մեջ գտեք մի լերկարավուն կարմիր մարմին, դա փայծաղին և: Այս գործարանն անմիջական կապչունի մարսողական խողովակի և մարսողության հետ:


Նա կապված ե արյունատար անոթների հետ: Նրա մեջ են առաջանում արյան մարմնիկները:

Մեջքին մոտիկ ընկած ե մի փալլուն և ողով լի պարկ, վոր կոչվում և լողափամփուշտը կապչունի մարսողության հետ, բայց առաջանում ե մարսողական խողովակից դուրս լեկող մի հավելվածից (նկ. 47): Զկների մի մասի մեջ նա կապված է մասում կերպարափողի հետ մի բարակ խողովակով:

4. Կորիցեք մկրատով կերակրափողը և յետեկի աղիքի ծալը՝ սրբանի մոտ, հանեցեք մարսողական խողովակն ամբողջովին և նորից դիտողության նյութ դարձրեք նրա առանձին-առանձին մասերը և նկարեցեք:

Մարսողական խողովակի գերը նրա մեջ ե, վոր մարսում ե ներս ընդունած կերակուրը: Ստամոքսի և աղիքների պատերի մեջ կան բազմաթիվ փոքրիկ գեղձեր, վորոնք արտադրում են իրենցից մարսողական հյութեր—ստամոքսալին և աղիքալին: Բացի դրանից, լարդից թափվում ե աղիքի մեջ լեղին: Այս բոլոր հյութերի աղղեցության տակ կերակուրը մարսվում ե, այսինքն նրա մի մասը փոխարկվում ե մի այնպիսի հեղանյութ գանգվածի, վոր կարող ե թափանցել աղիքի պատերի միջոցով: Թափանցելով աղիքի պատերով, մանում ե նա ավշալին անոթները, ալստեղից մտնում արլան մեջ և արլան միջոցով տարածվում ձկան մարմնի բոլոր գործարանների մեջ: Փոփոխության լենթարկված կերակուրը մարսողական խողովակով հետզհետե առաջ ե գնում: ճանապարհին մարսված մասերը ծծվում են, իսկ անմարսելի մասերը դուրս են գալիս մարմնից յետեկի անցքով կամ սրբանով:

Լողափամփուշտը կատարում ե այլ դեր: Նրա միջոցով ձկան



Նկ. 47. Զկների մասում և մարսողական խողովակի առջեկի մասը և լողափամփուշտը:

հարմի քաշը հավասարվում ե շրջապատող ջրի քաշին, վորի շնորհիվ
և ձուկը կարողանում ե մնալ ցանկացած խորության մեջ: Յերբ ձուկը
վորոշ ուժ գործ դենելով՝ սղմում ե լողափամփուշտը կամ գուրս ե
հանում նրանից մի վորոշ քանակությամբ ոդ, մարմնի ծավալը փոք-
րանում ե, վորի համար և նրա մարմինը ծանրանում ե. ծանրանալու
հետևանքով ձուկը ցած ե գնում, իսկ յերբ պետք ե վեր բարձրանալ,
այդ դեպքում նա ալլես չի սեղմում լողափամփուշտը, վորից վերջինիս
միջի ոդն ընդարձակվում և ուռեցնում ե ձկան մարմինը. նշանակում
ե, ձուկը պահպանելով իր մարմի քաշը, ծավալով մեծանում ե, դրա
հետևանքով փոքրանում ե նրա տեսակարար կօփոր և ձուկը բարձրա-
նում ե վեր, Բացի զրանից, արյունատար համակարգության հետ-
կապված մի առանձին գործարանի միջոցով կանոնավորվում ե շարու-
նակ փամփուշտի միջի ոդի քանակությունը: Այդ գործարանից ար-
տադրվում են գազեր, վոր մտնելով փամփուշտի մեջ՝ մեծացնում են
նրա ծավալը: Գազերն արտադրում ե այդ գործարանն արյան բերած
նյութերից:

5. Դիտեցեք ձկան բազմացման գործարանները, վոր ուրիշ կերպ
կոչվում են սեռական գործարաններ: Ցեթե դիահերձվող ձուկը եղ ե,
ապա կտեսնեք նրա մարմնի խոռոչում զեղնավուն գույն ունեցող ձվա-
րանը: Մի քանի ձկների մեջ նա գտնվում ե մարմնի աջ կողմում (պիր-
կես), դրա համար ել դիահերձման ժամանակ չի խանդարում տեսնել
մարսողական խողովակը: Սակայն ձկների մեծամասնության մեջ եղի
մարմնի մեջ լինում են յերկու հատ ձվարաններ, վոր պարկերի մեջ
ձգված են չմարմնի լերկարությամբ և ծածկում են մարսողական խողո-
վակը:

Զու ածելու շրջանում ձվարանների մեջ առաջանում են ահազին
քանակությամբ ձվիկներ—ձկնիկիր, վորից ձվարանները խիստ մեծանում
են և ուռեցնում եգ ձկան փորը:

Զու ածելու ժամանակ ձվիկները գուրս են գալիս մարմնից սե-
ռական անցքի միջով, վոր գտնվում ե սրբանի անմիջապես լեռնեում:
Սակայն վրապեսզի ձվիկները զարգանան և ձկնիկներ առաջ բերեն, ան-
հրաժեշտ ե, վոր նրանք բեղմնավորվեն: Եթեմնավորումը տեղի լի ու-
նենում հետեւալ ձեռվի:

Զու ածելու ժամանակ եգերին հետևում են արուները և յեր-
եղերը ձվիկներ են ածում, արուներն անմիջապես թափում են նրանց
վրա լրենց սեռական պրոդուկտը, վոր սպիտակավուն գույնի պղտոր-
մի հեղուկ ե: Այդ պղոդուկտը պատրաստվում ե արուների մեջ առան-
ձին գործարաններում, վոր կոչվում են սերմնարաններ. սրանք տեղա-

հանվել: Զկնաբուծության համար պատրաստված ջրավազանները պետք ե ունենան դատարկելու հարմարություններ: Դատարկելու ժամանակ բոլոր ձկները հավաքվում են փոս տեղերում, վորտեղ հեղտությամբ կարելի յե բռնել նրանց և գուրս հանել: Ծնորհիվ ջրավազանների ալսութինակ կտղմության՝ միանման հասակ ունեցող ձկներին կարելի յե բռնել, հաշվել, կշռել և տեղափոխել մի ջրավազանից մյուսը:

Բնական կերից զատ, ծածաններին տալիս են նաև սիսեռի և վոլոսի սերմեր, թթեփ և ջրաղացի զամր (ջաղացաքարի շուրջը հավաքված նուռթը), Ալսպիսի կեր ընդունելով՝ ծածանները շատ արագ կերպով են մեծանում և ձկնաբուծական տնտեսության արտադրականությունը բարձրանում ե:



Նկ. 66. Ծածան սովորական և հայելավոր:

Լավ հիմունքների վրա գրված տնտեսություններում (Գերմանիայում և Գալիցիայում) մի հեկտար մակերեսով ունեցող լճակներից ստանում են տարեկան 100—200 կիլոգրամ ձկնալին «բերք»:

Նշանակում ե, յեթե գարնանը մի հեկտար տարածություն գրավող լճակի մեջ դժնվում են 30 կիլոգրամ ծանրություն ունեցող ձկներ, ապա աշնանը այդ 30 կիլո-

գրամը դառնում ե առնվազն $30+100=130$ կիլոգրամ:

Միության մեջ ձկնաբուծական տնտեսություններ կան գլխավորապես Ռւկրայինայում և Բելոռուսիայում: Զկնաբուծության հետագա զարգացումը պայմանավորված է ընդհանուր առմամբ գյուղատնտեսության զարգացումով և յերկաթուղարին ցանցի ուժեղացումով, վորը հնարավորություն կտա թարմ ձուկն արագ կերպով վաճառքի հանել խոշոր կենտրոններում:

Ընտանի կենդանու փոխարկվելով՝ ծածանը մյուս ընտանի կենդանիների նման առաջ ե բերել մի քանի ցեղեր, վորոնք տարրերիվում

Հեն բնության մեջ վայրի վիճակում ապրող ծածաններից։ Ալդպես ե, որինակ, հայելալոր ծածանը, վորի մարմինը ծածկված է թեպետ սակավաթիվ, բայց չափաղանց խոշոր թեփուկներով (նկ. 66)։

11. ԶԿԱՆ ԿԵՐԸ

Ամեն մի կարթով ձուկ վորսացող գիտե, վոր մեր ձկների մեծամասնության համար ամենագրավիչ խալքը դա կարթի վրա մտցրած անձրեվորդն եւ Շատ ձկներ ել սիրով հարձակվում են ճանճի, մորեխի կամ ծղրիդի վրա։ Նշանակում եւ, ձկների սովորական ուտելիք են հանդիսանում զանազան տեսակի փոքրիկ կենդանիներ, ինչպիսիք են վորովերը և միջատները։ Խոշոր ձկներին, որինակ, պերկեսներին, ձիաձկներին, գայլաձկներին և այլն, վորսում են կարթի վրա հազցրած փոքրիկ ձկների, լերբեմն ել մեսաղյա ձկների միջոցով։ Լոքոներին և գդելներին գրավում են կարթի վրա անցկացրած գորտերով։ Համրաշարժ և հանդարտարարու ծածանները կտցում են հացի կտորները, մի քան, վոր պարզապես ցուց ե տալիս արդ ձկների բուսակեր լինելը։ Դիտելով, թե ձկներն ինչպիսի խալծերի վրա ին հարձակվում, կարող ենք գողափար կազմել նրանց ընդունած կերակրի մասին։


Կարթով վորսում են սովորաբար քիչ ու շատ խոշոր ձկներին։ Փոքր ձկները և մատաղ ձկները պահանջում են ավելի փոքր ծագալունցող խալծեր, որինակ, ակվարիումներում պահպող փոքրիկ ձկներին հաճախ պետք ե լինում տալ դաֆնիաներ կամ «ջրալին լվեր», վոր միծ բազմությամբ ապրում են կանգնած ջրերում։ Նշանակում ե, արդ փոքրիկ աննշան կենդանիները վորոշ դեր են կատարում ընության ընդհանուր տնտեսության և մեր ժողովրդական տնտեսության մեջ։ Նրանցով և նրանց նման փոքրիկ ելակներով են կերակրվում ձկներն իրենց մատաղ հասակում, գրա համար արդ ելակների շնորհիվ և, վոր գոյությունը ունեն խոշոր ձկները։

Սակայն միայն մատաղ ձկները և փոքրիկ ձկները չեն, վոր կերտակրվում են փոքրիկ ելակներով։ կան և մեծ ձկներ, վոր նույնպես նման ելակներով են կերակրվում, որինակ, քարթակները (ՊԼՈՏՎԱ) հարձակվում են զիխավորապես ամենափոքրիկ խալծերի վրա։ Այս բոլորը ցուց են տալիս, թե ինչ խոշոր անտեսական նշանակություն ունեն ջրալին ավազաններում ապրող փոքրիկ ելակները։ Այսպիսի ելակներով սնվում են և շատ ձկներ, որինակ, սիդը, հասարակ սաղմոնը, վորլան, տարանը և հարինգի փոքրիկ տեսակները։

Հասկանալի լե ալժմ, վոր առանձին ուշադրության արժանի լեն

ալն փոքրիկ և հազիվ նկատելի ելակները, վոր ալնքան մեծ բաղ-
յութամբ ապրում են մեր ջրային ավազաններում:

Ա. Խեցգետնազգի փոքրիկ կենդանիներ—դաֆնիներ յել ցիկլոպ-
ներ.—Ցեղե դիտենք ակվարիումը գեղի լուսը, կտեսնենք նրա մեջ
կենդանիներ՝ «ջրային լվեր», վորոնք ուժեղ ցատկումներով լողում են
ջրի մեջ (նկ. 67). Այդ փոքրիկ եակները կոչվում են դաֆնիներ.
սրանք տարվա տաք լեղանակներին շատ մեծ քանակութիւնում ապրում



Նկ. 67. Դաֆնիա (մեծացրած):

նրանց վերաբերմամբ լեղած աշխատանքները հետաձգել մինչև գտ-
րուն, իբր նրանք յերեան են գալիս արտակարգ առատությամբ: Այդ-
ժամանակ բացի դաֆնիաներից, կանգնած ջրերում դուք կտեսնենք
նաև մոծակների և այլ միջատների թրթուններ, վորոնք նույնպես
կեր են դառնում ձկներին:

Դաֆնիայի կազմությունը կարելի յէ դիտել միայն միկրոսկոպով:
Բացի դրանից, աշխատանքի համար անհրաժեշտ ե պատրաստել:
1) ալսպես կոչվող ժամացուցի ապակի, 2) ապակիա պիպետ կամ
ապակիա խողովակ ճարթ ձևով կտրված լեզրերով: Վերցրեք մի արդ-
պիսի խողովակ, ծածկեցնեք վերևի ժալրը մատով և մացրեք ստորին:
Ժայրը բանկայի մեջ և մոտեցրեք ալն դաֆնիային, վորին ուղարկ եք
բանել, չենց վոր հեռացնեք ձեր մատը խողովակի վերևի անցքից, ջուրն
անմիջապես մեծ ուժով կմղվի խողովակի ստորին ծալրից գեղի ներս
(ինչժամ) և իր հետ կտանի նաև ձեր ցանկացած դաֆնիային: Այնու-
հետեւ նորից ծածկեցնեք խողովակի վերևի անցքը մատով և դուքս հա-
նեցնեք խողովակը ջրից: Զուրը խողովակից չի թափվի (ինչժամ) և դուք-
կարող եք դաֆնիան գցել ժամացուցի ապակու վրա: Միկրոսկոպով
դաֆնիան պիտի և դիտեք նվազ չափով մեծացնող ապակով:

Դիտելով դաֆնիան միկրոսկոպով՝ դուք կտեսնեք նրա ճյուղա-
վոր թիակավոր վերջավորությունները և մի հատ մեծ բարդ աչք, վոր-

Դունվում և նրա դլխի վրա և աչքի լեռ ընկնում իր մուգ գույնով։ Մարմի մնացած մասը ծածկված է կողքերից լերկիեղկանի զրահով։ Դրանի տակ տեղավորված են քիմուխտները և վոտիկները, վորոնք անդադար շարժվում են։ Նրանց շարժումներով շարունակ թարմ ջուր և մղվում գեպի քիմուխտները, վորի շնորհիվ և գաֆնիան շնչում ե։ Հողվածավոր վերջավորություններ ունենալը և քիմուխտներով շնչելը խեցքեանզգի կենդանիների առանձնահատկություններն են համարվում։ Նշանակում ե, գաֆնիան խեցքեանազգի կենդանի լեռ նարմնի թափանցիկ ծածկութիթի միջով լեռում են ներքին գործարանները՝ մարսողական խողովակը, շարժվող սիրտը (մեջքի կողմում), լերբեմն ել մուգ գույն ունեցող ձկերը (նույնպես միջքի կողմում, բայց սրտի լետեռում)։

Բացի դաֆնիալից, ջրում կարող են լինել և այլ տեսակի խեցքեանազգի կենդանիներ, նույնպես մի հատ աչքով։ Դրանք ել կոչվում են ցիկլոպներ (նկ. 68). Եգ ցիկլոպի փորի լերկու կողքերից կախված են մի զուգ քսակներ, լիքը ձվերով։

Բ. Զրբ միկրոսկոպական բնակիչներ։ — Դափնիան և ցիկլոպը մենք տեսնում ենք ջրի մեջ և հասարակ աչքով։ Յերբ դիտում ենք նրանց միկրոսկոպի տակ, նրանց կողքին տեսնում ենք լերբեմն և այնպիսի կենդանիներ, վորոնք իրենց փոքրության պատճառով տեսանելի չեն հասարակ աչքով։ Դրանք արգեն այն ելակներն են, վորոնցով սնվում են դաֆնիաները, ցիկլոպները և մոծակների թրթուռները։ Այդ փոքրիկ կենդանիների մեծամասնությունը պատկանում է ինֆուզորների խմբին (նկ. 69). Խնֆուզորներին հատազոտելու համար անհրաժեշտ ե չղիտել ավելի ուժեղ կերպով մեծացնող ապակով։ Դրա համար հակավոր և տեղավորել նրանց ջրի կաթիլի հետ միասին առարկայական ապակու վրա և ծածկել վերևից թղթի պես բարակ մի ապակով, վոր կոչվում ե ծածկապակի։

Սակայն խնֆուզորները ևս իրենց հերթին կերպերի կարիք են պահում. դրա համար ել լարորատորիաներում լերբ կարիք են զգում բազմացնել ինֆուզորներին մեծ չափերով, ամենից առաջ հոգ են տանում նրանց սննդի մասին։ Խնֆուզորների համար արհեստական կուլտուրաներ պատրաստելու համար և առաջ չոր խոտը լեփում են նրա ջուրը պահում բերանը բաց մի անոթում։ Մի քանի որից հե-




նկ. 68. Ցիկլոպ
(մեծացրած)։

տո հեղուկի մակերեսուկթի վրա առաջանում և մի բարտկ թաղանթ։ Դիտելով միկրոսկոպով այդ թաղանթը՝ նկատում ենք, վոր նա բաղկացած և անթիվ անհամար փոքրիկ կենդանի ձողիկներից՝ խոտային բակտերիաներից, վորոնք տապրում են ի հաշիվ այն պատրաստի գործարանական նյութերի, վոր գտնվում են հեղուկի մեջ և բազմանում են չափազանց արագ կերպով։ Այդպիսով մեռյալ նյութի մի մասը, վոր լուծված վիճակում գտնվում և ջրի մեջ, փոխարկվում և կենդանի նյութի և կազմում և բակտերիաների փոքրիկ որգանիզմները։

Գ. ԶԵՐԻ կենսաբանիկան իմենացումը։ — Նման գործողություններ տեղի էն ունենում և բնության մեջ։ Զուրը կեղտոտող գործարանական ավելցուկներն ու մնացորդներն ստեղծում են բակտերիաների և մի քանի ջրիմուռների զարգացման համար նպաստավոր մի միջավայր, վորտեղ նրանք ոգտագործելով մեռյալ վիճակում գտնվող կերակրանյութերը՝ պատրաստում են իրենց մարմինը կազմող կենդանի նյութը։ Բակտերիաները և միկրոսկոպական ջրիմուռները կերեն գառնում այնուհետև զանազան տեսակի ինֆուզորներին և այլ փոքրիկ կենդանիներին, վորոնք իրենց հերթին նույնպես կեր են գառնում այլ կենդանիներին, բայց արդեն աշխի համար տեսանելի, այն եւ խեցգետնազգի փոքրիկ կենդանիներին, վորդերին և թրթուռներին։

Այսպիսով ջուրը հետզհետև մաքըրով վում և, վորովհետև ազատվում և գործարանական խառնուրդներից և ազո-



Նկ. 69. Խնֆուզոր (խիստ մեծացրած)։

տային նյութերից։ այդ բոլորն այնուհետև խտանում և կենդանիների մարմնի մեջ, սկզբում մանրիկ և ապա խոշոր կենդանիների։

Այն բոլոր որգանիզմները, վորոնք ապրում են ջրի մեջ և անզորեն մաքառելու ջրի հոսանքի դեմ, կազմում են նույն ջրային տվազանի պլանետներ։

Յերբ կան փոքրիկ պլանկտոնալին կենդանիներ, կեր են գտնում և ձկները. ալդպիսով ջրավազանի գործարանական նլութերը խտանում են արդեն ձկների մարմնի մեջ և դառնում մեղ համար ոգտագործելի նլութ:

Մենք ձկներ չելինք ունենա, ևթե ջրավազաններում չապրելին խեցեանաղգի փոքրիկ կենդանիներ, վորդեր և թրթուռներ, սրանք ել չելին կարող լինել, ևթե շինելին ավելի փոքրիկ որգանիզմներ, վորոնք վերջը հասցնում են մեկ որգանական մնացորդները քայլաւման լենթարկող բակտերիաներին. Դրա համար ել ի զուր չե, վոր լճակների մեջ ապրող ձկների «բերքատվությունը» բարձրացնելու համար հաճախ լճերը պարարտացնում են գոմազրով և կամ թռչունների ծրտով:

Ի միջի այլ պլանկտոնալին որգանիզմների՝ ձկներն ուտում են և մոծակների թրթուռներ ու հարսնակներ, վորոնք իրենց զարգացումն անց են կացնում ջրի մեջ. Այս գործում ձկները հանդիսանում են արդեն մեր դաշնակիցները, վորովհետեւ ինչպես հայտնի լե, մալարիա կոչվող հիվանդությունը տարածվում ե մոծակների միջոցով, վորի համար և մարդիկ խիստ կերպով պայքարում են նրանց դեմ:

12. ՊԵՏԱԿԱՆ ԶԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ

Յերկրի բնակչության ավելացումը և մարդու տնտեսական գործունելության զարգացումն ամեն տեղ նվազեցնում է բնական ձկնալին հարստությունները. Ձկների քանակությունը քշանում է նաև շնորհիվ գործարաններից դեպի գետը թափվող գանազան ավելցուկների, վորոնք կեղտուառում են ջուրը. Պակաս նշանակություն չունեն և այն ամբարտակները, վորոնք խանդարում են ձկներին բարձրանալ գետի հոսանքի հակառակ ուղղությամբ դեպի վեր, դեպի գետի ակունքները, բայց խոսք չկա, վոր ամենամեծ ավերածությունը կատարում է հետզհետեւ զարգացող ձկնորսությունը.

Խոշոր հարված են կրում ձկնորսությունից մանավանդ այն ձեկները, վորոնք տարվա վորոշ ժամանակ գնում են դեպի գետերի ակունքները ձկնկիթ ածելու և վորոնք վրենց ճանապարհի վրա ամենուրեք պատահում են ամեն տեսակի վտանգների. մի տեղ ընկնում են նրանք ցանցի մեջ, մի այլ տեղ բռնվում են կարթերից. Նրանց հետ վոչչանում ե նաև նրանց ձկնկիթը, վորից ալլև մի հատ ձուկ չի դուրս գալիս. Ձկնկիթ ածող ձկների աւսորինակ վոչչացումը կրկնվում ե ամեն տարի և զարմանալի չե, վոր գետերի հոսանքների վրա զար-


գացող ձկնորսության շնորհիվ ձկների քանակությունը գնալով հետզդ հետեւ նվազում է: Զանազան տեսակի պաշտպանողական միջոցներն անբավարար են համարվում, դրա համար ել անցյալ դարի կեսերից սկսած շատ ու շատ կուլտուրական լերկրներում կազմակերպվել են արժեքավոր ձկների բազմացման հատուկ ձկնաբուծարաններ:




Այնտեղ արհեստական կերպով բեղմնավորված ձկներից ստանում են փոքրիկ ձկներ և բաց թողնում գետերի կամ լճերի մեջ, վորպեսզի ծածկեն ձկնորսությունից առաջացած պակասը:

Արհեստական կերպով ձկնկիթը բեղմնավորում են հետեւյալ ձեռով: Բանում են ձկնկիթ ունեցող ձուկը, շփում են սրբիչով և ապա կորացնելով իրանը՝ թեթև կերպով փորը սեղմում են և ձկնկիթը թափում մի չոր թասի մեջ (նկ. 70), նույն ձեռով դուրս են հանում արվից կաթնանման հեղուկը և թափում մի անոթի, որին ակալ, բաժակի մեջ: Այնուհետև կաթնանման հեղուկի վրա ջուր են ավելացնում և ստացված պղտոր հեղուկն ածում ձկնկիթի վրա և աշխատում են այնպես անել, վոր հեղուկը կպչի բոլոր ձվիկներին:

Բեղմնավորված ձվիկները պահում են առանձին անոթների մեջ, վորոնց միշտ շով շարունակ թարմ ջուր և անցնում (նկ. 71): Այդ անոթների մեջ ձվիկներից դուրս են գալիս փոքրիկ ձկնիկներ, վորոնց վորոշ ժամանակից հետո բաց են թողնում լճի կամ գետի մեջ (նկ. 72):



Նկ. 71. Բեղմնավորված ձկնկիթի զարգացման համար անոթ, վորի միջով անցնում և թարմ ջրի հոսանք:



Նկ. 72. Կարմրախայտի ձագը գեղնուց տուի կամ պարկուվ:

Արհեստական ձկնաբուծությունը լայն չափերով կիրառվում է արեւմտյան լերկըներում, մանավանդ Ամե-

ըրիկալում։ Միացլալ Նահանգների կառավարությունն ամեն տարի արդ
նոպատակով ահազին գումարներ և ծախսում, և պետք և ասել, վոր
արդեն հասել են շատ մեծ արդյունքների. զգալի կերպով ավելացել ե
ձկների քանակությունը, վորի հետ միասին զարգացել ե և ձկնորսու-
թյունը։ 1913 թվին Ամերիկայում 136 ձկնաբուծարաններ բաց են
թողել բնական ջրավազանների մեջ $3^{1/2}$ միլիարդից ավելի զանազան
տեսակի արժեքավոր ձկներ։

Նման ձկնաբուծարան կազմակերպվել ե Հայաստանում Սևանա
լճի ափին, վորտեղից ամեն տարի ահազին քանակությամբ իշխան և
սիր ձկներ են բաց թողնվում Սևանա լճի մեջ։

ԶՈՒՆ ՅԵՎ ԹՌՉՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ԶՎԱԹՌՉՆԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒ-
ԹՅԱՆ ՄԹԵՐՔՆԵՐ

1. ԹԵ ԻՆՉՈՒ ՊԻՏԻ ԾԱՆՈԹԱՆԱՆՔ ՀՆՏԱՆԻ ԹՌՉՈՒՆԻ
ՅԵՎ ՆՐԱ ՊՐՈԴՈՒԿՑՆԵՐԻ ՀԵՏ

Մենք գեռևս շատ քիչ ուշադրություն ենք դաբճնում թոշնարու-
ծության վրա:

Ընտանի թոշուններ պահելը գեռևս տնտեսություն չի համարվում։
Թոշունները պահում են «հենց այնպես», ի միջի ալլոց. հաճախ նրանց
համար վոչ մի հարմարություն չեն ստեղծում, իսկ ամառը դադարում
են կերակրելուց։

Հարց ու փորձ արեք ձերոնց կամ ձեր հարևաններին՝ արդյոք
ընտանի թոշուններն արդարացնեմ են իրենց խնամքի հետ կապված
աշխատանքները։

Հազիվ թե շատերը կարողանան այս հարցին ստույգ պատասխան
տալ։

Ընտանի թոշուններ պահողներից շատերը չգիտեն նույնիսկ, թե
ընտանի թոշուններ պահելը ձեռնաժամ լի, թե վնասակար։

Բայց չնայած դրան՝ ամեն մի գլուղական տնտեսություն թոշուններ
և պահում. թոշուններ պահում են և քաղաքում, մանավանդ քա-
ղաքային ծայրամասերում։ Այսպիսով շատերն են թոշուններ պահում,
բայց համարյա վոչ վոք չգիտե և չի լի հետաքրքրվում իմանալ, թե
թոշուններ պահելը ձեռնաժամ լի, թե վնասակար։ Հսկալական մեծա-
մասնությունը չգիտե, թե թոնչպիսի թոշուն պիտի պահել, վոր ձեռնաշու-
լինի։

Սակայն յեթե ընտանի թոշուններն ալգքան դեռ չնչին նշանա-
կություն ունեն առանձին-առանձին տնտեսությունների մեջ, հետա-
քրքրական ե իմանալ, թե՝ թոնչպիսի տեղ են գրավում նրանք ընդհա-
նուր ժողովրդական տնտեսության մեջ։

Բանից գուրս ե գալիս, վոր գեռ մինչեւ պատերազմը (1913 թ.)
նախկին Ռուսաստանն արտահանել ե արտասահման 108 միլիոն ոռոր-
լու թոշնարուծական մթերքներ։ Նշանակում ե, պետությունն ստա-

ցել և տարեկան 100 միլիոնից ավելի ռուբլի լեկամուտ վոսկով իրարտահանած ձվի, մորթած թոչունի, աղվամազի և փետուրների համար: Դա անշուշտ շատ զգալի դումար և պետական բլուջելի տեսակետից: Հետաքրքրական և նշել, վոր ձու արտահանվել ե 90 միլիոնի, կենդան և մորթած թոչուն՝ 16 միլիոնի, աղվամազ և փետուրներ՝ 2 միլիոնի (հաշվեցեք տոկոսներով):

Վորպեսպի մեզ համար ավելի լավ պարզվի, թե գլուղատնտեսական և մշակողական արդյունաբերության զանազան բնագավառների մեջ նախքան պատերազմը թոշնաբուծությունն ինչպիսի տեղ է լեզել գրաված արտասահման արտահանվող նյութերի մեջ՝ կրերենք հետեւալ աղյուսակը.

Դյուլպանեստուրյան յեվ մօակողական արդյունաբերության պրադուկտների արտահանումը 1913 յեվ մասամբ 1912 թվերին միլիոն ռուբլիներով:

Հայ (1913 թ.)	552 մ. ռ.	Կովի յուղ (1913 թ.)	71 մ. ռ.
Անտառալին նյութեր	165 » »	Շաքար (1912 թ.)	57 » »
Թոշնաբուծական արդյունաբերության մթերքներ 108 » »		Կաշվի հումուզ (1912 թ.)	48 » »
Կտավատի և կանեփի թել		Նավթ (1912 թ.)	38 » »
(1913 թ.)	107 » »	Հանքանյութ (1912 թ.)	17 » »
		Խողան, թաղիք (1912 թ.)	14 » »
			և այլն:

Այս աղյուսակը ցուց է տալիս, վոր արտահանման նյութերի մեջ մինչև պատերազմը թոշնաբուծական մթերքները գրավել են լեռորդ տեղը:

Պատերազմի տարիներին թոշնաբուծական մթերքների արտահանումը բոլորովին կանգ և առել. նա սկսել է զանդազորեն վերականգնել մինան 1923 թվից: Այսպես որինակ, 1923—24 տնտեսական տարրում արտահանվել են թոշնաբուծական մթերքներ 10 միլիոն ռուբ., 1924—25 թվին՝ 32 միլիոն ռուբլու, 1925—26 թվին՝ 28 միլիոն ռուբլու, 1926—27 թվին՝ 34 միլիոն ռուբլու և 1927—28 թվին՝ 53 միլիոն ռուբլու:

Այս տվյալների հիման վրա կազմեցեք պատերազմից առաջ և հեղափոխությունից հետո տեղի ունեցած արտահանումների համեմատական դիագրամ և հաշվեցեք, թե ինչքան պիտի շատացնենք մենք թոշնաբուծական մթերքների արտահանումը, վորպեսզի հավասարվենք դունե նախապատերազման մակարդակին:

Այժմ պետք է վոր միանդամալն հասկանալի լինի, թե ինչու պետք է դպրոցում զբաղվենք թոշնաբուծության վերաբերյալ հարցե-

յել և տարեկան 100 միլիոնից ավելի ռուբլի լեկամուտ վոսկով իրարտահանած ձվի, մորթած թուզունի, աղվամազի և փետուրների համար: Դա անշուշտ շատ դպալի գումար և պետական բուջելի տեսակետից: Հետաքրքրական և նշել, վոր ձռւ արտահանվել և 90 միլիոնի, կենդան և մորթած թուզուն՝ 16 միլիոնի, աղվամազ և փետուրներ՝ 2 միլիոնի (հաշվեցեք տոկոսներով):

Վորպեսողի մեջ համար ավելի լավ պարզվի, թե զլուղատնտեսական և մշակողական արդյունաբերության զանազան բնագավառների մեջ նախքան պատերազմը թուչնաբուծությունն ինչպիսի տեղ է լեզել գրաված արտասահման արտահանվող նյութերի մեջ՝ կրերենք հետեւալ աղյուսակը.

Դյուլանետեսության յեվ մօսակողական արդյունաբերության պրոդուկտների արտահանումը 1913 յեվ մասամբ 1912 թվերին միլիոն ռուբլինով:

Հաց (1913 թ.)	552 մ. ռ.	Կովի յուղ (1913 թ.)	71 մ. ռ.
Անտառալին նյութեր	165 » »	Շաքար (1912 թ.)	57 » »
Թուչնաբուծական արդյուն-		Կաշվի հումուկ (1912 թ.)	48 » »
նաբերության մթերքներ	108 » »	Նավթ (1912 թ.)	38 » »
Կառավատի և կանեփի թել		Հանքանյութ (1912 թ.)	17 » »
(1913 թ.)	107 » »	Խոզան, թաղիք (1912 թ.)	14 » »

և այլն:

Այս աղյուսակը ցույց է տալիս, վոր արտահանման նյութերի մեջ մինչև պատերազմը թուչնաբուծական մթերքները գրավել են լեռորդ տեղը:

Պատերազմի տարիներին թուչնաբուծական մթերքների արտահանումը ըստորովին կանգ է առել. նա սկսել է դանդաղորեն վերականգնել միայն 1923 թվից: Այսպես որինակ, 1923—24 տնտեսական տարում արտահանվել են թուչնաբուծական մթերքներ 10 միլիոն ռուբ., 1924—25 թվին՝ 32 միլիոն ռուբլու, 1925—26 թվին՝ 28 միլիոն ռուբլու, 1926—27 թվին՝ 34 միլիոն ռուբլու և 1927—28 թվին՝ 53 միլիոն ռուբլու:

Այս տվյալների հիման վրա կազմեցեք պատերազմից առաջ և հեղափոխությունից հետո տեղի ունեցած արտահանումների համեմատական դիագրամ և հաշվեցեք, թե ինչքան պիտի շատացնենք մենք թուչնաբուծական մթերքների արտահանումը, վորպեսզի հավասարվենք գոնս նսխապատճերազմյան մակարդակին:

Այժմ պետք է վոր միանգամայն հասկանալի լինի, թե ինչու պետք է դպրոցում զբաղվենք թուչնաբուծության վերաբերյալ հարցե-

ըով։ Յեթե առաջ, լեռը բնակչությունը դեռ գաղափար չի ունեցել թոշնարուծության մասին և ուշադրություն չի դարձրել նրա վրա, պետությունը կարողացել է հսկայական գումար ստանալ արտասահմանից իր արտահանած թոշնարուծական մթերքների համար, ապա ապագայում, լեռը բոլոր քաղաքացիները վոչ միայն ծանոթ կլինեն ընտանի թոշունների հետ, այլ և ի վիճակի կլինեն ստանալ նրանցից այն բոլորը, ինչ վոր կարող են տալ նրանք, այդ գեպքում արտահանումը շատ ավելի մեծ չափեր կընդունի և Խորհրդային Միությունը հնարավովովություն կստանա արագացնել ինդուստրիալիզացիայի և ժողովրդական տնտեսության վերակառուցման թափը ի հաշիվ այն վոսկու, վոր կստացվի արտասահմանից՝ արտահանված թոշնարուծական մթերքների դիմաց։

2. ԹԵ ԻՆՉ ՊԻՏԻ ՊԱՐՁԵԼ ԱՅՍ ԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԿԶԲՈՒՄ

Այժմ պիտի փորձենք խմբակի ընդհանուր ուժերով պարզել ընդհանուր գծերով՝ թե ինչ նշանակություն ունի թոշնարուծությունը տվյալ վարդում։

Առաջադրություն 1. — Հետազոտելով ձեր ռալոնը (կամ փողոցը, գլուղը, արվարձանը)՝ իմացեք, թե քանի՞ բակում ընտանի թոչուններ են պահում կամ քանի ընտանիք և թոչուններ պահում։ Ի՞նչպիսի թոչուններ են պահում և ինչ քանակությամբ կատարեցնեք այս հետազոտությունը տվյալ խմբակի աշակերտների միջոցով։

Հավաքված տվյալներից կազմեցեք ընտանի թոչունների վերաբերալ մի աղյուսակ հետևյալ ձեռվ։

	Հազ.	Մագ.	Բար.	Հնդկանազ.	Բուջուններ ընդդ.
Տնտեսությունների անունները կամ համարները.	Քանակությունը մուլտ. անհանգույնությունը թափանքների թվաքանակը.	0/0	0/0	0/0	0/0
Ճ Ճ					
Ճ Ճ					
Ընդամենը					
Միջին հաշվագ ամեն մի տնտեսություն ունի.					

Համեմատեցեք ստացված տվյալները նախորդ հետազոտությունների (լեթե լեղել են) տվյալների և կամ այլ դպրոցներում կատարված հետազոտությունների տվյալների հետ։ Համեմատեցեք ձեր տվյալները Միության ընդհանուր վիճակագրական տվյալների հետ։

Այսպես որինակ, կենտրոնական վիճակագրական վարչության տվյալների համաձայն 1924 թվին Միության մեջ ընտանի թուշուների զանազան խմբերը կազմել են հետևելու տոկոսները՝ հավերը — 92%/₀, սագերը — 5%/₀, բաղերը — 2¹/₂ %/₀ և հնդկահավերը — 1¹/₂ %/₀։

Առաջարկություն 2. — Պարզեցեք, թե տեղական բնակչությունը թուչնարուծական ինչպիսի մթերքներ (ձու, միս) և գործածում և մոտավորապես ինչ քանակությամբ։ Այդ իմանալու համար պետք է ամեն մեկը հաշվառքի լենթարկի իրենց ընտանիքում գործածվող մըթերքները մի շաբաթվա ընթացքում (ավելի՝ լավ կլինի, իհարկե, լեթե ավելի լերկար ժամանակի ընթացքում կատարվի այդ հաշվառքը), ապա ստացված տվյալները պիտի բաժանել ընտանիքի անդամների թվի վրա և բազմապատկել չորսով (4 շաբաթ ամսվա մեջ)։ Այդպիսով կիմացվի, թե յուրաքանչյուր մարդ ամսվա ընթացքում ինչ քանակությամբ թուչնարուծական մթերքներ և գործածում։ Այնուհետև պետք է հանել ընդհանուր թվեր խմբակի բոլոր անդամների տված տվյալների հիման վրա։

Առաջարկություն 3. — Հետազոտեցեք տեղական շուկան թուչնարուծական մթերքների տեսակետից։

Թուչնարուծական ինչպիսի մթերքներ են գտնվում տեղակտնշուկայում և վճրաեղից են նրանք ստացվում։

Ի՞նչպիսի մթերքների պակասություն և զգացվում շուկայում։ Տարվա վեր ամիսներին այդ պակասությունն ավելի լե զգալի։

Հավաքեցեք տեղեկություններ թուչնարուծական զանազան մըթերքների շուկայի գների վերաբերյալ, ի՞նչպիսի փոփոխությունների լեն լենթարկվում այդ գները տարվա զանազան ժամանակներում։

Հետեւլուրյուններ. — Բոլոր հետազոտությունների և համեմատությունների (առև I առաջարկություն) հիման վրա կարող եք հեշտությամբ լեզրակացություններ հանել հետևել հարցերի վերաբերմամբ։

Ի՞նչ նշանակություն ունի թուչնարուծությունը տեղական ույունում։

Ընտանի թուչուններից վեր խումբը և թուչնարուծական ինչպիսի մթերքներ ավելի մեծ նշանակություն ունեն տվյալ ուայրում։

Տեղական թուչնարուծությունը բավարարում է միայն իրենց

տնտեսությունների կարիքները, թե վաճառքի լե հանվում շուկայում, Բավարարում և արդյոք շուկան բնակչության կարիքները տեղական թռչնաբուծական մթերքներով, թե վոչ: Այս աշխատանքը կատարելուց հետո կարող ենք հիմա կազմել մեր հետագա աշխատանքի պլանը:

3. ԹՐՉՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆ ԿԱԶՄԵԼԸ

Վորապեսզի չըրվենք, պետք և սկզբից և լեթ վորոշենք, թե մեր գլխավոր ուշադրությունը վնա ընտանի թռչունի վրա պիտի դարձնենք:

Հավանորեն մեծամասնությունն այդ տեսակետից կանգ կառնի հավերի վրա: Բացատրեցեք, թե ինչու մանրամասն հետազոտության համար հավն ամենից հարմար ընտանի թռչունն եւ:

Մեր հետազոտական աշխատանքի գլխավոր խնդիրները կարող են լինել հետևյալները:

1. Մանորանալ բոշնաբուծական տնտեսության կազմակերպության հետ:

2. Մանորանալ հավի, վորպես գյուղատնտեսական մի մեթենայի հետ, վոր արտադրում և սննդամբերեներ:

3. Մանորանալ բոշնաբուծական մթերեների հետ:

Այս առաջադրությունների հաջորդականությունը և մշակումն ըստ տեղի պայմանների և հնարավորությունների՝ կարող և տարրեր լինել: Պետք եւ ի նկատի ունենաք այդ հանգամանքները և կազմեք աշխատանքի որացուցային պլան:

Առաջին առաջադրությունը հետազոտելու համար կարելի լե թըսչնաբուծության կազմակերպության խնդիրներով հետաքրքրվող աշակերտներից կազմել մի հատուկ ողակ: Այս ողակն իր վրա կվերցնի թռչնաբուծական յերկու տնտեսությունների հետազոտության խնդիրը: մեկն այդ տնտեսություններից պետք եւ լինի սովորական բնույթ կը-րող, իսկ մյուսը՝ քիչ ու շատ բարեկարգ: Յեթե հանգամանքները ներեն, ցանկալի լե կազմակերպել ամբողջ խմբակի համար մի եքսկուրսիա գեպի թռչնաբուծական վորեե տնտեսություն:

Թռչնաբուծական տնտեսության հետազոտման պլանի մեջ ցանկալի լե մտցնել հետևյալ հարցերը: 1) Ի՞նչպիսի շինության մեջ ևն պահպում հավերը. 2) Ի՞նչպիսի սարքավորումն ունի այդ շինությունը. 3) Ի՞նչպես են պահում և խնամում հավերին. 4) Ի՞նչ արդյունք են տալիս հավերը:

Յերկրորդ («հավը վորպես գյուղատնտեսական մեքենա») և լիրորդ («թռչնաբուծության մթերքները») առաջադրությունների հետ

ողիտի ծանոթանա ամբողջ խմբակը՝ դիտողությունների և լաբորատոր աշխատանքների միջնորդ:

Յերկրորդ տուաջաղբությանն անցնելու ժամանակ պետք է ուշագրության նյութ դարձնեք հավի արտաքին առանձնահատկությունները, հավի ներքին կազմությունը, հավի արդյունավետությունը և վերջապես վարքն ու բարքը:

Յերրորդ տուաջաղբության մեջ ձեր ուշաղբությունը պետք է կենտրոնացնեք, իհարկե, ձվի հետազոտության վրա:

Ավելի մանրամասն պլաններ ցանկալի չե, վոր մշակեն աշակերտները ողակներով և կամ ամբողջ խմբակով:

4. ԳԱՂԱՓԱՐ ԹՌՉԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախքան դեպի թուչնաբուծական վորևե տնտեսություն եքսկուրսիա կազմակերպելը, կազմեցնեք մի քանի հատ հարցաթերթիկներ, վորոնց վրա կարող եք գրել ամենակարենոր հարցերի պատասխանները, և պահեցնեք այդ թերթիկները հետազայում մշակման լենթարկելու համար:

Առաջին քերդի մեջ մտցրեք այն հարցերը, վորոնք վերաբերում են նախանոցի կազմության:

Ի՞նչքան թուչուն կա տնտեսության մեջ, մասնավորապես ի՞նչքան են հավերը և ի՞նչքան աքլորները:

Կամ արդյոք առանձին հավանոց, թե թուչունները պահվում են անտառունների հետ միասին:

Զափեցնեք հավանոցի հատակի մակարդակը:

Ցնկը և արդյոք հավանոցը, թե տաք:

Ի՞նչպիսի բարեխառնություն կար հավանոցում հետազոտության ժամանակ: Ի՞նչպիսի տարբերություն կա այդ բարեխառնության և գրսի ողի բարեխառնության միջև:

Ունի՞ արդյոք հավանոցը ողափոխության հարմարություն: Ցեթեւնի, նկարագրեցնեք այդ հարմարությունը:

Լուսավման հ, թե մութ հավանոցը: Զափեցնեք պատուհանների մակարդակը:

Իմանալով պատուհանների և հատակի մակարդակները՝ հաշվեցնեք, թե ի՞նչպիսի հաբարերության մեջ են գտնվում նրանք միմյանց նըկատմամբ:

Մաքնարկը ե, թե կեղաստ հավանոցը: Ցնկը ե, թե խոնավ հավանոցը (արտաքուստ դիտելով):

Կամ արդյոք հավերի ման գալու համար ծածկված ձմեռալին վայր՝
կամ արդյոք հավերի ման գալու համար ամսուալին վայր։ Յեթե
կան, չափեցեք այդ վալբերի մակարդակը։

Յերկրորդ հարցաքերքիկը կարող ե վերաբերել հավանոցի սարքա-
վորման։

Ի՞նչպես են դասավորված թառերը—մեկը մլուսի վրա՝ հարկերով,
թե մեկ հորիզոնական մակարդակի վրա։ Յեթե հարկերով են դասա-
վորված, ապա աշխատեցեք պարզել, թե հավերը վեր թառի վրա յեն
գերադասում գիշերել—վերել, միջին, թե ներքելու կայշում են թառերը
պատերին, թե վոչ։ Այս վերջին հարցը կպարզի, թե ինչպես են պաշտ-
պանված հավերը արտաքին պարագիտներից, վորոնք ցերեկը թագնվում
են պատերի ճեղքերի մեջ, իսկ գիշերը գնալով դեպի թառերը՝ հար-
ձակվում են թռչունների վրա։

Ի՞նչ լայնություն ունեն թառերը (չափել տրամագիծ)։

Ի՞նչպիսի հեռավորության վրա լեն գտնվում թառերը միմյան-
ցից (հորիզոնական մակարդակով)։

Կան արդյոք թառերի տակ տախտակներ (ի՞նչի համար են այդ
տախտակները)։

Կան արդյոք հավանոցի մեջ կտամաններ և ջրամաններ, Յեթե
կան, նկարագրեցեք այդ կտամաններն ու ջրամանները։

Կամ արդյոք ստուգողական բուն։ Յեթե կա, նկարագրեցեք այդ
բնի կազմությունը։

Յերկրորդ հարցաքերքիկի մեջ կարող են լինել հավերի խնամքի հետ
կապված հարցեր։

Ի՞նչպիսի կեր են տալիս հավերին, հատեկ, թեփ, թե կարտոֆիլ։
Միայն հատիկ, միայն թեփ կամ միայն կարտոֆիլ են տալիս, թե
նրանցից կազմում են խառնուրդ և այնպես կերակրում։ Վերջին դեպ-
քում պարզեցեք, թե ի՞նչպես են կազմում խառնուրդը։

Հիմնական կերի հետ խառնում են արդյոք կանաչ-բուսական-
կամ մսալին-կենդանական կեր (արմատապտուղներ, ծլած վարսակ,
հում միս)։

Տալիս են արդյոք հանքալին կեր (ավագ, կիր, վոսկը, ածուխ և
ալլն)։

Որական քանի՛ անգամ են կերակրում հավերին և վեր ժամա-
նակները։

Գիրծ և ածվում արդյոք վորես չափ, վորով չափում են որվա-
ընթացքում արվելիք կերը (բաժակ, թաս և ալլն)։

Որվա ընթացքում ամեն մի հավին ի՞նչքան կեր և ընկնում մի-

Հին հաշվով՝ Դերա համար պետք ե որվա ընթացքում բոլոր հավերին տրված բոլոր տեսակի կերերի ընդհանուր քաշը բաժանել հավերի թվի վրա:

Կան արդյոք հիվանդ հավեր, թե վոչ ինչով են հիվանդ նրանք: Ի՞նչպես են ինամում հիվանդ հավերին:

Ախտահանում են արդյոք հավանոցը, թե վոչ:

Ես արդյոք հավանոցի հատակին վորեև փոփածք, թե վոչ:

Ի՞նչ ձևով են պահպանում հավանոցի մեջ մաքրությունը:

Ի՞նչպես են ոգտագործում թոշունների ծիրտը:

Չորրորդ հարցարերիկը կարող ե վերաբերել հավերի արդյունավետության:

Ի՞նչպիսի հավացեղեր կան տնտեսության մեջ (ազնվացեղ և վոչ աղնվացեղ, աղնվացեղերից ի՞նչպիսի ցեղեր կան):

Ի՞նչքան պառավ հավեր կան և ի՞նչքան մատադ:

Ի՞նչ տարիքի լեն պառավ հավերը:

Յերբ են ձերից դուրս լեկել մատադ հավերը:

Ի՞նթացիկ տարում լերը են սկսել ձու ածել պառավ հավերը:

Յերբ են սկսել ձու ածել մատադ հավերը:

Ի՞նչքան թուլխս կա տնտեսության մեջ հետազոտության ժամանակ:

Վերքան ձու լեն ածել հավերը վերջին շաբաթվա ընթացքում: Թանի՞ գրամ ե կղուում մի տասնյակ ձուն և քանի՞ գրամ՝ մի հատը:

Թանի՞ հատ ճուտ ե դուրս լեկել ձերից տվյալ տարում տնտեսության մեջ:

Ի՞նչքան ձու լե լեղել դրված թուլխսերի տակ:

Ճուտերի մեջ ի՞նչքան վառեկներ են լեղել և ի՞նչքան աքլորներ:

Այս հարցարելիքիները բաժանեցեք ձեր մեջ այնպես, վոր ամեն մեկը ձեզանից կամ ամեն մի ողակ կարողանա զբաղվել ինքնուրուցն կերպով վորեև առաջադրության մշակմամբ:

Հետազոտության ժամանակ պետք ե հետազոտել ամենաքիչը լերկու տնտեսություն՝ մեկը պրիմիսիվ, մլուսը՝ բարեկարգ (համեմատության համար): Շատ լավ կլիներ, իհարկե, լեթե հաջողվեր հետազոտել մի շարք տնտեսություններ կամ մի ամբողջ փոքրիկ ուայոն, վերջին դեպքում կստացվեր տրդեն թռչնաբուծության վերաբերյալ դավառագիտական տեսակետից բավական հետաքրքրական պատկեր:

Հետազոտառթյունից հետո պետք ե հավաքած նյութերը մշակել՝ համեմատելով բոլոր տվյալները միմյանց հետ:

Աշխատեցեք բացատրել, թե ի՞նչպիսի աղդեցություն ե ունենում միջավայրը (պայմանները) հավերի առողջության և արդյունավետու-

թլան վրա: Ի՞նչ ազդեցություն ունեն ողք, լուսը, բարեխառնությունը, առողջապահական պայմանները, կերի վորակը և քանակը հավերի առողջության և արդյունավետության վրա (ձգերի քանակի և շատ ձռւ ածել սկսելու տեսակետից):

Պարզեցեք, թե ի՞նչ հիմնական թերություններ ունեն հետազոտության ինքանակա տնտեսությունները:

Ի՞նչ միջոցներ պետք ե ձեռք առնել այդ տնտեսությունները բարելավելու տեսակետից, որինակ, ի՞նչպես պիտի շնչել և սարքավորել հավանոցը, ի՞նչպես պիտի կերակրել հավերին և ի՞նչպիսի կեր պիտի տալ նրանց:

Ի՞նչ նշանակություն ունի կերի հաշվառքը թշնաբուծական տնտեսության մեջ:

Ի՞նչ նշանակություն ունի ստուգողական բունը թունաբուծության մեջ:

Մի բանի տեղեկանեցներ.—Բերենք այժմ մի քանի նորմեր հավանոցի շնորհյան և սարքավորման վերաբերյալ:

1. Հավանոցի ժինուրյանը.

Հավանոցի նատակի մակարդակը պետք է ունենաւ այնպիսի մեծություն, վոր ամեն մի հավին ընկնի 0,5—1 քառ. մետր տարածություն:

Հավանոցի պատուհանները ցանկալի են, վոր ուղղված լինեն դեպի հարավ՝ կամ հարավ-արևմերք:

Առանձնապես անհրաժեշտ ե, վոր հավանոցն ունենաւ մաքուր ող (կանոնավոր ողափոխություն), լուս, լինի չոր և մաքուր և աղատ լինի միջանցուկ քամիներից:

Հավանոցի պատերը պիտի լինեն հաստ և չոր, ըստ կարելուն հարթ (աղատ ճեղքերից) և կրով սպիտակացրած:

Հավերի ման գալու վալրը (բակը) պետք է ունենաւ այնպիսի մեծություն, վոր ամեն մի հավի ընկնի մոտավորապես 10—15 քառ. մետր տարածություն:

2. Հավանոցի սարքավորումը.

Թառերը պետք ե 60 սանտիմետրից ավելի բարձր չլինեն հատակից և պետք ե դասավորված լինեն մի հորիզոնական մակարդակի վրա, մեկը մյուսից մոտավորապես 40 սանտիմետր հեռավորությամբ: (Տես նկ. 73): Ամեն մի հավի պետք ե բաժին ընկնի թառի վրա 25

Հանտիմետր տարածություն։ Թառերը պետք ե շինված լինեն մոտավորապես 7—7,5 սանտիմետր լայնություն ունեցող փալտյա ձողերից, վորոնց կողերը փոքր ինչ պիտի կլորացրած լինի։ Հավանոցներում սովորաբար զործածվող բարակ, կլոր և ծառի ճյուղերից պատրաստված և հարկերով իրար վրա դասավորված թառերը պետք ե հայարել աննպատակահարմար։ (Ինչպէ)։




Նկ. 73. Պատանի բնագետների կենսակայանի հավանոցի ներքին սարքավորումը. յերեսում են թառերը, յենթաթառային տախտակները և ստուգողական բները.

Հավերի և ճուտերի համար ամենապարզ կտամանը կարելի յեպատրաստել մի յերես արկղից կամ բանկալից, վորի բերանը ծածկված և կամ մետաղալարից և կամ ուռենու ճյուղերից շինված ցանցով (վորպեսզի կուտը հավերը շաղ չտան)։

Կտամանը կարելի յեպատրաստել և այնպես, ինչպես այդ ցուց և տրված նկ. 74-ի մեջ։


Այդպիսի կտաման պատրաստելու համար վերցնում են յերկու հատ հարթ տախտակներ 10—12 սանտ. լայնությամբ և մոտավորապես 80—100 սանտիմետր լերկարությամբ, ապա միացնում են ալդ

տախտակներն ուղիղ անկյունով միմյանց հետ ալսպես, վոր ստացվում և մի նավ։ Վերջինի լեռկու ծալրերին կպցնում են մի-մի հատկարձ տախտակ, մոտավորապես 20 սանտիմետր լայնութեամբ և ապա կտամանի ամբողջ լեռկարութեամբ ամրացնում են և կամ հազցնում են ուղղահայաց ձողերի վրա մի լայն տախտակ, վորպեսդի հավերը կուտը շաղ չտան։



Նկ. 74. Փայտյա կտաման։

Հասարակ ջրաման պատրաստում են ալսպես։ Վերցնում են մի շիշ, դարձնում գլխիվալր, ամրացնում փալտյա պատվանդանի վրա և



Նկ. 75. Ջրամանի տեսակներ. Ա - շիշ պատրաստած ջրաման. Բ - կավե կճուճից պատրաստած ջրաման։

տակը դնում մի ափսե (Նկ. 75 Ա). Ջրաման պատրաստում են և կավե կճուճից, վոր գլխիվալր դարձնելով՝ դնում են կավից պատրաստ


տած մի մեծ ափսելի մեջ (նկ. 75 Բ): Ալսպիսի ջրամանների մեջ ամառը ջուրը շատ չի տաքանում:

Թե կաման և թե ջրաման պատրաստելու ժամանակ պիտի աշխատել այնպես անել, վոր հավը չկարողանա կանգնել կուտի և կամ ջրի մեջ և արդպիսով կեղատել և կամ շաղ տալ կուտը և թափել ջուրը:

Ստուգողական բունք հանդիսանում է մի թակարդ: Հավը ձու ածելու նպատակով մտնելով նրա մեջ, այնու չի կարողանում դուրս դալ այնտեղից առանց մարդու ողնության: Ալսպիսի բների միջոցով միշտ կարելի յե իմանալ, թե տվյալ ձուն վոր հավն և ածել և կամ տվյալ հավն բնչքան ձու յե ածել վորոշ ժամանակամիջոցում:

Ստուգողական բները լինում են բազմազան տիպերի:

Ամենապարզ ձեփի բները հանդիսանում են հետևյալները.



Նկ. 76. Առաջին տիպի ստուգողական բունք. 1—փակ, 2—բաց վիճակում. Ա—արկղի առջեկի կողմի յերկարությունը (36 սանտ.), Բ—բարձրությունը (36 սանտ.), Գ—լայնությունը (54 սանտ.), Մետաղարբից մինչև ըսի վերեկ յեզրը (6 սանտ.), Դ—փայտի ձողիկ, վորի վրա կարող է հենցվել դռնակը (18 սանտ.), Համեմատել կողքին դանվող բացուրինի հետ (2), Ե—փայտե ձողիկ, վոր արգելում և դռնակը զեղիք դուրս բացվելուն:


Առաջին տիպ.—Վերըք մի արկղ 36 սանտիմետր բարձրությամբ և 54 սանտիմետր լայնությամբ և հանեցեք նրա առջեկի պատը (նկ. 76): Այնուհետև արկղի բաց կողմում, վերսկի յեզրի յերկարությամբ ամրացրեք մի մետաղալար և կախեցեք այդ մետաղալարից մի փոքրիկ դռնակ (կարող եք այդ դռնակը շինել հենց հեռացրած պատից, հարկավոր և միայն մի քեչ փոքրացնել նրան): Կախելու համար պետք է դռնակի յեզրի վրա ամրացնել մետաղալարից շինած յերկու հատ

ողակներ։ Դռնակը պետք ե հեշտությամբ բացվի դեպի ներս, բայց վոչ դեպի դուրս։ Վորպեսզի դռնակը դեպի դուրս չբացվի, հարկավոր և արկդի կողքերի վրա ամրացնել ուղղաձիգ բարակ և տափակ ձողիկներ։ Կողքի լեզրերի վրա արկդի ներսի լերեսից պետք ե ամրացնել մի բարակ ձողիկ, վոր ազատ կերպով կարող ե շարժվել դեպի արկդի ներսը։ Հնորհիվ այս ձողիկի՝ կարելի լի առջեկի դռնակը պահել փոքրինչ բարձրացրած դիրքի մեջ, այնպես վոր բնի հատակի և դռնակի մեջ կարող ե առաջանալ մի բավական լայն անցք։ Յերբ հավը ձու ածելու համար մտնում ե ներս, նա մեջքով դռնակը փոքր ինչ բարձրացնում ե վեր, ալդ ժամանակ դռնակը պահող փալտե հենարանն ընկնում ե ցած և հավը բունը մտնելուց հետո դուռը փակվում ե Բնի ներսը շինում են այնպես, ինչպես սովորաբար շինում են ձու ածելու համար հարմարեցրած բնիկները։

Յերկրորդ տիպ։ — Մեր նկարագրած բունը կարելի լի փոքր ինչ կատարելագործել։ Դրա համար հարկավոր ե վերցնել ավելի լայն արկդ և առջեկի դռնակը շինել մի քիչ ալլ ձևով։ Դռնակը կարելի լի շինել վոչ թե ամբողջական, ալլ լերկու մասից—ներքեի համեմատաբար նեղ մասից և վերևի լայն մասից (նկ. 77)։ Այս լերկու մասերը պիտի միացնել միմյանց հետ գոտիներով դռնակի առջեկի կողմից։ Բնիկը սարքելու համար դռնակը պետք ե թեքեք դեպի բնի ներսը (ինչպես առաջին դեպում են անում) և միաժամանակ ներքեի մասը քաշեք դեպի առաջ և դեպի վեր, և այդպիսով դռնակի լերկու մասը կծալվի այնպես, ինչպես գրքի կազմն է ծալվում։ Այսպես ծալված վիճակում դռնակը նորից թողեք կախվի ուղղաձիգ դիրքով։ Հավը առաջացած անցքով մտնելով ներս՝ մեջքով կքաշի դռնակը դեպի բնի ներսը, վորից դեպի վեր ծալված ներքեի մասը ցած կիջնի և կծածկի բնիկը (նկ. 77)։

Սառագողական բների այս տիպերը բերվում են այստեղ իրքի որինակներ։ Դուք կարող եք ոգտվել լեզրած ցուցմունքներից և պատրաստել մողելներ, ապա բներ և հետո կարող եք կատարելագործել կամ հնարել նոր տիպեր։

Սառագողական բներն անհրաժեշտուրյուն են ներկայացնում ամեն մի բարեկարգ բռչնաբուժական և ներկայացնում մեջ, վորովիթենի առանց պրո-



նկ. 77 Յերկրորդ տիպի սուսական բնիկ, կերպում ձածկված, դերքենում կիսաբաց վիճակում։

դուկցիան նաևլառքի յենթարկելու, յերբեք չի կարելի կանոնավոր կերպով տեսկություն վարել:

5. ՀԱՎՐ ՎՈՐՊԵՍ ԴՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱ

Հավը մենք պարմանականորեն ենք անվանում մեքենա: Գործարանական վորևե մեքենալից հավը, նույնպես և վորևե գլուղատնաեսական կենդանի և կամ բուլս տարբերվում ե հենց նրանով, վոր մինչդեռ մեքենան անկանք մարմին ե, սրանք բոլորը կենդան որդանիզմներ են: Բայց յեթե մենք գլուղատնաեսական կենդանին կամ բուլսը «մեքենա» լենք անվանում, այդ միայն նրա համար, վոր առաջ բերենք այդ կենդան մեքենան զեկավարել սովորելու խնդիրը, այսինքն իմանանք, թե ինչպես պետք ե հարկադրենք նրան աշխատելու, վոր ստացվի ամենամեծ արդյունքը: Անշուշտ կենդան մեքենան զեկավարելն ավելի դժվար ե, քան անկենդան մեքենա դեկավարելը:

Բայց ի՞նչ պետք ե իմանալ դրա համար:

Ամենից առաջ այդ մեքենալի կազմությունը (արտաքին և ներքին) և ապա նրա գործառնությունը: Փորձենք այժմ զբաղվել հավի արտաքին առանձնահատկությունների և ներքին կազմության հետազոտությամբ, վորպեսզի հետո կարողանանք մոտիկից ծանոթանալ նրա արտադրականության հետ:

Հավի արտաքին առանձնահատկությունները

Ա. Արտաքին ծածկույթները.— Դիտեցեք ուշադրությամբ կենդան հավը և աքլորը:

Ի՞նչով և պատաժ հավի մարմինը, չամեմատեցեք թուչունի ծածկույթը կաթնասունի ծածկույթի հետ:


Բոլոր փետուրներն արդյոք ունեն նույն կազմությունը, թե վոչ: Ըստրեցեք զանազան տիպի փետուրներ: Մարմնի վճը մասի վրա լին տեղափորված խոշոր փետուրները:

Ի՞նչ նշանակություն ունեն խոշոր փետուրները թուչունի կլանքում: (Ի՞նչ գեր են կատարում նրանք), կատարում են արդյոք նրանք նույն գերը և հավի՝ մարդու կողմից ընտանեցրած այդ թուչունի կլանքում:

Համեմատեցեք հավի և աքլորի փետուրներն իրար հետ:

Ի՞նչով են տարբերվում աքլորի փետուրները հավի փետուրներից (յերկրողական սեռական նշաններ):

Ուշադրությամբ դիտեցեք փետուրի կազմությունը, Գտեք փետուրի կոթունը և հողմահարը (նկ. 78): Դիտեցեք փետուրը դեպի լուսը. Բնչակիսի կազմությունը ունի հողմահարը: Քորոցի միջոցով բաժանեցեք հողմահարի առտնձին-առտնձին ճառագալթյունը միմյանցից: Հեշտությամբ են արդյոք բաժանվում նրանք միմյանցից:



Նկ. 78. Փետուրի կազմությունը. Ը—կոթունը,
Օ—հողմահարը:

Դիտեցեք միկրոսկոպի տակ հողմահարի մի փոքրիկ կտորը:

Ոդը հեռացնելու համար նախապես դրեցեք փետուրի կառուը սպիրոտի մեջ: Բացատրեցեք, թե ինչո՞ւ հողմահարի ճառագալթյունը դժվարությամբ են բաժանվում միմյանցից: Դիտեցեք միկրոսկոպի տակ և աղվամազի մի փոքրիկ կտորը:

Զափեցեք հավի մարմինի բարեխառնությունը. գրա համար մաքսիմում ջերմաչափը գրեք հավի վոտի և իրանի արանքում: Զափեցեք հավի բարեխառնությունը և թուխս նստած ժամանակի, այդ դեպքում ջերմաչափը պետք ե պահեք նրա մարմինի տակ:

Բացատրեցեք, թե ինչ կենսարանական նշանակություն ունեն փետուրները թոշունի համար:

Ինչո՞վ են պատաժ հավի վոտները:

Ինչո՞վ ե ծածկված հավի գլուխը: Դիտեցեք կտորը:

Դիտեցեք հավի և աքլորի գլխի հավելվածները՝ կատարը, ականջարլթակը, մոռուքը, Վորի՞ վրա լին նրանք ավելի զարգացած (լեբկորպական սեռական նշաններ): Կատարի ինչպիսի ձևեր եք տեսնում հավերի և աքլորների վրա: Կատարներն ունեն սովորաբար հետևելալ հիմնական ձևերը՝ բարձր և բարակ—թիթեղանման, բարձր և հաստ—վարդանման, ցած և բարակ—սիսնուանման կամ պատիճանման, ցածը և լայն—կաղինանման (նկ. 79):

Բ. Վերջավարությունները.—Ման գալու ժամանակ հավաք իր վարժավորություններից և ոգտվում: Համեմատեցեք այդ տեսակետից հավը կաթնասունների հետ:

Ի՞նչ չափով են զարգացած հավի վոտները:

Քանի մատ ունի հավաք իր ամեն մի վոտի վրա:

Տեսէլ եք արդյոք հինգմատանի վոտ ունեցող հավ:

Դիտեցեք հավը ման գալու ժամանակ. Ի՞նչ դիրք են ընդունում մատներն այն դեպքում, լեռը հավը բարձրացնում ե իր վոտը.



Նկ. 79. Կատարների զանազան տիպեր, A—թիթեղանման, B—սիսեռանման (աբրի վրա), C—սիսեռանման (հավի վրա), D—վարդանման, E—կաղինանման:

Աւշադրություն դարձրեք վոտների և մատների դիրքի վրա, լեռը հավը նստած և ջառի կամ ճյուղի վրա: Զգուշությամբ վերցրեք հավը ձեր ձեռքը¹ և ինդրեցեք ձեր ընկերներից մեկին, վոր կորացնի հավի թաթը, և տեսեք, թե ինչ դիրք են ընդունում մատներն այդ ժամանակ:

Դիտեցեք, թե համար իր վոտները բացի ման գալուց, ելլի ինչի համար և գործածում:

Աւշադրություն դարձրեք ճիրանների վրա: Համեմատեցեք մատաղ և ծեր հավերի ճիրաններն իրար հետ:

Համեմատեցեք հավի և աքլորի վոտները միմյանց հետ: Ի՞նչ տարրերություն եք նկատում նրանց մեջ:

Համեմատեցեք մատաղ և ծեր աքլորների վոտները միմյանց հետ (Նկ. 80, 81, 82): Ի՞նչպես վորոշել աքլորի տարիքը ըստ խթանի:

Ի՞նչ են ներկայացնում թոշունի առջենի վերջավորությունները:

Ի՞նչ չափով ե ոգավում թոշունն իր առջենի վերջավորություններից և ի՞նչպիսի դեպքերում:

¹ Դրա համար պետք ե բռնեք հավը յերկու ձեռքով այնպես, վոր ձեռքերի ափերով սեղմեք թերը, իսկ մատնամատի և միջամատի ծայրերով՝ վոտների հիմքերը:

Թվեցեք,թե ի՞նչ հիմնական տարբերություններ կան թոշունի և կաթնասունի առջևի և յետեկի վերջավորությունների մեջ:

Գ. Իրանը.—Ի՞նչ ձև ունի հավի իրանը կողքից նայած: Համեմատեցեք հավի իրանը ձեր և յերկարության տեսակետից կաթնասունի (որինակ, ճագարի) և ձկան իրանների հետ:

Ի՞նչ չափով ե ձկունություն յերեսան հանում թոշունի իրանը:

Ի՞նչպես ե ամրացած գլուխն իրանի հետ:

Ի՞նչպիսի յերկարություն և ձկունություն ունի հավի պարանոցը (համեմատեցեք կաթնասունի և ձկան պարանոցների հետ):



Նկ. 80. Մասադ
աքորի (վեց ամ-
սական) վոտը:

Նկ. 81. Մի տարեկան
աքորի վոտը:

Նկ. 82. Ծեր աքորի
(յերկու տարեկան)
վոտը:

Համեմատեցեք այդ տվյալները ձկան միջավայրի (ջուր), թոշունի (ողալին միջավայր¹) և կաթնասունի միջավայրի (ցամաքալին միջա-վայր): Հետո:

Ի՞նչ կապ կարելի յե գտնել կենդանու մարմնաձևի և միջա-վայրի մեջ:

Չեք գտնում արդյոք զանազան թոշունների պարանոցի և վոտ-ների յերկարությունների միջև վորոշ առնչություն: (Բերեք միքանի-որինակներ):

Դիտեցեք ուշադրությամբ հավի զանազան մարմնաձևերի շար-ժումները կեր փնտուելու, կուտ ուտելու, յերկուղի ժամանակ և այլն:

Պարզեցեք ձեր կատարած դիտողությունների հիման վրա, թե հավի (կամ աքորի) վեր զգալարաններն են ավելի զարգացած:

¹ Հավի այդ տեսակետից՝ այնքան ել տիպիկական չե, վորովհետեւ նա լավ թըռ-չող չե: Բայց չնայած դրան՝ թոշունների միքանի բնորոշ առանձնահատկություններ-կարելի յե դիտել նրա վրա:

Կատարեցեք զանազան փորձեր ձեր դիտողություններն ստուգեալու համար՝ Հավերն ամենից շատ իրենց վար դպաւարաններից են՝ սպավում:

Մանոթանալով հավի արտաքին առանձնահատկությունների հետ փորձեցեք պատասխանել հետեւալ հարցերին:

Ի՞նչպիսի բնորոշ արտաքին առանձնահատկություններով ե տարբերում թուշունների դասը վողնավորների միուս դասերից՝ կաթնասուններից և ձկներից:

Ի՞նչ բնորոշ արտաքին հատկություններով ե տարբերվում հավը վայրի կյանքով ապրող թուշուններից (համեմատեցեք, որինակ, ազուրի և աղավնու հետ):

Ի՞նչպես կարող եք բնորոշել բնտանի հավերի սեռական դիմորֆիզմը (այսինքն արական և իդական սեռերի առանձին-առանձին ձևերը կամ հավի և աքլորի արտաքին տարբերությունները): Թվեցեք աքլորի էրկրորդական սեռական նշանները:

Մանոթացեք այլ ընտանի (հնդկահավ, բադ, սադ) և վայրի թըռչունների (մայրեհավ) վրա յերևան լեկող սեռական դիմորֆիզմի հետ։ Արդյոք բոլոր թուշունների վրա նկատելի էն սեռական դիմորֆիզմ։

Դասեք և դասակարգության վերածեցեք այս նշանները, վորոնցով տարբերվում են զանազան տեսակի հավերը միմյանցից (որինակ, զանազան տեսակի գլխի հավելվածներ): Ուշագրություն դարձրեք մասնավորապես՝ կատարի ձեր, փետուրների գույնի (վորոնցեցեք տեղական հավերի բնորոշ գույնը) և մարմինի ձեր վրա (ծանր և թեթև ցեղեր) վրա։ Ի՞նչպիսի բազմազանություն եք նկատում զանազան տեսակի հավերի արտաքինի մեջ։

Հավի ներքին կազմությունը

Հավի ներքին կազմության հետ մենք ծանոթանում ենք դիմաներձման միջոցով։

Լավ կլինի դիմաներձման համար վերցնել վոչ միայն հավ, այլև աքլոր և համեմատության համար՝ նաև աղավնի կամ ազուրի։

Այսպիսի համեմատական դիմաներձումը մեզ շատ ավելի բան կտա, քան միայն հավի դիմաներձումը։

Դիմաներձման աշխատանքը կատարելու համար բաժանվեցեք խըմքերի՝ համաձայն դիմաներձման լենթարկվելիք թուշունների թվի։

Դիմաներձման համար հարկավոր ե ունենալ կշեռք՝ կշուռքարերով (մինչև 3—4 կիլո), մի քանի հատ դիմաներձման համար գործածվող

տախտակներ (դիահերձվելիք թուշունների թվով), գնդասեղներ, դիահերձման գործիքների, ալտինքն սկալպելների, պինցետների և կաղմառանական մկրատների մի քանի սարք, սուր ծալրերով վերջացող մի քանի հատ ապակյա խողովակներ, հիգրոսկոպիկ բամբակ կամ կարտոֆիլի ալյուր, ամուր, պինդ թել, թոկ, մետաղալարի կտոր, մեխեր, ջուր, կազմաբանական մկրատ չունեցած գեղքում կարելի է գործածել և սուր գըչահատ դանակ և սովորական մկրատ:

Դիահերձումից առաջ կշռեցեք մեռած թուշունը և գրեցեք նրաքաշը:

Ա. Արտաքինի լրացուցիչ դիտումը.—Մի անգամ ևս ուշադրությամբ դիտեցեք թուշունի արտաքին առանձնահատկությունները, մանավանդ այն առանձնահատկությունները, վոր հնարավորություն չեք ունեցել լավ դիտելու կենդան թուշունի վրա: Դուք կարող եք պոկելով հավի և աքըլորի մարմնի զանազան մասերից փետուրներ՝ կազմել փետուրների համեմատական հավաքածու: Այդ փետուրները կարող եք ժամանակավորապես պահել գրքի կամ տեսրի թերթերի արանքում և ապա ամրացնել խավաքարտի վրա թղթե նեղ շերտիկների միջոցով: Այս աշխատանքի ժամանակ դուք կարող եք և դիտել միկրոսկոպի տակ փետուրի կազմությունը (իբթե արդ, իհարկե, չեք կատարել առաջ):

Հետագա աշխատանքի հարմարության տեսակետից լավ կինի փետրել թուշունի մի կողմի փետուրները, վորի համար նախապես պետք ե փետուրները թըճել:

Լավ ուշադրություն դարձրեք, թե ինչքան համաչափ կերպով են դասավորված փետուրները թուշունի մարմնի վրա: Գտեք այնպիսի տեղեր, վոր ծածկված չեն փետուրներով: Փետրած թուշունի վրա այլպիսի տեղերը բոլորովին հարթ են լինում:

Դիտեցեք նաև գլուխն ու զգայարանները: Ուշադրություն դարձրեք աչքի պաշտպանողական հարմարությունների վրա: Բացի վերևի և ներքեւի կոպերից (սրանցից վերն ե ավելի զարգացած), դուք կնկատեք թուշունի աչքի ներքին անկլունում և ալսպես կոչվող բարբարադանրը: Այս թաղանթը սաղմային վիճակում կտեսնեք նաև կաթնասունների և մասնավորապես մարդու աչքի նույն անկլունում:

Գտեք ականջների անցերը և բրացքները: Կտուցի հիմքում կնկատեք քնքուշ և սովորաբար դեղին գույնի մաշկ, վոր կոչվում ե մամարադանր կամ կառուկ, սա վոչ այլ ինչ է, բայց իբթե շոշափողական գործարան:

Բացեք կտուցը և դիտեցեք բերանի խոռոչը: Տեսեք թուշունն առտամեր ունի, թե վոչ:

Պինցետով բռնեցեք լեզուն և ձգեցեք. Նրա հիմքի մոտ կտեսնեք կոկորդի ճեղքանման անցքը: Մացրեք զգուշությամբ այդ անցքով մետաղալարը և տեսեք, թե ուր և զնում նա (շոշափեցեք և ապա դիահերձման ժամանակ դիտեցեք մանրամասնորեն):

Բ. Դիահերձումն.—Անցնենք այժմ դիահերձման:

Դիահերձման համար թոշունը պետք է մեջքի կողմը ցած դարձրած զնեք նախապես պատրաստած տախտակի վրա, վորի չորս անկյուններում ամրացրած և մի-մի հատ մեխ, և ապա բարակ թոկով կամ հասու թելով կապեք թոշունի թեկերը և վոտները այդ մեխերի հետ:

Մացրեք ապակյա խողովակի ծալը թոշունի բերանը և ապա պիստ թելով ողակի ձեռվ կապեցեք նրա կտուցի հիմքից, մոմաթաղանթի լետեից:

Այս ողակը ձգեցեք այնքան, վոր նրա միջով ող չկարողանամանել: Այնունետեւ փշեցեք ապակյա խողովակով: Դիտեցեք, թե ի՞նչպես ուռչում են պարանոցը, փորը և բնչպես ե բարձրանում կուրծքը: Հանեցեք այժմ ապակյա խողովակը և միաժամանակ ձգեցեք ամուր կերպով կտուցի վրա հագցրած ողակը: Աշխատեցեք այնպես անել, վոր ձեր փշած ոդն այդ ժամանակ բերանով նորից դուրս չգա:


Կտրեցեք զգուշությամբ մաշկը՝ պարանոցի սկզբից մինչև լետեկ: անցքը, բայց այնպես, վոր չվնասվին մաշկի տակ գտնված մկանները և ներքին գործարանները: Այնունետեւ սկսեցեք աստիճանաբար հեռացնել մաշկը: Առանձնապես զգուշ պիտի լինեք մաշկը կտամանից կամ փուչիկից անջատելու ժամանակ, վորովհետեւ մաշկը լերեամն ամուր կերպով միացած և լինում նրա հետ:

Դիտեցեք կրծքի մկանները, վոր միացած են կրծոսկրին և նրա վրա գտնված ցցվածքին:

Բացեցեք այժմ փորի խոռոչը: Դրա համար կտրեցեք լերկարությամբ փորովախի պատը կրծոսկրի լետեի ծայրից մինչև լետեի անցքը: Բացի գրանից, կտրվածքի առջևի ծայրի մոտ կտրեցեք փորի պատը մի քանի տեղից լայնության ուղղությամբ և փորի պատը լեռ քաշեցեք գեղի կողքերը: Եթե թոշունի մեջ փշած ոդը դուրս չի լեկել, ապա կտանեք խոռոչի լերկու կողմերում նուրբ պատերով թափանցիկ պարկեր, վորոնք կոչվում են ողալին պարկեր (նկ. 83):

Թոշունն իր մեջ ունի մի քանի այդպիսի պարկեր: Նրանք դանդում են նրա մարմին և այլ մասերում, ներքին գործարանների արանքներում: Մենք բռլոր պարկերի հետ չպիտի ծանոթանանք: Մեզ համար կտրենոր և միաւն նշել, վոր թոշունի մեջ կան այդպիսի պարկեր, վորոնցից դուրեկ են մլուս կենդանական դասերը: Թե թոշունի

Համար ինչ կենսական նշանակություն ունեն այդ պարկերը. ինքներդ կարող եք հետությամբ հասկանալ:



Նկ. 83. Աղավնու ողային պարկերի դասավորության սխեման. Tr—ցնչափողը, R—թոքերը, L.l.—պարանոցի թոքային պարկը, վորի հավելվածները յանում են բաղկակինքը (L.h.) և կրծքի մկանները (L.m.) ինչ և կրծքի ողային պարկերը, La—վորովանի ողային պարկերը.

Դրա համար նախ շոշափեցեք թեի բազկոսկրի (մեր բազկոսկրին համապատասխանող վոսկրի) և առջնի վերջավորությունների գոտու

¹ Այս աշխատանքն ավելի լավ է հետաձգել հետեւյալ պարապմոնքին, պահպանվող բոլոր նյութերը մի սառը տեղում, կամ տալ աշակերտներին տանը կատարելու համար, իսկ դպրոցում հետազոտել մարսողական գործարանների համակարգությունը:

Թոշունի ներքին գործարանները դիտելու համար պետք է հեռացնեք կրծոսկրը. Դրա համար պետք է փոքր ինչ բարձրացնեք կրծոսկրի յետնի ծալը և ապա կտրեք նրա լերկու կողմերից կտրտելով կողերը: Այսուհետև հետզհետե հեռացըք կրծոսկրը ներքին գործարաններից: Կրծոսկրի առջնի կողմում կտրտեցնեք այն մկանները և վոսկրները, վորոնց հետ միացած և կրծոսկրը: Այդտեղ կտրող և տեղի ունենալ արյունահոսություն, վորովհետև կտրվում են այն խոշոր արյունատար անոթները, վորոնք անունդ են մատակարարում կրծքի մկաններին: Դրա համար ել նախորոք պատրաստեցնեք հիգրոսկոպիկ բամբակից փոքրիկ կտրոններ և անմիջապես դրեք արյուն դուրս ծորող մասերի վրա: Այսպիսի մասերի վրա կտրող եք շաղ տալ կարտոֆիլի ալյուր:

Բ. Թոշունի մկանները լիլ շարժման օգծարանները¹.—Բացի կրծոսկրից, հեռացըք դիտհերձվող թոշունից և չփետրած թևն ու վոտը:

Հոգավորման տեղը թիակի մոտ և առաջ բաժանեցեք թեն իրանից հենց արդանքից, բայց այնպես, զոր վոսկրները չմասսվեն:

Եռափեցեք և մեր ազգը ոսկրին համապատասխանող նրա վոտի վոսկրի և կոնքի զոտու հոգավորման տեղը և նույն ձեռվ բաժանեցեք և վոտը իրանից:

Կրծոսկրը, առջեի և լետեի վերջավորությունները կարող ե վերցնել մշակելու համար վորեե ողակ:

Այս ողակը պիտի կատարի հետեւալ աշխատանքը.

1. Համեմատել հավի և աղավնու բաց արած թեների ձեւերն իրար հետ եկարել: Պարզել, թե ինչպիսի ձեն և ավելի հարմար թոշելու տեսակետից:

Բաց արած թեր տափակ և, թե գոգավոր: Յեթե գոգավոր և, վորոշել, թե վեր լերեն և գոգավոր, ներքնի, թե վերնի:

Թեի վրա լեղած փոս ընկած տեղը համաշամփ ձեւ ունի, թե լեզրերը տարբեր թեքություններ ունեն: (Համեմատել հավի և աղավնու թեների վրա լեղած փոս ընկած տեղերն իրար հետ):

Պարզեցեք, թե ինչպիսի փոս ընկած ձեն և ավելի հարմար թըռչելու տեսակետից:

Թեներն արգութ շատ մկաններ (միս) ունեն իրենց վրա:

Աւշագրություն դարձրեք այն հանգամանքի վրա, զոր թոչունի առջերի վերջավորությունների մկանները համախմբված են վոչ թե այդ վերջավորությունների վրա, այլ կրծոսկրի վրա: Կրծքի մկաններից դեպի թեները գնում են միայն ջեր, վորոնց միջոցով կրծքի մկանները կծկվելու ժամանակ շարժվում են թեները: Ի՞նչ նշանակություն ունի այդ հանգամանքը թոշելու տեսակետից:

2. Հեռացնել կրծոսկրի հավելված-ցցվածքի լերկու լերեսների վրաից բոլոր մկանները: Կշռել այդ մկանները և հաշվել, թե նրանք թոչունի ամրող մարմին կշռի վեր մասն են կազմում:

Համեմատել հավի և աղավնու այդ մկանների նկատմամբ կատարած հաշիվներն իրար հետ:


Համեմատել հավի և աղավնու կրծոսկրները, առանձնապես նրանց վրա լեղած ցցվածքները միմյանց հետ: Կամ արգութ վորեե կապ արդ ցցվածքի մեծության և կրծքի մկանների զարգացման միջն:

Լավ մաքրել կրծոսկրը և թեր վոսկրները մկանների և ջերի բոլոր մնացորդներից:

Այնուհետև կարելի լե այդ վոսկրները լեփել և սպիտակացնել կամ սպիտակացնող կրով և կամ ջրածինապերոքսիդով: Ցանկալի լե պահել այդ վոսկրները դպրոցում և լուրաքանչլուրից կախել մի փոքրիկ թերթիկ՝ վրան նշանակելով վոսկրի անունը:

Համեմատել թեկի վոսկրները մարդու ձեռքի վոսկրների հետ սկսելով բազկոսկրից: Թեկի վոսկրներից վերն և համապատասխանում բազկոսկրին, վեր վոսկրները՝ արմունկոսկրին և ծղոսկրին և վեր վոսկրները՝ ձեռքի թաթին: (Նկ. 84):

Քանի մատեք գտնում թեկի մեջ (թեկի մեջ սովորաբար գտնում են լերեք մատ՝ առաջինը, լերկորդը և լերրորդը):



Նկ. 84. Աղավնու թեկի կմախքը. Բ—բազկոսկր, Ար—արմունկոսկր, Մլ—մլոսկր, 1, 2, ՅՏ—առաջին, յերկորդ և յերրորդ մատները:

Հայաց ձեռվ. նշանակում ե, թոչունը ման և գալիս վոչ թե ամբողջ մատների վրա:

Մոել վուն ալնպես, ինչպես ալդ կատարել եք կենդանի թոչունի վրա (տես վերև): Ուշադրություն դարձնել ալդ ժամանակ տեղի ունեցող մատների շարժման վրա: Վոտի դիահերձումը կատարելով (նախապես մաշկը հեռացնելով)՝ պարզել ալդ շարժման մեխանիզմը:

Ի՞նչ նշանակություն ունի վերջավորությունների ալդորինակը կազմությունը թոչունների կյանքում (թնի ժամանակ):

Համեմատել հավի և աղավնու վուներն իրար հետ:

Հեռացնել վոտի վրայից բոլոր մկանները (միսը) և կշռել:

Հաշվել, թե թոչունի յերկու վուների կշիռն ամբողջ մարմնի կշռի մասն և կազմում:

Համեմատել հավի և աղավնու վուների նկատմամբ կատարած հաշիմներն իրար հետ:

3. Ուշադրությամբ դիտել հավի վոտը: Համեմատել վերջինս մարդու վոտի հետ: Սխալներ չկատարելու համար լավ կլինի համեմատությունն սկսել իրանին անմիջապես կպած մասից: Հավի վոտի մասերից վերն և համապատասխանում մարդու ազդրին, վերը՝ սրունքին և վեր մասերը՝ վոտաթաթին և մատներին: (Նկ. 85):

Կատարելով այդ համեմատությունը՝ հեշտությամբ կարելի լի տեսնել, վորթոչունի կրունկը վոչ թե յերկորդի կրունկը վոչ ալդ մատների վերը և դպրոց մատները՝ վոտաթաթին և մատներին: (Նկ. 85):

Բացատրել լերկու թռչունների վոտների մեջ լեղած տարբերությունները՝ հիմնվելով նրանց կենցաղի վրա:

Մկաններից և ջլերից լավ մաքրված վոտների վոսկրները լեփել և սպիտակացնելուց հետո պահել դպրոցում:

Թվել այն բոլոր առանձնա-
հատկությունները, զորոնց շնոր-
հիվ հավը գառնում և գետնի
վրա ման լեկող թռչուն:


Գ. Ներքին զործարանների
բնդիանուր դասավորությունը յիշ
մարսողական զործարանների հա-
մակարգությունը. — Դիահերձվող
թռչունի կրծոսկը հեռացնելուց
հետո կարելի յէ դիտել ներքին
զործարանների ընդհանուր դա-
սավորությունը:

Առանց ալդ զործարանները
տեղահան անելու, նկարեցեք
նրանց ընդհանուր տեսքը և վո-
րոշելով յուրաքանչյուր մաս (շատ
զործարաններ կարելի յէ ճանա
չել առաջները դիահերձման լեն-
թարկած զորտի զործարաններին
նմանեցնելով), նշանակեցեք ձեր
նկարի վրա:

Մեծ ցավ չի, յեթե դուք
այդ ժամանակ վորոշ սխալներ
անեք. Հետազայում կարող եք
ստուգել ձեր լենթաղրությունները և սխալներն ուղղել:

Գտեք սրտապարկի մեջ գտնվող սիրտը և նրանից դուրս լեկող
արյունատար անորոշերը:

Փորձեցեք վորոշել, թե արյունատար անօթներից վորմնք են
զարկերակները (արտերիանները), այսինքն այն անօթները, վորոնցով
արյունը գնում է սրտից զեպի մարմնի զանազան մասերը և վորմնք՝
յերակները (զենանները), վորոնցով, ընդհակառակը, արյունը մարմնի
զանազան մասերից գալիս և զեպի սիրտը. Առաջիններն ավելի հաստ
պատեր ունեն և մեռած թռչունի մեջ սովորաբար դադարկ են լինում,
իսկ մլուսներն ավելի բարակ պատեր ունեն և սովորաբար լցված են
լինում արյունով:



Նկ. 85 Առաջնուր վոտի կմախքը. I—աղ-
գրոսկը, II—սրունք, III—թաթը, 1, 2, 3,
4—առաջին, յերկորդ, յերրորդ և չոր-
րորդ մատները.

Գառեք Շնչափողը, բրոնխները և բռերը:

Ի՞նչպես են դասավորված փուլիկը, ստամիկը, աղիքները և լյարդը:

Բազմացնան գործարանները (սեռական գործարանները) դուք կարող եք վորոշել հեշտությամբ, իեթե համեմատեք հավի և աքլորի ներքին գործարանները միմյանց հետ։ Այն բոլոր գործարանները, վորոնք միանման են թե հավի և թե աքլորի մեջ, սեռական գործարաններ համարվել չեն կարող։ Սեռական գործարաններ կլինին միայն նրանք, վորոնք տարբեր են հավի ու աքլորի մեջ։

Եեթե չգտնեք արտադրության գործարանները (իերիկամները), թողեք հետագային (հիշեցեք, թե վորտեղ են գտնվում ձկան և գորտի ալդ գործարանները):

Հանեցեք այժմ մարմնի խոռոչի միջից մարսողական գործարանների ամբողջ համակարգությունը՝ սկսելով կերակրափողից մինչև աղիքի ալն մասը, վոր վերջանում ե լիտերի անցքով։

Դրեցեք հանված գործարանները տախտակի և կամ ջրով կիսով չափ լցված տաշտի մեջ և դասավորեցնեք նրանց ալնպես, ինչպես լինում են նրանք մարմնի մեջ։

Դիտեցեք այժմ մանրամասնորեն և նկարեցեք մարսողական գործարանների ամբողջ համակարգությունը։

Շատ հետաքրքրական ե տեսնել, թե ինչ փոփոխության ե լենթարկվում կերակուրը մարսողական խողովակի զանազան մասերում։

Բաց արեք կերակրափողը և փուչիկը։ Ի՞նչ դրության մեջ ե գտնվում ալնտեղ կերակուրը։

Բաց արեք կերակրափողի ալն մասը, վոր գտնվում և քարճիկի անմիջապես առջևում և ապա բաց արեք քարճիկը։

Քարճիկի անմիջապես առջեկի կողմում գտնվող կերակրափողի լայնացած մասը կոչվում ե զեղձալոր ստամիկ, վորովինետ նրա պատերում գտնվում են մարսողական հուրթ արտադրող զեղձերը։

Ուշադրություն դարձրեք քարճիկի կազմության վրա։ Ինչու նա այլապես կոչվում է մկանոս ստամիկ։

Ի՞նչնվածք ե պատաճ նա ներսից։ Ի՞նչ փոփոխության ե լենթարկվում նրա մեջ կերակուրը։

Ուշադրությամբ դիտելով նրա պարունակությունը՝ դուք կարող եք գտնել նրա մեջ քարի փոքրիկ կտորներ, կավ լվացնեք քարի այց կտորները և ուշադրություն դարձրեք նրանց մակերեսութիւնը վրա։

Եեթե հիշեք, վոր թոշունն ատամներ չունի, ապա կապարզվի ձեզ համար թե ալդ քարի կտորների, թե քարճիկի ուժեղ մկանների և թե քարճիկը ներսից պատող պինդ և կոշտ թաղանթի նղանակությունը։

իմացեք, թե ի՞նչ դեր և կատարում քարձիկը մարսողության գործում:

Ստամոքսից անմիջապես հետո դուք կտեսնեք, վոր աղիքը մի գալար և կազմում: Այս գալարի արանքում կնկատեք մի լերկարապուն գեղձ, վոր կոչվում և յենքամոխային գեղձ: Դալար կազմող աղեմասը կոչվում և տաներկումատենյա աղիք:

Բաց արեք տասներկումատնյա աղիքը: Ի՞նչ դրության մեջ և գտնվում այնտեղ կերակուրը: Ի՞նչ չափով և նա փոփոխման լենթարկել:

Աղիքի այդ մասում շարունակվում և մարմողության գործողությունը: այդտեղ բացվում են լերկու խողովակներ. մեկը գալիս և լենթստամոքսալին գեղձից և բերում և լենթստամոքսալին հյութ, իսկ մլուսը՝ լյարդից և բերում և լեղի, վորը նույնպես վորոշ դեր և կատարում մարսողության մեջ:

Տասներկումատնյա աղիքի մոտ կգտնեք մուգ կարմիր գույնի ձկանե մի մարմին, վոր կոչվում և փայծախ:

Տասներկումատնյա աղիքից հետո սկսվում և արդեն բարակ աղիքը, վոր վերջը փոխարկվում և ուղիղ աղիքի, իսկ այս ուղիղ աղիքն ել վերջանում և հետանցքով:

Ռւշադրություն դարձեք աղիքների լեռնի մասից դուքս լեկող կուրք հավելվածների վրա: Վերջիններս հմամ մոտ են ավելի զարգացած, հավիք, թե աղավնու Բաց արեք այդ բոլոր մասերը և դիտեցեք նրանց պարունակությունը: Տեսեք, թե ինչպես հետզհետե կուտակվում են կերակրի անմարսելի մասերը և վերջը փոխարկվում կղկղանքի զանգվածի: Չափեցեք մարսողական խողովակի ամբողջ լերկարությունը: Յանք անգամով և նա լերկար մարմնի լերկարությունից: Գրեցեք այդ տվյալները, վորպեսզի հետո համեմատեք մլուս կենդանիների աղիքների լերկարության հետ:

Դ. Համառոս ակնարկ արյան ցրանառության, տնչառության և արտադրության ցրուարանների վրա.—Ծերե ժամանակի սղության պատճառով ձեզ չհաջողվի մանրագնին դիտողության նյութ դարձնել թոշունի ներքին գործարանները դպրոցում, ապա այդ աշխատանքը դուք կարող եք կատարել արտադպրոցական պարապմունքների ժամանակ:

Համենայն դեպք անբաժանելու և մի թոռոցիկ գաղափար կազմել կարևորագույն գործարանների մասին:

Հանեցեք սիրտը և դիտեցեք:

Դանեք սրտի փորոքները (հաստ մկանալին պատերով) և նախախորշերը:

Տեսեք, թե ի՞նչպես են միանում նախախորշերը փորոքների հետ (մտցնելով բարակ մետաղալար կամ խոզան):

Փորոքներից վերն և ավելի զարգացած, մջը, թե ձախը: Համեմատեցեք նրանց կտրվածքների վրա պատերի հաստությունները և բացվածքների մեծությունները միմյանց հետ:

Վեր փորոքից և արյունը գնում դեպի թոքերը և վեր փորոքից դեպի մարմի զանազան մասերը:

Համեմատեցեք թռչունի սիրտը ձկան և գորտի սրտերի հետ:

Դիտեցեք բները: Տեսեք, թե ի՞նչ ճանապարհով և արտաքին ողը մտնում թոքերը: Գտեք ողալին պարկերը:

Վեր թռչունի ողալին պարկերն են ավելի զարգացած, հավինը, թե աղաթառունը: Բացատրեցեք պատճառը:

Կոտրեցեք բազկոսկերից մեկը և տեսեք, թե ի՞նչով և նա լըցված:

Համեմատեցեք թռչունի և գորտի շնչառական գործարաններն իրար հետ:

Թռչունի շնչառական գործարանների հիմնական առանձնատեսկությունն հենց այն ե, վոր նրա թոքերը փակչեն, այլ շարունակվելով՝ առաջ են բերում ողալին պարկերը: Ենք այս և պատճառը, վոր ներշնչման ժամանակ ողը վոչ թե կանգ և առնում թոքերի մեջ, այլ անցնելով նրանց միջով՝ մտնում և ողալին պարկերը:

Արտաշնչման ժամանակ ել, լերը կրծքի վանդակը սեղմվում ե, ողը ողալին պարկերից դուրս և զալիս թոքերի միջով: Հետաքրքրականն այն ե, վոր թռչունը մկանալին ուժ և գործ դնում արտաշնչման ժամանակ և վոչ թե ներշնչման ժամանակ, ինչպես այդ անում են կաթնասունները (մասնավորապես մարզը): Ուշադրություն դարձրեք ձեզ վրա, լերը եք դուք մկանալին ուժ գործ դնում կրծքի վանդակի բարձրացման (ներշնչման), թե ինեցման (արտաշնչման) ժամանակ: Համեմատեցեք այդ շարժումները թռչունի կրծոսկրի շարժումների հետ:

Գտեք յերիկամները: Դուք այդ հաջողությամբ կարող եք գտնել, յեթե սեռական գործարանները փոքր ինչ մի կողմը քաշեք: Յերիկամները պետք ե վորոնեք թոքերի յետեռում, կոնքի խոռոչում, վողնաշարի մոտ (վերջինիս յերկու կողմերում): Փորձեցեք գտնել նաև միզատար խողովակները, այդ բարակ խողովակները, վորոնք յերիկամներից գնում են դեպի հետանցքը:

Ուշադրություն դարձրեք այն հանդամանքի վրա, վոր հետանցքի մեջ բացվում են մարսողական խողովակը, միզատար խողովակները և ինչպես կտեսնեք հետո, նաև սեռական պրոդուկտները տանող խողովակները:

Ե. Բազմացման գործարանները. ձևեն ու երա կազմությունը.—Յերբ հավի մարմնի խռոչից կտրում և հեռացնում եք մինչև ալժմ դիտողության նյութ լեզող բոլոր գործարանները, վորոնք միանման կազմություն ունեն թե հավի և թե աքլորի մեջ (բայց լերիկամներից), այն ժամանակ մարմնի խոռոչում մնում են բազմացման գործարանները կամ ուրիշ կերպ ասած, սեռական գործարանները, վորոնք տարբեր կազմություն ունեն հավի և աքլորի մեջ:

Ընտանի թոչունների սեռական գործարանների համակարգությունն ահապին գեր ե կատարում տնտեսական տեսակետից, վորովնեաւ նրա շնորհիվ են թոչունները բազմանում և տալիս ձվեր:

Թոչունների բազմացումը տեղի է ունենում շնորհիվ արվի և եղի սեռական գործարանների:

Ընտանի հավի տված հիմնական մթերքը, ինչպես տեսանք, հանգիսանում և ձուն, վոր առաջանում և հավի բազմացման գործարանների մեջ:

Եշանակում ե, հավի թե բազմացումը և թե ձվաբերությունն ամբողջովին կապված են բազմացման գործարանների գործունելության հետ, զրա համար ել անհրաժեշտ ե լուրջ ուշադրություն դարձնել բազմացման միախանիզմի կազմության վրա:

Սկսեցնք ձեր դիտողությունը ամրագի բազմացման գործարաններից:

Դուք կտեսնեք լերիկամների առջևի լեզորի ուղղությամբ լերկու հատ բավական խողոր ձվածե սպիտակավուն մարմիններ, վորոնք դասավորված են մեկը մյուսի կողքին, Դրանք աքլորի սերմնարաններն են, վորոնց վեջ առաջանում են սերմնային պըոդուկտները կամ ինչպես ասում են՝ սպերմատոզոյիդները (սերմնամարմնիկները): Ամեն մի սերմնարանի ներքին մակերեսութից դուրս ե զալիս մի հատ բարակ և նեղ խողովակ, վոր հետո անցնում է միզատար խողովակների կողքով և նրանց նման բացվում հետանցքի մեջ: Ալդ խողովակները սերմնատար խողովակներն են, վորոնց միջով արտադրվում են սպերմատոզոյիդները: Հավի և աքլորի զուգավորման ժամանակ սպերմատոզոյիդները աքլորի հետանցքից դուրս գալով՝ թափվում են հավի հետանցքի մեջ:

Հավի բազմացման գործարանները շատ ավելի բարդ կազմություն ունեն, քան աքլորինը:

Ամենից առաջ գտնեք հավի մարմնի խռոչում ձվարանը: Սա գտնվում է մոտավորապես նույն տեղում, ինչ վոր աքլորի սերմնարանները, միայն փոքր ինչ ծոված լե դեպի ձախ և իր ձեռվ նման և խաղողի վողկուլզին:

Դիտեցեք կեղեւը, Դտեք լենթակեղեւան թաղանթը (նկ. 86):

Կա արդյոք ձվի մեջ ոդով լի տարածություն, թե վոչ:

Ձեր դիտողության նյութ լեղող բոլոր ձվերի մեջ այդ ոդալին տարածությունը նույն մեծությունն ունի, թե վոչ: Ինչով եք բացառում ողաշին տարածությունների մեծության մեջ լեղած տարբերությունը:

Դիտեցեք միկրոսկոպով կեղեւի և լենթակեղեւան թաղանթի կազմությունը: Առանձնապես հետաքրքրական ե դիտել կեղեւի մեջ լեղած անցքերը:

Կաթեցրեք կեղեւի վրա վորեն թուլլ թթու: Ի՞նչ եք նկատում:

Դրեք ձվի ամբողջ կեղեւը մի վորոշ ժամանակով թուլլ աղաթթվի և կամ քացախաթթվի մեջ: Ի՞նչ ե ստացվում:


Կոտրեցրեք հում ձուն այնպես, ինչպես սովորաբար կոտրում են տանտիկինները ձվածեղ պատրաստելու ժամանակ և ածեցեք նրա պարունակությունը մի ափսեի մեջ: Դիտեցեք սպիտակուցը: Ինչով են տարբերվում հում և լեփած սպիտակուցները միմյանցից: Արդյոք միանման ե հում սպիտակուցն իր բոլոր մասերում, թե վոչ: Նկատում եք թանձր սպիտակուցից բաղկացած վոլորուն թելեր, վորոնք դուրս են գալիս զեղնուցի բռեւոններից: Այդ վոլորուն թելերը կոչվում են «խալազներ»: Վորապես լարված զսպանակներ այդ թելերը պահում են զեղնուցը ձվի կենտրոնում:

Դտեք զեղնուցի մակերեսութիւն վրա բաց գույն ունեցող մի փոքրիկ բիծ: Այդ բիծը կոչվում ե սաղմային դիսկ: Հենց այդ դիսկից և զարգանում սաղմը, լիթե ձուն բեղմնավորված ելինում:

Դիտելով համոզվեցեք, վոր զեղնուցն ունի թաղանթ, վոր տալիս ե նրան զնգի ձև:

Արդյոք միանման ե զեղնուցն իր բոլոր մասերում, թե վոչ (դիտեցրեք լեփած ձվի զեղնուցի կարվածքը):

Դիտեցեք հում զեղնուցից վերցրած կաթիւը միկրոսկոպի տակ:



Նկ. 86. Հավկթի կտրվածքը. 1—սաղմային դիսկ (թիթելը), 2—շեղենս զեղնուցը, 3—սպիտակ զեղնուցը, 4—զեղնուցի թաղանթը, 5—սպիտակուցը, 6—լալազներ, 7—յենթակեղեւան թաղանթը, 8—ողային տարածությունը:

Նշանակում ե, հավկիթն ունի բավական բարդ կազմություն։ Իսկական ձուն հավկիթի մեջ հանդիսանում ե միայն գեղնուցը, վոր վոչ այլ ինչ ե, բայց լեթե մի հսկայական մեծություն ունեցող իգական սեռական ըջի՞ լցված սննդարար նյութերով։ Սաղմն առաջանում ե սաղմալին դիսկից, վերջինս իր թեթևության պատճառով լողում ե դեղնուցի մակերսութի վրա (թաղանթի անմիջապես տակը), Ծնորհիվ այս հանգամանքի՝ սաղմը թուխսի տակ գտնված ձկերի մեջ ավելի լավ ե տաքանում, վորովհետև վերը գտնվելու պատճառով ավելի մոտ ե գտնվում տաքության ազդյուրին, թուխսին։

Սպիտակուցն ու կեղկը հանդիսանում են ձվի համար միայն թաղանթներ, վոր պաշտպանում են քնքուց սաղմը շրջապատի զանազան վնասակար ազդեցություններից (չորացումից, վարակումից, վնասումից)։ Բացի դրանից, սպիտակուցը մեծ դեր ե կատարում և սաղմը սնելու գործում։

Բայց բնչպես ե առաջանում հավկիթը՝ նրա կեղկը, սպիտակուցը, դեղնուցը։

Դեղնուցը (իսկական ձուն), ինչպես տեսանք, առաջանում է ձվարանի մեջ։ Հասունանալուց հետո պոկվում ե նա ձվարանից և մտնում ձվասար խողովակը։ Այստեղ նա հանդիպում ե այն սպերմատոզուիդներին, վորոնք զուգավորման ժամանակ աքլորից հավի հետանցքի միջով մտնում են ձվատար խողովակը։ Տեղի է ունենում ձվի բեղմնավորումը Յեթե զուգավորում չի լինում (աքլորի բացակալության պատճառով), ձուն չի բեղմնավորվում (ալսպիսի ձվից ձուտ չի կարող զարգանալ)։

Ձվատար խողովակի մեջ դեղնուցը պարուրածև պտտելով՝ հետըզնետե առաջ ե գնում դեպի հետանցքը։ Այս այդ ժամանակ նրա շուրջը մկնում ե կուտակվել ձվատար խողովակի առջևի մասի գեղձերից դուրս լեկող լորձանման նյութը։ Դա արդեն սպիտակուցն եւ Ձվատար խողովակի լետեի մասում ձուն շրջապատվում ե կրային թաղանթով՝ կեղկով։


Բաց արեք ձվատար խողովակը և դիտեցեք նրա վերոհիշյալ մասերը։

Բացի ձեր գիտողության նյութ լեզող ձախ ձվատար խողովակից, գտեք հետանցքի աջ կողմում անզարգացած վիճակում գտնվող և աջ ձվատար խողովակը, վոր այժմ այլևս վոչ մի գործ չի կատարում։ Դա մի բուգիմենտար գործարան ե, վոր վկայում ե, թե հեռավոր անցյալում թռչունն ունեցել ե մի գուլգ իգական գործարաններ։

Մանոթանալով հավի և աքլորի բաղմացման գործարանների հետ վորոշեցեք այժմ դիահերձվող ազավնու սեռը։

Յեթե ժամանակ ունեք ձեր տրամադրության տակ, կարող եք կատարել և մի լրացուցիչ աշխատանք: Հաշվեցեք, թե հավի ձվարանի մեջ աչքի համար տեսանելի ինչքան ձվեր կան (հասունացած և չհասունացած): Դրա համար զգուշությամբ կտրտեցեք հավի ձվարանը փոքրիկ մասերի և բաժանեցեք ձեր մեջ: Թողեք ամեն մեկն ասեղի միջոցով հաշվի, թե իր ստացած կտորի մեջ աչքի համար տեսանելի ինչքան ձռւ կա: Այս աշխատանքը կատարելու ժամանակ լավ կլինի գործածել խոշորացուց ապակի:

Մի քանի ամերիկացի գիտունականների կատարած հաշվվերով հավի ձվարանի մեջ աչքի համար տեսանելի ձվերի քանակությունը հասնում է 1000—3600-ի: Այս քանակությունը սովորաբար շատ ավելի է, քան հավը կարող և ածել իր ամբողջ կլանքի ընթացքում:



Նկ. 87. Զանազան տիպի հավերի մարմնամասերի չափերը. — 1. մսացու-ձվածան, 2. ձվածան հավ, 3. մսացու հավ:


Աշխատանքից հետո աշխատեցեք պահել հավի անվաս մնացած լորդարանները ֆորմալինի լուծութի (4%) մեջ: Պահեցեք նույնպիսի լուծութի մեջ թռչունի գլուխը՝ ուղեղի հետ միասին:

Զ. Դիաներձման արդյունքները.—Հավի և աղավու վրա մենք կարողացանք լավ ծանոթանալ բոշուների դասի բնորոշ առանձնահատկությունների հետ:

Վողնաշաբավորների ալդ դասը շատ սերտ կերպով կապված է ողային միջավայրի հետ, վորը և իր ուժեղ ազդեցությունն է ունեցել թռչունների ամբողջ մարմնակազմի վրա:

Ի՞նչ առանձնահատկություններ նկատեցինք մենք թռչունի մարմինը հետազոտելու ժամանակ:

Թռչունի մարմինը ծածկված է փետուրներով, վորոնք շատ թեթև լինելուց զատ և տաքության շատ վատ հաղորդիչ են: Առջևի վերջավորությունները հանդիսանում են թռչելու գործարաններ՝ թևեր: Կրծքի մկանները չափազանց զարգացած են, վորոնք կարողանում են թևերը լավ շարժման մեջ դնել: Թոքերն ոժտված են առանձին հավելվածներով՝ ողային պարկերով, վրունք թափանցում են մարմնի բոլոր մասերը և մտնում են նույնիսկ վոսկընների մեջ: Իրան հաստատուն և (զուրկ և ճկունությունից) և թևերի համար հանդիսանում ե պինդ հենարան: Պոչը փոխարկվել ե ղեկի:



Նկ. 88. Սպիտակ լեգնորներ:


Թռչունն ունի բարձր և հաստատուն բարեխտություն (39⁰—42⁰): Սիրտը բաժանված է չորս խոռոչի: Բազմանում է ձվերով (ձվանում կենդանի ձագեր): Վորպեսզի սաղմը զարգանաձվի մեջ՝ անհրաժեշտ և ձուն տաքացնել:

Մնացած լեգնորդական քնությունը ունեցող առանձնահատկություններն աշխատեցնեք ինքներդ հիշել:

Համեմատեցնք թոշունի մարմնակազմի բնորոշ գծերը ձկան և դորի բնորոշ գծերի հետ:

Այնուհետեւ ուշադրություն պիտի դարձնել այն առանձնահատկությունների վրա, վորոնցով հավը տարբերվում ե մյուս թոշուններից, որինակ, աղավնուց:

Այդ առանձնահատկությունները հետևանք են գլխավորապես այն հանգամանքի, վոր հավը իր շարժումների ժամանակ բանեցնում ե ավելի շատ վոտները, քան թևերը:



Նկ. 89. Բող-այլանդներ:


Դրանով պիտի բացատրել այն յերկութը, վոր հավի լետերի վերջավորություններն (վոտները) ավելի ուժեղ են և թևերն ել ավելի թույլ, քան աղավնունը. Դրանով ե բացատրվում և հավի ողալին պարկերի համեմատաբար թույլ զարգացումը և կրծոսկրի վրա լեղած հավելվածի փոքրությունը:

Հավի ընտանեցումն ել ավելի յն ուժեղացրել նրա արդ հատկությունները. Իրեն ընտանի թոշուն նա ավելի շատ բանեցնում ե իր ման գալու գործարանները, քան թոշելու գործարանները:

Մսի տեսակետից խոշոր տնտեսական նշանակություն ունեն հավի վոչ միայն թևերը շարժման մեջ դնող մկանները, այլ և վոտների մկանները:

Ուշադրություն դարձրեք այն հանգամանքի վրա, վոր բոլոր ընտանիկ թռչունները կամ լուղորդ թռչուններ են և կամ քալլող։ Մարդն ընտանեցրել են այն թռչուններին, վորոնց վոտների մկանները զարգացած են (լուղորդ—բաղ, սագ և քալլող—հավ, հնդկահավ, ցեսար)։ Յեվ այդ հասկանալի լե. ալդպիսի թռչունների մսի քանակությունը համեմատաբար ավելի պետք ե լինի։

Բացի մսից, հավը տալիս ե և համեմատաբար ավելի շատ ձվեր։ Ամերիկայում կան հավեր, վոր դարձել են ուղղակի ձվի մեքենաներ։



Նկ. 90. Հավերուներ։

Մսացու հավերը ձվածաններից տարբերվում են մի շաբք հատկություններով. նրանք ավելի խոշոր են, մսոտ, մարմնի առջևի մասն ավելի լե զարգացած, քան լետերինը և լավ ու հեշտ չաղանում են։ Ձվածաններն ավելի արագ են հասունանում և նրանց ճուտերն ավելի շուտ են փետրավորվում, քան մսացու հավերի ճուտերը (նկ. 87)։


Այս լերկուսի միջին տեղն և բռնում մսացու-ձվածան հավը, վոր վորոշ չափով միացնում ե իր մեջ թե մեկի և թե մյուսի առանձնահատկությունները։

Ձվածանների մեջ ամենալավը մեր պայմանների տեսակետից լեզուններն են, մսացուներից՝ ֆալետունները, իսկ մսացու-ձվածաններից՝ վիանդունները ու բոդ-այլանգները։

6. ՀԱՎԻ ԾԱԳՈՒՄԸ ՅԵԿ ԸՆՏԱՆԵՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հավն ընտանեցվել է շատ վաղուց: Կարծում են, վոր նա ընտանի վիճակում լեզել է Զինաստանում մեզնից դեռ 3500 տարի առաջ: Յելրոպա բերվել է նա ըստ լերեւութիւն Յեգիպտոսից, մեզնից 2500 տարի առաջ:

Ընտանի հավն առաջացել է բանկիվյան հավից, վոր մինչև ալժմ ել վայրի վիճակում ապրում է Հնդկաստանի և Մալայան լերկըների անտառներում, նույնպես և Սումատրա, Ճավա, Ցելեբես և Փիլիպին-յան կղզիներում: (Գտեք այդ տեղերը քարտեզի վրա):



Նկ. 91. Ընտանի հավն նախորդները—բանկիվյան հավեր՝ արևոր և մարի:

Բանկիվյան աքլորը շատ ավելի փոքր է, քան իր ընտանեցրած ցեղակիցը, բայց գույնով և արտաքին ձևով նման է սովորական, վոչ ազնվացել աքլորներին: Նրա պարանոցը, ուսերը և մեջքը բաց կարմիր գույն ունեն, իսկ կուրծքը և պոչը մուգ և փայլուն սև՝ փոքր ինչ կանաչավուն լերանգով: Մարին ունի ավելի համեստ արտաքին: Նա ընդհանուր առմամբ ունի միտապաղաղ բծավոր սև գույն: Ածում և շատ քիչ թվով ձվեր: Անգոնի ընթացքում ընդամենը 8—12 հատ:

Յեթե համեմատենք նրա ածած ձվերի թիվը լավ ձվածան հավերի ածած ձվերի թիվի հետ, կնկատենք հսկայական տարրերություն: Ձվածան հավերը տարվա ընթացքում ածում են 250—275 հատ ձու, բայց լեզել են գեղքեր, վոր ածել են և 300 և մինչև անգամ 338 հատ ձու:

Բայց ի՞նչպես են մարդիկ առաջ բերել արդպիսի ձվածան հավեր։
Վայրի կյանքով ապրող թուշունները սովորաբար շատ քիչ ձա-
գեր են հանում, այնքան, ինչքան անհրաժեշտ ե իրենց ցեղի շարու-
նակությունը պահպանելու տեսակետից։ Յեթե խանգարվում ե սերունդ
առաջ բերելու գործողությունը, այդ դեպքում նրանք ավելացնում են
ձվերի քանակությունը։ Այսպես որինակ, իեթե բունը քանդվում ե ձու
ածելու շրջանի սկզբում, այն ժամանակ թուշունը նորից բուն ե շի-
նում և նորից ածում վորոշ քանակությամբ ձվեր։ Ձվերի թիվը ավե-
լացվում ե և այն դեպքում, իերը ածված ձուն հեռացվում ե բնից։ Մի
քանի գիտականներ ածված ձվերը սիստեմատիկ կերպով հեռացնելով
բնից՝ հարկադրել են թուշուններին ավելացնել ձվերի թիվը։ Այսպես
որինակ, վայրի բաղը, վոր սովորական պայմաններում ածում ե 12—
18 հատ ձու, ձվերը բնից հեռացնելու դեպքում ածում ե իերեմ 80—
100 հատ ձու, սովորական ճնճղուկը՝ 51 ձու և այլն։

Նույն ե տեղի ունեցել և վայրի հավի նկատմամբ։ Ընտանի դարձ-
նելուց հետո մարդը վերցրել ե նրա բնից ածված ձվերը և այդպիսով
անգիտակից կերպով հարկադրել ե նրան ածել ավելի մեծ թվով ձվեր։
8—12 ձվի փոխարեն նա սկսել է ածել տարվա ընթացքում 40—80
հատ ձու։ Ձվերի այս թիվը համարվում ե տարեկան «նորմալ» ձվա-
ծանություն, վոր ժառանգել ե հավա իր վայրի նախորդներից։

Այդպիսի «նորմալ» ձվածանություն են իերեան հանում գյուղական
տնտեսություններում պահպող վոչ ազնվացեղ հավերը։ Այս հավերը
տարվա ընթացքում ածում են միշտն հաշվով 40—50 հատ ձու։ Յեթե
վոչ ազնվացեղ այդ հավերը լավ խնամք ստանան և լավ կերակրվեն,
կարող են տալ միշտն հաշվով տարեկան մոտ 70 հատ ձու։

Արտաքին պայմաններն ահապին աղղեցություն ունեն ձվածա-
նության վրա։

Կ. Ա. Տիմիրացեվի անվան պատանի բնագետների կենտրոնա-
կան կենսակալանում կատարվել ե մի այսպիսի փորձ։ Վոչ ազնվացեղ
հավերի մի խումբ պահել են պրիմիտիվ պայմաններում և տալով ա-
մենքին միակերպ կեր, ստացել են միշտն հաշվով ամեն մի հավից 40 ձու,
լավ ձվածաններից՝ 64, վատերից՝ 22, չետելալ տարեին նույն հավերը
պահել են ավելի լավ պայմաններում, ստացել են միշտն հաշվով 73
ձու, այսինքն 80% -ով ավելի։ լավ ձվածաններից ստացել են 105 ձու,
վատերից՝ 45 ձու։ Մի քանի հավի ձվածանությունն ավելացել ե
նույնիսկ 232% -ով (22-ի փոխարեն ստացել են 73 ձու)։ Այսպիսի
փորձ կարելի է կատարել ամեն տեղ։

Մակար պայմանները լավացնելով, ձվածանությունը կարելի է

մեծացնել միայն մինչև մի վորոշ սահման (մոտավորապես 80—100' հաստ ձու):

Յեզ արդ ահա թե ինչու:

Զվածանությունը կախված է վոչ միայն շրջապատող պալմաններից, այլ և հավերի ժառանգական հատկություններից:

Դիտողությունները ցուց են տվել, վոր հավերի ժառանգական հատկությունները տարբեր են. կան հավեր, վորոնց ինչքան ել լավ կերակրելու լինենք, մինչուն և, չենք կարող 80-ից ավելի ձու ստանալ, կան և հավեր, վոր նման պալմաններում կարող են տալ 100 հաստ ձու, կան և այնպիսիները, վոր կարող են տալ 200-ից ավելի ձու: Եշանակում և, նման պալմաններում ստանում ենք տարբեր հետեանքներ: Այստեղ դեր են կատարում արդեն հավերի ժառանգական հատկությունները, վոր ստանում են հավերն իրենց նախորդներից և իրենց հերթին հաղորդում իրենց հաջորդներին:

Այս իսկ պատճառով ել շատ կարեոր և ճանաչել ժառանգականութեն բարձր ձվածանությամբ ոժտված հավերին:

Արտաքին նշաններով այդ միանգամայն ճշգրիտ կերպով վորոշելն, իհարկե, անհնարին և, բայց համենաւ դեպս տնօգուտ չի լինի նշել լավ ձվածանները ընտրելու մի քանի կանոններ:

7. ԱԱՎ. ՁՎԱԾԱՆՆԵՐԸ ԸՆՏՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Ահազին նշանակություն ունի մարմնի լայնությունը. յեթե ժարանգական զործարանների և ձվարանների տեղը ազատ չի, ապա այդ գործարանները չեն կարող ուժեղ կերպով զարգանալ:

2. Գլուխը միջակ մեծությամբ, կտուցը կարճ և հաստ, աչքերը պարզ ու աշխատված, կատարը և մորուքը մեծ և պայծառ կարմիր գույնով:

3. Մարմինն ունի \wedge ձեզ, յերբ դիտում ենք կողքից, վերևից և յետեից. այդ ձեզ շատ բնորոշ և (նկ. 92). այդպիսի մարմնաձեռ հետեանը պիտի համարել նրանց մարմնի յետեի մասի ուժեղ զարգացման:

4. Փետուրները խիտ կերպով նստած են մարմնի վրա:

5. Վոտները հաճախ կարճ են լինում և մեկը մլուսից հեռացած:


6. Փետրափոխությունը տեղի է ունենում աշնան վերջերը:

Ամենաապահով ընտրությունը կարելի յե կատարել հաշվի տունելով հավերի տարեկան ձվածանության չափը:

Լավ պալմաններում տարեկան 80 ձու ածող հավերից բարձր ձվածանությամբ ոժտված սերունդ դժվար և սպասել: Ցանկալի յե

բազմացման համար ձվեր վերցնել տարեկան 100-ից ավելի ձվեր ածող հավերից։ Առանձնապես կարեոր և ստանալ արդպիսի ձվածաններից աքլորներ, վորովհետև հավերի ազնվացման գործում աքլորներն ավելի մեծ արժեք ունեն, քան հավերը։

Տեղական հավերի մեջ ընտրություն կատարելու ժամանակ պիտի աչքի առաջ ունենալ հավերի ձվածանությունը ձմեռվա ընթացքում։ Վայրի կլանքով ապրող հավերը ձմեռը ձու չեն ածել։ տարվա ալդ յեղանակին ձու ածելը հավերը ձեռք են բերել միայն ընտանեցման պայմաններում։ Հավերի ցեղն ազնվացնելու համար պետք ե վերցնել արդպիսի հավերի ձվեր։




Նկ. 92. Լավ ձվածանների արտաքին տեսքը։

Բայց ավելի պարզ և հեշտ միջոց չե՛ արդյոք ձեռք բերել ձվածանությամբ հայտնի վորսես ցեղի պատկանող հավեր և նրանցից ստանալ սերունդ։ Այս առթիվ պետի ասենք, վոր միայն ցեղը բավական չե լավ ձվածաններ ունենալու տեսակետից։ Ճիշտ ե, դասագրքերում և թուչնարուծական ձեռնարկներում հաճախ կարելի յե կարգավ, վոր կան հավացեղեր, վոր տալիս են տարեկան 170—180 հատ ձու, բայց նկատվել ե նաև, վոր ալդ նույն ցեղերին պատկանող հավերը տվել են և յերբեմն 20 հատ ձու ամբողջ տարվա ընթացքում։ Ազնվացեղ հավերի մեջ ևս պատահում են ձվածան գծեր, ինչպես այդ նկատելի չե վոչ ազնվացեղ հավերի մեջ։ Պետք ե հավերի մեջ վորոնել արդպիսի ձվածան գծեր և նրանցից ստանալ սերունդ։ Ահա արդպիսի ընտրության միջոցով ե, վոր ամերիկական լավագույն տնտեսությունների մեջ ստացել են 250-ից ավելի ձու ածող հավեր։

8. ՍԵԶՈՆԱՑԻՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՎԵՐԻ ՎՐԱ

Ընդհանուր դպրոցական կարգով շատ դժվար ե կատարել հավերի վրա սեղոնային դիտողություններ, բայց լեռնե կան հետաքրքրվողներ, ապա պետք ե կազմակերպել նրանցից խմբակ (պատանի բնագետների խմբակ) և հանձնարարել կատարել հետևյալ պարզ աշխատանքը:

Պետք ե կապ հաստատել վորես թոչնաբուծական տնտեսության հետ, իմանալ այստեղ պահպաղ հավերի թիվը և նշանակել թե ինչքան ձռւ ին ածում ալդ հավերն ամեն որ կամ հնդորյակի ընթացքում։ Այսուհետեւ ստացված թվական տվյալներից պիտի կազմել կորագիծ, վոր բնորոշում ե տվյալ ժամանակամիջոցում հավերի ձվածանությունը, և համեմատել ալդ կորագիծն այն կորագիծի հետ, վոր ստացվել ե Տիմիրյանելի անվան պատանի բնագետների կենսակայանում (նկ. 93):



Նկ. 93. Ցերկու հավախմբերի (ամեն մեկը 23 հավեց բաղկացած) ձվածանության սեղոնային կորագծերը։ Սկ գիծը ցույց է տալիս նորմալ ձվածանությունն ունենալող հավերի ձվածանությունը, իսկ կետագիծը (պունկտիրը)՝ ուժեղ ձվածանությամբ ոժոված հավերի ձվածանությունը։ Համաձայն 1928 թ. պատանի բնագետների կենսակայանում կատարված դիտողությունների։

Այս գծանկարի վրա մենք տեսնում ենք լերկու կորագիծ, մեկը նրանցից ցույց է տալիս ձվածանության սկիզբը գարնանը, դա այսպիս կոչվող «նորմալ» ձվածանությունն ե, իսկ մուսը, վոր. բազ-

կացած և կարծեք յերկու կորագծերից, ցուց և տալիս, վոր բացի գարնան ու ամառալին ձվածանությունից, կա նաև լրացուցիչ ձմեռալին ձվածանություն։ Յերկրորդ դեպքում հավերը յերևան են հանում արդեն ուժեղացած ձվածանություն։

Չուզընթաց կարելի յե կատարել և մի աշխատանք, վոր կպարզի, թե ինչ ազդեցություն ունի յեղանակը, մասնավորապես ողի բարեկառնությունը հավերի ձվածանության մեջ նկատվող տատանումների վրա։ Դրա համար անհրաժեշտ է համեմատել բարեխառնության կորպիծը ձվածանության կորագծի հետ։

Յեթև դպրոցին կից կա թոչնաբուծական տնտեսություն, ապա կարելի յե ալդ աշխատանքն ավելի խորացնել և ստուգողական բների միջոցով հաշվառքի առնել հավերի անհատական ձվածանությունը, այսինքն վորոշել թե վորոնք են հավերի մեջ լավ ձվածանները և վորոնք վատերը, ուրիշ կերպ ասած՝ կարելի յե զբաղվել հավերի սելեկցիայով (ընտրություն)։ Պետք ե սակայն իմանալ, վոր այս վերջին աշխատանքը լուրջ բնուկթ ունի և պետք ե նրանով զբաղվողների կազմը շուտուա փոփոխության չենթարկվի։

Բացի դրանից, հետաքրքրական ե և դիտողության նյութ դարձնել հավերի որական կանքը զանազան սեզոններում։ Նշանակել, թե յերբ են արթնանում հավերը, յերբ են կերակրվում և յերբ հանգստանում, թնչպես են պահում իրենց որվա ընթացքում, յերբ են թառ լինում։ Դրան զուգընթաց կարելի յե պարզել և հավերի ինքնուրուցն կերպով կեր վորոնելու ընդունակությունը։ Թոչնաբուծներից շատերը նկատել են, վոր ինքնուրուցն կերպով կեր վորոնելու ընդունակությունն ուղիղ համեմատական և հավերի արդյունավետության։ Արդյունավետ հավը շատ յեռանդու կերպով ե կեր վորոնում, քան մյուս տեսակի հավերը։

Պետք ե պարզել նաև, թե հավերը կեր վորոնելու ժամանակ թնչպիսի կանաչ բոււսեր, մոլախոսերի սերմեր, միջատներ, թրթուններ ու վորդեր են ուտում։ Այս տեսակետից, պետք ե ասել, վոր հավերն ահագին գեր են կատարում, վորովինետև վոչնչացնում են մեծ քանակությամբ վնասակար միջատներ։ Յեկ այս ե պատճառը, վոր ամերիկացիները հաճախ թոչնաբուծական և պտղաբուծական տնտեսությունները կազմակերպում են միենուցն արածելության վրա։

9. ԶՎԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՅԵՎ. ՊԱՀԵԼՈՒ ԶԵՎԸ.

Մենք արդեն ծանոթացանք ձվի առաջացման և կազմության հետ, այժմ ել կծանոթանանք նրա տնտեսական հատկությունների և արժեքի հետ։

Կատարեցիք ինքներդ հետեւալ փոքրիկ հետազոտությունը:

Դերցրիք լերկու կամ յերեք տասնւակ ձու և հետազոտեցիք նրանց՝ շաշի և մեծության տեսակետից:

Ձվերի ստուգի քաշն իմանալու համար կարող եք գործածել լեռ-ջերային նյութից պատրաստված կշեռք, վոր գործ և ածվում սովորա-բար դեղատներում: Կարող եք գործածել նաև ինքնաշխն կշեռք: Յեթե դրամալին կշռաքարեր չունեք, կարող եք ոգտվել նաև շըջանառության մեջ գտնվող բրոնզի դրամներից և արճճի մեծ կտորներից:

Կշռելով՝ իմացիք ձվերի առավելագույն, միջին և նվազագույն քաշը, իմացեք, թե ձեր տրամադրության տակ գտնված ձվերի քաշե-րի մեջ լեղած տարրերություններն ինչպիսի տատանում են լերեան հանում:


Այդ տատանումները հասնում են լերեմն խոշոր չափերի: Պա-տահում են դեպքեր, իերը ամենաթեթև ձուն կշռում է 35 գրամ, իսկ ամենածանրը՝ 70 գրամ: Տատանման թափն, ինչպես տեսնում եք, հասնում է ալյուել 35 գրամի, այսինքն այնքան, ինչքան կշռում ե ամենաթեթև ձուն:

Այսպիսի փաստերը ցուց են տալիս, թե գործնական տեսակե-տից ինչքան մեծ նշանակություն ունի ձվի քաշը և թե ինչքան սխալ և ուշադրության չառնել ձվերի քաշը, ինչպես այդ արվում է մեզ մոտ ձվերը տասնյակներով վաճառելու ժամանակ: Արտասահմանում ձվերը նույնպես մյուս պրոդուկաների նման վաճառվում են քաշով:

Ձվի մեծությունը վորոշելու համար կշռելու փոխարեն կարելի լե-զիմել և ձվի լերկարության և լայնության ուղղողությամբ ունեցած տրա-մագծերը չափելու միջոցին: Տրամագիծը չափելու համար գործ են ածվում զանազան գործիքներ, որինակ, շտանգին-կարկին, կրոն-կար-կին և այլն: Փայտալա շտանգեն-կարկին կարող եք և ինքներդ պատ-րաստել, դրա համար իբրև հիմք պետք է վերցնեք միլիմետրալին բա-ժանումներ ունեցող փայտալա քանոն (նկ. 94):


Տրամագծերը չափում են և մի այլ գործիքով, վոր իր արտաքի-նով նման և լերկարուկ տրապեցիալի՝ մեծ բարձրությամբ և փոքր հիմքով (նկ. 95): Այդ գործիքը կարող եք պատրաստել և ինքներդ: Դրա համար պետք և վերցնեք և հատ փայտալա քանոններ, լերկուսը լերկար, 63 սանտ. լերկարությամբ, մեկը 13 սանտ. և մեկն ել 6 սանտ. լերկարությամբ: բոլոր քանոնների լայնությունը կարող է լինել նույ-նը՝ 2,5 սանտիմետր: Քանոնները միմյանց հետ միացնելու ժամա-նակ պետք է այնպես անեք, վոր լերկար քանոնների արանքում լե-զած տարածությունը մի ծալրում լինի 8 սանտիմետր, իսկ մյուսում՝

Զ սանտ.: Ալինուհետև պետք ե կտրեք խավաքարտից լերկու շերտիկը, յեկը ուղիղ 7 սանտ., իսկ մլուսը՝ 3 սանտ. լերկարությամբ և դնեք ալդ շերտիկները լերկար քանոնների արանքում: Վորտեղ շերտիկները կպչեն քանոններին, այստեղ պետք ե նշան անեք: Առաջինը ցուց կտա 70 միլիմետր, լերկը բորդը՝ 30 միլիմետր: Յերկու նշանների արանք:



Նկ. 94. Խեցնաշեն շտանգեն-կարկին.

Քում լեղած տարածությունը պետք ե բաժանեք 4 հավասար մասերի: Վորոնցից յուրաքանչյուրն իր հերթին պիտի բաժանեք 10 մասին: Գործիքն արդին պատրաստ եւ Այժմ յեթե ալդ գործիքի լերկար քանոնների արանքը մատցնեք ձուն հորիզոնական կամ ուղղաձիգ դիրքով, կարող եք ամենալին հեշտությամբ չափել նրա լերկարությամբ և լայնությամբ ունեցած տրամագծերը:




Նկ. 95. Ջվերի տրամագծերը չափելու գործիք:

Դրանցելով բոլոր չափումներից ստացած տվյալները, դուք կարող եք բավական հարուստ նյութ հավաքել տեղական ձվերի փոփոխականության վերաբերյալ:

Տեղական ձվի մեծությունը պարզելու և տեղական հասարակայնության ուշադրությունն ալդ խնդրի վրա դարձնելու համար ցանկալի կլինի գարնանը կաղմակերպել դպրոցում տեղական ուայոնի ձվերի ցուցանանդես:

Ալու ձեռվ կարելի կլինի վորոշել, թե խոշոր ձվերը վոր տնտեսություններն են տալիս և հանձնարարել արդ տնտեսությունների հավերը գործածել աղնվացման և բազմացման տեսակեալից, վորովհետեւ ձվերի մեծությունը ևս ժառանգաբար անցնում է սերնդից սերունդ:

Միության մեջ արտահանման համար ամենախոշոր ձվերը տալիս են մի ռարմն, վոր գտնվում է Որլոլի, Կուրսոկի, Ռիազանի, Տուլալի և Տամբովի նահանգների միացման տեղում: Արտահանման ձվերի միջին քաշն ալդտեղ հասնում է 60 գրամի:



Նկ. 96. Խոշոր ձվի ռայոնների քարտեզը:


Դիտողությունները ցույց են տալիս, վոր աշխարհագրական ալդ վայրից զեպի ամեն կողմ ձվերի քաշը գնալով հետզհետեւ քչանում է (նկ. 96):

Բացի մեծությունից, գործնական ահագին նշանակություն ունի ձվի բարձությունը: Վերջինս կարելի է վորոշել տեսակաբար կշռով, վոր բարձ ձվի համար հավասար է 1,08 (ստուգեցեք ինքներդ): Հին

ձուն, վորից ջուրը գոլոշիանում ե, ունի ավելի փոքր տեսակաբար՝ ազդեցությունը վորոշելու համար ընկղմում են ձուն մակար ջրի մեջ (բոլորովին նոր ածված ձուն նստում ե հատակին դրեթե հորիզոնական ուղղությամբ, իսկ փոքր ինչ հնացածը՝ վորոշ անկունով, ավելի հներն՝ ուղղաձիգ, իսկ ել ավելի հները դուրս են գալիս ջրի լեռնաց), Զուն կարելի է ընկղմել և աղի լուծութիւնը մեջ (120 գրամ աղ մի լիտր ջրի մեջ): Սակայն ձվերի թարմությունը վորոշելու համար կա մի ավելի պարզ, հարմար և գործածական լեղանակ:

Դրա համար պետք է պատրաստելու ինքներդ մի շատ պարզ և հասարակ գործիք, վոր կոչվում է ձվադիտակ (ովոսկոպ):

Ձվադիտակ պատրաստելու համար վերցնում են մետաղյա թիթեղ կամ խավաքարտ և պատրաստում նրանից մի սնամեջ գլան, վորի վերքի և ներքնի ծալքերը բաց են (նկ. 97): Այնուհետև բաց են անում նրա մի կողքի վրա մի անցք 3—4—5 սանտ. տրամադրով: Անցքը բացում են այնպես, վոր նա ընկնի ուղղակի գլանի ներսում դըր վոր ճրագի բոցի դիմաց:



Նկ. 97. Ինքնաշեն ձվադիտակ (ովոսկոպ): Առջնի կողմից գլանի պատը վերցված է:

Տեսակ առաջին: Առաջին տեսակի ձեր համարվում են մաքուր և միանդամալին պարզ ձվերը, ալիսինքն լիքը և միջին մասում գտնը-

դլանի ներսում նավթի ճրագ, մոռ կամ ելեկտրական ճրագ տեղավորելուց հետո զնում են ձուն նրա պատի վրա բացված անցքի վրա և դիտում դեպի լուսը: Այս գործողությունը կատարում են մութ սենյակում:

Զուն դեպի լուսը գիտելու ժամանակ ուշադրություն են դարձնում թե ողով լիքը խոռոչի և թե ձվի պարունակության (դեղնուցի դիրքի) վրա:

Դիտելով այս ձեռվ՝ փորձեցիք ձեր տրամադրության տակ գտնված ձվերը տեսակավորել առաջնորդվելով հետեւալ կանոններով, վոր ընդունված են Միության մեջ գտնվող խոշոր ձվապահեստարաններում:

զող և անշարժ դեղնուց ունեցող ձվերը։ Այս ձվերի ողալին խոռոչը շատ փոքր է, վոչ ավելի, քան նոր ձեի մի կոպեկանոց դրամը (10—15 միլիմետր)։ Լուսի դիմաց պահվող ձուն լերնում և միանգամայն թափանցիկ, առանց վորեւ մութ բծերի։ Առաջին տեսակի ձվերը բաժանվում են բատ մեծության—խոշոր (վոչ պակաս 60 գրամից), միջին (վոչ պակաս 55 գրամից) և փոքր ձվերի (վոչ պակաս 45 գրամից)։

Տեսակ յեկրորդ Յերկրորդ տեսակի ձվերը ևս թարմ են, բայց փոքր ինչ ցամաքած են։ Ողալին խոռոչն արդ ձվերի մեջ հասնում և արգեն նոր ձեի յերկու կոպեկանոցի դրամի մեծության և կամ մի քիչ ավելի (մինչև 20 միլիմետրի)։

Տեսակ յերրորդ Յերկրորդ տեսակի ձվերի ցամաքած մասը կազմում և արգեն ձվի $\frac{1}{4}$ — $\frac{1}{3}$ -ը։ Դեղնուցը մոտենում և կեղակին և կամ կպչում և նրան, բայց դեռ իր մեջ չի պարունակում մութ բծեր։

Մնացած ձվերն արգեն փչացած են, սրանք ունեն իրենց մեջ սև բծեր և կամ արյունային ողակներ։

Այս բոլորից հետո արդեն հասկանալի յե դառնում ձվի լավ պահպանելու նշանակությունը։

Բայց ի՞նչպես պահել ձվերը, վոր նրանք չկորցնեն իրենց թարմությունը և չփչանան (մանավանդ ամառվա ամիսներին)։

Հանրածանոթ փաստ ե, վոր ձվերը փչացման են յենթարկվում դիմավորապես ամառը։ Նշտանակում ե, ձվերի պահպանման գործում մեծ դեր և կատարում շրջապատի բարեխառնությունը։

Վերցնելով վորոշ թվով միանգամայն թարմ ձվեր՝ կատարեցեք հետեւյալ փորձը. զրեք ձվերը բարեխառնության տեսակետից տարբեր պայմաններում, որինակ, վառարանի մոտ, պատուհանի մոտ, հատակի վրա և այլն։ Մոտ յերկու ամիս անցնելուց հետո ձվագիտակով հետազոտելով՝ տեսեք, թե բարեխառնության տարբեր պայմաններն ինչպիսի աղղեցություն են ունենում ձվերի վրա թարմության տեսակետից։ Չեր հետազոտությունը ստույգ ընուլիթ կղը, ինթե դուք բարեխառնության հետ միասին չափեք և շրջապատող ողի խոնավությունը։

Ձվերի մեծ պաշարներ լավ պահպանելու համար կառուցում են հատուկ ցրտարաններ, վորտեղ բարեխառնությունը պահպանվում և 0°-ի վրա։ Արդ ցրտարաններում ձվերը մնում են միանգամայն թարմ վիճակում չըրս ամսվա ընթացքում։ Ձվերն իրենց թարմությունը պահպանում են այնտեղ և վեց ամիս, միայն վերջին դեպքում փոքր ինչ ցամաքում են։

Ձվերը թարմ վիճակում պահելու համար կան և այլ լեղանակ-

ները կատարեցեք փորձեր և ալդ յեղանակների վերաբերյալ Բոլոր փորձերը կատարեցեք թարմ ձվերի վրա:

1. Ոծեցեք ձուն վազելինի բարակ շերտով (վազելինը քսեցեք մի կտոր մաքուր բամբակով) և պահեցեք չոր, սառը և մաքուր տեղում (վերջին պահմանը գործադրել և հաջորդ փորձերի ժամանակ):

2. Ոծեցեք ձուն խոզի հալած մաքուր ճարպով (կարող եք ձուն ոծել ապուխտի յուղոտ մաշկով):

3. Ոծեցեք ձուն կտուլտափի և կամ արևածաղկի ձեթով:

4. Դրեք ձվերը չոր և թարմ մոխրի մեջ, Դրա համար պետք է արկդի հատակը ծածկեք մոխրի շերտով և պահ նրա վրա շարեք ձվերը, Զվերի արանքները և վերեւ ծածկելով մոխրով՝ պետք և դարձյալ ձվեր շարեք և այդպես շարունակ՝ մինչև վոր կլցվի արկդը:

5. Դրեք ձվերը հեղուկ ապակու 10% -ալին լուծույթի մեջ (կավե կամ եմալապատ անոթում), Ազդպիսի լուծույթ պատրաստելու համար 1 ծավալ հեղուկ ապակին պետք ե բաց անեք յեփ տված սառը ջրի մեջ և հետզհետեւ շատացնեք ջուրն այնքան, մինչև վոր ջրի քանակությունը ծավալով 10 անգամ ավելի լինի հեղուկ ապակուց: Ջուրն ածելու ժամանակ պետք ե լուծույթը շարունակ լավ խառնեք:

6. Յենթարկեցեք ձուն կալիումմանգանատի թույլ լուծույթի աղջեցության, լավ սրբեցեք և փափաթեցեք թղթի մեջ:

Կալիումմանգանատի լուծույթը պատրաստում են ալսպես. դանակի ծալրով վերցնում են մի քիչ կալիումմանգանատի աղ և լուծում $2-3$ լիտր ջրի մեջ: Լուծույթի մեջ ձուն պահում են մոտ մի ժամ:

7. Դրեք ձուն կրային լուծույթի մեջ: Կրային լուծույթ պատրաստելու համար լուծում են մի վեղրո ջրի մեջ մեկ կիլոգրամ թարմ հանգըրած կիր: Նախ քան ձուն լուծույթի մեջ դցելը պետք և թողնեք, վոր լուծույթը հանգստանա:

Այս փորձերի հետ միասին հետազոտեցեք և այն յեղանակները, վոր գործ են դնում բնակիչները ձվերը թարմ վիճակում պահելու համար: Ստուգեցեք ալդ յեղանակները:

Համեմատեցնեք ձվերը պահպանելու վերոհիշյալ յեղանակների արդյունքներն այն յեղանակների արդյունքների հետ, վոր գործադրություններում:

Հիմնվելով ձեր փորձերի վրա՝ տարածեցեք ձվեր պահպանելու լավ յեղանակները անդական բնակչության մեջ:

Դպրոցական պարապմունքների ժամանակ ձվերից ճռւտեր հանելը ժամանակի սղության պատճառով կարող և յերբեմն անհնարին լինել, դրա համար եւ ալդ հետաքրքրական աշխատանքը լավ կլինի, վոր կատարի խմբակը (պատանի բնագետների խմբակը), Ձվերից ճռւտեր հանելու հետ միասին կարելի չե կատարել մի շարք հետաքրքրական դիտողություններ և փորձեր թե ձվերից արհեստականորեն ճռւտեր հանելու, թե ճռւտերի դաստիարակման, թե նրանց աճման, փետրավորման, պայմանական բեղլեքսների առաջացման, կեր վորոնելու և թե վառեկների և աքլորիկների հասունացման ժամանակի վերաբերմամբ և այլն:

Բայց մենք այստեղ ալդ բալոր հարցերը չենք շոշափեն:

Դպրոցական պարապմունքների ժամանակ հեշտ կերպով կարելի չե դիտողության նկութ դարձնել ճտի սաղմի զարգացումը ։ Ճտի սաղմը սկսում ե զարգանալ ձվատար խողովակում՝ բեղմնավորությունից անմիջապես հետո (զարգացման առաջին աստիճանները՝ ձեզ արդեն հալտնի սաղմնային դիսկը). Գուն ածելուց հետո սաղմի զարգացումը դադարում ե, բայց սաղմը չի մեռնում, այլ մնում ե կենդան վիճակում։ Սաղմի ալդ կենսունակությունը պահպանվում է այնուհետև մինչև 3—4 շաբաթ, վորից հետո արգեն սաղմը մեռնում է և այլնս նրանից վոչ մի դեպքում ճռւտ չի զարգանում։

Յեթե ճռւն ածելուց հետո յերեք շաբաթ դեռ չանցած՝ դնենք ձռւն 39° — 40° բարեխառնության մեջ, սաղմը նորից կսկսի զարգանալ։ Փորձեցեք գնել թուլիսի տակ կամ ինկուբատորի մեջ մի-մի հատ ճռւ—առաջին շաբաթը՝ յերեք որը մի ճռւ, յերկրորդ շաբաթը՝ յերկու որը մի ճռւ, իսկ յերրորդ շաբաթը՝ որը մի ճռւ, ընդամենը 13 ճռւ։ Յերրորդ շաբաթվա վերջը գուշ կունենաք ճտի զարգացման բոլոր աստիճանները, վոր կարող եք դիտողության և հետազոտության նլութ դարձնել մի պարապմունքի ժամանակ։ Ձվերը չշփոթելու համար լավ կլինի, վոր ամեն մի ձվի վրա սովորական մատիտով համար նշանակեք և գրեք, թե ամսի քանիսին եք դրել թուլիսի տակ կամ ինկուբատորի մեջ։

Պարապմունքի ժամանակ նախ և առաջ դիտեցեք ձվադիտակով (ովոսկոպով) բոլոր ձվերը կարգով՝ սկսելով վերջին համարեց։


Վժը որն ե սկսում նկատելի դառնալ սաղմը կեղեկի միջով։

Վժը որն ե նա շատ լավ նկատվում։

Սաղմի մարմնի վժը ժամաներն են յերեւում։

Խանչ տեսք և ունենում ձուն ձվադիտակով դիտելիս սաղմի զարգացման վերջին շրջաններում (որինակ, 16-րդ որը):

Ձվադիտակով նախնական դիտողության ինթարկելուց և տետրի մեջ համապատասխան նկատողություններ գրելուց հետո կոտրեցեք ամեն մի ձու առանձին և զգուշությամբ ածեցեք նրանցից լուրաքանչչուրի պարունակությունը մի առանձին ափսեի մեջ: Զարդացման վերջին շրջաններն ապրող սաղմեր ունեցող ձվերն զգուշությամբ կոտրելուց հետո հեռացրեք կեղեց սաղմի վրայից՝ սկսելով այդ ձվի բութ ծալրից:



Նկ. 98. Զուն զարգացող սաղմով՝ թուփսի տակ յերեք որ մնալուց հետո (հեռացված և կեղեց և մեծացրած վորոշ շափով):

Զպատահեցիք արդյոք արնպիսի ձվերի, վորոնք զուրկ են սաղմերից (չբեղմնավորված) և կամ վորոնց մեջ սաղմը մեռել և իր զարգացման ստորին աստիճանների վրա:

Զարգացման ստորին աստիճանների վրա գտնվող սաղմի (որինակ, 3-րդ որը) վրա ուշադրություն դարձրեք գլխի լեռեռում գտնվող քիմուխտալին ճեղքերի վրա (Նկ. 99 և համեմատության համար նկ. 98), վորոնցով նմանվում և թոշունի սաղմը ձկան սաղմին (դիտեցեք խոշորացուց ապակով):

Զարգացման հետագա աստիճաններն ապրող (5-րդ կամ 6-րդ որը) սաղմի վրա ուշադրություն դարձրեք առջնի և յետնի վերջավորությունների, գլխի, աչքերի, բերանի և պարանոցի սկզբնական զրության վրա (Նկ. 100): Հետևեցեք այդ մարմնամասերի կրած փոփոխություններին զարգացման հետաղա աստիճանների վրա:

Վարդ որն են լեռեան գալիս փետուըների սաղմերը:

Զարդացման ստորին աստիճանների վրա գտնվող սաղմերը (3—5-րդ որը) զիտելով՝ դուք կտեսնեք արլունատար անոթների ցանցը (նկ. 98 և 101), վոր տարածվում և սաղմի շուրջը գեղնուցի մակերեսութի վրա:

Այդ արլունատար անոթները սնունդ են հասցնում սաղմին, վերցնելով անհրաժեշտ սնընդանութը գեղնուցի քսակից:

Զարդացման հինգերորդ կամ վեցերորդ որը սաղմի մարմինի լեռենի մասում նկատվում է արլունատար անոթներով հարուստ մի քսակ, վոր առաջանում և աղիքի լեռենի մասից:


Դա սկզբնական միզափամփուշտն է կամ, ինչպես ասում են, ալլանտոխն ե, վոր հանդիսանում է շնչառության լուրահատուկ մի գործարան և միաժամանակ արտադրության գործարան (նկ. 101). Հետզհետե զարդանալով՝ ալլանտոխնը զարդացման հետագա աստիճանների վրա շրջապատում է արլունատար անոթներով ամբողջ սաղմը և գեղնուցի քսակը:

Դեղնուցի քսակը, ընդհակառակը, սաղմի զարդացման ընթացքում հետզհետե փոքրանում և սաղմի զարդացման վերջում մտնում է մարմինի ներսը:

Ջվից դուրս լեկած ճուտը մի քանի որ կարող է կերակուր չընդունել, վորովհետե նա սնվում և զեռ մարմին մեջ մտած դեղնուցով:


Դիտեցեք դուրս գալու պատրաստ զարդացած ճուտի կտուցը: Ազգտեղ դուք կնկատեք հետաքրքրական մի հարմարացումն, վոր ոգնում և ճուտին կոտրել ձվի կեղեկը և դուրս դալ: Հետագայում այդ հարմարացումն անհետանում ե:

Հետաքրքրականն այն ե, վոր ճուտը ձվից դուրս գալուց հետո սկսում է ման դալ, կտցում և (առանձնապես փայլուն) և կամ շարժվող իրերը) և պաշտպանված և ցրտից աղվամազով: Նա լեռեան և հանում վորոշինքնուունություն: Հավը և նրա նման թռչունները, կոչվում են «ընախուլս» թռչուններ, իսկ մյուս թռչունները, վորոնք ձվից դուրս են դալիս մերկ և միանգամայն անոգնական վիճակում և կարիք են զգում:




Նկ. 99. Յերեք որական հավի սաղմը (խեժամանակած համեմատել 98-րդ նկարի հետ):

մեծ խնամքի, կոչվում են «ընակալ» թռչուններ։ Այսպիսի թռչուններ են—աղավնին, ճնճղուկը, ծիծեռնակը, ագռավը և ալին։



Նկ. 100. Ա. Վեց որական հավի սաղմը (խիստ մեծացրած) Ա.—աչք, Ակ—ականջ, Դ.—զեղնուցի քսակի մասը, Վ.—գլուխ, Պ.—թուղթ, Բ.—ռումբ (չորս սատիճան)։

Հավի սաղմը դիտելու ժամանակ մանրամասն նկարեցեք նրա դարձացման տարրեր աստիճանները։ Աշխատանքը վերջացնելուց հետո




Նկ. 101. Թռչունի տակ գտնվող հավի առւն հինգերորդ որը։ 4—սաղմը, 5—զեղնուցի քսակը, յևնթակեղեցյան թաղանթ, 7—ողային խոռոչ, 8—ալլանտիխ, 2—զեղնուցի քսակը և անոթների դաշը նրա վրա։

Թռչունի տակ ձվերն ունենում են բոլոր այդ պայմանները։

Վերջին ժամանակներս տեխնիկական զարգացած չերկրներում հետզհետեւ լայն ծավալում են ստանում ինկուբատորների մէջոցով ձվերից ճուռեր հանելու արհեստական լեղանակը (Նկ. 102)։

Արհեստական լեղանակով ձվերից ճուտեր հանելը գործադրվել է դեռևս հնում Յեզիպտոսում և Զինաստանում։ Այնուհետև շատ պարզ ձերի ինկուբատոր ե պատրաստել նշանավոր Փիզիկոս Մեոմլուրը մեզ-նից 200 տարի առաջ։ Նա տակառը լցրել ե «տաք» աղբով և նրա մեջ տեղափորել թարմ ձվեր։ Աղբի առաջ բերոծ բարձր բարեխառնության մեջ ձվերից դուրս են յեկել ճուտեր։




Նկ. 102. Ինկուբատոր յերկու բաժանմունքով 360 ձվերի համար։ Արկեզ-ները ձվերով դուրս են հանգած (լուսանկար)։

Փորձեցեք ինկուբատոր պատրաստել և ինքներդ։ Ինկուբատորները սովորաբար լինում են յերեք տիպի։ Ինկուբատորի մեջ այնտեղ, վորտեղ տեղավորում են ձվերը, ոդը տաքացնում են մինչև 8ելտիուսի 39° — 40° ։ Տաքացումը տեղի է ունենում կամ տաք ջրի միջոցով, վորածվում ե առանձին ավաղանի մեջ, կամ ճրագի միջոցով, վորից գեպի արկղը գնում են խողովակներ (Նկ. 103) և կամ վերջապես ելեկտրականության միջոցով։

Կարելի է փորձել պատրաստել և աղբի ինկուբատոր, ինչպես պատրաստել և մեոմլուրը։

Արհեստական լեղանակով ձվերից ճուտեր հանելը տարածված-

և առանձնապես Հյուսիսալիքն Ամերիկայի Միացյալ Նահանգներում:
Այնտեղ թուչնաբռնծական ձեռնարկությունների մեջ աշխատանքի բաժանումն այնքան և առաջ գնացել, վոր նրանց մի մասը զբաղվում է միայն ինկուբատորների միջոցով՝ արհեստական լեղանակով՝ ձվերից ճուտեր հանելով, մյուս մասը զբաղվում է ճուտերի խնամքով, յեր-




Նկ. 103. Ինկուբատորի կորպածքը: Լամպից տաքացած ողը դնում է խողովակի միջով:

քորդ մասը՝ հավերի չաղացումով և չորրորդ մասն ել՝ ձվերի արտադրությամբ:

Խոշոր տնտեսություններն իրենց հսկայական ինկուբատորներով ստանում են տարեկան 3—4 միլիոն ճուտ: Դրանք իսկական գործարաններ են: Ճուտերի մեծ մասը սովորաբար հենց առաջին որը վաճառքի լեն հանգում: Մի որական ճուտերը հաճախ արագընթաց գնացքներով և կամ ալերոպլաններով ուղարկվում են հեռավոր վայրեր (այն հանգամանքը, վոր ճուտերին առաջին որը կարելի յե չկերպակրել, մեծ հարմարություն և տալիս նրանց զանազան վայրեր ուղարկելու տեսակետից): Միության մեջ ճուտերը փոստով ուղարկելու առաջին փորձերը կատարվել են 1927 թվին և տվել են հաջող հետևանքներ. Մոսկվայից ճուտեր ուղարկվել են Վորոնեժ և ել ավելի հեռու—Հյուսիսալիքն Կովկաս՝ Կրասնոդար քաղաքը:

Ճուտերի խնամքը ամերիկական խոշոր տնտեսություններում տեղի յե ունենում արհեստական թուխսերի միջոցով, վորոնցից ամեն

մեկի տակ տեղավորվում են 300—500 ճուտ։ Արհեստական թուխսերը տարացնում են ճուտերին և պաշտպանում վատ լեղանակներից (նկ. 104):



Նկ. 104. Արհեստական թուխս—բըռուգեր։

Զվերից արհեստական լեղանակով ճուտեր հանելը և ապա նրանց նույն լեղանակով խնամելը Միության մեջ, շորհիվ խորհրդային և կողանտեսությունների արագ տեմպով զարգացման, շուտով բավական լայն ծավալում կստանա։


11. ԱՅԼ ԸՆՏԱՆԻ ԹՌՉՈՒՆՆԵՐ

Հավի որինակի վրա մենք ցույց տվեցինք, թե ինչ ձեռվ կարելի է մոտիկից ծանոթանալ վորսե ընտանի թոչունի հետ և ինչ հետաքրքրական բաններ կարելի լի խմանալ նրա մասին և ինչ ձեռվ կարելի լի բարձրացնել մեր անտեսությունը։


Ճիշտ նույն ձեռվ պետք է մոտենալ և այլ ընտանի թոչուններին։ Այս իսկ պատճառով մենք այստեղ չպետք ե մանրամասն նկարագրենք բոլոր ընտանի թոչունների կյանքն ու կազմությունը, այլ կրավականանանք միայն մի փոքրիկ աղյուսակով, վորտեղ բերված են տեղեկանքներ մեր ընտանի թոչունների վայրի նախորդների, տարածման վայրերի, կենսաբանական առանձնահատկությունների, հիմնական ցեղերի և սաղմերի զարգացման ժամանակամիջոցների մասին։

Թռաւոն- հելքի ա- նունը	Վայրի նախադրի սպածման շահը	Վայրի նախադրի սպածման շահը	Վայրի նախադրի սպածման առանձնահատկությունները	Հիմնական տեղերը սպածման առանձնահատկությունները	Հիմնական տեղերը սպածման առանձնահատկությունները
Ընկույնի բարեկա- րացությունը	Վայրի նախադրի սպածման շահը	Յավորություն, չորսինային	Բնակչություն, վայրը—Կիևագործասին կանչնած չորս՝ չըստինու բարեկարացությունը, Ուժու- գութ և լուսացու հարցաներով, Ամե- նաշերի, կերպակուում և կերպականական և բար- սական նորմերում, Զեղող, թիախուում, արու- ճասությունը և համահայցու, ձագերին ինամամբու- զովծուու, Սնական իրկրեանքությունն աչքի յի ընկերում առանձնասպաս աշխատը, զարդարու- ծածինում և հարցանական փառարինուուզ, Ամեն առարի հարսանիկան մշտածառաւ բարձուու- զուում հն դույքերի (կարճ ժամանակուու):	Պայմանական բարեկարացությունը՝ կարգադրուու, հանդիսանու- թիւ, Արածուում և մարդագետիներում և զարշե- ցուու, Ուժուում և լուսացու հարցաներով, Ամե- նաշերի Սնական վայրինիւթյունը Բարսասիրու Քիշուու, Բիշա- նը (Բույլ ազգայացայտությունը) Սիամիի գույ- քիւը պահպանում և հն իշխաց կազմ ամբողջ լիանքի ընթացքուու:	Սաացու առանձնական տեղերը առանձնա- կան պահպանում
Ընկույնի բարեկա- րացությունը	Վայրի նախադրի սպածման շահը	Վայրի նախադրի սպածման շահը	Վայրի նախադրի սպածման առանձնահատկությունները	Վայրի նախադրի սպածման առանձնահատկությունները	Վայրի նախադրի սպածման առանձնահատկությունները
Ընկույնի բարեկա- րացությունը	Վայրի նախադրի սպածման շահը	Վայրի նախադրի սպածման շահը	Վայրի նախադրի սպածման առանձնահատկությունները	Վայրի նախադրի սպածման առանձնահատկությունները	Վայրի նախադրի սպածման առանձնահատկությունները


<p><u>Համարի</u></p> <p><u>Զորացիք</u></p> <p><u>Սա- գեղի կարգավո- առագ</u></p> <p>(<u>Կն.</u> 110.)</p>	<p><u>Համարի</u></p> <p><u>Համարի զարգացուած կարգ</u></p> <p><u>կարգա- սառագ</u></p>	<p><u>Համարի</u></p> <p><u>Համարի համարական կարգ</u></p> <p>(<u>Կն.</u> 111.)</p>	<p><u>Համարի</u></p> <p><u>Համարի համարական կարգ</u></p> <p>(<u>Կն.</u> 112.)</p>	<p><u>Համարի</u></p> <p><u>Համարի համարական կարգ</u></p> <p>(<u>Կն.</u> 113.)</p>
<p><u>Առաջարկ</u></p> <p><u>Համարի համարական կարգ</u></p> <p>(<u>Կն.</u> 114.)</p>	<p><u>Առաջարկ</u></p> <p><u>Համարի համարական կարգ</u></p> <p>(<u>Կն.</u> 115.)</p>	<p><u>Առաջարկ</u></p> <p><u>Համարի համարական կարգ</u></p> <p>(<u>Կն.</u> 116.)</p>	<p><u>Առաջարկ</u></p> <p><u>Համարի համարական կարգ</u></p> <p>(<u>Կն.</u> 117.)</p>	<p><u>Առաջարկ</u></p> <p><u>Համարի համարական կարգ</u></p> <p>(<u>Կն.</u> 118.)</p>
<p><u>Մասացուած</u></p> <p><u>Համարի համարական կարգ</u></p> <p>(<u>Կն.</u> 119.)</p>	<p><u>Մասացուած</u></p> <p><u>Համարի համարական կարգ</u></p> <p>(<u>Կն.</u> 120.)</p>	<p><u>Մասացուած</u></p> <p><u>Համարի համարական կարգ</u></p> <p>(<u>Կն.</u> 121.)</p>	<p><u>Մասացուած</u></p> <p><u>Համարի համարական կարգ</u></p> <p>(<u>Կն.</u> 122.)</p>	<p><u>Մասացուած</u></p> <p><u>Համարի համարական կարգ</u></p> <p>(<u>Կն.</u> 123.)</p>
<p><u>30 – 35</u></p> <p><u>ար</u></p>	<p><u>Մասացուած</u></p> <p><u>(Հապոհա- կան),</u></p> <p><u>մասացուածի</u></p> <p><u>Փետուր,</u></p> <p><u>արկանացի</u></p> <p><u>շեմ)</u></p>			
<p><u>28 ար</u></p>	<p><u>Բարդացուած</u></p> <p><u>գործիք,</u></p> <p><u>առանձին</u></p>	<p><u>Բարդացուած</u></p> <p><u>գործիք,</u></p> <p><u>առանձին</u></p>	<p><u>Բարդացուած</u></p> <p><u>գործիք,</u></p> <p><u>առանձին</u></p>	<p><u>Բարդացուած</u></p> <p><u>գործիք,</u></p> <p><u>առանձին</u></p>
<p><u>28 ար</u></p>	<p><u>Բարդացուած</u></p> <p><u>գործիք,</u></p> <p><u>առանձին</u></p>	<p><u>Բարդացուած</u></p> <p><u>գործիք,</u></p> <p><u>առանձին</u></p>	<p><u>Բարդացուած</u></p> <p><u>գործիք,</u></p> <p><u>առանձին</u></p>	<p><u>Բարդացուած</u></p> <p><u>գործիք,</u></p> <p><u>առանձին</u></p>




Նկ. 105. Վայրի բաղեր — կոնցաններ:



Նկ. 106. Պեղիսյան բաղեր:




Նկ. 107. Հնդկական բաղեր — զաղաններ:



Նկ. 108. Գալիքի զոր2 սագեր:



Նկ. 109. Թռւլուղիան սագ:



Նկ. 110. Զինական սագ:

12. ՎՈՐՄԻ ԹՌՉՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՎՈՐՄՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Ազատ կյանքով ապրող թռչուններն ունեն կրկնակի տնտեսական նշանակություն:

Մի կողմից նրանք վորոշ ոգուտ են տալիս մեր գյուղական և անտառային տնտեսություններին, վորովհետև զոչնչացնում են ահա-դին քանակությամբ զարսակար միջատներ, մյուս կողմից ել հանդի-սանում են վորսի տռարկա:

 Այսասակար համարվում են համեմատաբար քիչ թվով թռչուններ, այն ևս զլսավորապես ցերեկալին գիշատիչներից: Այս վերջիններից ամենահայտնիները բազեներն են: Սակայն բազեները չպետք ե շփոթել մյուս գիշատիչ թռչունների հետ, վորոնք վոչնչացնելով զանազան տեսակի վնասակար կրծողներ՝ բավական մեծ ոգուտ են տալիս մարդկանց:

Վորսի թռչունների մեծ մասը պատկանում են նույն կարգերին, ինչ կարգերի վոր պատկանում են մեր ընտանի թռչունները, այսինքն հավերի ու սագերի կարգերին: Դա բացատրվում ե նրանով, վոր այդ թռչունները (վազող և լողուրդ) զարդացած մկաններ ունեն թե թեսների:

Նկ. 111. Վայրի հնդկահավեր.

և թե վոտների շարժումների համար, դրա համար ել մսի տեսակետից ավելի արժեքավոր են, քան միայն թռչողները (միակողմանի զարդացած մկաններով):

Հավերի կարգին պատկանում են կաքավը, լորը, աքարը, մալրեհավը, ֆասիանը, ցախաքլորը: Մրանցից մալրեհավը և ցախաքլորն անտառային թռչուններ են, իսկ մնացածներն ապրում են դաշտերում, թփուտներում և ժայռոտ տեղերում:

Սագերի կարգին պատկանում են վալրի բազերի և սագերի զանազան տեսակները:

Վերջին ժամանակներս ակներև փաստ ե համարվում, վոր վորսի թռչունների քանակությունը գնալով զգալապես թշանում ե: Դա առաջանում է նրանից, վոր բնակչությունը չափազանց անխնա կերպով

վոչնչացնում և նրանց, Վորսում և նրանց առանց նկատի առնելու
վորսորդության համար թուլատրելի ժամանակները, վոչնչացնում և
թոշունների բները, վոչնչացնում
և նրանց փետրափոխության
շրջանում, ինը նրանք գտնվում
են միանգամայն անողնական
վիճակում, Բացի դրանից, վորսի
թոշուններին շատ և մասում և
անասուններն անտառում արա-
ծացնելը, արդ ժամանակ մասսա-
կար են մանավանդ հովվական
շները. մասում և անտառներ
կտրտելը և ալին:

Այս իսկ պատճառով հեր-
թական խնդիր և դառնում կադ-
մակերտել վորսի թոշունների
կուլտուրական և ռացիոնալ տես-
սուրյուն, Արդ տեսակետից ամենից առաջ անհրաժեշտ և ստեղծել
թոշունների համար այնպիսի վայրեր, ուր նրանք անվտանգ կերպով



Նկ. 112. Արտր.



Նկ. 113. Ցախաքլուր.

Կարողանան բուն շինել և խնամել իրենց ձագերին, ասել ե, կարո-
ղանան աղատ կերպով բազմանալ: Միայն այս ճանապարհով կարելի
է փրկել նրանց վոչնչացնումից:

ԳԼՈՒԽ ՀԻՆԴԵՐՈՒԴ

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱԼԻՆԵՐԸ ՎՈՐՊԵՍ ՄՄԱՅԻՆ ՅԵՎ ԿԱԹՆԱՅԻՆ ՍՆՏԴԱՄԹԵՐՔՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ

Զկները և թռչունները հետազոտելու ժամանակ յեկանք այն յեղբակացության, վոր այդ կենդանիները տալիս են մեզ ահազին քառակությամբ սննդամթերքներ, վոր գործ են ածվում մեր սեփական կարիքների համար և բացի դրանից, արտահանվում են արտասահման իրեն արտահանության նյութ:

Սակայն կենդանական ծագումն ունեցող սննդամթերքների մեծ մասն ստանում ենք մենք մեր ընտանի կենդանիներից: Խոշոր յեղանակությոր անասունները տալիս են մեզ կաթ և միս: Միս տալիս են մեզ և վոչխարները, ալճերը և խոզերը, իսկ վորոշ տեղերում՝ նաև ձիերը:

Բնակչությունը գործ է ածում ահազին քանակությամբ մսեղին և կաթնեղին: Այդ մթերքների ստացումը կապված է գյուղատնտեսության մի բարդ բնագավառի, այն ե՛ անասնապահության հետ: Ինչպես թռչունները հետազոտելու ժամանակ, այնպես և ալսոտեղ պետք է ծանոթանանք, թե ընտանի կենդանիներն ինչպիսի պարմաններում ավելի շատ մթերքներ են տալիս և ինչպիսի պարմաններում նրանց պահնեն ավելի ձեռնատու յեւ համարվում:

1. ՄՍԵՂԵՆ ՅԵՎ ԿԱԹՆԵՂԵՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՇՈՒԿԱՆ

Միսը և կաթը գործ ենք ածում մենք իրեն սննդանյութ համարյա ամեն որ, բայց յեթե հարցնելու լինեն, թե այդ սննդամթերքներից ամեն մեկս ինչքան ենք գործածում մի որվա, մի ամսվա կամ մի տարկա ընթացքում, հազիվ թե վորեն մեկը մեզանից կարողանա անմիջապես պատասխան տալի Ել ավելի դժվար կլինի ասել, թե ինչքան կաթ կամ միս և անհրաժեշտ այս կամ այն քաղաքի, ամբողջ Հայաստանի, Անդրկովկասի և կամ ամբողջ Միության բնակչության համար Այս կամ այն քաղաքի կամ ամբողջ պետության տնտեսությունը կա-

նոնավոր կերպով կազմակերպելու համար անհրաժեշտ ե իմանալ, թե ամեն մի մարդ տարվա ընթացքում ինչքան կաթ և միս ե գործածում և այդպիսով իմանալ ամբողջ բնակչության կարիքների չափը։ Փորձնք վորոշել այդ սննդամթերքների տեսակետից նախ մի մարդու և ապա ամբողջ պետության բնակչության կարիքների չափը։ Զեղանից ամեն մեկը, վոր կերակրվում ե տանը կամ հասարակական ճաշարանում, կարող ե հեշտությամբ վորոշել, թե ինքը որական ինչքան կաթ և միս ե գործածում։ Հետեւցեք մի շաբաթվա ընթացքում ձեր ընդունած կերակրին և աշխատեցեք գրի անցկացնել մսի և կաթի քանակությունները և ապա հանել միջին չափը։ Գանելով այդ միջին չափը՝ իմացեք ձեր մի ամսվա և մի տարվա ընթացքում գործածած մսի և կաթի քանակությունները։ Կատարեցեք և մի այլ հաշիվ։ Ցենթագրելով, վոր Միության մեջ ամեն մի բնակիչ գործ ե ածում որպական 100 գրամ միս և $\frac{1}{4}$ լիտր կաթ և ընդունելով, վոր Միության բնակիչների ընդհանուր թիվն ե 140 միլիոն՝ հաշվեցեք, թե Միության բնակիչների համար տարեկան ինչքան կաթ և ինչքան միս և հարկավոր։ Նման հաշիվ հեշտությամբ կարող եք կատարել և ձեր բնակավայրի վերաբերմաբ։

Համեմատության համար բերենք վաշինգտոնի լերկրագործական գեպարտամենտի տաս տարվա (1912—1922 թ. թ.) վերաբերմաբ հրատարակած տվյալներից մի քանի քաղվածքներ, վորոնք ցուց են տալիս, թե մի տարվա մեջ ինչքան միս և ընկնում ամեն մի մարդու վրա զանազան պետություններում։

Արգենտինա	140,5	կիլոգր.
Ավստրալիա	131,5	»
Հյուս. Ամերիկայի Միացյալ Նահանգներ	71,0	»
Մեծ Բրիտանիա	60,0	»
Գերմանիա	53,0	»
Ֆրանսիա	40,0	»
Ավստրո-Վենգրիա	32,0	»
Խորհրդավորին Միություն	25,0	»
Իտալիա	23,5	»

Այս թվերը ցուց են տալիս, վոր Միության մեջ ամեն մի մարդու վրա ընկած մսի քանակությունը շատ քիչ է։ Միության բնակչության մեծամասնությունը զործ է ածում գլխավորապես բուսական կերակուր՝ հաց, կարտոֆիլ, ձեթեր, Միության աշխատավորության սնունդը լավացնելու տեսակետից անհրաժեշտ ե բարձրացնել կենդա-

նաբուծության մակարդակը, ավելացնել լեզուբավոր անասունների քանակությունը և լավացնել նրանց վորակը:

Շատ լեզվներ, որինակ, Մեծ Բրիտանիան, Գերմանիան ահադին քանակությամբ միս ստանում են այլ լեզվներից, մասնավորապես Խորհրդային Միությունից: Նշանակում ե, ավելացնելով անասունների քանակությունը և լավացնելով նրա վորակը՝ մենք հնարավորություն կունենանք զարգացնելու մսեղեն և կաթնեղեն մթնորների մեր արտահանումը և այդ ճանապարհով մեծ լեկամուտ կլինինք տված կառավարության:

1925—26 թ. Միության մեջ գործ և ածվել 2,250,000 տոնն (135 միլիոն փութ) միս, վորից 1,150,000 տոնն (69 միլիոն փութ) տավարի միս, 467,000 տոնն (28 միլիոն փութ) վոչխարի միս և 634,000 տոնն (38 միլիոն փութ) խոզի միս:

Ի՞նչքան անասուն պիտի ունենալ ալդքան միս ստանալու համար:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՂԱՓԱՐ ԿԱԹՆԱՍՈՒԻՆ ԿԵՆԴԱՆՈՒ ՆԵՐՑԻՆ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մշակելով առաջին առաջարկությունը՝ տեսանք, վոր մեզ համար անհրաժեշտ կենդանական սննդամթերքները՝ միսը և կաթը պատրաստվում են կաթնասուն կենդանիների մարմնի մեջ: Վորպեսզի հասկանանք այդ կենդանիների որգանիզմի մեջ կատարվող աշխատանքը և հնարավորություն ունենանք այդ աշխատանքն ողտագործել մեզ համար անհրաժեշտ մթերքների տեսակետից լավագույն կերպով, պետք ե, թեզուզ բնույթուր գծերով, ծանոթանալ կաթնասուն կենդանու կազմության հետ և պարզել մեզ համար նրա առանձին-առանձին գործարանների դերը: Կենդանիների արտաքին կազմության հետ կապված հարցերը մենք մշակել ենք արդեն մեր նախկին թեմաներից մեկի մեջ:

Ներքին կազմությունը հետազոտելու համար անհրաժեշտ ե դիահերձել վորևէ փոքրիկ կաթնասուն կենդանի, որինակ, ճագար, կատու կամ հորթ:

Նախ քան դիահերձման դիմելը, կազմեցեք խմբակի աշխատանքի պլանը: Վորոշեցեք, թե ինչպիսի կենդանիներ և քանի հատ պետք ե դիահերձման յենթարկեք և պարզեցեք, թե այդ աշխատանքի համար ինչ նլութեր են անհրաժեշտ: Պատրաստեցեք բոլոր անհրաժեշտ նյութերը: Ամելի լավ կլինի, լեթե խմբակի տարրեր ողտակներ դիահերձման յենթարկեն տարրեր կենդանիներ, որինակ, ճագար և կատու, դա

Հնարավորություն կտա համեմատել ստացված արդյունքները միմյանց հետ:

Իերենք մի քանի տեղեկություններ կենդանիների դիահերձման վերաբերյալ:

Վերցնում են մի հատուկ տախտակ կամ հաստ ֆաների մի կտոր, վորի անկյուններին ամրացված են մեխեր կամ կարթեր և նախապես սպանված կենդանու վոտները կապում են ալդ մեխերին կամ կարթերին այնպես, վոր կենդանու փորը դարձած լինի դեպի վեր: Այնուհետև բացում են կենդանու բուրդը այն գծի ուղղությամբ, վոր միացնում և հետանցքը ներքել զբունքի լեռ և ապա սկալպելի կամ սուր դանակի միջոցով կտրում են կենդանու մաշկը և լեռ քաշում դեպի աջ և ձախ կողմերը: Կտրում են ալդ գծի ուղղությամբ և մկանալին պատը: Դրանից հետո կտրում են կենդանու կրծքի վանդակի ներքելի կողմից լայնության ուղղությամբ, վորից հետո լեռ քաշելով մկանալին պատը՝ բացում են ներքին գործարանները և ծանոթանում նրանց հետ:

Շագարի և կամ մի ալլ կաթնասուն կենդանու մարմնի դիահերձման ժամանակ նկատում ենք, վոր ներքին գործարանները տեղափորված են մարմնի խոռոչում, վոր կրծքարային միջնապատով (սովոր նիս) բաժանվում և լերկու մասի՝ կրծքի յել փորի կամ վորովայնի խոռոչում:

Դիտեցեք սովորական կաղմությունը: Ի՞նչպես ե նա միացած մարմնի պատերին: Ի՞նչ ենք տեսնում ստոծանու միջին մասում: Ի՞նչ փոփոխության ե լինթարկվում կրծքի խոռոչը, լերը ստոծանու մկանները կծկվում են: Խմացեք, թե ի՞նչ գործարաններ են գանվում կրծքի խոռոչում և ի՞նչ գործարաններ վորովայնի խոռոչում:

Դիտողության նկութ դարձեք առանձին-առանձին գործարանների դասավորությունը. նկարեցեք նրանց ընդհանուր պատկերը և նշանակեցեք լուրաքանչյուր մասի անունը:

Բաժանեցեք մարսողական խողովակիր բոլոր մարսողական գեղձների հետ միասին: Ուշադրությամբ դիտեցեք նրա առանձին-առանձին մասերը, նկարեցեք և նշանակեցեք լուրաքանչյուր մասի անունը: Ի՞նչ գեղձներից են խողովակներ գալիս դեպի մարսողական խողովակը: Վերտեղ էն նշանվում այդ գեղձները: Գտեք մարսողական խողովակի այն մասերը, վոր գտել եք գորտի և թռչունի մարմինները դիահերձելու ժամանակ. ալդ մասերն են՝ ստամոքսը, տասներկումատնյա աղիքը, բարակ և հաստ տղիքները, ուղիղ աղիքը (կաթնասունները կլուակ չունեն). մարսողական խողովակը վերջանում և ուղիղ աղիքի անցքով,

վոր կոչվում ե յետեվի անցք կան սրբան): Յեթե կարողանաք ձեռք բերել հորթի ստամոքս, ապա ուշադրությունն դարձրեք նրա կազմության վրա: Դատեք բարակ աղիքը հաստ աղիքի փոխարկվելու տեղում խոշոր կուլր պարկը, վոր կոչվում ե կուլր աղիի: Արդիմք այդ աղիքը բոլոր կենդանիների մեջ նույն չափով ե զարգացած: Յեթե զանազան տեսակի կենդանիներ եք դիահերձել, ապա չափեցեք նրանց մարսողական խողովակի լերկարությունները: Համեմատեցեք չափումներից ստացված տվյալները միմյանց հետ: Բաց արեք ստամոքսը, բարակ և հաստ աղիքները և տեսեք, թե ինչ գրության մեջ և գտնվում կերակուրը մարսողական խողովակի զանազան մասերում:

Առանձնացրեք սիրտը և թոքերը: Հետազոտեցեք սիրտն առանձին:


Դիացեցեք սրտի արտաքինը: Մանոթացեք դեպի սիրտը արյուն բերող և սրտից արյուն տանող անոթների հետ: Բաց արեք սիրտը և տեսեք, թե քանի խորշերից և նա բաղկացած և թե թնչվես են հաղորդակցվում այդ խորշերը միմյանց հետ: Ի՞նչպիսի հաստություն ունեն սրտի պատերը զանազան մասերում: Նկարեցեք ձեր դիտածը և նշանակեցեք առանձին-առանձին մասերի անունները:

Անցնելով թոքերի հետազոտության՝ կատարեցեք հետևյալը: Դիտեցեք ուշագրությամբ շնչափողը և կոկորդը: Կուլ տալու ժամանակ կերակրի գունդն անցնում ե կոկորդի վրայով: Ի՞նչ հարմարություն կա այնտեղ, վորի շնորհիլ կերակրի գունդը չի մատնում շնչափողի մեջ: Դիտեցեք ձայնական կապանները: Ի՞նչպիսի կազմություն ունի Շնչափողը (ՏՐԱԽԵԼՅԱ): Տեսեք, թե ի՞նչպես ե շնչափողը փոխարկվում բռնիւների և վերջիններիս ճյուղավորումից թնչվես են առաջանում թոքերը: Քանի թոքակից և բաղկացած աջ թոքը և քանի թլթակից՝ ձախ թոքը: Թոքերի առանձնահատկությունների հետ ծանոթանալու համար մտցրեք մի ապակլա խողովակ շնչափողի մեջ, պինդ կերպով կապեցեք թելով նրա շուրջը և խողովակի բաց ծալրից ող փշեցեք թոքերի մեջ: Ի՞նչ փոփոխության են լենթարկվում այդ ժամանակ թոքերը: Ի՞նչ ե տեղի ունենում, լերը դուք գուրս եք հանում շնչափողի միջից ապակլա խողովակը: Ի՞նչ առանձնահատկություններ ունեն թոքերը:

Բըռնխները մտնելով թոքերի մեջ՝ հետզհետե ճյուղավորվում են՝ տալով ավելի և ավելի փոքրիկ ճյուղեր, ամենավերջին ճյուղերը, վորոնք տեսանելի կարող են դառնալ միայն միկրոսկոպի տակ, վերջանում են փոքրիկ փամփուշտներով: Այդ փամփուշտները կոչվում են բուժային փամփուստիկներ: Մրանց պատերը չափազանց բարակ են և պատած են վերին աստիճանի բարակ արյունատար անոթների ցանցով: Ահա այս ցանցի մեջ և կատարվում գաղերի փոխանակություն-

արլունից հեռանում և դեպի փամփշտիկների ներսի ողն ածխաթթու գաղ, իսկ այդ ողից մտնում և արլան մեջ թթվածին:

Մարսողական խողովակը հեռացնելուց հետո վորովախի խոռոչի մեջ հեշտությամբ կարելի է նկատել միզասեռական համակարգությունը. Գտեք լերիկամները, միզափամփութերը, միզատար խողովակները և այն



Նկ. 114. Եգ ճագարի ներքին գործարանները՝ Աղիքը հեռացված եւ.

խողովակը, վորով մեզր ներանում և մարմնից: Նկարեցեք նրանց դասավորությունը: Կտրեցեք լերիկամը և դիմողության նյութ գարձրեք նրա ձևն ու մեծությունը: Արդի՞նք լերիկամների մեջ մտնում են արյունատար անոթներ, թե վոչ:

Առանձնացրեք միզափամփուշտը, մտցրեք նրանից դուրս լեկող խոզովակի մեջ մի ապակյա խողովակ և փշեցեք Յերբ ուռչի փամփուշտը, դիտեցեք նրա պատերը: Ի՞նչպիսի առանձնահատկություններ ունեն միզափամփուշտի պատերը:

Յերիկամների մեջ արևունից անջատվում ե մեղմ: Վերջինս հետք-հետե հավաքվում ե միզափամփուշտի մեջ և այնտեղից ժամանակ առ ժամանակ դուրս գալիս:

Եգի սեռական գործարանները՝ ձվարանները յելարգանդը նույնպես գանգվում են վորովախի խոռոչում, իսկ արվի սերմնարանները տեղավորված են մարմի խոռոչից դուրս մի առանձին քսակի մեջ:

Յ. ԿԱԹՆԱՍՈՒԻՆ ԿԵՆԴԱՆՈՒ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԸ

Ճագարի ներքին գործարանները դիտելուց հետո մենք կծանոթանանք նրա շարժողական ապարատի կազմության հետ: Դրա համար մենք ներքին գործարանները հեռացնելուց հետո կհեռացնենք և նրա մորթին:

Մորթին հեռացնելուց հետո մեզ կթվա առաջին հայացքից, թե ճագարի (կամ կատվի) վոսկրները պատած են դրսից միապաղպղ մսով: Միսն ամեն տեղ ծածկված և սպիտակ թաղանթով: Մարմնի կազմության հետ ծանոթանալու համար անհրաժեշտ է կատարել մի շարք աշխատանքներ:

Ամենից առաջ տեսեք, թե վոսկրները վորեն տեղ բաց են, թե ամեն տեղ պատած են մսով: Արդյոք ամեն տեղ միսը նմանապիսի հաստության շերտով և պատում վոսկրները, թե զանազան տեղերում մսի շերտը տարբեր հաստություն ունի: Վերտեղ և մսի շերտը ամենից հաստ: Դրանից հետո տեղ-տեղ հեռացըք միսը պատող թաղանթը: Այս աշխատանքը կատարելուց հետո կտեսնեք, վոր միսը բաղկացած և առանձին-առանձին մասերից: Մսի արդ առանձին-առանձին մասերը կոչվում են մկաններ: Անջատեցեք մեջքի և յետեի վերջավորությունների վրայի մկանները: Արդյոք ամեն տեղ մկանները մինչեւլուն ձևն ունեն, թե տարբեր տեղերում տարբեր և նրանց ձևը: Ի՞նչպիսի ձև ունեն այս կամ այն մասի մկանները: Նկարեցեք մկանների ձևերը:

Մկաններն ընդունակ են կծկվելու զանազան գրդիւնների ազդեցության տակ: Կենդանիների մարմնի մեջ մկանները կծկվում են զանազան նյարդալին այն գրգիռների ազդեցության տակ, վոր գալիս են կենտրոնական նյարդալին համակարգությունից: Մկանների կծկման ժամանակ ի՞նչն և շարժման մեջ մտնում:

Շարժողական մեխանիզմը պարզելու համար անհրաժեշտ է հետազոտել վոչ միայն մկանները, այլև նրանց միացումը վոսկրների հետ։ Ինչի՞ միջոցով են միանում մկանները վոսկրների հետ։ Գտեք առանձին ջիւեր և հետևեցեք նրանց ընթացքին մկաններից մինչև վոսկրները, բանի՞ վոսկրների հետ են միանում մկանների ջիւերը։ Ազատելով վերջավորությունների վրա մի քանի ջիւերի ծալրեր, ձգեցեք վերջիններից և տեսեք, թե ի՞նչ են լինում վոսկրերն իրենց հոդերում։

Շարժողական ապարատի հետազոտությունը բերում և մեզ այն լեզրակացության, վոր նա բաղկացած ե մկաններից և վոսկրներից։ Այդ կարող ենք ստուգել մենք մեր ձեռքերի վրա։ Հետազոտեցեք, թե ի՞նչպիս և աեղի ունենում ձեր ձեռքի ծալրումը արմունկի հոդում։

Մերկացրեք վերջավորությունների վոսկրները՝ հեռացնելով նրանց վրայից ամբողջ միւր։ Ուշադրությամբ զիտեցեք վերջավորությունների վոսկրների ձևը, միաժամանակ տեսեք, թե ի՞նչպիս են միանում նրանք իրար հետ։ Վոսկրների իրար հետ միացումը առաջ և բերում նոդ, ինչպի ե պատաժ հոդը դրսից։ Տեսեք, թե ի՞նչպիս ե տեղի ունենում հոդի շարժումը։ Բաց արեք այն պարկը, վոր շրջապատում ե հոդը. դիտեցեք հոդի մեջ իրար հետ միացող վոսկրների ծալրերը։

Ինչպի են պատաժ վոսկրների ծալրերը և ի՞նչպիսի ձեւ ունեն նրանք։ Ի՞նչ նշանակություն ունեն հոդի ձեռն ու կազմությունը շարժում առաջ բերելու տեսակետից։ Նկարեցեք և նկարագրեցեք։


Դիտողության նյութ դարձրեք վերջավորությունների ծալրող և բացող շարժումները՝ տեսեք, թե ի՞նչպիսի դասավորություն ունեն ծալրող և բացող մկանները և պարզեցեք վերջավորությունների աշխատանքի մեխանիզմը։ Ստուգեցեք ալդ ձեր ձեռքի վրա։ Նկարեցեք համապատասխան սխեմատիկ նկարներ։

Հետազոտեցեք վորևել կաթնասուն կենդանու կմախք. տեսեք՝ թե ի՞նչ մասերից ե նա բաղկացած և թե ի՞նչ վոսկրներ են գտնվում նրա այս կամ այն մասերում։ Ցեղի դպրոցում կմախք չկա, հավաքեցեք առանձին-առանձին վոսկրներ և հետազոտեցեք։ Իմացեք, թե ի՞նչ դեր ե կատարում կմախքի այս կամ այն մասը կենդանու կյանքում։ որինակ, ինչ նշանակություն ունեն գանգը, կը գիտի վանդակը, վողնաշարը և ալլն։

Շարժվող կենդանին կարող ե շարժել և ծանրություններ (ձիու, լեզան և այլ կենդանիների աշխատանքը)։ Աշխատանք կատարելու համար անհրաժեշտ ե եներգիա։ Այդ եներգիան ստանում է կենդանին այն սննդանլութերի ալրումից, վոր արլունը տանում է զեղի-

մկանները: Մկանների մեջ կան ահազին քանակութամբ արյունատար անոթներ և հենց ալդ և պատճառը, վոր մկաններն ունեն կարմիր գույն:

Մկանների մեծությունը կախված է նրանց ստացած սննդի քանակությունից: Առատ սնունդ ստանալու և վարժություններ կատարելու դեպքում մկանների ընդհանուր զանգվածը մեծանում է: Սովելու դեպքում, ընդհակառակը, մկանները փոքրանում են, կենդանին նիշարում է: Առատ սնունդ ստանալու դեպքում մկանների չերեսին, յերբեմն նաև մկանային թելիկների արանքներում կուտակվում են սննդանլութերի պաշար՝ ճարպային շերտերի ձևով:



Նկ. 115. Վոսկրների շարժումը մկանների միջոցով. 1—մկան, 2—զերեկի վոսկրը, 3—ներքեկի վոսկրը, 4—վոսկրների հոդավորումը

(վոսկրները), կիսաշարժականորեն (առանձին-առանձին վոզները) և շարժականորեն (վերջավորությունների վոսկրները):

Կյախթը, ինչպես և ամբողջ մարմինը բաժանվում է յերեք մասի՝ գլխի, իրանի և վերջավորությունների:


Գլուխը բաղկացած է այն վոսկրներից, վոր միանալով՝ միմյանց հետ՝ կազմում են զանգի արկղը, վորտեղ տեղավորված է գլխի ուղիղը, և ապա դեմի վոսկրներից: Գլխի բոլոր վոսկրները, բացի ստորին ծնոտի վոսկրից, միացած են միմյանց հետ անշարժորեն:

Մարմնի հիմքը կազմում է վոզնաօարը, վոր բաղկացած է առանձին-առանձին վոզներից: Վոզը բաղկացած է մարմնից և աղեղից, վոզների աղեղները նստելով միմյանց վրա՝ առաջ են բերում մի անցք:

Բացի կմախքային մկաններից, ալտինքն այն մկաններից, վոր կպչում են վոսկրներին, կենդանիները մկաններ ունեն և ներքին գործարաններում: Սիրաը, արյունատար անթյուների պատերը, աղիքների պատերը մեծ մասամբ բաղկացած են մկաններից: Կմախքային մկանները կծկվում են կենդանու կամքով, իսկ ներքին մկանները աշխատում են անկախ կենդանու կամքից:

Շարժողական ապարատի հաստատուն հիմքը կմախքն է, վոր բաղկացած է առանձին-առանձին մասերից՝ միացած միմյանց հետ անշարժորեն (գանգի վոզները) և շարժականորեն (վերջավորությունների վոսկրները):

վորի մեջ տեղափորվում և վողնուղեղը. Խնձուս քիչ տռաջ ասացինք, վողները միանում են միմյանց հետ կիսաշարժականորեն, դրա համար ել կենզանու մարմինը կարող է կորանալ կաթնասունների պարանոցի և պոչի վողները միացած են միմյանց հետ ավելի շարժական ձևով: Դավակի վողները միանգամայն միացել են միմյանց հետ:



Նկ. 116. Զիռու կմախըը. 1—գանգը, 2—պարանոցի վողները, 3—կրծքի մող-ները, 4—զոտկանեղի վողները, 5—զավակ, 6—պոչի վողները, 7—կողերը, 8—թիակը, 9—բազուկի վուկը, 10—ծղոսկը, 11—ծղոսկը, 12—զատակը, 13—մատնարմատի վոսկը, 14—չորրորդ մատի մնացորդը, 15, 16, 17, —յերբորդ մատի մատնուկըները, 22—ազգրոսկը, 24—որունքի մեծ վոլոսի վոսկը, 25—կրունկի վոսկը, 26—նրբանի վոսկըները, 27—մատն-արմատի վոսկը, 29, 30, 31—մատնուկըները:

Կողերը, կրծքոսկը և վողնաշարի կրծքի մասը միասին կազմում են կրծքի վանդակը, վորտեղ տեղափորված են չափազանց կարևոր գործարաններ, այն ե՛ս սիրտը և թոքերը: Կրծքի վանդակի վոսկըները միացած են միմյանց հետ կիսաշարժականորեն:

Համապատասխան մկանների կծկումով կրծքի վանդակը մեծանում է, վորի հետեւանքով և դրսից ող է ներս մտնում թոքերը:

Վերջավորությունները միանում են վողնաշարի հետ առանձին վոսկրների միջոցով: Առջևի վերջավորությունները միանում են անբակների և թիակների միջոցով, իսկ լետեկները՝ կոնքի վոսկրների միջոցով (նկ. 116):

Հողապարկը բացելու ժամանակ մենք ծանոթացանք հոդի կաղմության հետ: Ան վոսկրների ծալրերը, վորոնք միանում են իրար հետ շարժական հողով, ծածկված են կրծկելով և սովորաբար ունենում են ուռուցիկ և փոս ընկած մասեր: Մեկ վոսկրի ուռուցիկ մասի հանդեպ գտնվում է մյուս վոսկրի փոս ընկած մասը: Վոսկրների ծալրերը պատած են հողապարկով, վորի մեջ արտադրվում է լորձալին հեղուկի կաթիլներ և ոժում վոսկրների ծալրերը: Շնորհիվ հոդերի ալղորինակ կազմության՝ վոսկրները շարժվում են զյուրությամբ (նկ. 117):

Այսպիսով տեսնում ենք, վոր մկանները և կմախքը կազմում են կենդանու շարժման գործարանները: Շարժման ակտիվ գործարաններ հանդիսանում են մկանները, իսկ չպասսիվ գործարաններ՝ վոսկրները:


Մկանավոսկրալին ապարատի աշխատանքը զեկավարում են նյարդալին կենտրոնները: Կենդանու մարմնի զանազան մասերն աշխատում են իրեն առաջին և կամ յերկրորդ կարգի լծակները:

Մկանները հետաքրքրում են մեզ վոչ միայն իրեն կենդանու շարժողական ապարատի ակտիվ մասեր, վոր կատարում են կտրվածքը (պարզացրած), 1—2:

այս կամ այն աշխատանքը, այլ և իրեն հոգտապարկը, 3—վոսկրը և—միս, վոր հանդիսանում է արժեքավոր և հոգային կրծիկներ, վորոնց անհրաժեշտ սննդանլութերից մեկը: բանքում գտնվում են հոգային

լոսուչ՝ լցված հեղուկով, են միայն նրա համար, վոր նրանցից միա առաջնան:

Մսի հետ մենք ավելի մանրամասն կծանոթանանք մի այլ առաջդրության մեջ:



Նկ. 117. Հոդի յերկարությամբ կտրվածքը (պարզացրած), 1—2: այս կամ այն աշխատանքը, այլ և իրեն հոգտապարկը, 3—վոսկրը և—միս, վոր հանդիսանում է արժեքավոր և հոգային կրծիկներ, վորոնց անհրաժեշտ սննդանլութերից մեկը:

Ծատ կենդանիներ մարդիկ պահում են միայն նրա համար, վոր նրանցից միա առաջնան:

Մսի հետ մենք ավելի մանրամասն կծանոթանանք մի այլ առաջդրության մեջ:

4. ՀՈՐՈՇՈՂԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Բուլիսերի կլանքի հետազոտության նվիրված մեր աշխատանքներից գիտենք արդեն, վոր այն բոլոր նյութերը, վոր գտնվում են բուլուսի մեջ, առաջանում են արեգակնային ճառագալթների աղղեցության տակ, ածխածնից և ջրի մեջ գտնվող հանքային նյութերից:

Հարց և առաջանում. կարժեց են արդյոք վողնաշարավորները ևս սնվել հանքային նյութերով:

Մեղ և կենդանիների վրա կատարած մեր ամենորյա դիտողությունները, նույնպես և ձկների և թոշունների հետազոտության նվիրված մեր աշխատանքները ցուց են տալիս, վոր կենդանիները սնվում են գործարանական նյութերով: Կենդանիների ընդունած կերակուրը փոխարկվում ե մի կողմից մկանների, ճարպի, վոսկրների և այլն, մյուս կողմից գործադրվում ե իրեն վառելիք. նրանից և պատրաստվում ե կաթը:

Արդյո՞ք բոլոր կենդանիները միանման սնունդ ունեն:

Կենդանիների մի մասը սնվում ե այլ կենդանիների մսով. այդպես են, որինակ, կատուն, շունը, գալլը և այլն: Այդպիսի կենդանիները կոչվում են գիշատիչներ: Մյուսները սնվում են միայն բուսական նյութերով: Դրանք ել կոչվում են բուսակերներ կամ խոտակերներ: Ինչպես բուսական, այնպես և կենդանական նյութերը նախ քան կենդանու մարմնի մեջ ծծվելը, պետք ե մարսվեն և մտնեն լուծված վիճակի մեջ, ինչպես վոր բույսերի մաղարմատների պատերի միջով ծծվում են միայն լուծված նյութերը, այնպես և կենդանու մարմնի մեջ աղիքների պատերի միջով արյան մեջ են ծծվում միայն լուծված վիճակում գտնվող սննդանյութերը:

Դիահերձման աշխատանքները կատարելիս տեսանք, վոր խոտակերների (ճագարի) մարսողական խողովակը շատ ավելի լերկար ե, քան գիշատիչներինը (կատվինը): Առանձնապես բարդ ե վորոճող կենդանիների մարսողական խողովակը: Մանոթանանք վորոճողների մարսողական համակարգության հետ փոքր ինչ մանրամասնորեն:

Հետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ ե ձեռք բերել կովի գլուխ, խոզի, կատվի կամ շան գանգ, հորթի ստամոքս: Յեթե հնարավորություն ունեք, ձեռք բերեք կովի ստամոքս:

Կազմեցեք ձեր աշխատանքի նախագիծը. ի նկատի ունեցեք, վոր պետք ե դիտողության նյութ դարձնեք զանազան կենդանիների ատամների կազմությունը, իմանաք, մրգությունը բոլոր կենդանիները միանման ատամներ ունեն, թե վոչ, բացատրեք նրանց տարրերության

պատճառները, հետազոտեք նրանց մարսողական խողովակի գանազան մասերի կազմությունը: Ալդ աշխատանքի հիմնական խնդիրները կարող են լինել հետեւալները:

Հետազոտեցեք զգուշությամբ կովի բերանի խոռոչը:

Իմացեք, թե կովը քանի՞-


ատամ ունի, թնջպիսի ձև ունեն
ալդ ատամները և թնջպես են
դասավորված: Ի՞նչպիսի կերա-
կուր ծամելու համար են ալդ
ատամները: Դիտեցեք կովի լի-
զուն և շրթունքները: Տեսեք,
թե կովն թնջպես ե ոգտագործում
իր բերանալին գործարանները
կերակուրը բռնելու և ծամելու
ժամանակ (այս դիտողությունը
հնարավոր ե կատարել եքսկուր-
սիալի ժամանակ):

Դիտեցեք խողի ատամները:
Քանի՞ հատ են նրանք, թնջպիսի
ձև ունեն և թնջպես են դասա-
վորված: Ի՞նչպէս են նրանք զանա-
զանվում կովի ատամներից: Ի՞նչ-
պիսի կերակուր ծամելու համար
են ալդ ատամները:

Հիշեցեք, թե թնջպիսի կազ-
մություն և դասավորություն ու-
նեն կատվի և զան ատամները:
Ի՞նչո՞վ են նրանք զանազանվում
կովի ատամներից: Ի՞նչպիսի կե-
րակուր ծամելու համար են նրանց
ատամները: Մանոթացեք ատամի
ներքին կազմության հետ:

Նկարեցեք և գրեցեք ձեր
բոլոր դիտողությունները:

Դիտեցեք հորթի կամ կովի
սամոնը գրսից, Ի՞նչպիսի մեծություն ունի նա: Բանի՞մասից և նա
քաղկեցած: Բացնք ստամոքսի զանազան մասերը և դիտեցեք նրանց
պատերի կազմությունը: Նկարեցեք ձեր դիտողությունները և նկա-
րագրեցեք:




Նկ. 118. Ատամի յերկարությամբ
կարվածքը (սխեմա). 1—եմալ, 2—ա-
տամանյութ (զենափին), 3—ատամի
խոռոչը (զորի մեջ զանվում են արյու-
նատար անոթներ և նյարդեր), 6—
չնորդքի մակերեսությը, 7—ատամի
պսակը, 9—(վերևի պատքը) ատամի
արմատը պատող զեմենտի շերտ:

իմացեք, թե ի՞նչ դրության մեջ և գտնվում կերակուրը վորոնող զենդանու ստամոքսի զանազան մասերում և փորձեցեք բացարել, թե ի՞նչ փոփոխության և լինթարկվում նա ստամոքսի զանազան մասերում:

Կաթնասունների մարսողական գործարանների համակարգությունը բաղկացած է միենույն մասերից, բայց այդ մասերը տարբեր կենդանիների մեջ ունեն տարբեր կազմություն: Առանձին բարդություն են ստանում նրանք վորոնող կենդանիների մեջ:

Նկ. 119. Կովի վերին ձնոտի վերջին յերեք սեղանատամները: Կերպով զարգանում են ժանիքները. սեղանատամները ծածկված են սուր թմբիկ-ներով: Ծամելու ժամանակ նրանց ձնոտներն աշխատում են այնպիս, ինչպես մկրատի բերանները: Խոտակերների ժանիքները կամ թույլ են լինում զարգացած և կամ բոլորովին բացակայում են, ևաճախ լրիվ կերպով չեն զարգանում և կտրիչները: Սեղանատամներն



Նկ. 120. Կովի գանգը. ու—քթոսկը՝ օք—վերին ձնոտի վոսկը. 5—կտրիչները, 3—սեղանատամները:

ունեն ծալքավոր լայն մակերեսություն և միանգամայն հարմարված են կերակուրը մանրացնելու, տրորելու գործին (նկ. 119): Ստորին ձնոտը շարժվում է աջից ձախ և ատամներն աշխատում են աղորիքների նման (նկ. 120):

Կովն ունի իր ստորին ծնոտի վրա ութ հատ կտրիչներ (վերևի ծնոտի վրա կտրիչներ չունի), ժանիքներ չունի վոչ ստորին և վոչ ել վերևի ծնոտի վրա։ Սեղանատամներ ունի լուրաքանչյուր ծնոտի լուրաքանչյուր կողմում վեցական հատ։ Ալպիսով կովի ատամների ընդհանուր թիվը հասնում է 32-ի։

Բերանի խոռոչի մուս գործարաններից հիշատակության արժանի լեն լեզուն և շրթունքները, վորոնց միջոցով նա ուտելիքը բռնում և տանում ե զեպի բերանը։ Բերանի խոռոչի մեջ բացվում են չորս զուրկ թքալին գեղձերի խողովակներ։ Այդ գեղձերն են՝ ականջամերկ, յենրալեզվյան, յենրածնոյան յել այտային։

Վոչ վորոնող խոտակերների բերանի խոռոչում ուտելիքը լավ ծամվում, մանրացվում ե (ձի)։ Իսկ վորոնողների բերանում ուտելիքը միայն խառնվում ե առատորեն արտազրվող թքի հետ և թեթև կերպով տրորքում, վորից հետո կենդանին կուլ ե տալիս։ Հիմնավոր կերպով ուտելիքը մանրացվում ե լերկորդ անդամ ծամելու ժամանակ, յերբ կենդանին սկսում ե վորոճալ։

Ուտելիքը բերանի խոռոչից կերակրափողի միջով մանում ե վորոնողների ստամոքսը, վորի վրա արժե մանրամասն կանգ առնել։


Վորոնողների ստամոքսը բաղկացած ե չորս մասից։ Ամենախոշորն այդ մասերից գանձակն ե՝ կերակրափողը բացվում ե ստամոքսի լերկու մասի, այն ե՝ գանձակի և ցանցիկի սահմանում։ Ցանցիկի պատերի վրայով անցնում ե մի ակոս դեպի հաղարթերթիկի մուտքը։ Զեամփած կերակուրը կերակրափողից մտնում ե այդ ակոսը, բացում նրա պատերը և մտնում գանձակը։ Գանձակի մեջ չի արտազրվում և վոչ մի մարսողական հութիւն նա միջնապատերով բաժանված ե մի քանի մասերի։ Այդտեղ պատերի կծկումներով կերակուրը մի մասից մտնում ե մլուսը և լավ խառնվում կուլ տված թքի հետ։ Գանձակում կերակուրը լենթարկվում ե խմորման։ Վորոշ ժամանակից հետո պատերի կծկումով կերակուրը գանձակից մզվում ե ցանցիկը և այստեղից լետ գալիս դեպի բերանի խոռոչը։ Այս անդամ կերակուրը բերանում լավ ծամվում ե և շաղվում առատ քանակությամբ թքի հետ, վորից հետո կենդանին նորից կուլ ե տալիս։ Այմմ կերակրի մանրացած կտրներն անցնում են ուղղակի ստամոքսի լերորդ մասը՝ հաղարթերթիկը։

Հաղարթերթիկն ունի իր մեջ բազմաթիվ միջնապատեր, վորոնք շատ նման են գրքի թերթերի։ Այս թերթերի արանքում կերակուրը կրկին լենթարկվում ե տրորման։ Վոչ ցանցիկի և վոչ ել հաղարթերթիկի մեջ չկան մարսողական հութերը։ Ինչպես գանձակի մեջ, այնպես

և լ ցանցիկի ու հաղարթերթիկի մեջ կերակուրը լենթարկվում ե միայն տրորման և խմորման:

Վերջը կերակուրը մտնում ե խախացոցը. ալստեղ նա խառնվում և թթու ստամոքսահլութի հետ: Թթու հլութը սպանում ե բակտերիաներին, վորի հետևանքով կանգ ե առնում խմորումը: Ստամոքսահլութի ազդեցության տակ սկսում ե սպիտակուցալին նլութերի մարսման դործողությունը (նկ. 121):

Կերակրի շփոթը ստամոքսից այնուհետեւ մտնում ե բարակ աղիքի առաջին մասը, վոր կոչվում ե տասներկումատնյա աղիք:



Նկ. 121. Վորճողի ստամոքսը. 1—ակոսը, վորով լավ ծամված կերակուրը դնում ե զեղի հաղարթերթիկը, 2—ցանցիկը, 3—հաղարթերթիկը, 4—խախացոցը, 5—զանձակ, 6—տասներկումատնյա աղիքը:

Այս աղիքի մեջ կերակրի հետ խառնվում են յենքաստամոքսային գեղձից դուրս լեկող հլութը, աղիքների պատերի մեջ գտնվող փոքրիկ գեղձերից արագրվող աղիքային հյուրը և լարդի մեջ պատրաստվող լեղին: Այս հլութերի ազդեցության տակ տեղի լի ունենում կերակրի մարսման գործողությունը և այն բոլորը, ինչ վոր հնարավոր ե լեղել ոգտագործել, բոլորը դառնում են լուծելի և լուծվում ջրի մեջ:

Բարակ աղիքի հետագա մասում կերակուրն սկսում ե ծծվել մարմնի մեջ: Լուծված սննդանյութերը ոսմոզի որենքով ծծվում են աղիքների պատերի մեջ գտնվող արյունատար անոթների մեջ և արյան հետ տարվում զեղի մարմնի զանազան մասերը (նկ. 122):

Մարմնի մեջ մտած սննդանլութերից հետագայում առաջանում են մկաններ, ճարպ, կաթ և ալլ նյութեր: Սննդանյութերի մի մասը գործադրվում է վորպես վառելանլութ և առաջ բերում եներգիա: Ինչ վերաբերում է մարսված նյութերին, պիտի ասենք, վոր սրանք անցնելով կույր և հաստ աղիքները՝ կուտակվում են ուղիղ աղիքի մեջ և ժամա-



Նկ. 122. Վորոնովների մարսողական խողովակը (պարզացրած). 0—կերակրափող, 1—ստամոքսի ցանցիկը, 2—հազութերթիկը, 3—գանձակը, 4—խախցոցը, 5—տաներկումատնյա աղիքը, 6—բարակ աղիքը, 7—կույր աղիքը, 8—պարուրած վորված հաստ աղիքը, 9—ուղիղ աղիքը:

նակ առ ժամանակ գուրս գալիս այնտեղից սրբանի միջով: Կենդանիների աղիքը և մեղքը խառնվելով կենդանիների տակ փռվող նյութի հետ՝ տալիս են գաշտերի համար լավ պարարտանյութ, վոր կոչվում ե գոմազք:

5. ԿԱԹՆԱՏՈՒ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Վորոնող կենդանիների բարդ կազմություն ունեցող մարսողական գործարանների համակարգությունը միանգամայն հարմարված է մեծ քանակությամբ կոշտ կեր մարսելու համար: Ալդ կոշտ կերը, որինակ, չոր խոտը, դարձանը, կանաչ խոտը և ալյն, ինքնին վերցրած ստորարժեք նյութեր են, բայց կենդանիների մարմնի մեջ մշակման լինթարկվելով՝ փոխարկվում են արժեքավոր և պետքական մթերքների, այն ե՝ մսի և կաթի: Նշանակում ե, լեղջուրավոր անասունի մարմինը հանդիսանում է մի տեսակ բարդ կենդանի մեջենա, վոր ստորարժեք գործարանական նյութերը վեր և ածում մեզ համար ավելի արժեքավոր և պետքական նյութերի: Ցեթե ալդպես ե, առաջանում են մի շարք հարցեր: Միակ բազ են աշխատում արդյոք բոլոր կենդանիներնաները: Արդյոք բոլոր տեսակի պայմաններում նրանք միանման-

պրոդուկցիա լեն տալիս և թե ի՞նչպիսի պայմաններում կարող ենք մենք ստանալ նրանցից լավորակ պրոդուկցիա:

Այս հարցերին պատասխանելու համար պետք է կատարենք մի քանի եքսկուրսիա գեպի այն վալրեը, ուր պահպում են անասուններ, որինակ, գեպի կոլանտեսությունները և խորհրդալին տնտեսությունները և ապա կատարենք դպրոցներում մի շարք լաբորատորական աշխատանքներ: Յեթե շատ եքսկուրսիաներ կատարելն անհնարին լինի, կարելի է բավականանալ և մի եքսկուրսիալով:

Նախ քան եքսկուրսիա կատարելը, պետք է նախապես մշակեք ձեր հետազոտության նախազիծը և վորոշեք այն հարցերը, վորոնց վրա առանձնապես պետք է կանգ առնեք: Յերբ նախազիծը պատրաստ կլինի, քննության նյութ՝ դարձրեք խմբակի մեջ և յեթե բոլորդ միասին մի տնտեսություն չեք գնալու, ապա աշխատանքի բաժանում կատարեցեք և առաջարությունները բաժանեցեք ողակների միջև:

Որինակի համար թվենք այն հարցերը, վոր անհրաժեշտ կլինի պարզել եքսկուրսիայի ժամանակ: Այդ հարցերը լրիվ չեն, դուք կարող եք, իհարկե, ավելացնել և փոփոխել համաձայն տեղական վալրի պայմանների:

1. Անասունների արտաքին տեսքը՝ մեծությունը, գույնը, ցեղը, չաղությունը:

2. Գոմը ցուրտ ե, թե տաք: Ի՞նչպես ե շինված նա: Ունի՞ նա արզուք բավարար չափով լուս և ոգ:

3. Խնամքը և կերակրելը: Կովի տակը մաքրում են, թե աղը կուտակվում և գոմի մեջ: Մաքրում են արդյոք կովը, լիրը են կերակրում և ջուր տալիս նրան: Ի՞նչպիսի ուտելիք են տալիս կովին և ի՞նչ չափով: Ուտելիքի համար կովի առաջ առանձին տեղ կա շինված, թե վոչ: Քանի անգամ են կթում որական: Կովից ստացված կաթը հաշվառքի լի լենթարկվում, թե վոչ: Ի՞նչքան կաթ և տալիս կովը որական և տարեկան: Կովն արդյոք ոգուտ և տալիս և ի՞նչքան: Կաթը մշակման և լիրթարկվում, թե վաճառվում և թարմ վիճակում: Յեթե թարմ վիճակում վաճառքի լի հանգում, ապա հեր են տանում ծախելու, իսկ յեթե մշակման և լիրթարկվում, ապա ի՞նչ և պատրաստվում նրանից և ստացված մթերքն հեր են տանում վաճառելու:

Իսկ յեթե հետազոտման նյութ և հանդիսանում բարեկարգ վիճակում գտնվող խորհրդալին մեծ տնտեսություն, ապա պետք և աշխատանքը տանել հետեւալ կարգով:

Գոմ. — Նրա մեծությունը, լուսամուտների մակարդակը, լուսամուտների մակարդակի և հատակի մակարդակի հարաբերությունը, ողա-

փոխությունը, ամեն մի կովի բաժին ընկած տարածությունը, հատակի կազմությունը և մեղք դուրս տանող խողովակները, գոմի բարեխառնությունը. ծանօթացեք խորհրդալին տնտեսության մեջ յեղող կովացեղերի առանձնահատկությունների հետ:

Խնամբը.—Որպական քանի անգամ և թնչպես են մաքրում կովերին: Որպական քանի անգամ են կերակրում և ջուր տալիս կովերին: Թնչպիսի կեր են տալիս նրանց և թնչպես են կազմում որպական սննդաբաժինը: Թնչպես են վորոշում կովերի կենդանի քաշը: Գրեցեք տարբեր կենդանի քաշ և տարբեր քանակությամբ կաթ տվող մի քանի կովերի որպական և տարբեկան տված կաթի քանակությունները և համեմատեցեք այդ տվյալները սովորական պարմաններում ապրող սովորական կովերի վերաբերմամբ ունեցած տվյալների հետ:

Թնչպիսի մշակման և յենթարկվում կաթը և մոր և վաճառքի հանդում:

Պահում, մեծացնում են արդյոք խորհրդալին տնտեսության մեջ հորթերին և թնչպես են կերակրում նրանց:

Ի՞նչ ազգեցություն ունի խորհրդալին տնտեսությունը ուալոնի տնտեսությունների վրա:

Եքսկուրսիալից վերադառնալիս վիրցրեք ձեզ հետ նմուշներ այն նյութերից, վոր տրվում և կովերին իրեն կեր:

Լաբորատորական աշխատանք:—Նկարեցեք գոմի հատակագիծ յերկու կովի համար: Նկարեցեք գոմի հատակագիծ 20 կովի համար: Առաջինը՝ սովորական, յերկրորդը՝ որինակելի տնտեսության համար:

Կերի նյութերը հետազոտելու ժամանակ ի նկատի ունեցրեք հետևյալը:

Կերի նյութերը բաժանվում են չորս տեսակի՝ կոշտ, խտացրած, հյութալի և կանաչ:

Կոշտ կամ մեծածավալ կերի նյութեր համարվում են չոր խոտը, ծղոտը, հարդի մղեղք և ալյն:

Խտացրած կեր, այսինքն ծավալով փոքր, բայց մեծ քանակությամբ սննդարար նյութեր պարունակող կեր համարվում են վարսակը, թեփը, քուապը կամ կոպտոնը, վոր ստացվում և սերմերից նրանց միջի յուղը հանելուց հետո:

Հյուրալի կեր համարվում են զանազան տեսակի արմատապտուղները և պալարատապտուղներն, որինակ, կտտոֆիլը, ճակնդեղը, տուրնեպսը, գաղարը և ալյն:

Կանաչ կեր համարվում են կանաչ խոտը, կանաչ առվուտը, կանաչ վիկը և ալյն:

Ալս բոլոր կերանլութերն ունեն տարբեր կազմություն և տարբեր սննդական արժեք: Ըստ կազմության կոշտ կերը պարունակում են մեջ մեծ քանակությամբ թաղանթանիւթ: Կանաչ և հյութալի կերանլութերն ունեն իրենց մեջ առատ չափով ջուր, բայց և պարունակում են իրենց մեջ առանձին տեսակի նյութեր, վորոնք կոչվում են վիտամիններ և առագին գեր են կատարում կենդանու սննդառության գործում: Խտացրած կերանլութերն ել հարուստ են սպիտակուցալին և ճարպալին նյութերով:

Կերանլութերի սննդարարությունը համեմատում են վարսակի սննդարարության հետ: Մեկ կիլոգրամ վարսակը համարվում է կերի միավոր:

Կերանլութերի հետևյալ քանակությունները կազմում են մեկ կերի միավոր:

1 կիլոգրամ վարսակ:

- | | | |
|-----|---|--|
| 1,3 | » | թեփ: |
| 0,8 | » | լավ կտավատի կամ արեածաղկի քուսպը: |
| 1,5 | » | կանեփի կամ շատ կեղե պարունակող արեածաղկի քուսպը: |
| 2,5 | » | լավ չոր խոտը: |
| 4 | » | գարնանացանի ծղոտը: |
| 6 | » | աշնանացանի ծղոտը: |
| 3,5 | » | լավ կարտոֆիլը: |
| 5 | » | ջրալից կարտոֆիլը: |
| 10 | » | կերի ճակնդեղը: |
| 7 | » | լավ կանաչ խոտը: |
| 10 | » | ճակնդեղի թերերը: |
| 25 | » | կարտոֆիլի մնացորդները: |

Ի նկատի ունենալով վերոհիշյալ տվյալները՝ իմացեք, թե ինչ նորմայով են կերակրում փոքրիկ տնտեսություններն իրենց կովերին և ինչ նորմայով՝ մեծ և բարեկարգ տնտեսությունները: Փոխեցեք մեկ կեր մի այլ կերով, բայց այնպես, վոր կերի միավորների թիվը մնա անփոփոխ:

Մանօրաւրյուն. — Կերանլութերը մեկը մյուսով փոխարինելու ժամանակ պետք է այնպես անել, վոր ամբողջ կերը բաղկացած չլինի կամ մեծավագալ և կամ խտացրած կերանլութերից: Եթե, որինակ, 9 կերի միավոր ստացող կովին կամենանք տալ միայն ծղոտ, այն ժամանակ պիտի տանք $6 \times 9 = 54$ կիլոգրամ ծղոտ, մի քանակություն, վոր կովը չի կարող ուտել, հետևապես և չի

կարող ստանալ անհրաժեշտ քանակությամբ սննդարար նյութերուցի դրանից, ծղոտի մեջ շատ քիչ են սպիտակուցալին նյութերը, վորոնք անհրաժեշտ են կյանքի և կաթի արտադրության տեսակետից իսկ յեթե տրվի միայն վարսակ, այդ դեպքում պիտի տրվի 9 կիլոգրամ վարսակ, վոր չի կարող լցնել կովի մեծածավալ ստամոքսը և լավ չի կարող մարսվել:

Հետազոտությունն ընդհանուր առմամբ ցուց կտա, վոր փոքրիկ տնտեսությունների մեջ կովերը փոքր են, ցածր և վատ են խնամքում: Պահպում են կամ ծածկի տակ և կամ ցուրտ և վատ գոմերում: Զենք մաքրվում, կանգնած են ակրի մեջ և աղբուժված են: Կերը տալիս են առանց վորոնե հաշվի: Կաթը հաշվառքի չի լենթարկվում և լավ չգիտեն, թե կովն ոգմետ ե տալիս, թե վնաս:

Այդպես չե մեծ և բարեկարգ տնտեսությունների մեջ:

Գոմն ալդաեղ ընդարձակ ե, լուսավոր, մաքուր և տաք (միջին թվով 8—10⁰): Թարմ ողի հոսանք ստանալու համար ունի ողափոխության հարմարություն: Կովերի տակը մաքրում են որական լերք անգամ և փոռում են նրանց սակ չոր փովածք: Կովերին մաքրում են ամեն որ: Այսպիսի պայմաններում կովերն իրենց լավ են զգում և տալիս են առաս կաթ: Ցածր բարեխառնության գեպքում կովերը մրսում են և կերի մեծ մասը գործադրվում ե իրեւ վառելանյութ՝ մարմնի տաքությունը պահպանելու համար: Կեղտոտ կովն իրեն շատ անհանդիստ ե զգում և այդ անդրադառնում ե նրա կաթի քանակության վրա: Ինչքան մաքուր լինի գոմը, ալքան մաքուր կլինի և այն տեղից գուրս տարվող կաթը:

Այժմ տեսնենք, թե ինչ պիտի հասկանալ նորմալ կերակրում ասելով:

Անսառւնի ընդունած կերակուրը գործադրվում ե նրա կլանքի պահպանման վրա (ջահել կենդանիների աճման, մեռած հյուսվածքները նորոգելու և ջերմություն առաջացնելու վրա, վոր անհրաժեշտ և մարմնի տաքությունը պահպանելու և շարժումների համար եներգիա առաջ բերելու համար): Բացի դրանից, կերը գործադրվում ե կաթի, իսկ չաղացնելու գեպքում՝ մսի առաջացման վրա: Այս իսկ պատճառով կերը լինում ե կամ կյանք պահպանող և կամ պրոցեսիվի: Զայետք ե մոռանալ, վոր կովը յերբեմն իր կերի մի մասը գործադրում ե և իր արգանդում աճող հորթի վրա:

Հարց ե առաջանում, մրգլուք բոլոր կովերին միատեսակ պիտի կերակրել, թե պիտի տարբերություններ գնել նրանց մեջ: Պարզ ե, վոր միատեսակ չպիտի կերակրել ինչքան մեծ ե կովի այսպես ասած:

կենդանի բար, ալսինքն ինչքան շծանը և կովը, ալնքան և շատ պիտի լինի նրա կյանքը պահպանող կերը:

Հետազոտությունները ցուց են տվել, վոր կենդանի քաշի ամեն մի հարյուր և քսան կիլոգրամի համար պետք է տալ կովին միջին թվով մեկ կերի միավոր: Ուրեմն, յեթե կովը կշռում է 420 կիլոգրամ, ապա նրա կյանքը պահպանելու համար պետք է տալ նրան 3½, կերի միավոր, ասել ե, յեթե չոր խոտով ենք կերակրում՝ պիտի տանք մոռավորապես 8,75 կիլոգրամ չոր խոտ, իսկ յեթե կենդանի քաշը 480 կիլոգրամ է, ապա պիտի տանք մոտ 4 կերի միավոր, ալսինքն 10 կիլոգրամ չոր խոտ:

Նույնը կարելի է ասել և պրոդուկտիվ կերի մասին: Ինչքան կովը շատ կաթ և տալիս, այնքան և շատ պիտի լինի կաթի պատրաստության վրա գործադրվող հում նույն կութը, ալսինքն այնքան շատ պիտի լինի պրոդուկտիվ կերը: Հետազոտությունները ցուց են տվել, վոր 2,5—3 լիտր կաթ պատրաստելու համար անհրաժեշտ և մեկ կերի միավոր: Ուրեմն, որական 12 լիտր կաթ տվող կովը պիտի ստանա պրոդուկտիվ կերի 4—5 միավոր: Այս գեպքում կյանքը պահպանող կերը պիտի լինի սովորաբար կոշա կեր (չոր խոտ, ծղոտ), իսկ պրոդուկտիվ կերը՝ ուժեղ կերանյութեր (թեփ, քուսպ և ալյն) և արմատապտուղները: Սակայն բոլոր գեպքերում պիտի ուշադրություն դարձնել այն հանդամանքի վրա, վոր կենդանին ստանա բավարար քանակությամբ սպիտակուցային նյութեր:

Մանօրություն.—Առատությամբ սպիտակուցային նյութեր կան քուսպի (արեածաղկի քուսպի մեջ 275 գրամ, կանեփի քուսպի մեջ՝ 271 գրամ, կտավատի քուսպի մեջ՝ 218 գրամ ամեն մի կերի միավորի մեջ), թեփի (130 գրամ), չոր առվույսի և վիկի (145 և 105 գրամ), թարմ վիկի և առվույտի (115 և 100 գրամ) մեջ: Ցեղը ընդհակառակը, շատ քիչ սպիտակուցային նյութեր ունեն իրենց մեջ ճակնդեղը (10 գրամ), հարդի մղեղը և ծղոտը (20 և 23 գրամ) և կարտոֆիլը (27 գրամ):

Սպիտակուցային նյութերի նշանակությունն ըմբռնելու համար պետք է հիշել, վոր միսը պարունակում է իր մեջ զգալի քանակությամբ սպիտակուցային նյութեր (մոտ 20%), սպիտակուցային նյութեր շատ կան նաև կաթի մեջ, իսկ սպիտակուցային նյութերը պատրաստվում են պարզ նյութերից միայն ըուսական որդանիզմները մարսում և լուրացնում են միայն այն պատրաստի սպիտակուցային նյութերը, վոր գտնվում են կերակրի մեջ, իսկ իրենք յեն կարող

պատրաստել ածխածնից և ճարպերից սպիտակուցալին նլութերը, վերջապես հորթի աճման վրա, կովի հղության վերջին լեռեք ամսում, գործագրվում ե որական 0,3 կերի միավոր, այն ևս ուժեղ կերանյութերով:

Այս բալորից տեսնում ենք, վոր նորմաներով կերակրելու դեղութում պետք ե ինկատի ունենալ հետեւալը.

Ամենից առաջ պետք ե վորոշել կովի կենդանի քաշը: Կենդանի քաշն իմանում են կամ պարզապես կշռելով կամ չափելով: Այնուհետև պիտի վորոշել կովի պրոդուկտիվությունը, այսինքն ինչքան ենա կաթտալիս որական և ապա այդ տվյալների վրա հաշվել, թե ինչքան պիտի կեր տալ նրան:

Որինակ, կովս ունի 480 կիլոգրամ կենդանի քաշ և տալիս ե որական 12 լիտր կաթ: Ի՞նչքան և թնչպիսի կեր պիտի տալ նրան:

480 կիլոգրամ կենդանի քաշ ունեցող կովի կանքի պահպանման համար անհրաժեշտ ե 4 կերի միավոր: Այդ կերի պահանջը բավարարած կլինենք, յեթե տանք նրան 10 կիլոգրամ լավ մարդագետնային չոր խոտ: 12 լիտր կաթի համար հարկավոր ե մոտավորապես 5 կերի միավոր պրոդուկտիվ կեր: Այս պահանջն ել բավարարած կլինենք, յեթե տանք նրան 6,5 կիլոգրամ թեփ և 1,5 կիլոգրամ կտավատի լավ քուսպի: Ցեֆե մենք տանք ավելի, քան պահանջվում ե, ավելին իղուր տեղը կկործի, իսկ յեթե ավելի քիչ տանք, նրա կաթի քանակությունը կքշանա:

Մեկ կերի միավորն անցնելով կովի որգանիզմի միջով՝ տալիս ե 2,5—3 լիտր կաթ: Մեկ կերի միավորը հավասար ե 1,3 կիլոգրամ թեփի և կամ 2,5 կիլոգրամ մարդագետնային լավ չոր խոտի: 1,3 կիլոգրամ թեփը 2,5 լիտր կաթի փոխարկելը բավական ձեռնտու գործ է: Թեփը մարդ չի կարող գործ ածել իրեն սնունդ, վորովհետև նրա մեջ գտնվող ահագին քանակությամբ թաղանթանյութը մեր մարմինը մարսել չի կարող, մինչդեռ կաթը հանդիսանում ե մեր լավագույն աննոդանյութերից մեկը:

6. ԿԱԹ ՑԵՎ ԿԱԹՆԱՅԻՆ ՄԹԵՐՔՆԵՐ

Ա. Կուրծը յիշ նրա կազմությունը.—Կաթնասուն կենդանիների եղերը կերակրում են իրենց ձագերին կարով: Կաթը, վոր պարունակում ե իր մեջ մատաղ կենդանու զարգացման համար բոլոր անհրաժեշտ սննդանյութերը, պատրաստվում ե եղ կենդանիների կաքնային զեղձերում:

Նգերն ունեն մի կամ մի քանի զուրդ ալղպիսի գեղձեր արտաքին անցքերով, Այդ գեղձերն իրենց պտուկներով միասին կոչվում են կուրծ. ձիռ և վորոնող կենդանիների կուրծը գտնվում է ազդրերի արանքում, իսկ խոզի և գիշատիչների կուրծերը դասավորված են փորի պատի լերկու կողմերում:

Կովի կուրծը մի միջնապատով բաժանվում է յերկու մասի, Այն մի կողմում գտնվում է յերկուական հատ կաթնալին գեղձ, կաթնալին գեղձն իր հերթին բաղկացած և առանձին-առանձին վողկուզածն գեղձիներից, Այս առանձին գեղձիների մեջ պատրաստված կաթը թափվում և կաթնապարին պարկը, վորից այնուհետև դուրս կաթի գալիս կաթնապար խողովակով:

Կուրծը բաղկացած և առանձին-առանձին փոքրիկ գեղձերից, վորոնց ներքին պատերի բջիջներից առաջանում է կաթը, Այդ բջիջները բազմանում են ահապին քանակությամբ և ապա քայլքալվում, Քայլքալումից առաջացած պրոդուկտը խառնվելով արլունից արտադրված ջրի հետ՝ տալիս է այն, ինչ վոր մենք անվանում ենք կաթ, Բջջների բաղմացման համար անհրաժեշտ նյութերը մատակարարում են ըստ այն զարկերակների արլունը, վոր խիտ ցանցի ձևով պատում են բոլոր կաթնալին գեղձիները:

Կովի կուրծը, ինչպես տեսանք, բաղկացած է չորս կաթնալին գեղձերից և չորս պատուկներից, Կթելու ժամանակ կաթը կաթնալին պարկից մղվում է կաթնատար խողովակով գեղի դուրս: Այդ պրոդուկտը, վոր պատրաստվում է կովի մարմնի մեջ մատադ հորթերին կերակրելու համար, ոգագործում և և մարդը՝ վորպես սննդանլութ:

Կատարենք այժմ մի շաբթ լարորատորիական աշխատանքներ պարզելու համար, թե ինչ նյութերից ե բաղկացած կաթը և թե ինչ առանձնահատկություններ ունի նա:

Բ. Կարի կազմուրյան նետազուսումը.—Այս աշխատանքի համար պատրաստեցեք մի բաժակ թարմ կաթ, մի բաժակ ինքն իրեն մերժած մածուն, թուլ քացախաթթու և կամ աղաթթու, գոլորշիացման թաս, միկրոսկոպ:

1. Համեմատեցեք թարմ և թթված կաթն իրար հետ: Տեսեք, միասնու և արդյոք թարմ կաթը կամ միասնու և թթված կաթը: Ի՞նչ է հավաքվում վորոշ ժամանակից հետո թարմ կաթի վերևի մասում: Դրեցեք ձեր դիտողությունները:

2. Ածեցեք քիմիական բաժակի մեջ մի քիչ ինքն իրեն մերժած մածուն և դանդաղ կերպով տաքացրեք: Ի՞նչ և տեղի ունենում արդ ժամանակի: Քանի մասի լե բաժանվում կաթը: Գրեցեք ձեր դիտողությունները:

3. Ածեցեք փորձանոթի մեջ մի քիչ թարմ կաթ և ավելացրեք նրա վրա մի քանի կաթիլ քացախաթթու և կամ թուլլ աղաթթու։ Տեսեք, թե ի՞նչ և տեղի ունենում։ Դրեցեք ձեր դիմուլությունները։

4. Պատրաստեցեք կաթի կաթիլց միկրոսկոպական պրեզրատ և դիտեցեք միկրոսկոպի տակ Նկարեցեք և նկարագրեցեք։

5. Ածեցեք 100 գրամ թարմ կաթ գոլորշիացման թասի մեջ, գոլորշիացրեք ջրալին բաղանիքի վրա և չորացրեք։ Հավաքեցեք ստացված պինդ մնացորդը, կշռեցեք և հաշվեցեք պինդ նյութի տոկոսը կաթի մեջ։

6. Ածեցեք տիգելի մեջ մի քիչ շիճուկ, գոլորշիացրեք և շիկացրեք ստացված պինդ մնացորդը, ի՞նչ և ստացվում։ Ի՞նչ եք կարծում, կմն արդյոք կաթի մեջ հանքային աղեր։

Աշխատեցեք պատասխանել այն հարցին, թե ի՞նչ բաղկացուցիչ յասերից և բաղկացած կաթը։

Գ. Թե ինչպես են իմանում կարի կեղծված լինելը։ Ցերբեմն շուշկալում վաճառքի յե հանգում լերեսը քաշած և կամ կեղծվուծ կաթ։ Կեղծման ամենատարածված լեզնակներ համարվում են՝ ջուր խառնելը, կարտոֆիլի և կամ ցորենի ալյուր խառնելը, վորպեսզի լերեսը քաշած և կամ ջուր խառնած կաթը թանձր լերեւա։ Ցերբեմն ել ածում են կաթի մեջ սողա, վորպեսզի կաթն իր քաղցրությունն ավելի լերկար ժամանակ կարողանա պահպանել։

1. Ածեցեք բաժակի մեջ մի քիչ կաթ, վրան ջուր ածեցեք և խառնեցեք հետը կարտոֆիլի ալյուր։ Ի՞նչպես հաստատել, վոր նրա մեջ ածված և կարտոֆիլի ալյուր։ Ածեցեք ստացված կաթի վրա մի քանի կաթիլ թթու։ Դրանից անմիջապես կաղեինը կմակարդի։ Քամեցեք կառքի միջոցով և ստացված հեղուկի վրա ավելացրեք մի քանի կաթիլ յոդ։ Ի՞նչ և առաջանում։ Նույնը կատարեցեք և մաքուր կաթի վրա։ Ի՞նչպես հաստատել վոր կաթի մեջ ածված և սողա։

2. Ածեցեք կաթի վրա մի քիչ սողա։ Այնուհետև վերցրեք մի գդալ ալդ կաթից, ածեցեք բաժակի մեջ և ավելացրեք նրա վրա մի գդալ 95°-ի սպիրտ։ Գրեցեք հետևանքը։

Նույնը կատարեցեք և մաքուր կաթի վրա։ Ի՞նչպես հաստատել վոր կաթի մեջ ածված և սողա։

Դ. Թե ինչպես են իմանում կարի բրիլեցման պահանջերը։ 1. Վերցրեք լերեք հատ 100 գրամանոց սրվակներ և ածեցեք նրանց մեջ 50-ական գրամ թարմ կաթ։ Սրվակներից մեկի բերանը ծածկեցեք բաժբակով, իսկ մյուսները, վորոնցից մեկի բերանը ծածկված և բամբակով, մլուսինը՝ բաց ե, լեռացրեք 15 րոպե։ Այնուհետև բոլոր լերե-

սրվակներն ել թողեք մնան հանգիստ վիճակում։ Մի որից հետո բերանը ծածկված սրվակը նորից լեռացրեք (առանց բամբակը հանելու)։ Դիտողության նլութ դարձրեք բոլոր լերեք սրվակները և գրեցեք հետանքները։

2. Ածեցեք լերկու բաժակի մեջ թարմ կաթ և գրեցեք մեկը 4°—6° բարեխառնության մեջ, իսկ մլուսը՝ 20° բարեխառնության մեջ։ Դիտողության նլութ դարձրեք հետևանքները։ Խոնչ տնտեսական բնույթ կրող հետեւություններ կարող եք անել դուք ձեր կատարած աշխատանքների հիման վրա։

Ցէ. Կարը վորպես սննդանյուր։ —Կաթը հանդիսանում ե նորածին կաթնասուն կենդանու միակ կերակուրը և պարունակում ե իր մեջ, խնչպես արգել ասել ենք, բոլոր անհրաժեշտ սննդանլութերը, թե որդանական և թե անորդանական։

Բոլոր կաթնասունների կաթը նույնը չե, նույնիսկ միենույն տեսակի կենդանիների կաթը շնորհիվ մի շարք պատճառների աարբեր և լինում։

Ընդհանուր առումով 100 կշռամաս կաթը պարունակում ե իր մեջ։

Չուր	+	+	+	+	+	+	86 ¹ 4%
Կաղեին	4 »
Ալբումին	1/2 »
Ջարով	4 »
Կաթնային շաքար	4/2 »
Հանքարին աղեր	+	‡	‡	+	+	.	3/4 »

Խնչպես այս աղլուսակը ցուց ե տալիս, կաթի ամենագլխավոր բաղկացուցիչ նլութը ջուրն ե, Խնչքան շատ ե ջուրը կաթի մեջ, այնքան կաթը ջրիկ ե լինում և այնքան ավելի քիչ սննդարար։

Կազեինը կամ ուրդ կաթի գլխավոր սննդարար նլութն ե, կազեինը սպիտակուցային նլութ ե, Քաղցր կաթի մեջ նա գտնվում և ուռած վիճակի մեջ, իսկ լերը կաթը թթվում ե, մակարդվում ե կաթնաթթվի աղլուցության տակ։ Մակարդումը տեղի լեռնենում և ամեն մի թթվի, նույնպես և խախացոցի մերանի աղլուցության տակ։

Ալբումինը նույնպես սպիտակուցային նլութ ե, բայց գտնվում է կաթի մեջ լուծված վիճակում։ Ալբումինը շատ նման է հավկթի սպիտակուցին և նրա նման լեռացնելու ժամանակ մակարդվում ե։ Ալբումինը սովորական կաթի մեջ շատ քիչ ե ($1/2\%$), բայց նոր ծնած կովի կաթի մեջ հասնում ե մինչև 10 տոկոսի։

Նարագ։ — Ջարովը կաթի մեջ գտնվում ե փոքրիկ միկրոսկոպական գնդիկների ձևով, վոր ցրված ե լինում թարմ կաթի մեջ համաշափ

կերպով։ Ճարպի քանակությունը կտթի մեջ կազմում է 2⁰/0—7⁰/0, իեր-
բեմ ել ավելի։ Ճարպալին գնդիկները կաթի մեջ սովորաբար լինում
են լեռք տեսակ. փոքր, միջակ և մեծ։ Կաթի ճարպի մեջ կան մինչև
10 զանազան տեսակի ճարպեր, վորոնցից 5-ը լուծվում են ջրի մեջ
և ցնդական են, իսկ 5-ը վոչ ցնդական են և վոչ ել լուծվում են ջրի
մեջ։ Խոշոր ճարպալին գնդիկները պարունակում են իրենց մեջ փա-
փուկ, հոտավետ և համեղ ճարպեր, իսկ փոքրիկները՝ ավելի պինդ և
քիչ համեղ ճարպեր։ Այս կամ այն տեսակի գնդիկները ունենալը կախ-
ված է թե կովի ընդունած կերանյութերից, թե կովի ցեղից և թե
մինչև անդամ կովի անհատական առանձնահատկություններից։

Կարնային շաբաթն ածխաջրատ ե և իր առանձնահատկությունն-
ներով շատ նման և սովորական ճակնդեղի շաքարին։ Տաք տեղում
կաթնային շաքարը կաթնաթթվային խմորման բակտերիաների ազդե-
ցության տակ փոխարկվում ե կաթնաթթվի։ Կաթնաթթվից կաթը
թթվում ե, վորից կազերնը մակարդվում ե և կաթը մեր և գալիս։

Խմբուման ազդեցության տակ կաթնային շաքարը կարող է փո-
խարկվել սպիրոտի։

Հանեմային աղեր։—Յեթե պլատինի և կամ հախճապակլա տիգելի-
յեջ գոլորշիացնենք մի քիչ կաթ և չոր մնացորդը շիկացնենք, կստա-
նանք մի թիջ մոխիր, առա հենց ալր մոխիրն ե կաթի մեջ յեղած հան-
քալին նյութերը։ Կաթը պարունակում է իր մեջ աճող որգանիզմի
անհրաժեշտ ֆուֆորի, կալցիումի, լերկաթի, մագնեզիումի աղեր, կե-
րակրի աղ և այլն։ Աղերի պակասը կամ անբավարար քանակությունը
շատ վատ ազդեցություն ունի հորթի աճման և առանձնապես նրա
վոսկըների զարգացման վրա։

Կաթի կազմության վրա մեծ ազդեցություն ունի կերը, ինչքան-
լավ լինի կերը, այնքան և շատ ու թանձր կլինի կաթը։ Վատ կերի-
դեպքում կաթը թե քիչ և լինում և թե ջրալի։ Հյութալի կերանյուու-
թերը, վորոնք պարունակում են իրենց մեջ առատ քանակությամբ
սպիտակուցային նյութեր, ավելացնում են ճարպերի քանակը։ Չոր
խոտի կամ կանաչ խոտի կազմությունը նույնպես մեծ ազդեցությունը
ունի կաթի համի և կազմության վրա։

Զ. Կարի հետագա մօսկումը։—Թարմ կաթը մի միասեռ հեղուկ է,
վորի մեջ բոլոր բաղկացուցիչ նյութերը տարածված են համաչափ կեր-
պով։ Բայց հենց վոր կաթը մնում է վորոշ ժամանակ, նրա մեջ սկսում
են զանազան տեսակի գործողություններ։ Ամենից առաջ յուղային
գնդիկներն իրենց թթվեռության պատճառով բարձրանում են վեր և
հավաքվելով այնտեղ՝ կազմում են մի թանձր շերա, վոր կոչվում է

աեր, Յուլը կարելի է անջատել կաթից և արհեստական կերպով սեպարատորների (սերպատների) միջոցով։ Սեպարատորը մի մեքենա է, վոր գործում և կենտրոնախուզ ուժի շնորհիվ։ Նրա կենտրոնական մասում գտնվում է մի թմբուկ, վոր մի բոպելում պտտվում ե իր առանցքի շուրջը 9000 անգամ և դրա շնորհիվ բաժանում թեթև սերը մնացած կաթից։

Յերբ կաթը մնում է յերկար ժամանակ, այդ դեպքում կաթնաթթվալին խմորումն առաջ բերող բակտերիաները կաթնային շաքարը փոխարկում են կաթնաթթվի, վերջինիս աղղեցության տակ կազեինը մակարդվում և և առաջ բերում մածուն (ռուսական)։

Սերը մնալով թթվում ե և առաջ բերում քրու սեր։

Թես սերի և թե թթու սերի մեջ յուղալին կաթիլիկները գտնվում են մեկը մլուսից անջատ վիճակում։ Հարելու ժամանակ այդ կաթիլիկները միանում են միմյանց հետ և տալիս յուղի մեծ գնդեր։ Կովի յուղը համարվում ե ամենասննդարար և ամենադյուրամարս յուղը։

Հաճախ թարմ կաթից պատրաստում են պանիր։ Պանիրի հիմնական զանգվածը կազմում է կազեինը։ Պանիրի պատրաստման ժամանակ կաթը մակարդում են հորթի խախացոցից ստացված խախացոցին ֆերմենտի միջոցով։

Մի մաս խախացոցալին ֆերմենտը կարող է մակարդել մինչև հաղար մաս կաթ։ Այդ ֆերմենտի միջոցով տեղի ունեցող մակարդումն այնքան արագ և կատարվում, վոր մակարդվող կազեինը իր մեջ է վերցնում ամբողջ յուղը և կաթնային շաքարի ու հանքային աղերի մի մասը։

Ստացված շորն այնուհետև վեր են ածում զանազան ձեմի ու մեծության կտորների, ապա ճնշում են, աղում և յենթարկում այս կամ այն տեսակի բակտերիաների աղղեցության տակ առաջացող խմորման գործողությունների։

Շնորհիվ խմորման զանազան ձեռքի և մշակման զանազան յեղանակների՝ ստացվում են զանազան տեսակի պանիրներ։ Պանիրը համարվում ե շատ սննդարար կենսամթերք։

Ե. Կոլթեսուրյունների դեմք կարնասենեսու բյան մեջ.—Անասուններին խնամելու և կերակրելու գործը բարելավելու համար ձեռք առնվելիք միջոցները շատ վեր են փոքրիկ գուռզական տնտեսությունների ուժերից։ Անհրաժեշտ ե ունենալ փորձված կաթնատնտես, վոր շարունակ հսկողություն ունենա անսասունների վրա և տա ամեն անգամ անհրաժեշտ ցուցմունքներ։ Հարկավոր ե հաշվել և կազմել կանոնավոր կերարաժիններ, վորոշել կաթի հատկությունը և այլն։ Այս բո-

լորն անշուշտ չեն կարող անել անհատական տնտեսությունները, բայց մեծ հաջողությամբ կարող են կազմակերպել կոլեկտիվ տնտեսությունները:

Պակաս կարեոր նշանակություն չունի կաթնատնտեսության մեջ և կաթնամթերքների վաճառման և մշակման գործը, մանավանդ այն վայրերում, ուր կաթը պետք է լենթարկվի նախնական մշակման Յեթե շուկան մոտ ե, թարմ կաթը կարող են, իհարկե, իրենք փոքրիկ տնտեսությունները վաճառքի հանել, բայց լերբ շուկան հեռու լե, և կաթը պետք է մշակման լենթարկեն և պատրաստեն նրանից լուղ ու պանիր, այդ արդեն հաջողությամբ կարող են կատարել միայն կազմակերպված կոլտնտեսությունները, վորովհետև այդ դեպքում անհրաժեշտ ե ունենալ վոչ միայն մեծ քանակությամբ կաթ, այլև թանգարժեք սարքավորում ունեցող գործարաններ։ Կոլտնտեսությունները դնելով կաթնատնտեսությունը ռացիոնալ հիմունքների վրա՝ միաժամանակ զարկ կտան և տռասարակ անսանապահության զարգացման։

7. ՄԻՍԼ ՑԵՎ ՄՍԱՅԻՆ ՄԹԵՐՔՆԵՐԸ

Միսլ թե իր կազմության և թե իր սննդարարության և դյուրամարսության պատճառով համարվում ե ամենաարժեքավոր սննդամթերքներից մեկը։ Նա պարունակում է իր մեջ առատ քանակությամբ սպիտակուցային նյութեր և ճարպեր. բացի դրանից, նրա մեջ կան և գրգռուչ ազդեցություն ունեցող մի քանի նյութեր։ Փորձերը ցուցից են տվել, վոր տավարի միսլ պարունակում ե իր մեջ $18-20\%$ սպիտակուցային նյութեր, $3-20\%$ ճարպ, լյարդի մեջ կա և մոտավորապես $3,40\%$ ածխաջրատ—զյիկլոպեն կամ ինչպես ասում են, կենդանական ուլա. վերջինս շնորհիվ ե, վոր լյարդն ունենում ե վորոշ չափով քաղցրավուն համ։ Մսի պահանջը, մանավանդը քաղցրաքներում տարեցարի աճում ե. աճում ե նաև նրա համաշխարհային գործածության ընդհանուր քանակությունը։

Բայց ի՞նչ ե ներկայացնում միսլ։ Այս հարցը պարզելու համար անհրաժեշտ ե լինել մսի խանություն, մանավանդ այն ժամանակ, լերը միսլ բերում են խանութը և սկսում կտրտել մասերի։

Ալդաեղ անհրաժեշտ ե պարզել մոտավորապես հետեւալ հարցերը։

Ի՞նչպես են կտրտում միսլ, ի՞նչպիսի մասերի լեն բաժանում, ի՞նչպի են տարբերվում մարմնի զանազան մասերի մասերն իրարից, ի՞նչքան մկաններ, ճարպ և վոսկըներ են գտնվում մարմնի զանազան մասերի մեջ։ Ի՞նչ տեսակի մսեր են ստացվում, ի՞նչպես են գնահատ-

զում մարմնի զանազան մասերի մսերը։ Դիտել մսի խոշոր կտորների լայնությամբ կտրվածքները և լեռներ հանել նրանց մեջ լեղած տարբերությունը հատիկավորության առաջարկություն։

Հետազոտեցեք այնուհետև միսը դպրոցում։ Վորոշեցեք, թե մսի մեջ ինչքան ջուր և չոր նյութ կա։ Այդ իմանալու համար վերցրեք 100 գրամ թարմ միս և չորացրեք։ Չորացնելուց հետո կշռեցեք չոր նյութը և գտեք ջրի և չոր նյութի տոկոսները մսի մեջ։

Ստացված չոր նյութը շիկացրեք և իմացեք նրա մեջ լեղած որդանական և հանգալին նյութերի տոկոսները։ Ի՞նչ փոփոխության են նենթարկվում միսը լեփելու ժամանակ։ Այս վերջին հարցը պարզելու համար կարող եք մի կտոր միս լեփել դպրոցում և կամ դիտել մսի չեփելը տանը։

Ա. Մսի բաժանումը։ —Կենդանու մարմնի զանազան մասերի միսը միենառուն համը և սննդարարությունը չունի։ Այս իսկ պատճառով կենդանու մարմնինը բաժանում են մասերի կամ սպանդանոցում և կամ մսի խանութում։ Սովորաբար բաժանում են լերեք մասի. առջեի մասի, կրծքի մասի և լեռեի մասի։ Առջեի մասի մեջ մտնում են պարանոցը, մեջքի չորս վողը, առջեի վոտները մինչև ծնկի հողը և կողերի մի մասը։ Կրծքի մասի մեջ մտնում են կրծոսկը և կողերի ներքերը, իսկ մարմնի մնացած մասը կազմում ե արգեն լեռեի մասը։ Ամենալավ միսը գտնվում է մարմնի լեռեի մասում։

Բ. Մսի հատկությունը։ —Մսի հատկությունը, սննդարարությունը և համը կախված է կենդանու տեսակից (խոշոր լեղջուրավոր անասուն, խոզ, վոչխար, ալծ և ալլն), ցեղից, կենդանու տարիքից և սեռից, կերից և չաղությունից, մորթելու լեղանակից և միսը պատրաստելու լեղանակից։

Կենդանու ինչ ցեղից լինելն ահագին ազդեցություն ունի մսի հատկության վրա։ Եթության մեջ ամենալավ հատկությունը ունեցող միսը տալիս է զրղղական ցեղը, այնուհետև լերկըրդ տեղը բռնում է կալմկականը, իսկ լերըրդ տեղը՝ ուկրայինականը։

Ի՞նչ վերաբերում է տարիքին, ապա պետք է ասել, վոր լավագույն միսը տալիս են միանգամայն զարգացած և առողջ կենդանիները։ Ամենահամեղ միսը տալիս են լեզները 5—8 տարեկան հասակում, իսկ խոզերը 6—18 ամսական հասակում։

Կերը նույնպես մեծ ազդեցություն ունի մսի համի վրա։ Այսպես որինակ, լեգիտացորենի կերով չաղացրած խոզերը տալիս են փափուկ միս և ճարպ։

Միսը պետք է պահել չոր և հող տեղ։

կենդանուց ստացված ճարպը պարունակում ե իր մեջ ճարպ-ջուր, թաղանթ, Ալդ մասերը աղեցանցի մեջ գտնվում են հետևյալ փոխարաբերությամբ. ջուր՝ $4,890/0$, թաղանթ՝ $0,80/0$ և ճարպ՝ $94,310/0$.

Միջն տեսակի միսը պարունակում ե իր մեջ

Սպիտակուցալին նյութեր $20,10/0$

Ճարպեր $7,40/0$

Գ. Անասունների մորթեր.—Անասունները մորթում են մեծ մասմբ սպանդանոցներում. Սպանդանոցներ կան Միության մեջ բոլոր մեծ քաղաքներում.

Այն ըրիկայում սպանդանոցները կառուցված են անտանաբուծական վալրերում և այնտեղից միսը պատրաստի վիճակում վագոն-սառցարաններում ուղարկվում ե գործածության վալրերը:

Անասունների մորթերու գործողությունը կանոնավոր հիմքերի վրա դնելը և բնակչության թարմ ու լավորակ միս մատակարարելը համարվում ե քաղաքային տնտեսության ամենակարևոր հարցերից մեզը: Սպանդանոցի կազմության և այնտեղ կատարվող գործողությունների հետ ծանոթանալու համար անհրաժեշտ է կազմակերպել եքսկուրսիա դեպի սպանդանոց և ցրտարան, վորտեղ պահվում ե միսը:

Սպանդանոցային կազմակերպության և այնտեղ կատարվող աշխատանքները հետազոտելու համար կազմված պլանի մեջ պիտի մտցնել հետևյալ հարցերը: Վերտեղ ե գտնվում սպանդանոցը: Ի՞նչպես են քշում անասուններին դեպի սպանդանոցի մորթերու տեղը: Ի՞նչպես են մորթում անասուններին, ի՞նչպես են մաշկում և ի՞նչպես են մշակում միսը:

Բացի մսից և մորթուց, մորթած անասունից սաանում են և արյուն, փորոտիք, գլուխ, վոտներ և ալյու Տեսեք, թե ի՞նչպես են մշակում ալյու բոլորը և ի՞նչպես են ոգագործում նրանց:

Նախքան միսը շուկա հանելը, հարկամավոր ե լենթարկել բժշկական քննության: Տեսեք, թե ի՞նչպես ե կազմակերպված ալյու քննությունը սպանդանոցում: Ի՞նչ են անում հիվանդու մսերը: Ի՞նչպիսի հիվանդություններ են հաճախ նկատվում: Ի՞նչպիսի հիվանդություններով կարող ե վարակվել մարդ մսի միջոցով:

Վերցրեք սպանդանոցից վարակված մոխ նմուշներ, դպրոց բերելուց հետո գրեք Փորմալինի $40/0$ -ային լուծութի մեջ և պատրաստեցեք հիվանդ մսից միկրոսկոպական պրեպարատներ:

Ուր և տարվում միսը սպանդանոցից:

Ցեթե քաղաքում կա ցրտարան, վորտեղ սառեցվում և պահվում ե միսը, ծանոթացեք նրա կազմության և այնտեղ կատարվող աշխատանքների հետ:

Դ. Մասմբերքների կոնսերվացումը.—Թարմ միսը շուտ փչացող թերք և և ամեն տեղ հնարյավորություն չկա պահել և գործածել այն թարմ վիճակում։ Միսը լերկար ժամանակ կարելի լե պահել կոնսերվի (պահածովի) վիճակում։ Կոնսերվացման համար կան հետեւալ լեզանակները. աղ դնել, սառեցնել, կոնսերվացնել տուփերի մեջ, ծուխ տալ, չըրացնել։

Աղ դնելը կոնսերվացման ամենապարզ ձևն ե. բայց ալդ ժամանակ միսը կորցնում ե իր սպիտակուցալին նկութերի ու աղերի մի մասը և արումատալին նկութերը։

Աղ դնելու համար անհրաժեշտ ե ունենալ չոր, մաքուր և հովտեղ (0°): Իբրև աման գործ են ածում կաղնու, հաճարենու, հացի և լորինու փայտից շինած տակառներ։ Աղ դնելու ժամանակ միսը կտրում են մասերի, ամեն մի կտորը մոտավորապես 4 կիլոգրամ քաշով (վուկորներ ունեցող կտորները 2—2½, կիլոգրամ քաշով): Միսը աղ են դնում լերներ լեղանակով՝ չոր, թաց և խառը լեղանակով։

Չոր լեղանակով աղ դնելու ժամանակ տակառի հատակին աղ են ածում և ապա մսի կտորների վրա աղ շաղ տալով՝ շարում են լարքարք։ Ամեն մի շարքի վրա շաղ են տալիս աղի և աղբորակի խառնուրդ և ապա տաքտեղ ու դափնինու տերևներ։ Մսի կտորներն ալդպես շարքշարք դարսելուց հետո փայտալա թակով ճնշում, սեղմում են, ապա մի որից հետո ավելացնում են մի շարք ևս և ծածկում տակառը։ Տակառի հատակին պետք և լինի տախտակի միջոցով ծածկվող մի անցք, վորպեսզի հարկավոր ժամանակը կարողանան ստուգել մսի դրությունը և թափեն առաջացած աղաջուրը։

Թաց լեղանակով միսն աղ են դնում թանձր աղաջրով։ Այս լեղանակով միսն ավելի շուտ և աղ դրվում, բայց կորցնում ե իրենից ել ավելի մեծ չափով սննդարար նկութեր։ Աղաջուրը պատրաստվում ե հետեւալ լեղանակով։ Ջուրն աղի հետ միասին լեռացնում են, ապա քամում են և աղաջուրը սառեցնում։ Թաց լեղանակով միսն աղ են դնում տակառների, ցեմենտից շինած փոսերի և այլ ամանների մեջ։ Այս լեղանակով միսն աղ ե ընդունում իր մեջ լերկուսից մինչև չըրս շաբաթվա ընթացքում։

Խառը լեղանակով աղ դնելու ժամանակ միսը նախ աղ են դնում չոր լեղանակով, ապա լերկու շաբաթից հետո ածում են տակառի անցքից թանձր աղաջուր։

Աղ դնելու ալդ լեղանակներն առհասարակ շատ մեծ ժամանակ են պահանջում։ Ալդ գործողությունն արագացնելու համար լերքեմն դիմում են լինլակի լեղանակին։ Դրա համար մսի կտորների մեջ

մտցնում են ասեղներ, վորոնց ծալրերին հազցրած են խողովակներ, վորոնք միացվում են աղաջրով լցված ամանների հետ. Յեթև աղաջուր պարունակող այդ ամանները վորոշ բարձրության վրա (10 մետր) են լինում, այդ դեպքում աղաջուրը բնական ճնշման աղդեցության տակ խողովակով և ասեղի միջով անցնելով, ծծվում է մսի կտորի մեջ. Ներծծման այդ գործողությունը կարելի է կատարել և նասոսի միջոցով: Ամեն մի կտորի վրա խփում են լերկու կամ լերեք ասեղ: Այս լեղանակով աղ գնելուց հետո միսը դարձալ պետք է դարսել աղաջուր պարունակող ամանների մեջ:

Այդ գործողությունը կատարում են և Մորգանի լեղանակով: Դրա համար ածում են պատրաստի աղաջուրը նոր մորթած լեզան սրտի մեջ վորոշ ճնշման տակ: Մրտից աղաջուրը հրելով արյունը տարածվում և մարմնի մեջ և թափանցում մարմնի բոլոր խորշերը: Այս լեղանակով միսն աղ է ընդունում իր մեջ տասը բոպելի ընթացքում:

Թիթեղլա տուփերի մեջ մսալին կոնսերվների (պահածոների) ձևով պատրաստվում են զանազան տեսակի կերակուրներ: Այդ կերակուրներն ածում են թիթեղլա տուփերի մեջ, ապա հատուկ մեքենաների միջոցով ծածկում են տուփերի բերանները կափարիչներով և դնում կաթսաների մեջ, վորտեղ ճնշման տակ լեռացնում են 60 բոպե շարունակ 100° և 40 բոպե ել 106° բարեխառնության մեջ:

Մորից պատրաստում են յերեխ, վորի վրա գործազրվում և մսի մի զգալի քանակություն:

8. ԿԱԹՆԱՑԻՆ ԵՅՎ ՄՍԱՑԻՆ ԱՆԱՄՆԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՌԱՑՈՒՆԵՐԸ ՄԻՌԻԹՅԱՆ ՄԵԶ

Միության բոլոր ռայոններում անասունները միատեսակ չեն: Հյուսիսարևելլան, հյուսիսալին և մասամբ միջին նահանգներում անասունները փոքր են, բայց տալիս են բարձրար քանակությամբ կաթ: Մի քանի տեղերում, ուր կան լավ արոտատեղիր և անասունները լավորակ խոտ են ուտում, առաջացել են արդեն ավելի խոշոր և լավ կաթնատու ցեղեր, որինակ, խոլմոգորսկի, լարոսլավի և այլ ցեղերը:

Վոչ սևահողալին շրջանում անասնապահությունը զարգանում է գլխավորապես կաթնատավության ուղիով: Պրան նպաստում են վոչ միայն բնական պարմանները, այլ և խոշոր արդյունաբերական կենտրոնների մոտիկությունը, վորոնք սպառում են կաթնամթերքները: Հարավ-արևելքը և Ռէքրայինան ունեն գլխավորապես աշխատա-

վոր և մսացու ցեղեր, վորոնց մեջ դրդական և կալմկական ցեղերը տալիս են լավագուն միսը:

Միջին սեահողալին նահանգներում և Վոլգայի միջին շրջանում, վորտեղ հացահատիկալին կուլտուրան հետզհետե զարգանում ե, անապունների թիվը գնալով քչանում ե:

Ռուսովիք շրջանը և Հյուսիսալին կովկասը հանդիսանում են մայրաքաղաքների մսալին շուկաներին միս մատակարարողները:

Ալստեղ պետք ե հիշենք և Արևմտյան Սիբիրը, վորտեղ լուղադրոծությունը խիստ կերպով զարգանում ե: 1909 թվին Սիբիրը տվել է 5700 տոնն լուղ, Այդ լուղի մեծ մասն արտահանվել ե արտասահման. Պատերազմի ժամանակ լուղի արտահանումը դադարել ե, բայց քաղաքացիական պատերազմից հետո նորից սկսել ե հետզհետե զարգանալ:

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ


1. Միության մեջ բնակչությունը բավարար չափով ապահովված չե կենդանական ծագումն ունեցող սննդամթերքներով՝ մսով և կաթով։ Արգունաբերության և գյուղատնտեսության բնագավառներում ուժեղ կերպով զարգացող ինդուստրիալիզացիան պահանջում է աշխատավորներից ավելի մեծ եներգիա, ավելի մեծ շարժունություն, իսկ սրանք իրենց իրենց հերթին պահանջում են ավելի ուժեղ և լավ սնունդ:

2. Բավարար քանակությամբ կենդանական ծագումն ունեցող սննդամթերքներ ստանալու համար անհրաժեշտ ե անասնապահությունը դնել ուցիոնալ հիմունքների վրա։ Անհրաժեշտ ե լավացնել թե կաթնատու և թե մսացու անասունների ցեղերը։ Անհրաժեշտ ե կենդանիների խնամքը և կերակրելու գործը կանոնավորել ախպես, ինչպես այդ պահանջում ե ուացիոնալ դնաեսությունը։

3. Անասնապահությունը լավացնելու գործը վեր է առանձին-առանձին տնտեսությունների ուժից։ Յերկու կամ լերեք կով ունեցող գյուղական տնտեսությունները չեն կարող ուացիոնալ հիմունքների վրա դրվել։ Հարկավոր ե կազմել կուեկտիվ տնտեսություններ։ Միայն այսպիսի տնտեսությունների միջոցով կարելի լի բարձրացնել անասնապահությունը և դնել կանոնավոր հիմունքների վրա։

ՄԱՍՆ ՑԵՐԿՐՈՐԴ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՆՍԻՖԻԿԱՑԻԱՆ



ԿԵՐԻ ՀԱՐՑԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԱՆ ՄԵԶ ԹԵՄԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԱԳԾՈՒՄԸ

Սոցիալիստական շինարարության հիմնական ուղիներն են՝ յերկրի ինդուստրացումը և նրա հետ կապված գյուղանտեսության ինտենսիֆիկացիան և կոլեկտիվացումը։

Շատ ռայոնների համար գյուղատնտեսության ինտենսիֆիկացիայի հերթական խնդիր ե հանդիսանում գյուղատնտեսությանը տալ անասնապահական ուղղությունն կերակրելով անասուններին եժան բուսական կերպվ, տնտեսությունն ստանում ե ավելի արժեքավոր մթերքներ՝ կաթնային, մսային և այլ մթերքներ։

Գյուղատնտեսությանը անասնապահական ուղղություն տալու համար անհրաժեշտ ե ամենից առաջ լուծել կերի հարցը։

Ա. Կերը զյուղատնտեսության նիմքն ե. — Նախորդ թեման մշակելու ժամանակ դուք տեսաք, վոր ընտանի կենդանիներն արտադրում են սննդամթերքներ։ Այժմ մենք պիտի զբավենք անասունների կերի աղբյուրների հետազոտությամբ։ Պետք է աշխատենք պարզել, թե վորտեղից ե սաացվում կենդանիների կերը և թե ինչպես կարելի յե ավելացնել նրա քանակությունը գյուղական տնտեսության մեջ։

Անասնապահության զարգացումը, այսինքն անասունների քանակությունն ավելացնել և լավացնել նրանց հատկությունը, հսկայական նշանակություն ունի գյուղական տնտեսության բարձրացման գործում։ Բայց անասնապահության զարգացման համար անհրաժեշտ, վոր տնտեսության մեջ ավելանա անասունների կերի քանակությունը։ Գյուղական տնտեսությունները շարունակ առանձին պակասությունից Պատահում են տարիներ, վոր կերի պակասությունից կենդանիներն սկսում են կոտորվել։ Սակայն կան յեղանակներ, վորոնց միջոցով կարելի յե ավելացնել կենդանիների կերի քանակությունը և մենք պետք ե ծանոթանանք այդ յեղանակների հետ։

Պետք ե իմանալ, վոր անասունների կերը — դա ամբողջ տնտեսության հիմքն ե. «Կերի հարցի» բարեհաջող լուծումը, այսինքն գյու-

զական անտեսության ապահովումը կերով, անհրաժեշտ պայման և
Միության գյուղատնտեսության զարգացման համար:

Բ. Ինչով և կերակրում անասուններին տեղական բնակչությունը.—
Կերի հարցին վերաբերող թեման մենք կսկսնք մի փոքրիկ նախնա-
կան հետազոտությամբ։ Պարզեցեք, թե ի՞նչով և կերակրում տեղական
բնակչությունն իր անասուններին յեզ վո՞րենից և ստանում նա աներա-
ծես կերը։ Հավաքեցեք տեղեկություններ ձեր ծնողներից, հարևաննե-
րից և ծանոթներից։ Յանկալի լե, վոր պատասխանեք հետևյալ
հարցերին։

1. Ինչպէս են կերակրում անասուններին ձմեռը և վժրաեղից են
ստանում կերը։

2. Ինչպէս են կերակրում անասուններին ամառը, արմտ են հա-
նում արդյոք և վժրտեղ են հանում։

3. Ունի՞ արդյոք տնտեսությունն իր սեփական կերի աղբյուր-
ները. Վժրտեղ են գտնվում այդ աղբյուրները և ի՞նչ են ներկայացնում
նրանք (մարգագետին, գաշտ և այլն)։

Գ. Թեմայի վերաբերյալ աշխատանքի նախագծումը.—Նախնական
հետազոտությունը կտա ձեզ անհրաժեշտ տեղեկություններ անասուն-
ներին արվող տեղական կերանյութերի մասին։ Քննելով ամբողջ լույս-
քակի կողմից հավաքված նյութերը՝ դուք գաղափար կկազմեք նաև
կերանյութերի տեղական աղբյուրների մասին (մարգագետին, գաշտ
և այլն)։

Ալժմ դուք կարող եք արգեն զիմել թեմայի հիմնական աշխա-
տանքի նախագծման։ Դուք պետք ե ծանոթանաք անասունների կե-
րանյութերի աղբյուրների, այն ե՝ արոտի, մարգագետնի, ճարակա-
խոտերի մշակույթների հետ։ Վորոշեցեք ձեր դասատվի հետ միասին
թե դեպի մեր և լինը կարող եք եքսկուրսիա կազմակերպել։

Բացի դրանից, անհրաժեշտ ե կազմակերպել գլորոցական հողա-
մասի աշխատանքը։ առանձնապես հանձնարարելի լե փորձեր կատա-
րել ճարակաբույսերի մշակույթների վրա (խոտեր, արմատապտուղներ)։
Այդ փորձերը չպետք ե ուշացնել, դրա համար ել կերանյութերի աղ-
բյուրների հետ ծանոթանալը պետք ե սկսել հենց ճարակաբույսերի
մշակույթներից։ Մարգագետինը համեմատաբար ավելի դանդաղ ե
զարգանում։ դեպի մարգագետինը կարող եք եքսկուրսիա կազմակեր-
պել ավելի ուշ (մայիսի վերջերին կամ հունիսի սկզբներին)։

Այսպիսով թեմայի վերաբերյալ աշխատանքների նախագծումը
կարող ե լինել ալսպես։

1. Ծանոթանալ մշակովի ճարակաբույսերի հետ (աշխատանք դպրոցական հողամասում):

2. Արոտի հետազոտումը—եքսկուրսիա և նրան հաջորդող հավաքված նյութի մշակումն:

3. Մարդագետնի հետազոտումը (եքսկուրսիա):

4. Ընդհանուր հետեւթյուններ թեմայի ամբողջ նյութի վերաբերմամբ (զրուց դասատվի հետ):

5. Ամառային ինքնուրույն աշխատանքներ:

Ինքնին հասկանալի լե, վոր ալս նախագիծը կարող և փոփոխության յենթարկել համաձայն տեղական պայմանների:

ԳԼՈՒԽ ԱԹԵԶԻՆ

ՃԱՐԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԸ

1. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄԸ

Ճարակաբույսերի մշակույթների վրա գիտողություններ ու փորձներ կատարելու համար անհրաժեշտ ե ունենալ դպրոցին կից բազմադաշտական սիստեմով բաժանված մի փոքրիկ տարածություն և ճարակախոտերի մի կոլեկցիոն հողամաս:

Բազմադաշտական սիստեմով բաժանված տարածության համար պետք ե ընտրվի տեղական պայմաններին միանվածալին հարմարող ցանքսաշրջանառություն: Ցանքսաշրջանառության մեջ պետք ե մըտնեն և ճարակաբույսերի մշակույթներ (խոտեր, արմատապտուղներ): Վորովինետև ցանքսաշրջանառությունը տեղի լե ունենալու մի քանի տարիների ընթացքում, դրա համար ել պետք ե նրա ընտրությունը կատարվի մտածված կերպով և գլուղատնտեսի խորհրդով:

Կոլեկցիոն հողամասի վրա պետք ե ցանվի ամենաարժեքավոր ճարակախոտերը: Ալդ հողամասը պետք ե բաժանել առանձին-առանձին մարզերի: Ամեն մի մարզ պետք ե ունենա մոռուավորապես 1×1 մետր կամ 1×2 մետր տարածություն: Հողամասի վրա կարող են ցանվել և մարդագետնային խոտեր, բերված եքսկուրսիալի ժամանակ մարդագետիններից: Մարզերի թիվը հողամասի մեջ պետք ե լինի 10—20: Ճարակախոտերից շատերի սերմերը կարող են աշակերտներն իրենք հավաքել ամառը վայրի բոււսերից, իսկ մնացածները պետք ե ձեռք բերեք գլուղատնտեսի միջոցով:

2. ԳԱՂԱՓԱՐ ՃԱՐԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՅԵՎ ԱՐՄԱՏԱՎՏՈՒՂՆԵՐԻ ՍԵՐՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Յանից առաջ ուշադրությամբ դիմեցեք յեվ նկարեցեք ճարակախոտերի յեվ արմատապտուղների սերմերը: (Դրա համար լավ կինի ունենալ խոշորացուց ապակի): Ուշադրություն դարձրեք սերմերի մե-

հութեան, ձեր և գուլնի վրա: Սովորեցեք զանազան տեսակի բուլսերի սերմերը տարբերել միմյանցից: Խառնեցեք զանազան տեսակի սերմեր միմյանց հետ և աշխատեցեք կրկին բաժանել նրանց միմյանցից:

Սերմերի արտաքին տեսքից կարելի լի վորոշ չափով գաղափար կազմել նրանց հատկության մասին: Ալսպես, որինակ, կարմիր առվոլուտի թարմ և լավորակ սերմերը պետք ե լինեն փալլուն և մանիշակի կամ դեղին գուլնի: Եթե առվոլուտի սերմերի մեջ լինեն անփալլ կուչկչատած և կարմրաշեկ գուլնի սերմեր, ալդ արդեն նշան ե, վոր նրանք արդեն փչացած են և անպետք են ցանքի համար: Սակայն սերմերի հատկության մասին վերջնական կարծիք կարելի լի կազմել միայն նրանց մշակությունն ու մաքրությունը վորոշելուց հետո:

Կշռեցեք դպրոցական հողամասի ցանքի համար անհրաժեշտ քանակությամբ սերմերը: Նրանց քանակությունը վորոշելու համար ինկատի ունեցեց հեկտարի համար ընդունված հետեւալ նորմաները.

Կարմիր առվոլուտ	13	Կիրոգրամ	Յերկուուը	միանույն
Տիմոֆեյեվի խոտ	5,5			տարածության վրա
Ճարակաճակնդեղ	16—25			ցանելու դեպքում:
Ճարակագազազար	4—6			
Գոնդեղ	4—6			
Տուրնեպս	6			

3. ՀԱՐԱԿԱԲՈՒՑՍԵՐԻ ՑԱՆՔԸ ՑԵՎ ՆՐԱՆՑ ՎՐԱ ԿԱՏԱՐՎԵԼԻՇ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միության հուսափալին և կենտրոնական մտաերում հիմնական ճարակաբուցեր են հանդիսանում կարմիր առվոլուտը և տիմոֆեյեվի խոտը: Ալդ բուցերի հետ արժե ծանոթանալ մոտիկից:

Ա. Ցանեցեք կարմիր առվոլուտը տիմոֆեյեվի խոտի հետ միասին յեկ դիտողուրյան նյուր գարձերեկ երանց զարգացումը: Առվոլուտի և տիմոֆեյեվի խոտի ցանքը կատարում են այն գաշտերի վրա, վորտեղ արդեն ցանքած և հաճար կամ վարսակ: Ալլապես գաշտը ցանքի տուաջին տարին վոչ մի արդյունք չեր տա, վորովհետև բազմամյա ճարակաբուցերն առաջին տարին չեն ոգտագործվում տնտեսության մեջ (ինչժամանակակից պատասխանեցեք այս հարցին՝ դիտելով նրանց զարգացման ընթացքը): Ամառվա վերջին, լերը հիշյալ հացաբուլսերը հնձում և հեռացնում են գաշտից, ճարակաբուցերն ազատվում են ծածկութի գեր կատարող բուլսից և արագ կերպով զարգանում, ուժեղանում են:

Բ. Բացի առվոլուտից յեկ տիմոֆեյեվի խոտից, ցանեցեք յեկ այլ ճա-

րակախոսեր. որինակ, շվեդական առվուլտ, սողացող առվուլտ, լուցերն, սուզանիկ և ալին. Սրանց ցանքը կատարեցեք շարքերով կուեկ-ցիոն հողամասի մարգերի մեջ:



Նկ. 123. Սուզանիկը համարվում է Միության հարավային մասի չոր շրջանների համար ամենալավ հարակախոտերից մեկը:

Դ. Պարզեցեմ, թե ի՞նչպիսի ազդեցություն ե ունենաւմ խօսերի զարգման վրա զարնանային տափանումը.—Գարնան սկզբին, ձյունը հալվելուց հետո տափանեցեք լերկաթլա փոցիսերով անցած տարիին ցանած խոտերը: Այս տշխատանքն ստուգման լինթարկելու համար մի փոքրիկ տեղ պետք է պահեք առանց տափանելու: Վեր մասում են խոտերը արտադ կերպով աճում:

4. ՓՈՐՁԵՐ ՊԱՐՁԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԹԵ ԻՆՉ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՈՒՆԵՆՈՒՄ ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՑՈՒԹԵՐԸ ՃԱՐԱԿԱԲՈՒԹԵՐԸ ՍԵՐԻ ՎՐԱ

Պարզեցեմ, թե ի՞նչպիսի ազդեցություն են ունենաւմ նանքային պարտանյութերը հարակախութերի զարգացման յել բերքի վրա: Փորձի հա-

Շարքերը միմյանցից հեռու պիտի լինեն 20—25 սանտիմետրով:

Դ. Կատարեցեք ցանված խոտերի վրա սփառեմատիկ կերպով դիտողություններ և զրեցեք ձեր հուշատերում.—1. Ցերը և ինչպես են ցանվել սերմերը: 2. Ցերը են դուրս յեկել ծիկները: 3. Ցերը ե բացվել առաջին իսկական տերմիկը (ուշադրություն դարձրեք նրա ձեր վրա և համեմատեցեք նրան հաջորդող մյուս տերևների ձեր հետ): 4. Ցերը ե սկսում անել ցողունը: 5. Ցերը ե սկսում ծաղկումը: 6. Ցերը են հասունանում սերմերը:

Դիտողություններ կատարելուց հետո մի մոռացեք նկարել և հերբարիումի համար չորրացնել զարգացման ամեն մի աստիճանի համապատասխանող բնորոշ բույսեր:

մար լավ կլինի վերցնել այն հողամասը, ուր անցրած տարի ցանված ել լիդել առվույտ:

Արժեք ամենից առաջ գործածել իրը հանքային պարարտանյութ սովորական մոխիր (փայտի կամ ծղոտի): Մոխիրի մեջ կան կալիում և ֆոսֆոր, լերկու նուռթեր, վոր առանձին անհրաժեշտություն են ներկայացնում առվույտի համար: Պետք ե վերցնել չոր և վառարանից անմիջապես հանված մոխիր, գորովհետև անձրեի տակ մնացած մոխիրն այնքան ել արժեքավոր չե:

Մոխիրը մաղով անցկացրեք և վերցրեք նրանից ձեզ համար անհրաժեշտ քանակությունը. ինկատի ունեցեք, վոր ամեն մի քառ մետրի համար պետք ե 200 գրամ մոխիր: Այնուհետև շաղ տվեք մոխիրը հողամասի վրա համաչափ կերպով և աշխատեցրեք տէնպես անել, վոր քամին մոխիրը չտանի ալս ու այն կողմը:

Եթե հաջողվի ձեզ ձեռք բերել արհեստական հանքային պարարտանյութ, այդ դեպքում կարելի լի փորձել նրա ազդեցությունը առվույտի վրա: Այդ տեսակետից առանձնապես արժեք են ներկայացնում սուպերֆոսֆատը և կալիումի աղը (լերկու պարարտանյութերը դորձ ածել միասին միենուլն հողամասի համար):

Սուպերֆոսֆատից վերցնելիք քանակությունը վորոշելու համար ինկատի ունեցեք, վոր մի քառակուսի մետրի համար անհրաժեշտ և 20 գրամ, իսկ կալիումի աղի համար նույն տարածության համար՝ 6—10 գրամ: Այսպիսի չնչին քանակություններով պարարտանյութերը դժվար է կանոնավոր կերպով շաղ տալ հողամասի վրա, դրա համար ել լավ կլինի նախապես խառնել հողի հետ և այնպես ցըվել:

Պարարտանյութերը պետք է հողի մեջ մտցնել գարնան սկզբին, ձյունը հալվելուց հետո, լերը խոտերն սկսում են ածել, բարձրանալ:

Ճարակախոտերը պետք է հնձել այն ժամանակ, լերը առվույտն սկսում է ծաղկել. մեծ տնտեսությունների մեջ ևս հենց այդ շրջանում են հնձում և հավաքում: Բայց լեթե դպրոցն իր պարապմունքներն ավելի վաղ ե վերջացնում, այդ դեպքում կարելի լի հնձել առվույտը և մինչև ծաղկելը, հնձած խոտերը պետք է հավաքել խնամքով, չորացնել տանիքի տակ և ապա կշռել:

Ի՞նչ արդյունք ե տվել փորձը:

5. ԱԹՎՈՒՅՏԻ ՑԵՎ ՏԻՄՈՅԵՑԵՎԻ ԽՈՏԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Առվույտի և տիմոֆելեվի խոտի, Միության կենտրոնական և հյուսիսային շրջանների այդ լերկու գլխավոր ճարակախոտերի համե-

մատությունը դուք կարող եք կատարել կամ դպրոցական հողամասում և կամ դուքսը եքսկուրսիալի ժամանակ համապատասխան ցանքատեղերում:

1. Սովորեցեք ճանաչել առվուլտը և տիմոֆելեվի խոտը: Նկարեցք այդ բույսերի գարնանալին տեսքը:

2. Հանեցեք առվուլտի և տիմոֆելեվի խոտի թփերը հողից իրենց արմատներով: Համեմատեցեք նրանց արմատները միմյանց հետ, վորոշեցեք նրանց տիպը: Վորթ՝ արմատներն են ավելի խորը մանում հողի մեջ (չափեցեք լեռկարությունը): Վորթ՝ արմատներն են ավելի ուժեղ կերպով ճշուղավորված: Ինչպէս և ելի տարբերվում առվուլտի արմատը տիմոֆելեվի խոտի արմատից: Նկարեցեք ձեր դիտողության նյութեղող արմատները:



Նկ. 124. Կարմիր առվուլտի թուփը, վորի արմատների վրա յերեսմ են ազդա համարազարդ բակտերիաների պալարները:

3. Հանեցեք տիմոֆելեվի խոտի թուփը հողի հետ միասին: Տեսնեք, թե թունչ կազմություն ունի հողն այդ խոտի տակ:

4. Հետազոտեցեք առվուլտի և տիմոֆելեվի խոտի համեմատական զարգացումը տարբեր տարիք ունեցող ցանքերում: Ցանքից հետո առվուլտը վճրարում է ամենից լավ զարգանում, իսկ տիմոֆելեվի խորությունը միշտ ճիշտ հետեանցների հասնելու համար լավ կլինի տարբեր տարիք ունեցող առվուլտի և տիմոֆելեվի խոտի ցանքերի մեջ վերցնել փոքրիկ տարածություններ (միքանի քառ. մետր) և հաշվել նրանց վրա առանձինառանձին առվուլտի և տիմոֆելեվի խոտի թփերի թիվը: Ի՞նչ որինաշափություն եք նկատում այդ լեռկու բույսերի զարգացման մեջ (քանակությամբ) ըստ տարիների թվի:

6. ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՑԱՆ-
ՎԱԾ ԱՐՄԱՏԱՊՏՈՒԴՆԵՐԻ ՎՐԱ.

Յանեցեք դպրոցական հողամասում արմատապտուղներ (ձակըն-
ողեղ, գտղար, գոնզեղ, տուրնեպս) և կատարեցեք համեմատական դի-
տողություններ նրանց զարգացման վրա:

1. Գրեցեք ձեր հուշատետրում ամեն մի արմատապտղի ցանքի
պայմանները՝ հողամասի մեծությունը, պարարտանյութի քանակու-
թյունը, շարքերի միջև լեղած տարածությունը, ցանված սերմերի քա-
նակությունը, սերմերի թրջոցի տեսողությունը, ցանքի ժամանակը:

2. Նշանակեցեք, թե ի՞նը են լերևան գալիս արմատապտուղնե-
րից ամեն մեկի ծիլերը։ Վո՞ր արմատապտղի ծիլերն են ամենից շատ
դուրս գալիս և վորինը՝ ամենից ուշ։

3. Դիտեցեք, նկարեցեք և չորացրեք զանազան արմատապտուղ-
ների ծիլերը։ Սովորեցեք տարբերել նրանց ծիլերը մոլախոտերից։ Խն-
չով են զանազանվում սերմարթակներն իսկական տերեններից։ Ծից-
րեք թաց փալասի մեջ ճակնդեղի մի քիչ «սերմեր» (ավելի ճիշտ բարդ
սերմեր) և պարզեցեք ծլման ժամանակ նրանց լերևան հանած առանձ-
նահատկությունը, այն՝ վոր նրանք միշտ տալիս են կուլտ-կուլտ ծի-
լեր։ Գործնական հետեւթյուն հանեցեք դրանից, թե վո՞ր արմատապտ-
ուղը նոսրացման առանձին կարիք ե զգում։

4. Նշանակեցեք արմատապտուղների 1-ին, 2-րդ, 3-րդ և հաջորդ
տերենների լերևան գալը։ Նկարեցեք շարաթը մի անգամ արմատա-
պտուղների հաջորդական զարգացումը և վերցրեք նրանցից նմուշներ
և երարիումի համար։ Վեր արմատապտուղն և ամենից շուտ զարգանում և
վո՞րը՝ ամենից ուշ։ Սովորեցեք տերենների տեսքով տարբերել արմա-
տապտուղները միմյանցից։ Խնչո՞վ են տարբերվում տուրնեպսի տե-
րենները գոնզեղի տերեններից կամ ճարակաճակնդեղի տերենները՝ մեր
գործածած ճակնդեղի տերեններից։

5. Պարզեցեք, թե ի՞նչպիսի վնասատուներ են լինում արմատապտ-
ուղների վրա և ի՞նչպիսի վնասաներ են պատճառում նրանք։ Ար-
մատապտուղներից վո՞րն և ամենից շուտ տուժում վնասատուներից։

6. Նշանակեցեք, թե արմատապտուղներից ամեն մեկի արմատը
չե՞րբ և մկանում հաստանալ։ Վո՞ր արմատապտուղն և ամենից շուտ
հասունանում։

7. Հաշվեցեք աշնանը արմատապտուղների տված բերքը ամեն
մեկինն առանձին և կազմեցեք դիագրամ։ Համեմատեցեք զանազան
տեսակի արմատապտուղների բերքատվություններն իրար հետ։ Համե-

մատեցեք նրանց արմատների արտաքին տեսքերն իրար հետ (մեծության, ձևի, գույնի և ալլի տեսակետներից):

8. Արմատապտուղների նմուշները, դիտագրամները և նկարները պահպահեք «բերքի որը» ցուցադրելու համար:

Դորձնական ցուցմունքներ.—Համեմատության համար լավ կլինիքոլոր չորս տեսակի արմատապտուղները ցանել միևնույն որը: Ճականդեղի և զաղարի սերմերը նախ քան ցանելը պետք է 2—3 որ թրջոցներ՝ ամեն որ ջուրը փոխելով:

Հողը պետք է լավ հերկված և պարարտացված լինի: Պարարտացնելու համար պետք է վերցնել գոմազը խառը մոխրի հետ: Ամեն իերկու քառակուսի մետրի համար վերցնել մի վեղրո գոմազը և 400 գըրամ մոխրի: Ցանքը կատարել անպատճան շարքերով: Շարքերի մեջ լեղած տարածությունը ճարակագազարի համար պետք է լինի 35—45 սանտիմետր, իսկ ճակնդեղի, գոնզեղի և տուրնեպսի համար՝ 45—60 սանտիմետր:

Արմատապտուղները պահանջում են հետագալում սիստեմատիկ խնամք. այն ե՛քաղհանումն, թփերի նոսրացումն և հողի փխրունացնումն: Թփերի նոսրացումը կատարվում է իերկու անգամ. առաջին նոսրացումը լերկու հատ իսկական տերեններ արձակելուց հետո, իսկ լերկորդը՝ առաջնից հետո լերկու շարաթ անցած: Այս վերջին նոսրացման ժամանակ թփերը շարքի մեջ պետք է հեռու լինեն միմյանցից—գաղարի թփերը 15 սանտ., իսկ մյուսների թփերը՝ 25—35 սանտ.:

7. ԱՐՄԱՏԱՊՏՈՒԹՅՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ԴԱՇՏՈՒՄ ԵԳՄ-ԿՈՒՄԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԻ

Յեթե հնարավորություն ունեք, կազմակերպեցեք մի եքսկուրսիա զեպի այնպիսի դաշտեր, ուր ցանված են արմատապտուղներ և աշխատեցեք պատասխանել հետևյալ հարցերին.

1. Ի՞նչպիսի արմատապտուղներ են ցանված այստեղ:

2. Արմատապտուղների վիճակը եքսկուրսիաի ժամանակ: Ինչքան տերեններ են արձակել նրանք: Ի՞նչ հաստություն ունեն նրանց արմատները:

Վերցրեք ամեն տեսակի արմատապտղից 2—3 հատ հերքարիումի և նկարելու համար:

3. Ի՞նչ հեռավորություն ունեն շարքերը միմյանցից և ի՞նչ հեռավորություն՝ բուկսերը միմյանցից միևնույն շարքի մեջ: Համեմա-

առեցեք ալդ հեռավորությունները պահանջվող նորմաների հետո ի՞նչ-պիս են նորացված բուկսերը:

4. Ի՞նչպիս ե կատարված քաղհանը:

5. Չեք նկատում արդյոք բուկսերի վրա հիվանդագին նշաններ: Ի՞նչ պատճառներից են առաջանում ալդ նշանները:

6. Ի՞նչ աշխատանքներ եր տարվում արմատապատուղների դաշտերում ձեր կատարած եքսկուրսիայի ժամանակ:

7. Ի՞նչ տեղ են գրավում արմատապատուղները ցանքաշրջանառության մեջ (թվել նախորդող և հաջորդող բուկսերը):

8. Ի՞նչպիսի տարածություն են գրավում արմատապատուղները մասցած մշակուլթների համեմատությամբ:

8. ԿԱՇՏԵՐՈՒՄ ՑԱՆԿՈՂ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ՃԱՐԱԿԱԽՈՏԵՐԸ

Միության կենտրոնական և հյուսիսային շրջաններում ցանվող բազմամյա ճարակախոտեր են հանդիսանում առվույտը և տիտղոսիվի լուսը: Այս լերիու ճարակախոտերը սովորաբար ցանվում են միասին: Միասին ցանելու պատճառն այն է, վոր ցանկանում են 2-3 տարի շարունակ ստանալ միանման բերք: Ճարակախոտերից ոգտվելու առաջին տարին (ցանքի լերկրորդ տարին) զարգանում և գլխավորապես առվույտը, վորը և կազմում ե ալդ տարվա բերքի գլխավոր զանգվածը. իսկ լերկրորդ և լերբորդ տարիները հետզհետե մեռնում ե առվույտը, իսկ նրա փոխարեն սկսում ե փարթամ կերպով աճել տիմոֆեյևի խոտը:

Միամյա ճարակախոտերից ամենից շատ ցանում են վիկը, վոր ամառվա ամիսներին տալիս են կենդանիներին կանաչ վիճակում: Վիկի ցողունը թուլլ ե և ունի կպչուն խիզբեր: Վորպեսզի նրա թփերը չզպակեն գետնին, վիկը ցանում են վարսակի հետ միասին, վորի ցողունները վիկի համար ծառալում են այնուհետեւ իրեն հենարաններ:

Խոնավ տեղերում, վորտեղ կարմիր առվույտը լավ աճել չի կարողանում, ցանում են ովելական առվույտ, վոր թեպետ քիչ բերք և տալիս, բայց տեսական ե և դիմացկուն:

Չոր տափաստանալին շրջաններում առվույտին փոխարինում ե մի ավելի լեռաշտագիմացկուն լորազգի բուկս, լուցերենի թեթե հանենք ալդ բուկսը չողից և դիտենք արմատները, իսկույն կհասկանանք, թե ինչպես և ալդ բույսը դիմանում չոր լեղանակներին: Լուցերնը հակառակ առվույտի՝ ցանվում ե մաքուր դաշտի մեջ, առանց

ծածկութիւն գեր կատարող բուսի: Առաջին բերքը տալիս է նա հանցանքի առաջին տարին. նա ավելի լերկարակացած է, քան առվուրսը և լավ պարմաններում կարող է տալ տարեկան 2—3 բերք և մայ 8—12 տարի: Լուսցերնը շատ արժեքավոր բուս է և իզուր չե, վոր ամերիկացիները նրան անվանում են «բնության ընծա»:



Նկ. 125. Լուսցերնի արմատները: Առաջին բուսը մասնաւություն հաղորդել է նրանք վարակարության մասնաւում:

ահա 1909 թվին նրանք գտնում են Սուլքանում և ամերիկացիները սերմերը՝ տանում, ցանում են Հյուսիսային Ամերիկայի

Վերջին ժամանակներս առանձին հետաքրքրության նրութ և գարձել մի ճարակաբուլս, վոր կոչվում ե սուլքանիկ: Շատ հետաքրքրական պատմությունների այդ ճարակաբուլսը: Ճարակաբուլսից շատերը վայրի դրությամբ աճում են Միության դանազան մասերում. այդպես չե սակայն սուլքանիկը, նա ոտար և մեր լերկը համար. նրա հայրենիքն է Աֆրիկայի այն լերկամասը, վոր կոչվում է Սուլքան:

Սուլքանիկի հայրենիքն իր չորսությամբ և տաքրությամբ մի քանի անգամ գերազանցում է Մերձվոլգան վրձաններին: Այդիսկ պատճառով ել նա կարողանում է դիմանալ վոչ միայն Մերձվոլգան շըրջաններում, այլ և առհասարակ նման չոր և տաքվայրերում:

Չեռներից ամերիկացիներն ամբողջ աշխարհագրական տարածություն ցիներն ամբողջ աշխարհագրական տարածություն կորում են նոր բույսեր մշակման համար: Յեզ:

չոր մասերում։ Ստացվում ե շատ լավ արդյունք, վորից հետո ամերիկացիներն սկսում են բազմացնել սերմերը և ընդարձակել նրա ցանքերը։

1912 թվին մի ոռու գլուղանտես Աերիկալից սուլքանիկի սերմեր և ուղարկում Ռուսաստան էլդ սերմերը ցանում են ուկրայինական փորձնական գլուղանտեսական կայաններում և ստանում են շատ լավ արդյունք, Դրանից հետո սուլքանիկի մշակուլթն սկսում ե արագ կերպով տարածվել Միության հարավային և հարավ-արևելյան մասերում։ Միամյա խօսերի մեջ չոր կլիմա ունեցող ռայոնների համար ամենալավ ճարակախոտը համարվում ե ալսոր սուլքանիկը։ Նրանից ստացվող չոր խոտը թե փափուկ ե և թե քնքուց։ իսկ կանաչ վիճակում նա կեր կարող ե լինել ամբողջ ամառվա ընթացքում։

Աշխատեցեք ձեռք բերել սուլքանիկի սերմեր և ցանել դպրոցական հողամասում։ Դպրոցական հողամասում գուք կարող եք մանրամասն ծանոթանալ և այլ ճարակախոտերի հետ։ Շատ լավ կլիներ, յեթե ձեր դպրոցական հողամասը կարողանար ծանոթացնել տեղական գլուղացիությանը լավագույն ճարակախոտերի հետ և նպաստեր նրանց մշակուլթի տարածման։

9. ԼՈԲԱԶԳԻ ԲՈՒՑՍԵՐԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱԲԱՆՁՆԱՀԱՏ- ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԵՎ ԱՅԴ ԲՈՒՑՍԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒ- ԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Շատ վաղուց նկատված փաստ ե, վոր լորազգի բուկսերի (վորոնց կարգին ե պատկանում և առվուլտը) մշակուլթը վոչ միայն հողովով չի ուժապառում, այլ և նրանից հետո հացաբուկսերը շատ լավ բերք են տալիս։

Մացնելով լորազգի բուկսերը մշակուլթների շրջանառության մեջ գլուղանտեսան զգալի չափով մեծացնում և հողի արգավանդությունը, այսինքն հողի նույն տարածությունից ստանում և շատ ավելի արդյունք, քան կարող եք ստանալ, յեթե միայն հացաբուկսեր ցաներ։

Ամենքին հայտնի լե, վոր ամեն մի բերքի ժամանակ հողից հեռացվում են բուկսերի աճման տեսակետից անհրաժեշտություն ներկայացնող վորոշ քանակությամբ հանքալիին տղեր (սրանց թվում նաև ազու պարունակող)։ Այդ իսկ պատճառով շատ բնական կլիներ, յեթե նույնը մտածելինք և լորազգի բուկսերի մասին, այսինքն, վոր սրանք ևս սպառում են հողի մեջ յեղած սննդաբար հանքալին նյութերը։

Սակայն գլուղատնտեսութիւնը պարապողների դարավոր փորձն ապացուցել է միանազամայն հակառակը, այն, վոր լորազգի բուլսերը վոչ միայն չեն ուժապառում հողը, այլ լավացնում, հարստացնում են նրան, զետագայում գիտական հայտնագործությունները լուծելով այդ հանելուկը՝ վորոշ չափով հաստատում են այդ փաստը և դրանով պարզում այն դերը, վոր ունեն լորազգի բուլսերը բնության, հետեապես և գլուղատնտեսության մեջ:

Լորազգի բուլսերի գաղտնիքը թագնված է այն փոքրիկ պալտը-ների մեջ, վոր գտնվում են տովուտի և այլ լորազգի բուլսերի արմատների վրա:

Հետազոտությունները ցուց են ավել, վոր այդ պալարներն առաջանում են լորազգի բուլսերի արմատների վրա շնորհիվ հողի մեջ գտնվող առանձին տեսակի բակտերիաների: Մտնելով արմատների մեջ՝ այդ բակտերիաները բազմանում են այնտեղ և առաջ բերում արմատի հլուավածքների աճումը, վորից և գոլանում են արմատի վրա փոքրիկ ուռուցքներ կամ պալարներ:

Այդ բակտերիաներն ոժտված են մի զարմանալի առանձնահատկությամբ. նրանք իրենց մարմի աճման համար անհրաժեշտ ազուր վերցնում են վոչ թե հողից, ինչպես անում են բուլսերը, այլ ուղղակի ողից, վորտեղ, ինչպես հալտնի լե, ազոտի քանակությունն անըստ պառ ե: Լորազգի բուլսերի արմատների մեջ այդ բակտերիաներն արագ կերպով բազմանում են, բայց և արագ կերպով ել մեռնում են. մեռնելով՝ նրանք իրենց պատրաստած ազոտալին նյութերը տալիս են իրենց օտերերին—լորազգի բուլսերին: Բացի դրանից, նրանց պալարների մի մասը մնում է հողի մեջ, վոր հետո նեխվելով՝ առաջ և բերում ազոտալին նյութեր և դրանով սնունդ մատակարարում այն բուլսերին, վոր սերմնափոխության շրջանառության մեջ հաջորդում են լորազգի բուլսերին: Հենց դրա մեջ և այդ բուլսերի ազոտալին նյութերով հողը հարստացնելու գաղտնիքը: Իսկ հողի մեջ հաճախ պակասում և հենց ազոտը և մենք մշակութների ժամանակ մեծ բերք ստանալու համար ստիպված ենք լինում պարարտանյութերի ձևով (որինակ, գոմազգի, աղբորակի) ազոտ մտցնել հողի մեջ:

Այժմ հասկանալի չե միանգամայն, թա ինչու իրենք՝ լորազգի բուլսերը կարիք չեն զգում ազոտալին պարարտանյութերի, այն պարարտանյութերի, վորոնք այնքան խոշոր ազդեցություն են ունենում այլ բուլսերի զարգացման վրա: ԶԵ վոր բուլսերի սննդառության համար անհրաժեշտ ազոտը լորազգի բուլսերն ստանում են ազոտի անըստ պառ աղբուր ներկայացնող ողից՝ շնորհիվ այն բակտերիաների, վոր պարում են արմատների վրա գտնվող պալարների մեջ:

Բացի գրանից, հասկանալի է դառնում նաև այն, թե ինչ հսկա-
շական նշանակություն ունի լոբաղզի խոտերի, որինտեկ, առվուլտի
մշակուլթը մեր դաշտերում:


Առվուլտը նախ և առաջ տալիս ե մեր անասուններին սննդարιց
ինչ առաջ կեր: Շնորհիվ ալղպիսի կերի հաճավորություն և ստեղծվում
վոչ միայն ավելացնել անասունների քանակությունը, այլ և լավաց-
նել նրանց վորակը: Իսկ ինչքան շատ լինեն անասունները, այնքան
և շատ կլինի դաշտերը պարարտացնելու համար անհրաժեշտ գոմաղրի
քանակությունը, հետեւապես և այնքան մեծ կլինի կուլտուրական
ըուլսերի բերքը:



Նկ. 126. Զանազան լոբաղզի բույսերի արմատների վրա գտնվող աղո-
տահավաք բակտերիաների պալարներ:

Ցերկորդ՝ առվուլտը պարարտացնում ե հողը և հարստացնում
այն աղոտալին նյութերով, իսկ սրա հետեւանքով մեծանում ե նրան
անմիջապես հաջորդող մշակութի բերքի քանակությունը: Դիտողու-
թյունները ցույց են տվել, վոր առվուլտի մացորդների (արմատների
և ցողունների) շնորհիվ հողի մեջ առաջանում ե աղոտալին նյութերի
այնպիսի քանակություն, վոր միանգամայն կարող ե փոխարինել գո-
մաղրի լրիվ պարարտացման, ալսինքն՝ մի հեկտարի վրա 100 սալլ
աղրին: Սակայն, պետք ե ասել, վոր առվուլտը հարստացնում ե հողը
միայն աղոտալին նյութերով: Ինչ վերաբերում ե բուլսերի սննդառու-

թյան տեսակետից անհրաժեշտ մլուս լերկու տարրերին (ելեմենտներին), ալիքնքն ֆոսֆորին և կալիումին, ապա պետք ե ասենք, վորառովույտը հողից այդ նլութերն ավելի շատ ե վերցնում, քան հացաբուլսերը։ Այս խսկ պատճառով ել առվույտի մշակուլթի ժամանակ հողը պիտի պարարտացնել ֆոսֆորային և կալիումային պարարտանյութերով։ Կեր քիչ պարունակող հողերը պետք ե պարարտացնե և կալցիում կարբոնատով (կրաքարով) ու գաճով։



Նկ. 127. Պատիճազոր բույսերի արմատների պալարների մեջ գտնվող բակտերիաները միկրոսկոպի տակ (1200 անգամ մեծացրած)։

Յերրորդ՝ տիմոֆելեվի խոտի հետ ցանված առվույտը լավացնում ե հողի կազմությունը, վորովհետև վեր և ածում նրան մանր գնդիկների։ Առվույտի և այդ խոտի արմատները տարածվելով հողի վերին շերտի մեջ բաժանում են հողը շատ մանրիկ գնդիկների և արտադրելով հումուսային նյութեր՝ տալիս են հողին վորոշ ամրություն, վորովհետև հումուսային նյութերը շաղախի ձևով ծծվում են գնդիկների մեջ։ Այդպիսի հողը հավաքում է պահում ե իր մեջ խոնավությունը և ողը լավ ե անցկացնում իր միջով, վոր այնքան անհրաժեշտ ե արմատների շնչառության համար, դրա համար ել բերքն առատանում եւ,

Ահա թե ինչպիսի խոշոր նշանակություն ունի առվուտի մշակութը դաշտերի համար։ Սերմնափոխության շրջանառության մեջ առվուտի մշակութը մտցնելը Ֆրանսիայում վերջին չտասը տարվա ընթացքում կրկնապատկել ե ցորենի բերքը։

Այս բոլորից հետո մեզ համար միանգամայն հասկանալի լեռ դառնում նշանավոր գիտնական-հեղափոխական կ. Ա. Տիմիրյագելի հետեւյալ խոսքերը։ «Պատմության մեջ քիչ հայտնագործություններ կան, վորոնք մարդկության բարեկեցության այնչափ նպաստած լինելին։ Ինչքան առվուտի և առհասարակ լորազգի բուլսերի մտցնելը սերմնափոխության շրջանառության մեջ, վոր այնքան զարմանալի կերպով մեծացրել ե էրկրագործի աշխատանքի արտադրականությունը»։

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

ԱՐՈՏ

1. ԵԳՄԿՈՒՐՄԻԱ ԴԵՊԻ ԱՐՈՏ

Անասունների համար ամառը կերի գլխավոր աղքայուր և հանգիստնում արոտը: Հետազոտելով կերի հարցը գլուղացիական տնտեսության մեջ՝ մենք պետք ե անպայման հետազոտենք և արոտը:

Արոտը հետազոտելու ժամանակ մենք պետք ե մեր գլխավոր ուշադրությունը դարձնենք նրա բուսականության վրա:

Ի՞նչպիսի բուկսեր են լինում արոտում:

Վորմնք են այդ բուկսերի մեջ կերի տեսակետից ոգտակար և վորմնք՝ վասակար, թունավոր:

Արոտի մեջ բուկսերը գտնվում են ընտանի կենդանիների տեսական ազդեցության տակ. կենդանիներն արածում, կոխուում են այդ բուկսերը: Հետաքրքրական ե իմանալ, թե արոտի բուկսերն ինչպիսի հարմարացումներ են ձեռք բերել կենդանիների արածումից և կոխկըցումից պաշտպանվելու համար:

Պատրաստոյուն են ենակուրսիայի համար. — Եքսկուրսիայից հետներդ պետք ե բերեք բուկսեր թե հերքարիում կազմելու և թե դասարանում մշակման յենթարկելու համար. Դրա համար ել չպետք ե մոռանաք վերցնել ձեզ հետ միքանի պարագաներ: Ակսպես որինակ, պետք ե ունենաք փաթաթելու թուղթ կամ հին լրագրեր՝ դրված թղթակալների մեջ և ապա մեծ դանակ կամ փոքրիկ բան, վորպեսզի կարողանաք հաջող կերպով բուկսերն արմատով հողից դուրս հանել:

Իսկ յեթե ցանկություն ունեք արոտից բուկսեր բերել ձեր դըպորտական ալգու համար, ապա պետք ե վերցնեք և զամբրուզ կամ պայուսակ: Միջատներ հավաքելու համար անհրաժեշտ ե ունենալ արկդիկներ կամ բանկաներ:

Եքսկուրսիայից առաջ պետք ե աշխատանքի նախագիծ կազմեք. այդ տեսակետից ձեզ ոգնելու համար մենք բերում ենք այստեղ «Ծրածի հետազոտման համար կազմակերպվող ենակուրսիայի մի ծրագիր».

1. Արոտի բնուլիթը (թփուտներ, խոնավ մարգագետին և ալլն)։ Աշխատեցեք հարց ու փորձով իմանսալ նրա տարածության չափը, թե կուղ մոտավոր կերպով։

2. Արոտի հեռավորությունը գլուղից զեռավոր արոտները հոգնեցնում են անասուններին և նվազեցնում կաթի քանակությունը։

3. Զկան արդյոք արոտի մեջ սուր ծալրեր ունեցող իրեր (ազակու կտորներ, սուր քարեր, թիթեղլա ամաններ և ալլն)։

Այդպիսի իրերը պետք է արոտից հեռացվեն և կամ թաղվեն հողի մեջ։

4. Հավաքեցեք արոտից ծաղկած բուկսերի նմուշներ։ Հավաքեցեք արոտի մեջ լայն տարածումն ունեցող չժաղկած բուկսերի նմուշներ։

5. Դիտեցեք, թե զանազան տեսակի ընտանի կենդանիներն ինչպես են արածում արոտում։ Ի՞նչպես են խոտը պոկում կովը, ալծը, վոչխարը, ձին, խողը։ Վորժնք են նրանցից խոտը պոկում արմատի մոտից։ Ի՞նչպիսի բուկսեր են նրանք սիրով ուտում և ի՞նչպիսի բուկսերի մոտից անցնում են առանց ուշադրություն դարձնելու նրանց վրա։

6. Հարցըք հովվին, թե նրա կարծիքով ընտանի կենդանիներն ինչպիսի բուկսեր են ուտում և ինչպիսի բուկսերի լերեք ձեռք չեն տալիս։ Հավաքեցեք թե մեկ և թե մուս տեսակի բուկսերից նմուշներ։

